

ԼՐԱԳՐՈՂԻ  
ԳՐԱԴԱՐԱՆ



Վերցրել է Մայեր

ԼՐԱԳՐԱՅԻՆ  
ԳՈՐԾ

Հ Ա Տ Ո Ր Ի

ԵՐԵՎԱՆԻ  
ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

ԲԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ

Վերներ Մայեր

ԼՐԱԳՐԱՅԻՆ ԳՈՐԾ

Հ Ա Տ Ո Ր Ի



«Վան Արյան»  
Երեւան  
2001

---

Վերներ Մայերի «Լրագրային գործ» գիրքը մի ձեռնարկ է, որ նախատեսված է ինչպես համալսարանների ժուռնալիստիկայի ֆակուլտետների ուսանողների, այնպես էլ լրագրողների և հրատարակիչների համար:

Ձեռնարկի հրատարակությունն իրականացրել է Երեւանի մամուլի ակումբը՝ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի ֆինանսական աջակցությամբ:

Թարգմանիչներ՝ **Արմինե Աղաջանյան, Արմինե Հարությունյան, Արփիհնե Ստեփանյան, Նաիրա Սուքիասյան** («Քրոնոս» թարգմանչական կենտրոն) հմբագիր՝ **Մեսրոպ Հարությունյան**  
Համակարգչային ձեւավորումը և էջադրումը՝ **Նարա Մենդելի և Արմինե Սուքիասյանի** Ծրագրի տնօրեն՝ **Բորիս Նավասարդյան**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ</b>	<b>6</b>
<b>I ՉԱՆԳՈՒՅՑ, ՄՈՒՏՔ, ԼԻԴ</b>	<b>8</b>
<b>II ԼՈՒՐ ԵՎ ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ</b>	<b>39</b>
<b>III ՉԱՐՑԱԶՐՈՒՅՑ</b>	<b>93</b>
<b>IV ՌԵՊՈՐՏԱԺ-ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՌԵՊՈՐՏԱԺ</b>	<b>128</b>
<b>V ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՉՈԴԿԱԾ - ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ - ՌԵՊԼԻԿ</b>	<b>160</b>

# Ներածություն

## ՆՈՐ ՏԵԽՆԻԿԱ, ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐ

Արդյո՞ք թերթերն իրենց այսօրվա տեսքով համահունչ են ժամանակին: «Գրուներ + Յար» հրատարակչության վարչության անդամ Մարտին Շտահելը սեմինարներից մեկի ժամանակ այս մասին իր ուշագրավ մտորումներն արտահայտեց.

«Չեռուստատեսությունում որեւէ ծրագրի շատ թե քիչ ողջախոսի պատասխանատուի մտքով էլ չի անցնի լրատվական կամ նույնիսկ ժամանցային հաղորդում եթեր հեռարձակել նույն ձեւավորմամբ, ինչ քսան կամ երեսուն տարի առաջ: Որոշ օրաթերթեր, սակայն, ոչ միայն մնացել են վաթսուներկան կամ յոթանասուներկան թվականների մակարդակին, այլև շատ բանով հիշեցնում են վերջին հարյուրամյակը»:

Իր վերլուծության ժամանակ Մարտին Շտահելը առաջին հերթին նկատի ուներ թերթի ձեւավորումը, սակայն նրա խոսքերը վերաբերում են նաեւ լեզվին, հաղորդագրությունների եւ թղթակցությունների ներքին ձեւավորմանը, դրանց կառուցվածքին:

Շտահելը արտահայտել է այն, ինչ շատերն են մտածում: Մենք կարող ենք դա համեմատությամբ ստուգել: Մեծ հրատարակչական տները ազդարարել են իրենց թերթերի ձեւավորման եւ լեզվի փոփոխության մասին: Նպատակը՝ ավելի կենդանի լեզու, ավելի կարճ նյութեր, ավելի համատեսելի ներկայացում:

Միեւնույն ժամանակ լրագրողները վկան են մեծ տեխնիկական հեղափոխության երկրորդ մասի, որը ստիպողաբար եւ սաստիկ փոխում է նրանց մասնագիտությունը: Ութսունական թվականներին առաջին համակարգիչները մուտք գործեցին խմբագրություններ: Հիմա գալիս է սարքերի մի նոր սերունդ, որն ավելի հզոր է, ավելի արագ է արտադրում եւ լրագրողներից ավելին է պահանջում: Տվյալների ճեպընթացը արդեն հասնում է նաեւ խմբագրություններ՝ հասանելի դարձնելով թերթերի արխիվները, գրադարանները, գիտելիքների շտեմարանները ամբողջ աշխարհում: Լրագրողները պետք է սովորեն օգտագործել բոլոր հնարավորությունները: Դրանցից շատերը նրանց համար դեռ օտար են: «Լրագրային պրակտիկայի դասագիրքը» ակնառու է դարձնում նոր միտումները,

հետեւում դրանց զարգացմանը, օրինակներ բերում, համեմատում նորաստեղծ թերթեր:

Այս գրքի առաջին հրատարակությունը լույս է տեսել 1983-ին՝ որպես «Այսօրվա ժուռնալիստիկան» չկարված ժողովածուից մի հատված: Շատ բան է փոխվել այդ ժամանակվանից: Բոլոր գլուխները լրացվել, վերամշակվել, ընդլայնվել, արդիականացվել կամ, անհրաժեշտության դեպքում, վերադասավորվել եւ որոշ մասերում խտացվել են: Չկարված ժողովածուի իրավաբանական մասը եւ վարժություններն առանձնացվել են, կարեւորությունը տրված է լրագրային գործնական աշխատանքին՝ մշտապես նպատակ ունենալով սկսնակներին ծանոթացնել մասնագիտությանը, բայց նաեւ փորձառու պրակտիկներին ներկայացնել նոր գիտելիքներ, զարգացման նոր ընթացքներ:

Մեթոդը նույնն է մնացել: Մենք սովորում ենք ուրիշների փորձից: Եվ մենք շնորհակալություն ենք հայտնում այն բանի համար, որ նրանք մեզ հետ կիսում են իրենց փորձը:

*Վերներ Մայեր*

I  
ՀԱՆԳՈՒՅՑ, ՄՈՒՏՔ, ԼԻԴ

Ավելի քիչ բառերով ավելի շատ բան ասել ...

Կարենուրը սկզբից

Գործածական մուտքերի կատալոգ

## Ավելի քիչ բառերով ավելի շատ բան ասել ...

Ինչպե՞ս են միմյանցից տարբերվում մյուսխենյան օրաթերթերը: Կաբարեի արտիստ Դիտեր Յիլդեբրանդտը տարիներ առաջ հետեւյալ օրինակն է բերել. «Բիլդ-Ցայթունգ»-ում հեռախոսը սուր ճչում է, «Աբենդցայթունգում» այն զնգում է, «Չյուդդոյչե ցայթունգ»-ում այն հնչում է, իսկ «Մյունխեներ Մերկուր»-ը փորձում է մարդկանց համոզել, թե հեռախոսը դեռ չի հորինվել»:

Արդյո՞ք Յիլդեբրանդտը այսօր սա նույն կերպ կասեր: «Ոչ», - պատասխանում է նա՝ մի փոքր վարանելով: Ինչո՞ւ: «Յիմա հեռախոսը սուր ճչում է նաեւ այլուր»:

Այսքանը կաբարեի արտիստը: Բացառությամբ «Մերկուրի», Յիլդեբրանդտը, ինչպես փորձն է ցույց տալիս, դիպուկ նկատել է ամենազվախավորը: Յիմա հեռախոսը իրականում սուր ճչում է նաեւ այլ թերթերում: Ուր էլ նայենք՝ բուլվարային թեթեւ սյուռե է փչում նույնիսկ ամենալուրջ խմբագրություններում: Մյուսխենյան «Չյուդդոյչե ցայթունգ»-ը ընթերցողների ավելի մեծ հետաքրքրություն է ակնկալում, «Վելթ» իր առաջ նպատակ է դնում «ավելի քիչ բառերով ավելի շատ բան ասել»: Լեզուն՝ ավելի կենդանի, ասելիքն՝ ավելի կարճ, ներկայացումն՝ ավելի համատեսելի. սա բոլորն են ուզում: Մտադրությունը հաստատուն ծրագիր դարձավ. իննսունականների սկզբին շատ թերթեր գիտակցաբար ավելի շատ փոփոխվեցին, քան դրանց նախորդող քսան տարիներին միասին վերցրած:

Սկսենք Ամերիկայից. 1992-ի ապրիլի 20-ի համարով ամերիկյան «Թայմ» հանդեսը ազդարարեց 1923-ից թերթի հիմնադրվելուց ի վեր, ամենավճռական փոփոխությունները. “the most significant changes”:

- ▶ 1992-ի սեպտեմբերին «Չյուդդոյչե ցայթունգ»-ը ներկայացրեց «SZ 2000» ծրագիրը՝ դաշնային նոր թողարկումը. «Յամաշխարհային եւ տեղական նոր հանդես»:
- ▶ 1992-ի հոկտեմբերին «Վելթ»-ում կարդացինք, որ այն փոխելու է իր տեսքը. «Լրագիրն ավելի արդիական կդառնա, թերթն՝ ավելի պարզ կառուցված»:
- ▶ 1997-ի ապրիլին մյուսխենյան «Աբենդցայթունգը» լույս է տեսնում նոր տեսքով՝ փոփոխված մակետով, ավելի փոքր վերնագրերով, ավելի մեծ առաջարկով, ավելի համատեսելի կառուցվածքով: Նաեւ բովանդակության նոր դիզայն:

Որպես օրինակ բերենք SZ-ի («Ձյուղդոյչե Ցայթունգ»-ի) բովանդակության եւ ձեւավորման մի քանի նոր դրույթներ.

- ▶ Տեղական նորությունների բաժինը հետայսու «ավելի լայն թեմատիկ տարրապատկեր» կառաջարկի: Նաեւ՝ «տեղական նորությունների մասում հետագայում, լուրերի հետ մեկտեղ, ավելի մեծ ուշադրություն կդարձվի հետաքրքրաշարժ եւ զվարճալի ընթերցանության նյութերին»:
- ▶ Տեղական նորությունների մասում ընթերցողին սկզբունքորեն պետք է առաջարկվի լրագրողական ձեւերի ավելի մեծ բազմազանություն: Այն պետք է լինի կենդանի եւ հետաքրքրական եւ ավելի հաճախակի դիմի հատկապես երիտասարդ ընթերցողին:
- ▶ Ընդհանուր առմամբ SZ-ը, ինչպես ինքն է ասում, ավելի «բարեկազմ» է դառնալու: Որոշ մասեր, համատեսությանը ձգտելով, առաջարկվելու են խտացված տեսքով, քանի որ «ըստ հասարակական կարծիքի հետազոտության արդի արդյունքների՝ միջտարածաշրջանային ընթերցողը ցանկանում է մի թերթ, որը նա ծավալի եւ դրանով իսկ՝ ժամանակի առումով ավելի լավ օգտագործել կկարողանա»:

«Արագ համատեսությունը» նույնչափ պահանջվում է նաեւ տնտեսության մեջ: Նորարարություններ, էքսպերիմենտներ, վերակառուցումներ ամենուր: Շուրջբոլորը, ինչպես եւ «Վելթը», ուզում են մնալ ոչ միայն արդի, այլեւ ժամանակին համահունչ»: Բաժանորդագրային թերթերը այդ նպատակով, անկասկած, ընդօրինակում են ոճական միջոցներ, որոնք մինչ այդ միայն բուլվարային թերթերի գործն են եղել:

Ինչպիսի՞ն կլինի ապագան: Հեռուստատեսության աշխատող Ֆրից Պլայտգենը իր մասնագիտության մեջ հետաքրքիր զարգացում է նկատում: Նա նկատի ուներ «ZAK» հաղորդումը, երբ գրում էր, որ այն «քաղաքականությունը ցույց է տալիս այլ տեսանկյունից՝ հանդուգն, արագ, ծաղրականորեն սրված: Ընդ որում՝ ինֆորմացիան չի զոհաբերվում ժամանցին, այլ քաղաքական հաղորդագրությունն այնպես է տրվում, որ ինքը ժամանց դառնա: Նուրբ տարբերություն»:

Պլայտգենը դրա համար ներկայացրեց մի նոր բառ. «Այն, ինչ տարիներ առաջ անանոթություն կհամարվեր, այսօր համարվում է

ինֆոժամանց (Infotainment)՝ ինֆորմացիա (Information) եւ ժամանց (Entertainment) բառերի խաչասերում»։ Ահա խնդրեմ՝ ընթերցողական հաճույք, սակայն միայն այնտեղ, որտեղ թեման դա թույլ է տալիս։

## **Տեղեկատվական ուղղաբերձ պատի առջեւ**

Այսպիսով, փնտրվում է տեղեկատվության նոր ոճ։ Այն պետք է փոփոխվի, որպեսզի հաղթահարի գոնե միայն աճող մրցակցությունը, որը բազում ուղիներով եւ հեռուստաալիքներով (ավելացրած նաեւ նոր լրատվական ռադիոկայանները) պայքարում է մեր ուշադրությունը գրավելու համար։

Իրականում մենք չափազանց շատ բան ենք իմանում, բայցեւայնպես՝ չափազանց քիչ։ «Աշխատանք նորությունների հետ» գրքի հեղինակ Մանֆրեդ Շթեֆենն այս առիթով նշում է հաճախ մեջբերվող մի միտք.

«Այս երկրագնդի վրա տեղի ունեցող իրադարձությունների 99 տոկոսի մասին թերթի ընթերցողը ոչինչ չի իմանում, քանի որ դրանք պարզապես հայտնի չեն դառնում մամուլին... Սակայն դա էլ դեռ բավական չէ, բոլոր լուրերի 99 տոկոսը, որոնք այնուամենայնիվ, ի վերջո հայտնի են դառնում մամուլին, երբեք ընթերցողի աչքը չի տեսնում, քանի որ դրանք, որպես չափազանց աննշանակալի, կցկտուր, վիճահարույց կամ ըստ այդ ժամանակ տիրող պատկերացումների, որպես չափազանց անբարոյական՝ տեսակավորվում եւ նետվում են զամբյուղը։ Ի դեպ՝ այն, թե որն է չափազանց աննշանակալին, կցկտուրը, վիճելին եւ կամ չափազանց անբարոյականը, շատ տարբերվում են իրարից, այնպես որ մի տեղ խոտանվում է այն, ինչը մի այլ տեղ լրիվ հասնում է մամուլին...»։

«Բոլոր լուրերի 99 տոկոս» թիվը, բնականաբար, մոտավոր է, օդից վերցված։ Սակայն հետամուտ լինենք դրան։ Եթե հաջողվեր միայն մեկ տոկոսով ավելի լուրեր իմանալ եւ փոխանցել, ապա լրահոսքը արդեն իսկ կկրկնապատկվեր։ Եվ դա հաջողվում է. արբանյակային կապը եւ համակարգչային հրաշագործությունները հոգ են տանում, որպեսզի տեղեկատվության առկա ծավալը զգալիորեն աճի։ Եվ որ շարունակի աճել։ Մնա՛ք բարով հին ժամանակներ։

Մենք «լրատվությամբ գերհագեցած ենք եւ թերտեղեկացված», - ասում են ամերիկացիները։ Չափից շատ լուրեր եւ չափազանց քիչ

տեղեկատվություն, ընթերցողները երբեմն առաջարկի լիության պարագայում պարզապես թեւաթափ են լինում: Դրա վերաբերյալ հետազոտություններ կան. բավականին ստույգ հնարավոր է պարզել, թե ինչքանով են ընթերցողները տարվել հոդվածով, թե արդյոք արդեն իսկ ներածականից հետո չե՞ն հրաժարվել շարունակությունից: Գերհարդ Ունհոլցերը՝ Մյունխենի լրատվական միջոցների հետազոտության «Ինֆրաթեսթ» ընկերության գործադիր տնօրենը, տարիներ շարունակ իր սեղանին ունեցել է ավելի քան ութսուն թերթերի հետազոտություններ (Copytest):

«Միջին հաշվով ի գիտություն է ընդունվում ցանկացած թերթի լուրերի եւ թղթակցությունների առավելագույնը հիսուն տոկոսը: Յուրաքանչյուր երկրորդ թղթակցություն, յուրաքանչյուր երկրորդ լուր անուշադրության է մատնվում: Իսկ այն տեքստերից, որոնց վրա կանգ է առնում ընթերցողի աչքը, մինչեւ վերջին տողը ընթերցվում է լավագույն դեպքում միայն կեսը: Ընթերցողները կեսից ընդհատում են, անցնում նորին»:

Դաժան իրականություն. ավելի շատ բաց է թողնվում, քան ընթերցվում: Այսպիսով՝ ամենից առաջ մենք պետք է պայքարենք ընթերցողի ուշադրության համար եւ ապա նոր՝ նրա ժամանակի: Եվ ավելի շատ, քան երբեմից:

Մենք պետք է ավելի գրավիչ դառնանք: Սակայն ինչպե՞ս: Լուրը փոփոխության մեջ: Սկսենք ուղղակի սկզբից՝ առաջին նախադասությունից, մուտքից, ներածությունից: Հանգույցը պետք է լինի այն օղապարանը, որն ընթերցողին կծգի պատմության մեջ: Մենք այստեղ առաջին հերթին խոսում ենք լուրի եւ թղթակցության մասին: Օղապարանը սակայն մեզ պետք է նաեւ այլ դեպքերում՝ խմբագրականի կամ էլ նկարագրական ռեպորտաժի դեպքում: Դիտարկենք փորձը ...

## Կարելորդ սկզբից

Այս խնդիրը բոլորիս է ծանոթ. առաջին նախադասությունը ոչ մի կերպ չի ուզում ստացվել: Մուտքի վրա երբեմն ավելի երկար են մտնում եւ տքնում, քան ողջ հոդվածի վրա: Ո՞րն է պատճառը:

Առաջին նախադասությունից, որի ընդունված շրջասություններն են ներածությունը, ներածականը, մուտքը, հանգույցը, լիդը, առաջին պարագրաֆը եւ բնաբանը, չափազանց շատ բան է պահանջ-

վում: Այն կարելու է ընթերցողի համար. ներածությունը պետք է լինի նաեւ կարդալը շարունակելու հրավեր, լինի զառիվայր, որով ընթերցողը կսահի հողվածի մեջ՝ չկարողանալով կանգ առնել:

Սակայն առաջին նախադասությունը նույնքան կարելու է նաեւ գրողի համար: Սոււտքից է բխում ողջ պատմության կառուցվածքը, հանգույցից է հեղինակը սկսում արձակել կարմիր թելը, որը պետք է անցնի ողջ աշխատանքի միջով: Սկզբի համար որեւէ մանրամասնություն ընտրելով՝ նա սահմանում է այն ամենի հերթականությունը, ինչ հետեւելու է:

Սակայն պե՞տք է, արդյոք, կարմիր թել փնտրել: Արդյոք այն արդեն չի՞ որոշվում իրադարձությունների ժամանակագրական ընթացքով: Ինչո՞ւ պատմությունն առաջին իսկ նախադասությունից չշարադրել այնպես, ինչպես որ այն ծավալվել է՝ առանց խրատական ասացվածք նախադրելու, առանց էականը առաջ տանելու:

Գրողները, թղթակիցները եւ ուղղափառ ձախերը երբեմն հակված են այս պատմելածելին: Գրողն այդ հավանաբար անում է հարգանքի արժանի գեղարվեստական պատճառներով, թղթակիցը՝ երեւակայության բացակայությունից: Վերջինիս դեպքում խմբագիրը հաճախ ժամանակ չի ունենում ձեւափոխելու: Եւ այսպես տարածաշրջանային թերթերի էջերում նորից եւ նորից կարդում ենք այնպիսի հանգույց, ինչպիսին է ստորել բերվածը, որը գտել ենք Ստորին Բավարիայի թերթերից մեկում (սակայն նմանները նույն օրը կարող էինք հայտնաբերել նաեւ բազում այլ թերթերում):

«Սպորտային միության մարմնամարզության խորհրդի կայանալիք միստի կապակցությամբ նախագահը ողջունեց վարչության ներկա անդամներին, բաժնյակների դեկավարներին եւ ավագանու անդամ Յայմետլին: Սկզբում նախագահը անդրադարձավ առանձին բաժանմունքների մարզական գործունեությանը»:

Արդյոք կարո՞ղ է առաջադեմ լինել այն, ինչ ձանձրացնելու աստիճան հնաժողով է: Ամեն դեպքում, երիտասարդ ձախերը վաթսուներկան թվականներին եռանդագին պահանջում էին, որ արդեն հանգույցում իրադարձությունները նկարագրվեն ըստ ընթացքի, այսինքն՝ կատարվածի հերթականությամբ: Մնացած ամեն բան, օրինակ՝ մանրամասնության առանձնացումը, ըստ իրենց, աճապարհություն է:

Իրականում ներկայացման ժամանակագրական ձեւը առանձին դեպքերում կարող է լինել թույլատրելի, նպատակահարմար եւ

հմուտ: Դրան մենք դեռ կանդիդատանք «Թղթակցություն - Ռեպորտաժ» գլխում: Բայց որպես կանոն, լուրերի եւ թղթակցությունների համար գործում է հետեւյալը.

*Ամենակարեւորն առաջին նախադասությունում նշելն անհրաժեշտ է արդեն իսկ այն բանի համար, որ ընթերցողների համար հեշտ լինի ամեն օր առաջարկվող հարյուրավոր լուրերից ընտրություն կատարել:*


Սկիզբը պետք է ասի էականը: Հետո ընթերցողը կարող է որոշել, թե արդյոք ուզո՞ւմ է այդ մասին ավելի իմանալ, արդյոք թեման իր համար հետաքրքի՞ր է, թե՞ ոչ:

Ամենակարեւորը սկզբում՝ սա նաեւ բնական պատմելածեւ է: Հորինենք մի օրինակ: Մեկը, որ հանկարծակի հայտնաբերում է, որ թռչրել են իր դրամապանակը, տանը մանրամասնորեն չի պատմի. «Գրասենյակից տուն գալու ճանապարհին մտա հանրախանութ: Երաժշտական բաժնում հարավցու տեսքով մի մարդ ինձ հրեց եւ շատ քաղաքավարի ներողություն խնդրեց: Մի քանի րոպե անց ձեռքս տարա գրպանս եւ հայտնաբերեցի, որ դրամապանակիս արդեն այնտեղ չէ»:

Նման լուրը սկսվում է ճիշով: Կողոպտվածը, ներխուժելով տուն, գոչում է. «Պատկերացնո՞ւմ եք՝ դրամապանակս խանութում գողացան»:

Ամենակարեւորը՝ սկիզբ. սա հիմնադրույթ էր արդեն կայսերական ժամանակի լրագրողների համար: Վալտեր ֆոն Լա Ռոշը, որպես հակադիր օրինակ, սիրում է բերել Սարաեւոյում տեղի ունեցած մահափորձի մասին «Լոսիշե Ցայթունգ»-ից մի ընդարձակ թղթակցություն, որից ընթերցողները միայն իններորդ նախադասությունում են իմանում, որ գահաժառանգը եւ նրա կինը սպանված են: «Մյունխեներ Նոյեսթե նախրիխթեն» լրագիրը, դրան հակառակ, 1914-ի հունիսի 29-ին՝ մահափորձից մեկ օր հետո, իր թղթակցությունը սկսեց ճիշտ դասական լրագրության կանոններին համապատասխան.

*«Ավստրո-Հունգարական միապետությունը եւ կայսերական տունը ճակատագրի մի նոր ծանր հարված ստացան: Արքղութս գահաժառանգ Ֆրանց Ֆերդինանդը եւ իր տիկինը՝ Ղոհենբերգի դքսուհին, Բոսնիա կատարած իրենց այցի ժամանակ՝ կիրակի առավոտյան, մահափորձի զոհ դարձան»:*



Ներածական նախադասությունը՝ «... ճակատագրի մի նոր ծանր հարված ստացան», միանգամայն արդարացված էր: Այն ծառայում էր որպես թափարգել, որպես օգնություն ընթերցողին, որպես սենսացիոն վերնագրից տեքստին անցնելու կամուրջ: Քանի որ ամենակարեւորն արդեն կար վերնագրում. «Արքղուքս գահաժառանգը եւ նրա կինը սպանված են», հետեւաբար հանգույցում այս իրողությունն առաջին նախադասությունից տեղափոխվել էր երկրորդը:

W-կառուցվածքը, որը կարեւորագույնը ներկայացնում է հենց սկզբում, արդեն 1934-ին գրաֆիկորեն ներկայացվեց ամերիկյան դասագրքերում՝ որպես շրջված բուրգ.

վերելում՝ ծանրության կենտրոնը, գազաթնակետը, ապա երկրորդական հետաքրքրություն ներկայացնող բաներ եւ վերջապես մանրամասները: Այս պատկերը պահպանվել է մինչեւ օրս, յուրաքանչյուր սկսնակ դրան ծանոթանում է լրագրային աշխատանքի ձեռնարկներում: Պատկերը իրազննական է, սակայն սխալ: Դրա դիմաց մի գունդ դնենք:

Գազաթն. սա ամենակարեւորն է՝ նշանավոր մանրամասն, որն ընդգրկվում է առաջին նախադասության մեջ: Այն պատմության կայծակի հարվածն է, տպավորիչ հնարքը, ապշեցնող ինֆորմացիան, հետաքրքիր նորությունը, կորիզը, բուն էությունը. «Դրամապանակս թռցրե՛լ են»: Յետո միայն հաղորդագրությունը կընդարձակվի մանրամասներով:

Գնդաձեւ կառուցվածքը համապատասխանում է նաեւ այն բանին, ինչ նկատի ունեն այն պրակտիկը, որը ներկայացրեց բուրգի տեսությունը:

«Ամենամեծ խաղաքարտը սկզբում խաղա», - գրում էր գործնական լրագրագիտության ակնառու ներկայացուցիչ, ամերիկացի Կարլ Վորենը իր «Modern News Reporting» դասագրքում: Իսկ դա պետք է հասկացվի այսպես. «Պատմության ամենահետաքրքիր մասը դրեք ներածական պարբերությունում»:

Լավագույն դեպքում լիզը պատասխան է տալիս բոլոր հայտնի W-երին. Wer (ո՞վ), Wann (ե՞րբ), Wo (որտե՞ղ), Was (ի՞նչ), Warum (ինչու՞), Wie (ինչպե՞ս): Դրա վերաբերյալ Կարլ Վորենը. «Ստան-

դարտ ներածությունը՝ ամփոփող հանգույցը, ամենապարզ եւ ամենաապահով սկիզբն է»։ Դա վարիացիաների ելակետն է, իսկ այն, որ վարիացիաներ պետք են, թույլատրելի եւ պարտադիր են, Վորենը իր աշակերտներին նույնպես բացատրում էր սկզբից։

## Գործակալությունների խիստ կանոնները

Թերթերն իրենք իրենց համար նոր կանոններ են հաստատում, իսկ լրատվական գործակալությունները շարունակում են առաջնորդվել Վորենի օրենքով։ Լիակատար հիմունքով։ Չէ որ նրանք չեն կարող իմանալ, թե իրենց հաճախորդը առաջարկված տեքստից տա՞սը, թե՞ հարյուր տող կվերցնի։

Սկզբում դիմենք «Associated press»-ին (AP)։ Գործակալությունը աշխատակիցների համար կազմել է ձեռնարկ, որից քաղում ենք սկզբին վերաբերող այս մտքերը.

Ըստ գործակալության լրագրության ամենահին կանոններից մեկի, լուրի ամենակարեւորը դրվում է առաջին լիդի նախադասությունում, ինչը պարտադիր չէ ռեպորտաժների կամ նկարագրական ռեպորտաժի դեպքում... Ապա հետեւում են մնացած փաստերը՝ ըստ իրենց նշանակալիության հաջորդականության։ Այս սկզբունքում ոչ մի վճռորոշ բան չի փոփոխվել՝ հաղորդագրությունը պետք է հնարավոր լինի կրճատել վերջից դեպի սկիզբ, բացառելով այն, որ դրանից փոփոխվի էական ասելիքը կամ տեղեկատվության ամենակարեւոր բովանդակությունը... Լիդը առաջին նախադասությունն է կամ նաեւ առաջին պարբերությունը, որը ընթերցողին (ուսկնդրին) պետք է «առաջնորդի» դեպի լուրը։ Լիդն է հաճախ որոշում լուրն արտատպելու հավանականությունը։ Այն պետք է հնարավորին չափ կարճ լինի, եւ այնքան երկար, որքան անհրաժեշտ է՝ հասցեատիրոջը հետագա ընթերցմանը մղելու համար։ Լիդի նախադասությունը պետք է պարունակի աղբյուրը եւ չորս պարտադիր W-երը. Wer (ո՞վ), Was (ի՞նչ), Wann (ե՞րբ), Wo (որտե՞ր)։ Ամերիկյան լուրերի համար գործում է մի հիմնական օրենք, ըստ որի լիդ-նախադասությունները կարող են կազմված լինել ամենաշատը 25-30 բառից։ Սույնը որպես կողմնորոշում պետք է գործի նաեւ Գերմանական Գործակալության համար։

«Ռոյթեր գործակալություն»-ը իր ոճաբանական գրքում նույնպես պնդում է լուրերի կառուցվածքի պահպանումը՝ Կարլ Վորենի իմաստով:

«Ռոյթերի» լուրերը միաժամանակ պետք է հաղորդվեն հնարավորին չափ մեծ թվով տարբեր հասցեատերերի, որոնց տեղեկատվական պահանջը մանրամասների նկատմամբ նույնը չէ: Այդ պատճառով հաղորդագրությունները պետք է կառուցվեն շրջված բուրգի սկզբունքով: Դրա նպատակը պատմությունները, անհրաժեշտության դեպքում նախադասություն և նախադասություն կամ պարբերություններով, վարից վեր կրճատելի դարձնելն է: Եթե հաղորդագրությունը կրճատվի մինչև առաջին նախադասությունը, ապա իր լրատվական ամենակարևոր բովանդակությունը՝ աղբյուրը ներառյալ, պետք է դեռ պահպանված լինի: Բուրգի ձևի համար միջազգային լրատվական գործում հաստատվեց հետևյալ ձևը՝ Wo (որտե՞ղ), Wer (ո՞վ), Wann (ե՞րբ), Was (ի՞նչ), Warum (ինչո՞ւ), Wie (ինչպե՞ս): Փորձը ցույց է տալիս, որ հերթականության փոփոխությունները հեշտորեն հանգեցնում են նրան, որ կամ իմաստն է աղավաղվում կամ մոռացվում է վեց W-երից մեկը: Սակայն ինչպե՞ս-ը, ինչո՞ւ-ն, ի՞նչ-ը թեև հաճախ կարող են հաղորդագրության առիթ լինել, սակայն այդ դեպքում ամենից առաջ ինչո՞ւ-ն սկիզբ տանելիս պետք է նկատի առնվի սխալ մեկնաբանության հնարավորությունը:

Ահա թե ինչքան խիստ են գործակալությունների կանոնները: Բոբի Ռեյ Միլերը՝ «Յունայթեդ Փրես Ինտերնեյշնելի»-ի լուրերի գլխավոր խմբագիր, տարիներ առաջ ընդհանուր հայտարարի բերեց իր խմբագրության կանոնները.

Չանգույցը պատմությունն է սեղմ ձևով («in a nutshell»): Մեկ առանձին ոչ գերծանրաբեռնված եւ չխճճված նախադասությունը սովորաբար պետք է բավական լինի: Չազվադեպ, եւ միայն այն դեպքում, երբ դրա համար հարգելի պատճառ կա, լիզը պետք է մեկից ավելի նախադասություն պարունակի: Չանգույցը պատմության ամենահետաքրքիր տարրերի ցուցափեղկն է: Դրանք պետք է շարադրվեն իրենց նշանակության հերթականությամբ՝ ըստ ընթերցողի հետաքրքրության: Այս կանոնը գործում է նաեւ այն ժամանակ, երբ պատմությունը մի քանի նշանավոր ակնհայտո-

րեն նույն կարեւորության տարրեր կամ մեջբերումներ ունի: Ամենահետաքրքիրը սկզբում տվեք: Խուսափեք հանգույցը չափազանց շատ մանրամասներով ծանրաբեռնելուց: Պարզ, իրազննելի արձանագրումը սովորաբար ամենալավն է: Խուսափեք հանգույցը բառերով ծանրաբեռնելուց... Ինչքան կարճ լինի հանգույցը, այնքան լավ:

Ամենահետաքրքիրը՝ սկզբում: Այս է Ոսկե կանոնը: Այն մեզ թույլ է տալիս, ո՛չ, այն մեզ պարտադրում է խաղալ W-երով: Այն կօգնի, երբ մենք կազմենու կլինենք հնարավորությունների կատալոգը:

## Գործածական մուտքերի կատալոգ

### W-ը մուտքը

Այն ամենակարեւորը ասում է սկզբում, այն խաղում է, ինչպես Վորենն է պահանջում, հենց սկզբում ամենամեծ խաղաքարտը, այն անվանում է W-ն: Լրագրողը պատմության ամենահետաքրքիր մասը հավաքում է ներածությունում: Դրանից բացի նա հաճախ ջանում է ամենանշանակալի W-ն արդեն առաջին նախադասության սկզբում դնել: Այստեղից ամենից առաջ բխում է W հանգույցների երեք խումբ.

#### ► Ով եւ ինչ

Երբ որեւէ հեղինակավոր անուն կամ հասկացություն է դեր խաղում, ապա այն, գրեթե ինքնաբերաբար, դառնում է սկզբի սկիզբը. «Ամերիկայի նախագահը...», «Շտեֆի Գրաֆը...», «Ֆրանց Բեկենբաուերն ուզում է...», «Գերմանիայի կառավարությունն ունի...», «Էյ-ֆեյվան աշտարակը պետք է ...»

Անունները լուրեր են, ընթերցանության առաջին հրապուրանքը, նրանք նախադասության այն մասն են, որ ասելիքը կարելու են դարձնում: Սակայն միշտ չէ, որ հեղինակությունն է բացում լիդը: Երբեմն բավականաչափ կարելու է դառնում նույնիսկ մի անանուն կերպար.

*«Նյուրնբերգ (սեփական թղթակցություն) – 38 ամյա տնային տնտեսուհին եւ չորս երեխաների մայրը անցած շաբաթվա վերջի վիճակախաղի երջանիկ հաղթողն է: «Խաղ 77 - ով» նա կարող է վաստակել ուղիղ 1 777 777 մարկ եւ*

Բոլոր սկզբներից «Ու-Ինչ» ներածականը լուրերի էջերում հատկապես հաճախ է գործածվում, նկատելիորեն ավելի հաճախ, քան հակառակ ձեւը, որը նախ նշում է «Ինչ»-ը. «Ձերբակալվել է Պերուի արհմիությունների ընդհանուր միության նախագահը ...»

Լրագրողը կարծես նախընտրում է պահպանել նորմալ «նախադասության առարկա-նախադասության ասելիք» հերթականությունը: Անկախ այն բանից, թե սկզբում որը կլինի՝ Ո՞ւ-ը թե Ի՞նչ-ը, ժանրությունն ընկնում է երկուսի վրա էլ՝ անձի եւ իրադարձության, հաստատության եւ տեղի ունեցածի: Մանրամասները սկզբում դեռ երկրորդական են թվում.

► **Ինչպես եւ ինչու**

Այս դեպքում մանրամասնը առաջ է սահում: Այստեղ շեշտադրվում է իրադարձության ձեւը, այստեղ ասվում է, թե դրանում ինչն է անսովոր, նոր, հուզիչ կամ ինչու է դա տեղի ունենում:

*«Մեկ ցատկով երեկ ժամը 20:40-ի մոտակայքում մինչ այժմ անձը չչարզված մի տղամարդ Մարիենփիլացից նետվեց գնացքի տակ...»*

(SZ)

*«Հավանաբար ինքնասպան լինելու մտադրությամբ 69-ամյա մի կին իրեն դուրս է նետել Ագիլոլֆինգերշտրասե փողոցի վրա գտնվող ծերանոցի չորրորդ հարկի պատուհանից ...»:*

(SZ)

Վիճակախաղով գունար շահած կնոջ մասին հաղորդագրությունն ի դեպ նաեւ հնարավորություն էր տալիս այն սկսել ինչպեսով, ինչը եւ օգտագործվեց շատ թերթերի կողմից.

*Նյուրնբերգ (dpa/lby) - «Քնած տեղը» 38-ամյա մի տնային տնտեսուհի՝ Նյուրնբերգի շրջակայքից, միլիոնատիրուհի դարձավ: Սաստիկ հոգնած նա շաբաթ երեկոյան ննջել էր հեռուստացույցի առջեւ, երբ հայտնում էին վիճակախաղի հաղթող թվերը ...»*

Ինչպես-ը լուրի միջից որսում է արտառոցը: Այս W-ն չի վերապահվում «Տարբեր նորություններ» խորագրին, ուր նա հատկապես

հաճախ է հանդիպում: Յուրաքանչյուր բաժին գործածում է այս սկիզբը թեկուզեւ որպես վերնագրի (որում գտնվում են մյուս ավելի կարեւոր W-երը), բուֆերային նախադասություն:

*«Սեփական օրենքով Բավարիայի վարչապետն ուզում է ...»  
(«Աուզսբուրգեր Ալզենայնե»,  
Բավարիային նվիրված էջ)*

*«Բարձրաստիճան տնտեսական պատվիրակության ուղեկցությանը Նիդերլանդների թագուհին ...»  
(SZ, լուրեր)*

### ► Երբ եւ որտեղ

Իրադարձության տեղն ու ժամանակը հազվադեպ են լինում կատարվածի աղը: Արտակարգ է, եթե նրանք բացառության կարգով անում են դա. «Յենց երկուշաբթի օրը, ամսի 13-ին, վկայություններ են տրվել... » «Քաղաքի ուղիղ կենտրոնում երեկ վայրէջք կատարեց մի օդապարիկ...»:

Այն որ ուրբաթ օրը «Օբերես Տոր» հյուրանոցի հարեւան սենյակում ընդհանուր ժողով է կայացել, ընդհակառակը, այնպիսի երբորտեղ մուտք է, որը ուղղակիորեն կարող է շրջանցել ամենակարեւորը կամ դուրս մղել եւ թաքցնել էականը եւ այն էլ՝ հանգամանալից ձեւով:

Սակայն հաճախ այսպիսի կառույցը վերածվում է երկարաշունչ պարբերույթի.

*«Արեւելաաֆրիկյան Սոմալի պետության այն անսպասելի հայտարարությունից հետո, թե ինքը չի ընդունի ահաբեկիչներին, Դաշնային կառավարությունը անհրաժեշտ չհամարեց...»*

(SZ)

Տեղի եւ ժամանակի մասին տվյալները, մյուս կողմից, վավերագրական բնույթ ունեն, օգնում են կողմնորոշվել եւ կարող են դրամատիկ հնչել.

*«Երեկ ժամը 19:40-ին. անհայտ մի անձ երեք ավտոմատային կրակահերթ արձակեց նախագահի ընթացող մեքենայի վրա ...»*

(Բիւդ)

Այսպես «Բիլդ»-ը սկսեց Ջոն Ֆ. Քենեդու սպանության մասին թղթակցությունը: Սա այս դեպքում լիովին նպատակահարմար էր: Մնացած բոլոր կարելու W-երը սենսացիոն վերնագրերով արդեն հայտարարված էին. «Մահափորձ, Քենեդին սպանված է»:

Առանց հետաքրքրաշարժ էֆեկտների վրա խեթ հայացք նետելու «Նոյե Ցյուրիխեր Ցայթունգ» թերթը (NZZ), դրան հակառակ, հանգույցուն երբ-ի ժամանակ պահանջում է ճշգրտություն հանուն ճշգրտության.

NZZ-ը մեծ նշանակություն է տալիս ճշգրիտ ժամանակաշին տվյալներին: Այն իրադարձությունների դեպքում, որոնք զարգացում են ապրում, ճշգրիտ ամսաթիվն անհրաժեշտություն է՝ անճշտություններից խուսափելու համար, նմանապես եւ այն դեպքում, երբ միեւնույն փաստերը արժարժվում են տարբեր վայրերում գտնվող մի քանի աշխատակիցների կողմից:

Լինի դա ով եւ ինչ-ը թե երբ եւ ինչպես-ը՝ W հանգույցն ամենաֆունկցիոնալ մուտքն է: Սակայն դրա դեմ նաեւ ծանրակշիռ փաստարկներ կան: Դրանք կարելի է ամփոփել այսպես.

Հանգույցի այս տեսակը կարող է հանգեցնել նրան, որ շեշտը դրվի սխալ W-ի վրա եւ W-երը թվարկվեն երկու անգամ՝ վերնագրում եւ առաջին նախադասություններում:

Որտեղ սկզբի դեպքում կրկնության վտանգը հատկապես է աչքի զարնում. քանի որ շատ բաժիններում խմբագիրը հաղորդագրություններից առաջ ավտոմատ կերպով եւս մեկ անգամ տեղանունն է դնում:

Եվ դրանք կուտակվում են.

*«Անդերնախ, 15-ը սեպտեմբերի: Անդերնախ քաղաքի ավագանում...»:*

FAZ-ի այս թղթակցության վերնագիրն էր՝ «Ի՞նչ կլինի Անդերնախի հետ»: Երեք անգամ քաղաքի անունը մի քանի տողում գեղեցիկ չէր հնչում:

Այնուամենայնիվ, ինչպե՞ս կարելի է խուսա տալ դասական վեց W-երից եւ այնուհանդերձ ամենակարելորն ասել հանգույցուն: Հնարավոր ելքերն են.

- ▶ մուտքը ուղղակի խոսքի մեջբերմամբ
- ▶ սկիզբը հարցով:

Եթե հարցին խիստ մոտենանք, ապա դրանք նույնպես պատկանում են W-երի կատեգորիային. յուրաքանչյուր նախադասության մեջ կարելի է ո՞վ, ինչպե՞ս կամ ի՞նչ հարցը տալ: Այնուամենայնիվ այդ լիդերը ընդունենք որպես առանձին ձև:

## Z-մուտքը

*«Մոզադիշոյի պատանդներն ազատ են»: Այս բառերով էր սկսվում Դաշնային կառավարության եւ բոլոր խմբակցությունների նախագահների համատեղ հայտարարությունը...»*

Սա dpa-ի հաղորդագրության առաջին նախադասությունն է, որն առանց փոփոխության արտատպվեց շատ թերթերի կողմից: Այստեղ Z-մուտքը՝ այսինքն ցիտատով սկսելը, անմիջապես անդրադառնում է իրադարձության կորիզին: Այն ներգործում է ինքնակա, ոչ շինծու, իրադարձությանը համապատասխան: Եվ այն դրամատիկացնում է՝ առանց որեւէ մանրամասն չափազանցնելու: Եթե որեւէ հարմար բառային արտահայտություն առաջարկվի, յուրաքանչյուր լրագրող կօգտվի նրանից, հատկապես, երբ ցիտատը անսովոր, սենսացիոն, հուզումնալի մի բան է ավետում.

*«Դե գնդակահարիր ինձ, ուզում եմ վերջապես մեռնել»: - Ոստիկանին ասում էր 44-ամյա կոչակար Յոհան Բ.-ն կայարանի մոտ գտնվող գրախանութում...»*

*(«Մյունխներ Մերկուր»)*

Ուրեմն, Z-ներածականը միաժամանակ կարող է հետաքրքրությունը շարժող լինել, շոշափել բովանդակության էականը եւ հոգալ լարվածության մասին. ամեն դեպքում այն ընթերցողին բառիս բուն իմաստով գրավելու ամենակենդանի մեթոդն է: Միեւնույն ժամանակ, նկարագրական ռեպորտաժում կամ ռեպորտաժում այն կարող է դառնալ նկարագրության այն հմուտ ոճածելը, որն ընթերցողին կներքաշի պատմության մեջ.

*«Չեք պատկերացնի, թե ինչ էր կատարվում այստեղ, երբ մի քանի օր առաջ բացվեց սուպերմարկետը: Մարդիկ հերթ էին կանգնել, ասես պատերազմական տարիներ լինեին»: Սակայն այս տարվա օգոստոսի 21-ին ոչ մի պատերազմ չկար: Տանտիկին Քրիստել Շորրիսի կողմից նկարագրված իրադարձությունը ընդամենը պարենային խա-*

*նութի բացում էր: Քյոլնի շուրջ 10.000 քաղաքացիների համար, սակայն, դա ավելին էր. մասնավորապես հույս՝ ամիսներ, մասամբ նույնիսկ տարիներ շարունակ սպասելուց հետո վերջապես կարգին սպասարկվելու»:*

*(«Քյոլնիչե Ռունդշաու»)*

Այս ռեպորտաժի համար հեղինակը՝ Վիլֆրիդ Յոնենը, ի դեպ, Թեոդոր Վոլֆի անվան մրցանակ ստացավ:

Սկզբի ցիտատը պարտադիր չէ, որ արդիական խոսք լինի: Ավելի հազվադեպ, սակայն լիովին ընդունված բան է որեւէ դասականին դիմելը կամ որեւէ սովորական դարձվածք, ասացվածք, նույնիսկ որեւէ երգից մի տող պարզ կերպով առանձնացված նախադրելը: Սա կարող է լինել գիտակցաբար կատարված գրական նվազեցում, ինչպես հետելյալը.

*«Ցանկապատին դարան մտած բզեզիկ է մի նստած, հապա բզեզին նայիր, թե ինչպես է նա պարունմ»:*

Մամուլը մեղավոր է, ռադիոն եւ հեռուստատեսությունը մեղավոր են, դա գրեթե ինքնաբերաբար հասկանալի է բոլոր պետություններում, որտեղ գոյություն ունի մամուլի քիչ թե շատ ազատություն: Եթե կանցլերը չգիտի, թե ինչ է պատասխանում իր աշխատակազմի ղեկավար Շյուլերը, եթե նույն Շյուլերը չգիտի ...

Ցիտատի կապը տեքստի հետ անմիջապես հասկանալի չէ: Ավելի ծիշտ ասած՝ այլեւ ոչ: Հրապարակման օրը յուրաքանչյուր ոք գիտեր, թե «Շպիգել»-ում Ռուդոլֆ Աուզշթայնի այս հոդվածը հրապարակելու ժամանակ «բզեզիկի» տակ ինչ էր հասկացվում. այստեղ խոսվում էր Շթամհայմի ահաբեկիչների բանտախցերում «բզեզների»՝ գաղտնալսող սարքերի եւ փաստաբանների հետ զրույցները լսելու մասին:

Մանկական երգ եւ գերքաղաքական փիլիսոփայություն. սա գիտակցաբար ընտրված հակադրություն էր: Այլ դեպքերում, հակառակը, դարձվածքը եւ ասացվածքը մեծամասամբ էսսեական վեհությամբ աչքի չեն ընկնում: Համենայնդեպս, նրանք շատ գիտակցաբար հանրածանոթ հնչեղանգների են անցնում.

*«Շոր տուր՝ շնորհք տամ: Այս ասացվածքը Իտալիայում քաղաքական երանգ է ստացել: Ինչպես տեղեկացնում է «Il Tempo» թերթը՝ կարծ մազերով, փայլեցված կոշիկներով եւ արդուկված տաբատներով երիտասարդները «Ֆաշիստ» են համարվում...»:*

*(«Վելթ»/AP)*

*«Մյուսինս են - «Թան չէ՝ ամեն մարդու բան չէ»: Այս բնաբանով են ակնհայտորեն առաջնորդվում մյուսինսենյան առյուծները ...»:*

(AZ)

Z- ներածականի մասին այս գլուխը նույնպես կարող էր սկսվել դարձվածքով.

*«Առաջին հացը միշտ կուտ է գնում»: Սա հատկապես վերաբերում է յուրաքանչյուր հողվածի առաջին նախադասությանը...*

Հեղինակը հրաժարվել է դրանից, քանի որ նման ներածականները չափազանց պարզունակ են եւ այդ իսկ պատճառով առանց երեւակայության հնաոճ կամ նույնիսկ ակամայից ծիծաղելի են հնչում: Մի ամբողջ ժամ է պետք, եթե իհարկե հաջողվի, նմանօրինակ մի ասացվածք բառախաղի վերածելու համար: Ավաղ, դա հազվադեպ է հաջողվում:

## F-մուտքը

Որեւէ հնարավոր միտում, ենթադրություն, թեզ, ապշեցուցիչ արձանագրում, նույնիսկ բովանդակության նախնական տեսություն, կարծիք կամ ամենակարեւորի մատնանշում. սրանք երբեմն ամենից հեշտ ասվում են հարցականով: Վատ է, երբ այն առաջին նախադասության վերջում անվստահության զգացողություն է թողնում, լավ է, երբ դրա շնորհիվ պատասխանը լսելու ցանկություն է առաջանում:

«Շպիգել» շաբաթական հանդեսի պատահական ընտրված որեւէ համարում անմիջապես աչքի է ընկնում տասը հանգույց, որոնք սկսվում են հարցականով: Ահա դրանցից միայն երեքը.

### **Գերմանիայի բաժին.**

*«Արդյո՞ք մեր համալսարաններում եւ բուհերում ուսանողական նոր շարժում է կսվել»: «Արդյո՞ք նոր արտախորհրդարանային ընդդիմություն կա»:*

### **Տիտղոսաթերթային պատմություն.**

*«Ինչպե՞ս է մարդն ապրում մահը»:*

**Առաջիկայում լույս տեսնող գրքի նախնական ներկայացում.**

*«Մի՞թե այնուամենայնիվ դա սովորական մոտոցիկլետային դժբախտ պատահար չէր, որի ժամանակ Տ. Ե. Լորենսը՝ Արաբիայի Լորենսը, 1935-ին զոհվեց Անգլիայում»:*

F-ներածականը հաճախ է հանդիպում խմբագրականներում.

*«Պարոն Վալրաֆը բարոյախոս է: Դիմադրական շարժման մարտիկ: Ընդհատակյա կոմունիստ: Իսկն ասած՝ կարելոր չէ...»*

(«Մյունխեներ Մերկուր»)

*«Արդյո՞ք մեր երկրի քաղաքական գործիչները ժողովրդավարների նոր համաձայնության հիման վրա արեւմտագերմանական ժողովրդավարությունը հիմնելու շանսը բաց չեն թողնում»:*

(«Ցայթ»)

Այն, ինչը կարծիք արտահայտող հոդվածում տեղին է փյուն, թուլատրելի է նաև ոստիկանական զեկուցման մեջ.

*«Ինչպե՞ս կարող էր 75 կգ ուրանը հայտնվել մետաղի քարոզի գնդի պահեստում: Այս հարցով ներկայումս զբաղվում է Լոնդոնի ոստիկանությունը...»*

(SZ)

Նույնիսկ մահախոսականը «ֆելիետոն» (գերմանական թերթերում մշակութային նորությունների բաժինը ֆելիետոն է անվանվում - խմբ.) բաժնում կարող է դրանով սկսվել.

*«Ինչի՞ մասին խոսենք՝ սկանդալների՞ : Տապալված ներկայացումների՞, պատահուտված պայմանագրերի՞, պետության պաշտոնանկ արված նախագահների հետ նյարդերի հյուծումների՞ : Թանաքամաններով գնդակոծված հն-տենդանտների եւ ապտակված լրագրողների՞, թե՞ կշտամբանքի ենթարկված գործընկերների եւ անհծված ամուսինների»:*

(«Ցայթ»)

Խոսքը «բելկանտոյի պրիմադոննա» Մարիա Կալլասի մասին էր, որը մահացել էր դրանից մի քանի օր առաջ:

Բ-հանգույցի դեպքում կարելորդ դեռես եւ նկատելի ձեւով առաջ է բերվում: Սակայն կան ներածություններ, որոնցում գրողը լրիվ մտածված ձեւով հակառակն է անում: Նա Վ-երը տանում է երկրորդ նախադասություն կամ նույնիսկ պատմության ավելի խորքը: Նա այդ անում է հետաքրքրությունը գրգռելու նպատակով: Եւ այս մեթոդը իրականում կարող է շատ հետաքրքրաշարժ լինել...

## Ուշադրության գարթուցիչ

Մարդը, որի դրամապանակը գողացել են հանրախանութում, տանը իր ընտանիքին հավանաբար չի ապշեցնի՝ լուրը բացեհիբաց ասելով: Նա կսկսի մի կիսանախադասությամբ, որը նախեսառաջ կտեղեկացնի, որ ինքը մի արտառոց բան ունի ասելու. ընդամենը մի քանի բառ, որը խոսողին լսող կապահովի. այնպես ինչպես բաժակաճառ ասելուց առաջ նա լսելիորեն կզնգզնգացներ բաժակը:

Կողոպտվածի դեպքում նախադասությունը կարող է հնչել այսպես. «Պատկերացնո՞ւմ եք, թե ինձ ինչ է պատահել»: Սա ուշադրության գարթուցիչ է, որը սիրված է նաեւ բուլվարային մամուլի կողմից: Այսպիսի օրինակներ կարելի է գտնել ամեն օր.

*«Սարսափելի ողբերգություն տարեմուտի օրը»*

(AZ)

*«Նման բան Բունդեսլիգայում դեռ չէր եղել»*

(«Բիլդ»)

*«Ջարհուրելի է»*

(tz)

*«Լավ լուր»*

(«Բիլդ»)

Սա էինք կարդում թերթերի առաջին էջերում: Մուտքի այս տեսակը արդեն անվանվում է նաեւ «Բացականչական լրագրություն», չնայած այն հաճախ ավարտվում է միջակետով, ըստ էության կամուրջ է դեպի բուն հաղորդագրությունը: Հաճախ այս նախադասությունները իսկապես միայն բացականչություններ են, գոչյուններ՝

բաղկացած միայն մեկ բառից. «չլսված բան», «աներեւակայելի՜ է», «հաղթանակ»:

Արդյո՞ք պետք է սրանից ազատվել, որպես բուլվարային թերթի անհեթեթություն: Երեւի ոչ, քանի որ նույնիսկ ամենալուրջ թերթերում լրագրողները նույնպես սկզբում հաճույքով կզնգզնգացնեին բաժակը.

*«Մենք չափազանց գեր ենք: Յուրաքանչյուր հետազոտություն դա նորից է ապացուցում. մենք չափազանց գեր ենք, մե՛նք՝ գերմանացիներս»:*

Սա ճիշտ, լավ բացականչական հանգույց է: Այսպես է սկսվում «Զյուդդոյե Յայթունգ»-ի մշտական խորագրերից մեկի հերթական հոդվածը:

Նման ուշադրության զարթուցիչներ երկար փնտրելու կարիք չկա: Ահա մի քանի արագ ընտրված ցուցադրական օրինակներ.

*«Անկեղծ խոստովանում ենք»  
(SZ, նավթի գների վերաբերյալ ուսումնասիրություն)*

*«Քիչ էր մնում՝ տանուլ տայինք: Հոկտեմբերի 2-րդ Բունդեսլիգայի միավորների համար խաղում ...»  
(«Մանհայմեր Մորգեն»,  
սպորտային հաղորդագրություն)*

*«Անսպասելի էր: Այդ բանը ո՛չ համաձայնեցված էր պատասխանատու խմբագրի հետ, ո՛չ էլ սցենարում կար ...»  
(Ռուդի Կարելսի վերջին հեռուստատեսային հաղորդման մասին ռեպորտաժ)*

*«Գուշակությունը շարունակվում է: Կզա՞, թե չի գա: Բնականաբար նկատի ունենք վերելքը կամ ...»  
(«Ցայթ», Տնտեսական մաս)*

*«Ծառայողը բորբոքված է».  
(«Ցայթ», Քյոլնի արտասահմանցիների գործերով զբաղվող տեսչություն):*

Ինքնաբերաբար գայթակղություն է առաջանում՝ նման ուշադ-

րության զարթուցիչները ավելի ընդարձակելու, ապշեցուցիչ մի փաստ, գուցե, մինչեւ W-ին հասնելը մի հարց ավելացնելու: Կանգ առնենք «Ցայթ»-ից մեջբերված ռեպորտաժի վրա.

*«Ծառայողը բորբոքված է. «Նրանք իրավունք չունեն Գերմանիայում մնալու, հասկացեք վերջապես, որ նրանք չունեն ազատ տեղափոխվելու եւ բնակություն հաստատելու իրավունք», զայրանում է Քյոլնի իրավական հանձնաժողովի ղեկավար Պետեր Շեֆերը զայրույթից խզվող ձայնով, «ես գիտեմ բոլոր հնարքները ...»:*

Միայն տասներկուերորդ տպագիր տողից հետո է վերջապես պարզվում, թե ինչի մասին է խոսքը՝ գնչուական մի ցեղի դեմ արտասահմանցիների գործերով զբաղվող տեսչության պայքարի մասին: Առաջին կիսամախադասությունը, անշուշտ, ուշադրության զարթուցիչ է: Սակայն ողջ հանգույցը, այնուամենայնիվ արդեն պատկանում է մեկ ուրիշ, հետեւյալ կատեգորիային ...

## **Օ՛հ - մուտքը, հետաքրքրություն շարժողը**

Իրոնիկ մեկնաբանությունների հեղինակների գործը առանց դրա գլուխ չի գալիս: Եթե այն չլիներ, ապա պետք է հայտնագործվեր նկարագրական ռեպորտաժի համար, իսկ բուլվարային մամուլը պարզապես չի կարողանում հրաժարվել դրանից: Պատկերազարդ պարբերականների հեղինակների մոտ այն գրեթե ինքնըստինքյան է հոսում գրամեքենայի մեջ... Ինչպես հետեւյալ նախադասությունը օ՛հ-հանգույցը՝ հետաքրքրություն շարժողը, հոսում է եւ մտադիր չէ կարելոր W-երը ամենասկզբում ներկայացնել: Դրանք տեղափոխվում են դեպի հետ՝ մի քանի նախադասություն հետո, ընթերցողը սկզբից պետք է փորձի կռահել: Դա ասես արվում է նրան տանջելու համար: Չէ՞ որ նա վերնագրից արդեն գիտի, թե ում կամ ինչի մասին է խոսքը: Բայց հանգույցում գլխավորը կամ գլխավոր անձին սկզբում թաքցնում են.

*«Ժամանակ առ ժամանակ նա աշխատում է գրակալի մոտ կանգնած, ինչպես որ ընդունված էր կես դար առաջ, սակայն իր ժամանակը պլանավորում է 1990թ-ի եւ հետագայի համար: Նա պացիֆիստ է, բայց կառուցում է ռազմական ինքնաթիռներ եւ ոչնչացման զենքերի ողջ համակար-*

*գեր: Որպես տեխնիկ նա բացառիկ դեմք է, սակայն հաճախ կասկածում է առաջընթացի իմաստին ...»*

(AZ)

Միայն հանգույցի վերջում է գալիս հանգուցալուծումը: Խոսքը արդյունաբերող Լյուդվիգ Բյուլկովի մասին է, որը հենց այդ ժամանակ կլոր մի տարեդարձ էր տոնում: Մի այլ հետաքրքրության շարժիչ FAZ-ից.

*«Հենց Ֆրանկֆուրտի գրքի տոնավաճառից առաջ Ֆիշերը հրատարակչությունում մի գիրք լույս տեսավ, որը մինչ այժմ գոյություն ուներ միայն ասեկոսեի ձեռով: Այն ոչ ծանուցվել էր հրատարակչության աշնանային արտադրանքի ծրագրում, ոչ էլ ներկայացված էր այդ սեզոնի նորությունների մասին գրախոսականներում ...»*

(FAZ)

25 նախադասություն հետո իմանում ենք գրքի վերնագիրը. Ռայներ Կունցեի «Հիասքանչ տարիները»: Երկու դեպքում էլ, ինչպես AZ-ի, այնպես էր FAZ-ի, նպատակը ակնհայտ է. ընթերցողի հետաքրքրությունը պետք է շարժել հնարավորին չափ՝ հակադրությունների, անակնկալների, լարվածության էֆեկտների միջոցով, որոնք, եթե ամեն ինչ լավ ընթանա, «Օ՛հ» կառաջացնեն: Այսպիսով միևնույն է, թե հետաքրքրություն շարժողը ընդամենը կես նախադասություն է կազմում, թե մի ամբողջ պարբերություն. ոչ մի այլ մուտք ավելի հեշտ չի վերածվում հողվածի մեջ ներսահող օճառի հետքի:

Սակայն այն ոճական հնարքները, որոնք գործածում է հետաքրքրություն շարժողը, որոշ թերթերին կրկին անլուրջ են թվում: Օրինակ «Նոյե Ցյուրիխեր Ցայթունգ»-ին:

## Մխալ լիդը

«Լեզվական-տեխնիկական տեղեկատու՝ մեր խմբագիրների, թղթակիցների եւ աշխատակիցների համար», այսպես է անվանում «Նոյե Ցյուրիխեր Ցայթունգ»-ը իր ոճաբանության գիրքը, որը թվարկում է ոչ միայն ուղղագրական կասկածելի դեպքերը, այլև խոսում է լրագրության հիմնահարցերի մասին: Այդ տեղեկատուից վերցված է սխալ առաջաբանի մասին ստորեւ բերված հատվածը, որի տակ NZZ-ը ակնհայտորեն հասկանում է նաև մեր հետաքրքրությունը շարժողը: Մեջբերում ենք.

Լիդ. ուշադրություն է հրավիրվում այն բանի վրա, որ պետք է պայքարել «լիդի» սխալ գործածության դեմ գործակալությունների կողմից: Օրինակ՝

*«Բեռն, 25 նոյ. (sda). Թմրանյութերի աճող սպառման համար մեղավոր են ոչ թե մեր օրենսդրության մեջ եղած ինչ-որ բացեր, այլ ավելի շատ այն անխոհեմ պնդումները, թե թմրանյութերի օգտագործումը անվտանգ կամ բացարձակապես անվնաս է: Այսպիսով, միայն պատժիչ միջոցները բավական չեն թմրամոլության ներկայիս ալիքը հաղթահարելու համար: Դրանք պետք է ուղեկցվեն լուսաբանող եւ դաստիարակչական նպատակային գործողություններով: Սա էր Բունդեսրաթի պատասխանը Դուսի Ազգային ժողովի հարցմանը ...»*

Ընթերցողը շփոթության է մատնվում, երբ մի ամբողջ հատվածում պնդումներ են թվարկվում, որոնց հեղինակը նրանց հայտնի է դառնում միայն վերջում. «սա է Բունդեսրաթի պատասխանը», կամ «... հայտնեց կառավարության խոսնակ Աիլերսը» կամ «սա է նախագահ Պոմպիդուի կարծիքը ...»:

Պետք է ուղղել նաեւ սխալ ոճաբանական լիդը, այսինքն՝ այն նախադասությունները, որոնք սկզբում ընթերցողին ճմբակոծում են մի շարք դերանուններով, օրինակ՝ նա, նրան, նրանց, եւ միայն մի քանի տող հետո նա վերջապես հասկանում է, թե ու՞մ նկատի ունեն այդ նա-ն, նրա-ն կամ նրանց-ը ասելով:

*«Այն բանից հետո, երբ նա նրան ճանապարհից քարշ տվեց մոտակա անտառը եւ անբարո գործողություններով անարգեց, քսանմեկամյա Մաքս Դիլդերբանտը Սթառկիրխից, շաբաթ երեկոյան խեղդեց ութամյա Բերնադեթե Գրյուբերին՝ Նիդերլինդսբախից:»*

Կամ.

*«Քանի որ նրանց մոտ մեկ կիլոգրամ հաշիշ կար, ըստ Արգաուլի շրջանային ոստիկանության տվյալների, երեկ կեսօրին Ռայնֆելդենի շվեյցարական մաքսատանը ձերբակալվեցին երկու ամերիկյան զինվոր՝ Մայքլ Պինելին եւ Ռայմոնդ Դիչիկիոն»:*

Սա բուլվարային թերթերի ոճն է: Մնացած թերթերը կարող են այն ընդօրինակել կամ նույնիսկ պահանջել գործակալությունից, սակայն NZZ-ը դրան չի անցնի»

Նա-նրանց-նրանք սկիզբը հազվադեպ չէ նաեւ «Ջյուդոյչե Ցայթունգ»-ուն: Այնուամենայնիվ այս հրատարակության մեծ լեզվագիտակցությամբ օժտված հեղինակ Սաքսին Ֆակլերը՝ «Մեր մասին է ասված. թերթում՝ լեզվի խնամքի փոքրիկ ուղեցույց» բրոշյուրում նախազգուշացնում է նմանատիպ ներածությունների վտանգների մասին:

Զգտելով ռեպորտաժների սկզբում հետաքրքրություն չարժեւել եւ գեղարվեստական ոճաձեւերով հանդես գալ՝ լրագրողները հաճախ սխալ ճանապարհին են հայտնվում: Հետեւապես մուտքի նախադասությունը այսպիսի տեսք է ունենում.

*«Երբ նա նշանակված ժամից կես ժամ հետո մտավ կոնֆերանսի դահլիճ, վարչապետ Հինթերհոլբերի դժգույն շուրթերին այլայլված ժպիտ էր խաղում»:*

Ընթերցողի հետաքրքրությունը շարժվում է, եւ ընթերցողը իսկապես հետաքրքրվում է, թե ովքե՞ր են այդ երկուսը, որ այստեղ հանդես են գալիս. մտնողը եւ վարչապետ Հինթերհոլբերը: Հեղինակը թերեւս իր տեսադաշտում նկատի ուներ միայն մեկ անձի՝ մասնավորապես վարչապետ Հինթերհոլբերին: Սակայն, գրածի համաձայն, հանդես են գալիս երկու մարդ: Սակայն քանի որ իրականում միայն մեկ անձ է առկա, ապա մուտքի նախադասությունը պետք է հնչի հետեւյալ կերպով. «Երբ վարչապետ Հինթերհոլբերը ... կոնֆերանսի դահլիճ մտավ, նրա շուրթերին ...»:

Կամ եթե կցանկանան սկսել գլխավոր նախադասությունից. «Վարչապետ Հինթերհոլբերի շուրթերին ..., երբ նա ... կոնֆերանսի դահլիճ մտավ»: Մի խոսքով. ստորադասական նախադասության առաջին մասը չի կարելի սկսել նա-ով, երբ գործող անձը միայն մեկն է:

## Լուսանկարչական մուտք

Այստեղ հոդվածը սկսվում է տեսարանը լուսանկարչական ճշգրտությամբ նկարագրելուց: Թատերաբեմ է կառուցվում գալիք գործողության համար: Այս հանգույցը ընթերցողին տեղափոխում է գործողության մեջ, ցույց տալիս իրադարձությունը, պատկերներ շարունակում իրար հետեւից, վերարտադրում գույնը եւ տրամադրությունը՝ պահի տրամադրությունը:

*«Լաստանավի տախտակամածից կղզու մայրաքաղաք Դուգլասը Միջերկրական ծովի լողափնյա քաղաքի տպավորություն է թողնում: Լայն ծովախորշ, կիլոմետրերով ձգվող լողափնյա զբոսավայր, դրա հետեւում՝ սպիտակ ներկված տների, հյուրանոցների մի ամբողջ շարք: Սպասումով լի ուղեւորները նայում են Իռլանդական ծովի մեջտեղում գտնվող Isle of man փոքր կղզու ուրվագծերին: Շատերը հագնված են կաշվեպաշտի երազանքի պես. նեղ կաշվե տաբատներ, կաշվե բաճկոններ, կաշվե երկարաճիտ կոշիկներ, կաշվե ձեռնոցներ՝ մոտոցիկլետիստների աղանդի անդամներ իրենց ուխտատեղի տանող ճանապարհին...»*

(«Ցայթ»)

Մի փոքրիկ ֆիլմ է. սա Isle of man կղզուն աշխարհի ամենահայտնի մոտոցիկլետային մրցարշավի մասին ռեպորտաժի ներածությունն է: Արտառոց իրադարձության ժամանակ թղթակիցը աչքերով անկասկած լուսանկարում է այն ամենը, ինչ տեսնում է. մանրամասնություններից, դրվագներից նա ամբողջական պատկեր է կազմում: AZ-ը այսպես է նկարագրում մի երկաթուղային վթար.

*«Կիրակի գիշերը վթարի վայրում: Մոմլաթները ծածկում են մահացածներին, որոնք պառկած են մարգագետնում, ռելսերից դուրս եկած ընդհարված գնացքների վագոնների կողքին: Քանի՞սն են նրանք: Մյուսները մահանում են շտապօգնության մեքենաներում, հիվանդանոցներում: «Գնալով նրանք ավելանում են», - ասում է Միսբախի շրջանային ավագանու նախագահ Գոյոբլը ... Գնացքաքարշի պատուհանից դուրս է կախվում մի մոխրագույն, անկենդան ձեռք: Իսկ դրա վերելում՝ ավերված, տձեւորեն ծռ-*

*ված մետաղի մեջ, թիթեղի կտորների եւ քարշային մեխանիզմի արանքում մի կին դեռ կենդանի է»:*

(AZ)

Այնուամենայնիվ լուսանկարչական մուտքը պիտանի է ոչ միայն նկարագրական ռեպորտաժի կամ մեծ ռեպորտաժի համար, այն նմանապես կարող է ներածել նաեւ կարծիքային հոդվածը:

*«Պայթեցված գործարանների եւ քաղաքի արվարձանի կարստացած լերկ տարածքի արանքում՝ Բեյրութի հարավ-արեւելյան մասում, գտնվում է պաղեստինցիների նախկին ճամբարի՝ Թել Ցատարի ավերակակույտը: Բարձունքի վրա, որը իշխում է ամայացած ճամբարի տարածքի վրա ...»:*

(FAZ- ի խմբագրական)

Աղետի դեպքում թղթակիցը ըստ հնարավորության պետք է կորզի յուրաքանչյուր աչքի ընկնող մանրամասնություն, իսկ խմբագրական հոդվածն ու նկարագրական ռեպորտաժը, ընդհակառակը, շատ զգույշ պետք է լինեն մանրամասնությունների հետ: Սխալ ընտրությունը կաղավաղի ամբողջական պատկերը:

Լուսանկարչական մուտքը պարտադիր չէ, որ բեմական սկիզբ լինի: Մեկը միայն նկարներ է մատուցում, մյուսը այդ նկարներից փոքր պատմություն է ստեղծում: Սակայն այդ երկուսի սահմանները միաձուլվում են: Էգոն Էրվին Քիրշի «Կանանց բանտ» վերնագրով ռեպորտաժը դա է ցույց տալիս.

*«Ավելի քան յոթանասուն կանայք նստած են կարի մեքենաների մոտ, նրանք սպիտակեղեն են եզրակարում եւ գլանակ ծխում, ոմանք կարճ տղայական սանրվածքով են, ոմանք էլ՝ գորշ շագանակագույն գլխաշորերով, ոմանք խորշոմած են եւ անհավես, ոմանք էլ՝ շպարված ...»*

(«Քրեական ուղեգրություն»)

Քիրշը իրավիճակ է նկարագրում, մանրամասնություններ նկարում. արդյո՞ք սա արդեն տեսարան չի դառնում: Բայց նա պետք է նաեւ պատմություն պատմի: Դիմենք «Շթերնին»: Պարսկական շի-իթների առաջնորդ Յոնեյնիի մասին ռեպորտաժ.

*«Հարեւան գյուղում ընդամենը մի քանի օր մնալու խոստումով էր հրաժեշտ տվել կոռնավոր Մուստաֆա ալ Մու-*

*սավին իր ընտանիքին: Սակայն մոլլան այլևս կենդանի  
չէր վերադառնալու: Կազակական զնդի ...»:*

*(«Շթերն»)*

Տեսարանը. կրոնավորը հրաժեշտ է տալիս: Պատմությունը՝ նա  
այլևս չի վերադառնալու: Մոլլան՝ Հոմեյնիի հայրն է, որդին պետք է  
վրեժխնդիր լինի: Մի՞ թե սա պատմությունն է:

## **Վազբաթափով**

W-ներածությունը անմիջապես բռնում է գլխավորը, լուսանկար-  
չական մուտքը պատմության կորիզին է մոտենում հավանաբար  
ծայրամասից՝ նկարների, դետալների միջոցով: Ըստ պահանջի,  
լրագրողը ավելի ետ է գնում, նա գնում է իր նյութը որոշակի տա-  
րածությունից՝ այն ավելի լավ ընդգրկելու համար: Նրան երկար  
վազբաթափ է հարկավոր թեմայի մեջ ներխուժելու համար:

«Ջյուդոյչե Ցայթունգ»-ը, օրինակ, նկարագրում է սունկ հավա-  
քողների համար կոնսուլտացիայի գործունեությունը: W-սկիզբը  
կլիներ. «Սնկագետի ամենաեռուն սեզոնը»: Այնուամենայնիվ հոդ-  
վածը սկզբում անդրադառնում է ողջ իրավիճակին, որպեսզի հաս-  
կանալի դարձնի փորձագետի դերը.

*«Սունկ հավաքելը ազգային սպորտածես է դարձել: Հատ-  
կապես շաբաթվա վերջին մյունխենցիները զանգվածա-  
բար քաղաքից դուրս են գնում՝ սունկ հավաքելու: Դրա  
մասին մի ամբողջ երգ կարող է երգել Անդրեաս Նոյները,  
որը ...»*

*(SZ)*

Անդրեաս Նոյներ. նա է սնկագետը: Սեկ տարի անց SZ-ը կրկին  
անդրադառնում է նրա աշխատանքին: Կրկին վազբաթափով.

*«Անձրեւառատ ամառն այնուամենայնիվ մի մխիթարանք  
ուճի. այս տարի կրկին շատ սունկ կա: Անփորձ հավաքող-  
ների համար սակայն, ինչպես ցույց է տալիս փորձը, դա  
նաեւ մեծ վտանգ է: Թունավոր սունկ ուտելը կարող է մա-  
հացու լինել ...»*

*(SZ)*

Միայն վերջում է հանգույցը ընդհանուրից անցնում արդիակա-  
նին. «Ամուսիններ Անդրեաս եւ Հիլդե Նոյներների մոտ՝ խորհրդատ-  
վության (որը երկուշաբթի օրվա տոնի պատճառով տեղափոխվել էր  
երեքշաբթի) քաղաքային թանգարան էր եկել ավելի քան 300  
մարդ»: Սա ընթերցողն առանց այն էլ գիտեր. վերնագրի ստորին  
տողը արդեն տեղեկացրել էր, որ սույն հավաքողների կոնսուլտա-  
ցիայում այցելուների բազմությունն է եղել:

## «Հիմա ի՞նչ» մուտքը

Ինչպե՞ս շարունակել: Հիմա ի՞նչ: Բանն էլ հենց այն է, որ «USA  
Today» թերթի լրագրողները դրանով պետք է սկսեն իրենց թղթակ-  
ցությունները: Նրանց ներքին կանոնները պահանջում են.

*«Հավաքեք կիզակետը: Հիմնական ծանրությունը դրեք  
նորի վրա, այն բանի, թե ի՞նչ է լինելու եւ թե դա ի՞նչ է նշա-  
նակում ընթերցողի համար: Անվանեք հետեւանքները, ա-  
սեք, թե ինչպես պետք է արձագանքեն ընթերցողները կամ  
թե ինչպես նրանք կարող են օգտագործել տեղեկատվու-  
թյունը»:*

«USA Today»-ն էլնում է հետեւյալ սկզբունքից.

*«Մեր ընթերցողները քաջատեղյակ են, լավ տեղեկացված,  
նրանք լուրերի սովորական աղբյուրների լրացումն են ու-  
զում, ոչ թե փոխարինումը: Այսպիսով, մեր պատմություն-  
ները կարող են ավելի քիչ խորքային գիտելիքներ տալ ի-  
րադարձությունների մասին՝ հիմնական շեշտը դնելով հե-  
տեւանքների եւ նորի վրա»:*

Մի օրինակ ոճաբանության ձեռնարկից. ինքնաթիռ է ընկել: Ամե-  
նայն հավանականությամբ ընթերցողները դրան արդեն տեղյակ են  
հեռուստատեսությունից, դա այլեւս նորությունն չէ: Ինչպե՞ս սկսել.

*Վատ է. «Ինքնաթիռի անկման ժամանակ երեքշաբթի օրը ...»  
Ավելի լավ է. «Օդանավակայանները ստիպված պետք է  
լինեն վերանայելու իրենց մեկնարկային եւ վայրէջքի վե-  
րահսկողությունը, քանի որ երեքշաբթի օրը մի ռեակտիվ  
...»*

Եթե նման մուտքը շինծու է հնչում, ապա այն վատ է արված: Իսկ հարցնելը՝ թե հետո ի՞նչ է տեղի ունենալու, միանգամայն լավ ոճ է:

Հանրագումարի բերելով, պարզենք. բոլոր W-երը առաջ տանելն արդեն վաղուց համատարած կանոն չէ: Մենք նոր ուղիներ ենք փնտրում՝ ընթերցողի հետաքրքրությունը շարժելու համար:

W-երը, համենայն դեպս, տեղադրվում են առաջին պարբերությունում՝ ապահովության համար: Քանի որ շտապ էջադրության ժամանակ պատմության գլխավոր մասը հաճախ բռնի կերպով կրճատվում էր: «Վերջում», այսպես են բողոքում գրողների սերունդներ, «մեզ ամենից հաճախ են կրճատում: Եվ դա այն դեպքում, երբ ամենաոգեշունչ մասը վերջն է»:

Այսօր՝ տողային ճշտությամբ կատարվող մակետավորման ժամանակներում, էջադրումը այլևս «խոզ մորթելու տոնակատարություն չէ»: Եթե ոչ կարելու W-երը առաջ էին բերվում միայն կրճատվելու մտավախությունից, ապա այսուհետև բովանդակությունը կարող է փոքր-ինչ վերադասավորվել:

W-երի մասին առաջին պարբերությունում մտածելու համար կա մի հիմք եւս՝ վերնագիրը: Նախորդող եւ հաջորդող տողերի հետ մեկտեղ նա մանրամասնորեն պատմում է այն, ինչ հաճախ եւ նույնիսկ նույն բառերով արտահայտված է հանգույցում, եւ հավանաբար երրորդ անգամ կրկնվում է պատմության մեջ կամ նկարի մակագրությունում: «Մայնի վրայով գցած կամուրջը փլուզվել է» կարդում ենք վերնագրում: Իսկ հանգույցը սկսվում է. «Մայնի՝ Յոհեննուհե բնակատեղի մոտի կամուրջը երեկ ...»: Ապա նայում ենք լուսանկարի մակագրությանը, որը շատ բան չի ավելացնում: Հետեւանքը. ընթերցողը ձանձրանում է եւ անցնում մյուս հոդվածին:

Ի՞նչ անել

Վերցնենք «Շախգելը», «Շտերնը» կամ «Վոխեն»: W-երը տեղափոխվում են վերեւ՝ վերնագրի հաջորդ տող, որը որոշ թերթերում արդեն նաեւ կոչվում է հանգույց կամ նշանաբան: Գլխավոր վերնագիրը գրավում է հետաքրքրական բառերով, ենթավերնագիրը ասում է, թե ինչի մասին է խոսքը, իսկ գրողները լիակատար ազատություն ունեն՝ սկսելու ասույթով, տեսարանով, հետաքրքիր մանրամասնությամբ, մեջբերմամբ, բացականչությամբ:

Նաեւ օրաթերթերն են առիթ տալիս խորհելու այն բանի մասին, ինչ խրատել է Էվալդ Շթրուվեն՝ «Բիլդ ամ Ջոնթագ»-ի տնօրեն եղած ժամանակ.

«Մենք ուզում ենք ոչ միայն էջի գրավչություն, այլեւ ընթերցանության բարձր որակ: Երբ ընթերցողը դեռ մուտ-

քում իմանում է բոլոր կարեւոր բաները, նրա հետաքրքրությունը մեռնում է, նա բավարարված է եւ չի շարունակում կարդալ: Սա վերաբերում է բուլվարային թերթերի շտապող ընթերցողներին. օրաթերթերի դեպքում դա կարծես այլ է: Այդ պատճառով հանգույցի գործառույթները տեղափոխված են վերնագիր: Այնտեղ ես մտցրել եմ թավատառ տպվող հասկացությունը՝ հիմնական բառը, որն ասում է, թե ինչի մասին է խոսքը: Դրան հակառակ, հնուց եկած՝ բազմաթիվ W-երով հանգույցը թերթի ներսում արգելված է: Մենք գերադասում ենք սկսել տեսարանով, որը պետք է գրված լինի այնքան հետաքրքիր, որ կարդալը շարունակելու ցանկություն առաջացնի»:

Տեսարանային մուտքը առաջին հերթին առաջարկվում է մեծ թղթակցությունների եւ ռեպորտաժների համար: Լրագրող Կլաուս Բենկը «Գործնական ժուռնալիստիկա» գրքում նաեւ առաջնորդող հոդված գրողներին է շեշտակիորեն խորհուրդ տալիս փորձել բոլոր հնարավորությունները.

«Կարծիք արտահայտող քաղաքական հոդվածը կարիք չունի եւ չպետք է լինի «նկարագրական ռեպորտաժ»: Սակայն մեկնաբանը լավ կանի ռեպորտաժից եւ նկարագրական ռեպորտաժից որոշ տարրեր փոխ առնի, ամենից առաջ՝ կենդանի սկիզբը: Լավ է, երբ առաջին նախադասությունը կամ պարբերությունը պատկեր է գծում: Ակնհայտորեն դրանից միշտ ընթերցելու զգալի հրապուրանք է առկայծում: Կենդանի ազդեցությանը կարելի է նաեւ այլ կերպ հասնել, օրինակ՝ զրուցատիպ մի արտահայտությամբ»:

Կլաուս Բենկը գալիս է հետեւյալ եզրահանգմանը.

«Մեկնաբանության առարկայի ամենագլխավորը՝ իր բնույթին համաձայն վերջում է: Հոգեբանականը, դրան հակառակ, սկզբում: Երկուսի վրա էլ ուշադրություն պետք է դարձվի»:

Սկիզբը կենդանի դարձնել, ո՞վ չի ուզի դա՝ լուրեր գրո՞ղը, սպորտային թղթակի՞ցը, թե՞ խմբագրականի հեղինակը:

Ամնիջապես կրկին հիշում ենք մի ոսկե կանոն անցյալից՝ ծայրա-

հեղ արդիական, միշտ հետեւելու արժանի: Այն ամրագրված է «Շպիգելի» այսպես կոչված կանոնադրության մեջ, որում 1949-ին սահմանվեցին նորաբաց հանդեսի ոճական հիմնադրույթները: Մուտքի մասին գրված էր.

«Շպիգելի» պատմությունները պետք է.

- ▶ «դռան հետ տուն ներխուժեն, այսինքն՝ հենց առաջին պարբերության մեջ ասեն, թե ինչու եւ ինչ հրատապ առիթով են գրվել:
- ▶ առաջին նախադասությունը ընթերցողին նետեն օղապարանի պես. առաջին պարբերության մեջ է ընթերցելու խթանը: Ասես մի «հոպլա»-յով ընթերցողը պետք է ցատկի նյութի մեջ»:

Հոպլա՝ եթե հասել ենք դրան, ապա բռնել ենք ընթերցողներին: Ապա նրանք մի սահարանի վրա են, որով կսահեն հողվածի մեջ:

Հոպլա՝ Թերթերը նոր միջոցներ են փորձում՝ այդ տպավորությանը հասնելու համար: Եվ այդ ժամանակ նրանք նաեւ հայտնաբերում են. լուրը պետք է ավելի շատ W-երի պատասխանի, քան մինչ այժմ թվարկվել են, եթե մենք ուզում ենք ընթերցողներին ոչ միայն բռնել, այլեւ պահել ...

## II ԼՈՒՐ ԵՎ ԹՂԹԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Միայն վեց W-երը բավական չեն ...

Գտնել, ոչ թե հնարել  
Նույնիսկ փոքր ստերն են արգելված

Կարծիք լուրի մեջ  
Երբ լրատվությունը դառնում է ներշնչանք...

Թղթակցություն. ավելին՝ քան  
ընդլայնված լուր

Լրագրային լեզու 1  
Չասկանալի լինելու չորս չափումները

Լրագրային լեզու 2  
Վախենալ «ասել» բառից

Լրագրային լեզու 3  
Կետադրություն լրագրողների համար

«Լավ լուրի» մասին  
«Գերմանական մամուլի գործակալության»  
հիմնական կանոնները

# Միայն վեց W-երը բավական չեն...

«Լուր. հաղորդագրություն՝ առաջնորդվելու համար... ընդհանրապես որեւէ դեպքի մասին հաղորդում»:

Այսպիսի սահմանում են տվել Յակոբ եւ Վիլիելմ Գրիմ եղբայրները գերմաներենի իրենց բացատրական բառարանում:

«Ջաղորդում»-ը դարձել է լուր, գեկուցում, կարճ տեղեկություն: Գնալով այն ավելի հակիրճ է դառնում, դիպուկ, սուր, երբեմն՝ խաղացկուն:

Փաստերը պարզապես չեն թվարկվում իրար հետեւից: Փնտրվում է լուրը լուրի մեջ: Յուրաքանչյուր թերթ ուզում է դուրս կորզել այն, ինչն իր ընթերցողին ամենահետաքրքիրն է թվում:

Օրինակ՝ Վիսբադենի Դաշնային վիճակագրական վարչության մամուլի հաղորդագրությունը եւ դրա տարբերակները գերմանական թերթերում:

Պաշտոնական տեքստը.

*«Ըստ Դաշնային վիճակագրական վարչության հաշվարկների՝ Դաշնության հին երկրամասերում, նախորդ տարիների պես, դժբախտ պատահարների քանակը (արտահայտված իբրեւ ճանապարհատրանսպորտային պատահարներում տուժածների թիվ՝ յուրաքանչյուր 100.000 բնակչի հաշվով) ամենափոքրն է Ռուրի շրջանի մեծ քաղաքներում: Վերլուծվել են Դաշնության հին երկրամասերի մոտ 100.000 եւ ավելի բնակիչ ունեցող 66 քաղաքային շրջաններում տեղի ունեցած դժբախտ պատահարները: Ընդ որում, վերլուծությունը իր մեջ է ներառել նաեւ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող ճանապարհներին տուժածների թիվը:*

Ամենաբարենպաստ վիճակում, ինչպես եւ անցած տարի, Ջերմեն էր՝ յուրաքանչյուր 100.000 բնակչին 428 տուժած, նրան հետեւում են Վուփերթալը՝ 462, Մյուլխայնը՝ 478, Օբերհաուզենը՝ 480 եւ Ջոլինգենը՝ 483 դեպքով:

Դրանց գրեթե կրկնապատիկը արձանագրվել է համապատասխանաբար ստորեւ բերված՝ դժբախտ պատահարներ

րի ամենամեծ ցուցանիշներով քաղաքային շրջաններում: Այսպես, Օսնաբրյուկում 100.000 բնակչի հաշվով տուժել է երթելեկության 993 մասնակից, Ռեգենսբուրգում՝ 901 ...»

Եվ այսպես շարունակ: Ոչ ոք, իհարկե, չի պահանջում, որ վիճակագիրներն իրենց նյութը տարածեն պատրաստի ձևով: Վարչությունն անշուշտ տրամադրում է այն ամենը, ինչը պետք է լրագրողներին: Բայց թերթերը հաղորդագրությունն այդ տեսքով չեն ընդօրինակի. առաջին նախադասությունը սարսափեցնում է որոշ միջանկյալ բառերով եւ իր անընդգրկելի երկարությամբ: Ահագին բառ պետք է ընթերցվի, մինչեւ ընթերցողներն իմանան, թե ի՞նչ է նշանակում դժբախտ պատահարների հավանականությունը: Մեզ համար հետաքրքիր է, թե ի՞նչ տարբերությամբ են գործակալություններն ու թերթերը գնահատում բովանդակությունը, թե ինչպես են նրանք դասավորում W-երը եւ այն էլ որոշակի համակարգով: Յուրաքանչյուրն ընտրում է այն, ինչը կարելու է համարում: Ինչպես dpa-ն, այնպես էլ AP-ն, իրենց համար ամենահետաքրքիր տեղեկությունները հայտնաբերել են մամուլի համար արված հաղորդագրության երրորդ պարբերությունում եւ առաջ տարել:

Այսպես է AP-ն կառուցում հաղորդագրությունը.

*«Վիսբադեն (AP) - Օսնաբրյուկում երթելեկողները, թերեւս, մեծ զգուշությամբ պետք է դուրս գան փողոց, Գյորլիցում հակառակը՝ փողոցային երթելեկությունից տուժելու ռիսկը ամենափոքրն է: Սա 100.000 բնակչի հաշվով՝ տուժածների թվի գնահատման ...»:*

dpa -ն ավելի հակիրճ է սկսում, քան AP-ն.

*«Վիսբադեն (dpa) - Օսնաբրյուկը երթելեկության մասնակիցների համար Արեւմտյան Գերմանիայի ամենավտանգավոր քաղաքն է: Նրան հետեւում են Ռեգենսբուրգը եւ Դարմշթադթը, չորեքշաբթի օրը Վիսբադենում հաղորդեց Դաշնային վիճակագրական վարչությունը: Ըստ յուրաքանչյուր բնակչին ընկնող տուժածների թվի, վարչությունը գրանցել է ...»:*

dpa -ի մուտքը առաջին միտքը գիտակցաբար սահմանափակում է մի փոքր նախադասությամբ: Ընդ որում, գլխավոր խմբագիր Վիլմ Զերլինը մտածում է լուրի առաջին ընթերցողների՝ խմբագիրների

մասին: Թերթերը մեծամասամբ հաղորդագրությունները ստանում են համակարգիչներով եւ կարդում մոնիթորների վրա: Սկզբում հայտնվում է լուրի վերնագիրը՝ մի քանի տողով: «Լավ է, եթե տեղեկատվության գլխավոր միտքը մատուցվում է առաջին նախադասություներում»:

Երկու գործակալություններն էլ փնտրել են ընթերցողի համար ոչ միայն ամենակարեւորը, այլեւ՝ ամենահետաքրքիրը: Այսպես, հաղորդագրությունները սկսվում են իբրեւ ցուցում՝ երթեւեկության մասնակիցների համար. «Օսնաբրյուկում պետք է զգույշ լինել ...»: Սա արդեն մի նոր W-ը է, այսինքն՝ այն հարցը, թե սա մեզ որքանով է վերաբերում: (SZ-ը վերցնում է AP-ի տարբերակը եւ վերնագրում սաստկացնում զգուշացումը. «Օսնաբրյուկը պետք է շրջանցել 7 մղոն շառավղով»:)

Օսնաբրյուկ: Հերնեում, որտեղ, ըստ վիճակագրության, երթեւեկությունն այդքան անվտանգ է, նախելառաջ հետաքրքրվում են սեփական քաղաքով: «Վեսթդոյչե Ալզեմայնե Ցայթունգ»-ի (WAZ) տեղական լուրը նականաբար սկսվում է այսպես.

*«Հերնեն երթեւեկողների համար Արեւմտյան Գերմանիայի ամենաապահով քաղաքն է: Ինչպես հաղորդել է Դաշնային վիճակագրական վարչությունը, այստեղ 100.000 բնակչի հաշվով անցյալ տարի տուժել է 428 մարդ: Դրան հակառակ, ամենավտանգավորը ...»:*

«Նյուրնբերգեր Նախրիխթեն»-ի համար ավելի կարեւոր է հարեւան քաղաքի իրավիճակը.

*«ՎիՍԲԱԴԵՆ (dpa /AP) – Ռեգենսբուրգը Գերմանիայի ամենավտանգավոր քաղաքներից է՝ առնվազն փողոցային երթեւեկության առումով: Ինչպես հաղորդել է Դաշնային վիճակագրական վարչությունը, Վիսբադենում ...»:*

Մյունխենյան «Աբենդցայթունգը» դեպքի վայրը նույնպես հայտնաբերում է սեփական դռան շենին.

*«Բավարիան անցնան է փողոցային երթեւեկությունում բացասական միավորներ հավաքելու իմաստով: Եվ նույնիսկ եռակի: Ավտովթարներից տուժածների վիճակագրության մեջ Բավարիայի չորս քաղաք գրանցված են ամենավատ ութնյակում, բացի այդ, մեր երկրամասում են ամենից շատ «թիթեղի վնասվածքներ» տեղի ունենում ...»:*

«Բիլդ»-ը, դրան հակառակ գերադասում է ոչ մի վայր չմատնանշել: Թերթը սկսում է ընդհանուր հանգույցով.

*«Յուրաքանչյուր 3 թույն մեկ մեր քաղաքներում վթար է տեղի ունենում: Դժբախտ պատահարների նոր քարտեզը ...»:*

Այս հետեւում են ամենավտանգավոր եւ ամենաապահով քաղաքների ցուցակները: Տեղեկատվության աղբյուրը փոքր տառերով բերված է վերջին նախադասության մեջ.

Աղբյուր՝ Դաշնային վիճակագրական վարչություն:

«Օսնաբրյուկեր Նոյեսթե Նախրիխթեն»-ի համար իրենց քաղաքի ամենավտանգավորը լինելու կշտամբանքը նորությունն է: Խմբագրությունը մի քայլ առաջ է մտածում եւ հաղորդագրության տեղական մասը շարունակում քաղաքաշինության հարցերով խորհրդականի հետ հարցազրույցով: Օսնաբրյուկցիները միանում են այն հարցերին, որոնք տալիս են ընթերցողները. «Արդյո՞ք Օսնաբրյուկը դժբախտ պատահարների մայրաքաղաքի մշտական համբավ ունի» ... Ի՞նչ է արվում իշխանությունների կողմից:

Քաղաքաշինության հարցերով խորհրդականը պատեհ առիթ ունի՝ բացատրելու, որ դժբախտ պատահարների դեպքում մեծ դեր են խաղում աշխատանքային վայրի եւ բնակավայրի միջուկ կանոնավոր կերպով երթեւեկողների բարձր տոկոսը եւ ռազմական փոխադրամիջոցները: Եվ ահա կրկին առաջ է բերվում մի W, որը երբեմն անուշադրության է մատնվում: Դեռ տարիներ առաջ «Ֆրանկֆուրտեր Ռունդշաու»-ի գլխավոր խմբագիր Վերներ Յոլցերը ասել է.

*«Մենք պետք է ելնենք այն բանից, որ W-ից մեկը՝ Ինչու-ն, զնալով ավելի կարելու է դառնում... Բոլորս ենք երեւի համահոտ, որ ապրում ենք գրեթե գերտեղեկացված հասարակությունում՝ զոնե քանակապես գերտեղեկացված: Հասարակությունը բավականին բան է իմանում, բայց ոչ ժամանակ ունի եւ ոչ էլ ցանկություն՝ այդ բոլորը դասավորելու, փոխադարձ կապեր գտնելու: Այստեղ մենք պետք է օգնենք ընթերցողին: Լուրի W-երին միայն սպառիչ պատասխան տալը բավական է, մենք պետք է ասենք նաեւ, թե ինչ է թաքնված դրա հետեւում: Մենք չպետք է միայն հաղորդենք, թե Եվրամիությունը այս կամ այն բանն է որոշել, որի ժամանակ Մեծ Բրիտանիան ձեռնպահ է մնացել: Այժմ պետք է նաեւ բացատրվի, թե ինչու է Անգլիան հապաղում,*

*եւ թե ինչ է նշանակում որոշումը: Ինչու-ն պետք է լուսաբանի խորքը, փաստարկումը պետք է հասկանալի լինի»:*

Դժբախտ պատահարների թվի վերաբերյալ հաղորդագրություններում եւս մի W տեսանելի դարձավ: Ո՞վ է տեղեկատվության աղբյուրը: Գրեթե միշտ երկրորդ կամ երրորդ նախադասության մեջ տրվում է այդ աղբյուրը. «Ինչպես տեղեկացնում է Դաշնային վիճակագրական վարչությունը ...»

«Ռոյթերս».

«Յուրաքանչյուր լուր առաջին նախադասության մեջ պետք է նշի աղբյուրը: Բացառիկ դեպքերում այն կարող է վերապահվել ամփոփմանը կամ երկրորդ նախադասությանը, եթե սկզբում հաղորդած տեղեկատվության աղբյուրը պաշտոնական մարմին է (օրինակ՝ Դաշնային վիճակագրական վարչություն) կամ կասկած չի հարուցում: «Ռոյթերսի» ոչ մի հաղորդագրություն չի կարող հաղորդվել առանց աղբյուրը նշելու»:

Աղբյուրը կարելու է, սակայն որպես մուտք, այնուամենայնիվ հազվադեպ է հարմար լինում թերթերին: «Այն պետք է տրվի ամենաուշը երկրորդ նախադասությունում», ասում է Վիլմ Զերլինը: Նա համամիտ է իր նախորդի՝ դոկ. Զանս Բենիթըքեի հետ, որն ասել է.

«Լուրին կարելություն հաղորդելու համար պետք է նշվի աղբյուրը: Դա շատ դեպքերում ընթերցողին կօգնի քննադատորեն գնահատել, նշանակությունը հարաբերական դարձնել: Եթե ընթերցողն իմանա, որ իր առջեւ դրված հաղորդագրությունը, օրինակի համար, որեւէ ձեռներեցների միության խոսնակի կամ քաղաքական կուսակցության տեղեկատվություն է, նա լուրը կընդունի այնպես, ինչպես որ այն կա՝ իբրեւ մի կողմի տեղեկություն»:

Աղբյուրը տարվում է առաջ՝ բայց միայն երկրորդ կամ երրորդ նախադասություն կամ էլ ավելի ուշ: Ամենակարելուն առաջնային է: Այդպես են համարում dpa-ն եւ AP-ն, Վիսբադենի լուրի օրինակում, եւ հենց այդպես էլ կարողում ենք թերթերից շատերում:

Կան նաեւ W-եր, որոնք տեքստում չկան: Ամերիկյան «USA Today» թերթի լրագրողները պետք է պատասխանեն նաեւ այդ հարցերին: Զիմա ի՞նչ է լինելու: Ի՞նչ է գալիքը: Տես՝ «Հանգույց» գլուխը: Նորից ամփոփենք.

Լուրը փոփոխվում է: Միայն հին W-երը բավական չեն: Խմբագրությունն ընտրում է էականը, բայց էականը հաճախ տարբեր գործակալություններում տարբեր է մեկնաբանվում: Մենք պետք է նոր, լրացուցիչ հարցեր տանք եւ ստուգենք:

- ▶ Արդյոք այն կապ ունի՞ տվյալ տեղի հետ: Տես՝ վիճակագրությունը Վիսբադենից: Նման բան հնարավոր է շատ դեպքերում: Արդյո՞ք Սան Ֆրանցիսկոյում հյուրանոցի մեծ հրդեհը, որի մասին հաղորդում ենք, կարող է պատահել նաեւ մեզ մոտ: Ի՞նչ վիճակում են այստեղ անվտանգության միջոցառումները:
- ▶ Հիմա ի՞նչ է լինելու: Խորհրդարանի անսպասելի որոշումը, մի հայտնի մարդու հրաժարականը կամ մահը, սոսկալի աղետը. սրանք են կարելորդ: Սակայն ենթադրությունը, որ ընթերցողներն ամեն ինչ արդեն լսել են երեկոյան լուրերից կամ տեսել էկրանին, թերեւս պետք է մեզ դրդի, ըստ «USA Today»-ի, հարցնել եւ ուսումնասիրել. անմիջական հետեւանքը ո՞րն է լինելու:
- ▶ Ինչո՞ւ: Բնական է, որ ամեն անգամ հնարավոր կամ պարտադիր չէ պարզաբանել ինչու-ն, սակայն դա գնալով ավելի հաճախ կարվի:
- ▶ Որքանո՞վ է դա ինձ վերաբերում: Արդյո՞ք լուրը հետեւանք թողնում է իմ կյանքի վրա: Ի՞նչ է այն նշանակում՝ նախագուշացո՞ւմ, թե՞ խորհուրդ:
- ▶ Երբեմն առաջ է գալիս նաեւ քրեագետների հարցը, որը «USA Today»-ը նույնպես պահանջում է. cui bono: Ո՞ւմ է դա պետք: Ու՞մ է ձեռնտու այդ արարքը, կատարվածը:

Գրավիչը հենց դա է. յուրաքանչյուր հաղորդագրություն հավանաբար այլ W-եր է առաջ բերում: Դրա հետ վարվելու կերպը բնորոշում է թերթը եւ լուրերում նրա յուրահատուկ դեմքը ստեղծում: Ինչքան ձանձրալի կլիներ, եթե բոլորն ընդամենը հրապարակեին գործակալությունների լուրերն առանց փոփոխությունների: Նրանք այդ չեն անում, ինչպես ցույց է տալիս Վիսբադենի հաղորդագրությունը ...

Լուրը պետք է ավելի շատ տեղեկություններ առաջարկի՝ ավելի քիչ տեղ զբաղեցնելով: «USA Today»-ը ցույց տվեց, թե դա ինչպես պետք է արվի. «կրճատելին կրճատել»: Ամերիկյան թերթը դրա համար օգտագործում է նաև մի գրաֆիկական օժանդակ միջոց: Նա իր տեղեկատվության մասերը մամլում-տեղավորում է վանդակների մեջ եւ դրանք եզրագծում: Իսկ տվյալ ձեւը մղում է հակիրճության: Վանդակները մեզ մոտ էլ վաղուց կային, հիմա դրանք տարածվում են՝ կարճ կարեւոր տեղեկությունների ցուցափեղկեր: Երբեմն լուրը կազմված է միայն մեկ նախադասությունից: Հաճախ վերնագիրը մեկ բառով պետք է բավարարվի: Հաճախակի դրանց խառնվում են զվարճալի անհեթեթություններ, ամսաթիվը, շաբաթվա խոսքը, ցանուցիր մտքեր:

Դրանք պետք է գոլորշիացնելով խտացնել: Լուրերի վանդակներում առաջարկվում է միայն տեղեկատվության կորիզը: Շատ W-եր եւ բայեր դուրս են մղվում: Ընթերցողը այստեղ պետք է սովորի չափավոր հեռագրային լեզվին: Այնուամենայնիվ, գերագույն պատգամը միշտ նույնն է՝ ոչ մի խելամիտ հարց չպետք է անպատասխան մնա:

Հակիրճ ներկայացման համար կան նաև այլ արտաքին օժանդակ միջոցներ: «USA Today»-ը, օրինակ, խորհուրդ է տալիս.

«Պատմությունն առաջ տարեք կետադրական նշանների միջոցով: Ստորակետները, միջակետները եւ գրաֆիկական ազդանշանները՝ գնդիկները, հոժ կետերը կարող են փոխարինել բառերին եւ ընթերցողին օգնել՝ ավելի արագ առաջանալու: Խուսափեք միջակետից: Այն չափազանց հաճախ է գործածվում»:

Հետաքրքիր հայտնագործություն միջակետի վերաբերյալ: «Կետադրական նշաններ լրագրողների համար» գլխում այդ մասին դեռ կխոսվի:

«USA Today»-ի ոճաբանության գրքում տրվում են նաև այլ խորհուրդներ, որոնց մասին արժե մտածել.

«Օգտագործեք այն մեջբերումները, որոնք նույնպես պատմությունն առաջ են մղում: Խուսափեք այն մեջբերումներից, որոնք միայն լուսաբանում են այն, ինչ ասվել է նախորդ պարբերությունում: Սկզբից տեղեկությունը: Ո՛չ թե «ըստ Ռ.-ի՝ ռեցեսիան կանգ է առնելու», այլ՝ «ռեցեսիան կանգ է առնելու»,- ասում է Ռ.-ն:»

Ինչ վերաբերում է հակիրճությանը, ապա «USA Today»-ը նախագուշացնում է չափազանցություններից: Գլխավոր խմբագիր Յոհան Մ. Սիմփսոն.

«Մենք հայտնաբերել ենք. հիմնական շեշտը կարճ հաղորդագրությունների վրա դնելով՝ ընթերցողին լավություն չենք անում: Մենք գրգռում ենք նրա ախորժակը՝ առանց այն հագեցնելու, առանց բավականաչափ տեղեկություն տրամադրելու: Այդպես առաջացավ կարճ հաղորդագրությունների եւ երկար պատմությունների մեր խառնուրդը»:

Եթե այսօր հետազոտենք լուրը, կտեսնենք հետեւյալ կառուցվածքը.

- ▶ Լուրի կորիզը, գուցե եւս մի լրացուցիչ W («Ո՞րքանով է դա ինձ վերաբերում»)
- ▶ Աղբյուր
- ▶ Մեջբերում
- ▶ Նոր մանրամասնություններ
- ▶ Մնացած W-երը
- ▶ Խորք
- ▶ Ինչու

Վորենի շրջված բուրգը քանդվում է՝ W-երը իրար են խառնվում: Տողային ճշգրտությամբ մակետավորման շնորհիվ կորչում է նաեւ կրճատվելու մտավախությունը: Եվ այդպիսով հնարավոր է դառնում վերջի համար մի հաճելի W պահպանելը՝ որպես «աղ»: Ուրեմն պետք է «սեփական ճանապարհով գնալ, դեպքերից նոր շեշտադրումներ կորզել»: Հայտնի լրագրող Վերներ Ֆրիդմանը տասնամյակներ առաջ դա պահանջել է բուլվարային լրագրից: Հիմա մյուսներն էլ են այդ պահանջը ստանձնում՝ իբրեւ ծրագիր. ամենուր, ինչպես ասվեց, բուլվարային թեթեւ սյուր է:

Լրատվության նկատմամբ ամենակարեւոր պահանջի մասին դեռ ընդհանրապես չի խոսվել. ամենից առաջ այն պետք է լինի ճիշտ եւ արժանահավատ: Մենք պետք է կարողանանք առաջնորդվել դրանով: Լրագրողները պետք է լրատվությունը խտացնեն, այլ ո՛չ հորինեն: Մենք պետք է գտնենք, ոչ թե հնարենք:

Իրո՞ք ոչ, իսկ գոնե մի քիչ կարելի՞ է...

# Գտնել, ոչ թե հնարել

## Նույնիսկ փոքր ստերն են արգելված

1895 թ. Նավատորմի շքերթ Քիլուն: Տարբեր երկրների նավեր են գալիս Կայսեր Վիլհելմի անվան ջրանցքի հանդիսավոր բացմանը: Նրանց պետք է ողջունել ամենայն հարգանքով, հրամայել էր կայսրը: Սակայն անսպասելիորեն նավամատույցին մոտեցավ նաև մի թուրքական նավ՝ կարմիր կիսալուսնով դրոշը նավախելին... Իսկ կայսերական զինվորական նավախումբը ձեռքի տակ չունեի ազգային հիմնի նոտաները: Այնուամենայնիվ հյուրին պետք էր ողջունել. երաժիշտների համարձակ արարքը՝ կարմիր կիսալուսինը տեսնելուն պես նրանք հանդիսավոր նվագեցին. «Բարի լուսին, դու ընթանում ես այնքան հանդարտ ...»:

Լեզվաբանները պնդում են, թե այսպես է առաջացել «թուրք ձեւանալ» կամ «հրեն թուրքի տեղ դնել» արտահայտությունը եւ շատ արագ համընդհանուր ձեւով փոխառվել զինվորականների կողմից, որպես «մոլորեցնել, հանպատրաստից հորինել, այնպես անել՝ ասես...»-ի հոմանիշ: Լրագրությունը պատրաստակամորեն որսաց արտահայտությունը: Այն սկսեցին գործածել: Ռադիոն եւ շաբաթվա տեսությունները թերեւս առաջինը վերցրեցին այդ օգտակար արտահայտությունն այն դեպքերի համար, երբ որեւէ իրավիճակ, որն արդեն տեղի էր ունեցել, պետք է վերարտադրվեր, վերականգնվեր, երբ պետք է ձեւացվեր, իբր ինչ-որ բան, որն արդեն անցել-գնացել է, հենց այս պահին է տեղի ունենում: Օպերատորների ցանկությամբ նույնիսկ քաղաքապետերն են երկրորդ անգամ հիմնաքարը դնում, նույնիսկ նախարարներն են փոքր ինչ թատրոն խաղում... Գրավոր լրագրությունը արտահայտությունը գործածում է նույն իմաստով, ինչ որ՝ ռադիոն եւ հեռուստատեսությունը, դեռ ավելին՝ «թուրք ձեւանալ» նշանակում է նաև ինչ-որ բան ազատ հորինել:

Չվարճալի է բառի ծագումը: Սակայն խոսքը մի չափազանց լուրջ երեւույթի մասին է: Արժանահավատության, ինչպես որ պահանջում է Մամուլի կանոնագիրքը. «Ճշմարտության հանդեպ հարգանքն ու հասարակությանը հավաստի իրազեկելը մամուլի գերագույն պատվիրանն են»:

Ժժժ-ն իր ձեռնարկում այն նույնպես վեր է դասում բոլոր կանոններից. «Արժանահավատությունը արագությունից կարելու է»: AP-ն նույն կարծիքին է: Իսկ «Ֆրանկֆուրտեր Ալգեմայնե»-ն գրում է.

«Հաղորդել ամենայն ճշմարտացին եւ ոչ մի կեղծիք. լրագրողների մասնագիտական էթիկայի կանոնները հեշտ է ձեւակերպել, բայց դժվար՝ պահպանել»:

Նախադասությունը վերցված է մի ուսումնասիրությունից, որում խոսքը այն մասին է, թե լրագրողները երբեմն գերադասում են չափազանցներ, քան չեզոք ներկայացներ:

Ո՞րն է ճիշտը: Երբեմն դժվար է սահմանազատել: Լրագրող Ռուդոլֆ Վալտեր Լեոնարդը այդ մասին մի ամբողջ գիրք է գրել. «Լրագրությունը եւ ճշմարտությունը»: Այդ բնագավառի ոլորտներից մեկն ուսումնասիրել է Զերբերտ Ռիլ-Յեյզեն: Դրանից նույնպես մի գիրք է ստացվել. «Պատվիրված ճշմարտություններ»: Դրանք հողվածներ են, որոնք ցանկության դեպքում որեւէ թեմա են ստանձնում՝ հնարավորին չափ գովաբանելով: Գոյություն ունի նաեւ «ճնշված ճշմարտություն»՝ գիտելիքը թաքցվում է: Ճշմարտության մասին կարելի է վիճաբանել: Սակայն բանավեճը ավելորդ է դառնում նրա հակադրության դեպքում՝ մեծ եւ փոքր ստերի, գիտակցաբար ոչ ճշմարիտ լինելու դեպքում:

Մեծ սուտը՝ երբ հնարվում է մի ամբողջ լուր, ավելի հազվադեպ է լինում, քան դա կարծում են լրատվամիջոցներին քննադատողները: Փոքր սուտը, դրան հակառակ, հաճախ է հանդիպում. մի մանրամասն այնքան երկար են շուռումուռ տալիս, մինչեւ դրանից մի սենսացիոն վերնագիր կամ մի «պոնտ» ստացվի: Լրագրային առօրյայից են նաեւ այն դեպքերը, երբ լրագրողը լուրը խմբագրություն հաղորդելիս ճոռոնություն է թույլ տալիս: Իսկ հետո չի ուզում իր խոսքերը հետ վերցնել:

«Փոքր» սուտը կարող է հետեւյալ տեսքն ունենալ.

*«Հոլիվուդյան գեղեցկուհին հագիվ թե պաշտոնապես հերքի, եթե մենք գրենք, որ նա մեռելի պես գունատ լքեց գիշերային բարը»:*

Կամ թղթակցի միտքն է գալիս մի հրաշալի ասացվածք, մի սուր բան, որը կարելի էր օգտագործել: Ի՞նչ կլինի, որ նա այդ նախադասությունը ասի մի անժամոթ տաքսու վարորդի շուրթերով: Արդյո՞ք նա չի կարող մի հեռավոր իրադարձություն փոքր ինչ պատկերավորել, մի փոքր հնարել: Մի երկխոսություն գրել, որն այնուամենայնիվ հնարավոր ու հավանական է՝ մի հնարված երկխոսություն: Արդյո՞ք կարելի է:

Ո՛չ: Ո՛չ: Ո՛չ:

Դրա իրավունքը չկա, եթե նույնիսկ հերքում չի սպասվում: Մենք պետք է պահպանենք ճշմարտությունը՝ հանուն ճշմարտության, հանուն մեր մասնագիտության: Եվ ... Եսասիրությունից դրդված:

Եթե ազնվությունը չէ լրագրողին շարժող ուժը, ապա գոնե խայտառակվելու վախը պետք է նրան զգուշացնի ոչ ճշմարտացի լինելուց: Նա, ով լոտոյի հաղթողին մի քանի ուրախ, սակայն եւ հնարված բառ է ասել տալիս Բեռլինի բարբառով, պետք է իմանա, որ մրցակիցը կտա ճշմարիտ պատմությունը, թե խոսքը մի հույն արտագնա աշխատողի մասին է, որը լոտոյի շահելուց հետո անկեղծ ուրախությունից բոլորովին մոռացել էր գերմաներենը: Տհաճ է՝ հորինված մի բեռլինցի: Ամոթալի է, երբ հարուստ երեւակայությունն ունեցող մի թղթակից պատմում է, թե ինչպես էին երկրաշարժից տուժածները խարխափում գիշերվա խավարի մեջ, իսկ ահա միեւնույն ժամանակ այլ թերթում տեղական թղթակիցը դեպքի վայրից հարցազրույցներ է հաղորդում, որոնցում բոլոր տուժածներն իրենց զարմանքն են արտահայտում՝ ասելով, թե այդ գիշեր սպառնալի կարմիր լույս արձակող լուսին էր երկնքում, որը խորհրդավոր (եւ նույնիսկ բավականին պայծառ) լուսավորում էր ավերակները :

Բացի այդ, որպես կանոն, երեւակայությունն ավելի դժգոյն է, քան իրականությունը: Դա ասել է Էգոն Էրվին Քիրշը, եւ այս նախադասությունն օրենք է, հայտնագործություն, որը յուրաքանչյուր սերունդ նորից պետք է ամի, հաջողության դեղատոմս, եւ գուցե նույնիսկ այն պատճառը, թե ինչու են լրագրողները սիրում իրենց մասնագիտությունը.

*«Ոչինչ այնքան ապշեցուցիչ չէ, որքան պարզ ճշմարտությունը, ոչինչ՝ ավելի էկզոտիկ, քան մեր շրջակա միջավայրը, ոչինչ՝ ավելի ֆանտաստիկ, քան իրականությունը»:*

Այդ իրականությունը մենք պետք է հայտնաբերենք, ոչ թե հորինենք: Մանրամասները պարզաբանող համառ հարցուփորձը (դրա մասին դեռ խոսք կլինի), բացի այդ, ի վերջո վարձատրվում է: Չնչին մի բան փնտրելու ժամանակ, որպես կանոն, հայտնաբերվում են տասնյակ պիտանի մանրամասներ:

Որոնումը ջանք է պահանջում, ժամանակ արժե: Սակայն dpa-ի համար ճշգրտությունն ավելի կարելոր է, քան նույնիսկ արագությունը. «Գործակալությունը պետք է արագ լինի», ասել է dpa -ի տնօրեն Յանս Բենիդիկտեն: «Սակայն երբ հավաստիությունը վտանգվում է շտապողականության պատճառով, ապա արագու-

թյունը երկրորդական է: Տեղեկությունների եւ լրագրողական հետաքննությունների վերստուգումը պետք է առաջնային լինի»:

Իսկ ինչպե՞ս պետք է վարվել այն բանի հետ, որն ինչ-որ մեկը ճիշտ է համարում, ինչում նա համոզված է: Դա կարող է մտնել լուրի մեջ: Ե՞րբ լրագրողները իրավունք ունեն ասելու իրենց կարծիքը:

Նրանք դա կարող են անել թերթի շատ տեղերում, միայն թե՛ ո՛չ լուրում: Կարծիքն ու հաղորդագրությունը պետք է խստիվ սահմանազատվեն: Սա վերաբերում է եւ «Մերկուրին», եւ «Ռունդշաունին», եւ լրատվական գործակալություններին: Բոլորն են դավանում այս կանոնը, նույնիսկ՝ եթե բազում անգամ խախտում են:

## Կարծիք լուրի մեջ

### Երբ լրատվությունը դառնում է ներշնչանք...

«Շպիգել»-ն ուսումնասիրում է աշխատանքը Սպիտակ տանը: Եվ ի՞նչ է տեսնում ու զգում նա այնտեղ.

*«Տիան անհաջողություններ եւ ինտրիգներ, կանխատեսումների ակնհայտ վրիպումներ եւ անհասկանալի ետդարձեր... Վարչական դիլետանտիզմ... Անձնակազմ, որը չկորորդինացված ձեւով թույլ է տալիս սխալը սխալի հետեւից առանց ներքին եւ արտաքին քաղաքականության պարզ նպատակների... Խնամհականության թունդ գարշահոտություն... Ամբարտավան հայտարարություններ...»*

Խիստ դատողություններ, անթաքույց կարծիք: Միա՞յն առաջնորդող հոդվածում է թույլ տրված կարծիքն արտահայտել: Ինչո՞ւ ոչ նաեւ լուրի մեջ: Որտե՞ղ են սահմանները:

Գործակալությունների դիրքորոշումը պարզ է: Նրանք պահանջում են կարծիքի եւ լուրի ճշգրիտ տարանջատում: Այստեղ սերնդափոխությունը նույնիսկ ոչինչ չի փոխում: Վիլիելմ Զերլինը՝ 1991-ից dpa-ի տնօրենը, ներկայացնում է նույն ուղղությունը, ինչ իր նախորդը՝ Զանս Բենիրշկեն.

«Կարծիքը եւ տեղեկատվությունը չպետք է միախառնվեն»:

Ի՞նչ են կարծում այդ մասին մյուսները: Էլ Նեյիարտը՝ «USA Today»-ի հիմնադիրը, իր թերթի լուրերից պահանջում է.

«Առավելագույն փաստեր՝ անձնական նախապաշարունների նվազագույն առկայությամբ...»

Մի գրության մեջ FAZ-ը ներկայացնում է իր սկզբունքները: Դրանց թվին են պատկանում նաեւ այս մտքերը.

«Անշուշտ լուրի ձեւակերպման եւ փաստերի ներկայացման եղանակը, ինչպես նաեւ այն, թե իրադարձությունների առատությունը նկատի ունենալով, որ լուրերն են համարվում հրապարակման արժանի, եւ ինչ կշիռ է դրանց տալիս թերթը՝ տեղադրելով դրանք, արդեն իսկ փաստերին ահագին գնահատական են պարունակում իրենց մեջ: Սակայն դա ոչնչով չի փոխում այն հանգամանքը, որ փաստի եւ կարծիքի պարզ տարանջատումը, ինչպես թերթում, այնպես էլ ուղեղում գերագույն սկզբունքը պետք է լինի»:

«Ռոյթերսը» արդեն բառերի ընտրության մեջ է վտանգ տեսնում. հանկարծ ետնամուտքից կարծիք ներս չսողոսկի՞.

«Անթույլատրելի գնահատականներ են պարունակում «տեղիք տալ», «ետ մղել, մերժել», «հերքել», «այնդել», «խոստովանել», «արդարացնել» բայերը: Առանց անմիջական աղբյուրին նրանց գործածությունը հղելու՝ տպավորություն է ստեղծվում, թե «Ռոյթերսը» մի կողմին ավելի լավ է վերաբերվում, քան մյուսին: Գործակալության գործը դատավորի դեր կատարելը չէ»:

Ինչպե՞ս է գործնականում: Գերտ Բախմանը՝ աշխատանքային մեծ ստաժ ունեցող մի լրագրող, որն այժմ աշխատում է «Բայերիշեր Ռունդֆունկ»-ում, հարցին այսպես է նայում.

«Լուրի եւ մեկնաբանության տարանջատում. այս սկզբունքը ամենուր երդում են տալիս պաշտպանելու եւ ամենուր էլ խախտում են: Թե վերնագրում, թե տեքստում: Կարծիք է ներթափանցում այնտեղ, ուր միայն փաստերն են տեղին: Հաճախ դա տեղի է ունենում զուտ անգիտությունից:

Մի օրինակ՝ ինչ-որ տեղ հեղափոխություն է: Մեծ տարբերություն կա, թե ես ապստամբներին ինչպես կանվանեմ՝ ազատամարտիկներ, խռովարարներ, թե՛ ահաբեկիչներ: Ինքնըստինքյան հասկանալի բան է...: Բայց, ցավոք, լուրերի մասում մեկնաբանությունը գնալով մոդա է դառնում: Այս վատ սովորության դեմ մենք պետք է վճռականապես պայքարենք, անկախ այն բանից, թե դա ինչից է բխում՝ անգիտությունի՞ց, թե՞ քաղաքական նկատառումներից»:

Երիտասարդ լրագրողների առարկություն. արդյո՞ք ընդհանրապես կան օբյեկտիվ լուրեր: Տեղեկությունները ձեւավորվում են սուբյեկտիվորեն, սուբյեկտիվորեն են ընտրվում: Հին վեճ է: «Ֆրանկֆուրտեր Ռունդշաու»-ի նախկին տնօրեն Վերներ Հոլցերը դրա շուրջ բանավեճն ավելորդ է համարում.

«Լավ լրագրողները լուրը միշտ այնպես կընտրեն, ինչպես պահանջում է նրա կշիռը, նշանակությունը հասարակության համար: Բոլոր հարգված լրագիրներն այս հարցում անում են իրենց ուժերի ներածի չափով: Անձամբ ես չափազանց կարեւորում եմ խոչընդոտելը, որ կարծիքը, թաքնված, թե ակնհայտ ձեւով, հանկարծ չզետեղվի լուրերի մասում: Այն, որ հաղորդագրությունը եւ մեկնաբանությունը խստորեն պետք է տարանջատվեն, լավագույն դասն էր, որը մեզ պատերազմից հետո տվեցին անգլոսաքսոնները: Պարզապես անվայելուչ է, երբ լրագրողները փորձում են, փաստերի իրենց հավանաբար ավելի մեծ իմացությունից ելնելով, ընթերցողի մասին «հոգալ»՝ նրա վզին փաթաթելով իրենց կարծիքը: Լուրը պետք է ապրի իր կշռի հաշվին»:

Բոլորովին այլ տեսակետ ունի taz-ը: Գլխավոր խմբագրությունը գրում է մեզ.

«Օբյեկտիվությունը ֆիկցիա է, կեղծ հասկացություն: Արդեն միայն լուրերի ընտրությունը ծանրութեթեւ անել եւ շեշտավորում է նշանակում: Թեման կներկայացնեն մեծ ձեւավորմամբ առաջին էջում, թե՞ փոքր, թեթի վերջում ինչ-որ տեղ: taz-ը արժեքավորում է կոռեկտ թղթակցությունը՝ անգլիական լրագրության ավանդույթներով լուրի եւ մեկնաբանության տարանջատմամբ: Սակայն մենք ինչպես International Herald Tribune-ը, նաեւ ջանում ենք լուրերը վերլուծել: Լուրերի վերլուծությունն ավելին է, քան

սոսկ զեկուցելն ու թղթակցելը. դա նաեւ նշանակում է դիրքորոշում ունենալ: Ոչ միայն մեկնաբանությունն է կարծիք պարունակում, այլևս վերնագրերն էլ միշտ չէ, որ մասնագիտական-առարկայական են: Դաշնային սահմանադրական դատարանի որոշումը բավարական դպրոցներից Խաչե՛լիությունը հանելու մասին, մենք հաջողված թե անհաջող, այսպես լուսաբանեցինք. «Խաչը վկա՝ Բավարիան առանց փայտից կախվածի»: Արձագանքը դիվային էր»:

Մինչդեռ (տես՝ Բախմանը) նաեւ այն թերթերում, որոնք դա կտրականապես ժխտում են, կարծիքը ներհոսում է լուրի մեջ: Հաճախ տեքստը շատ սեղմ է սուբյեկտիվ լինելու համար, նման դեպքում այն տեղափոխվում է վերնագիր: Օրինակ՝ «Մյունխեներ Մերկուր»-ը տեղեկացնում է նախկին սովետական դիվանագետ Վալենտին Ֆալինի՝ նոր պատմության համար հետաքրքրական արտահայտությունների մասին: Լեմինգրադցի այդ մարդը նոր գործ էր գտել Համբուրգում, որպես Խաղաղության հետազոտական ինստիտուտի աշխատակից: Վերնագիրը լուռ ասում է, թե ինչ կարծիք ունի «Մերկուրը» դրա մասին.

*«Խաղաղություն ուսումնասիրող» Ֆալինը»*

«Վոխեն» կուսակցությունների մասին մի պատմություն է ծանուցում: Երբեմնի անկախ մտածողներին պակասում էին լավ գլուխներն ու գաղափարները: Հեղինակի կարծիքը նույնպես իմացվում է վերնագրից.

*«Անգույն կանաչները»*

Անգլիական BBC ռադիոկայանը կոչ է անում իր աշխատակիցներին ավելի քաղաքավարի լինել: Դրա մասին տեղեկացում կա SZ-ի մի հաղորդագրության մեջ. վերնագրից իմանում ենք նաեւ, թե ինչ կարծիք ունի խմբագիրը ռադիոկայանի մասին.

*«Ծեր մորաքույրը պարծենում է վարվելաձեւով»*

«Կանաչների Լանդթագի երեք պատգամավորներ մտադիր են ստուգել Շտուտգարտում ավելի քան 20 հեռուստակայանների հեռուստատեսային ծրագրերը: Համապատասխան հաղորդագրության վերնագիրը «Ֆրանկֆուրտեր Ռունդշաու»-ում պարզորոշ ասում է, թե խմբագրությունն ինչ է սպասում.

## «Կանաչ հեռուստադիտողների մոդավանջը»

Կարծիք ներհյուսելը բնականաբար կարող է նշանակել տեղեկացնելու փոխարեն ներշնչել, ընթերցողի մտքերին որոշակի ուղղություն տալ: Այստեղ յուրաքանչյուր ոք ամեն օր իրեն պետք է ստուգի: Նույնիսկ եթե ինքն իրեն լուրերի նկատմամբ օբյեկտիվություն է պարտադրել: Թղթակցության, առավել եւս՝ ռեպորտաժի եւ անենաշատը նկարագրական ռեպորտաժի դեպքում սուբյեկտիվությունը երբեմն նույնիսկ թույլատրելի է եւ ցանկալի, սակայն չափավոր:

Սակայն ներշնչել չենք ուզում: Այդ պատճառով այս գիրքը հետամուտ է լինում հետեւյալ կանոններին.

- ▶ Գտնել, ոչ թե հնարել
- ▶ Խտացնել, ոչ թե մոզոնել
- ▶ Նկարագրել, ոչ թե հրահանգել
- ▶ Ասել ինչ կա, ոչ թե այն, ինչ կցանկանայինք լինել
- ▶ Չաղորդել, ոչ թե ուղղել:

## Թղթակցություն. ավելին՝ քան ընդլայնված լուր ...

Չուն գինվորը, որը մարտադաշտից վազելով եկավ եւ ուժասպառ վայր ընկնելով, գոչեց «Չաղթանա՛կ, հաղթանակ»՝ լուր բերեց: Երբ նա, մի քանի բաժակ ջրով ամրապնդելով իր ուժերը, այլ մանրամասներ ավելացրեց, լուրը դարձավ զեկույց/թղթակցություն: Եթե թագավորը նրան նորից ուղարկեր՝ հետագա մանրամասները հարցուփորձով իմանալու, ապա այսօրվա պատկերացմամբ դրանից ռեպորտաժ կստացվեր: Reportare = հավաքել մեկ տեղ:

Թղթակցությունը՝ ընդլայնված լուր: Նինա Գրունենբերգը «Ցայթից», տարիներ առաջ իր «Լրագրողներ» գրքում հետեւյալ կերպ է սահմանել.

«Թղթակցությունը փաստերի, իրադարձությունների եւ դրանց ընթացքի իրական վերարտադրում է: Օրինակ՝ հանագումար (մեծամասամբ ձանձրալի), մեծ հրդեհ (առանց այդ էլ հետաքրքիր), բանավեճ Բունդեսթագում (դժվար է, հնարավորին շատը հակիրճ ներկայացնել): Թղթակցություններում թղթակցի կարծիքն անելիք չունի»:

Թղթակցությունը կարող է ընդարձակ լուր լինել, տեղեկությունների փունջ: Ընտրական ժամկետի մասին հաղորդագրությունից, օրինակ, ստացվում է նախնական թղթակցություն ընտրությունների տեղամասերի եւ ընտրողների թվի մասին բոլոր մանրամասնություններով:

Այնուամենայնիվ, լրագրողների բառապաշարում թղթակցությունը հաճախ ավելին է, քան ընդարձակ հաղորդագրություն: Այն դառնում է իրադարձությունների արձանագրություն: Առօրյան ցույց է տալիս. քաղաքային ավագանու զեկուցումն ամփոփում է նիստի ընթացքը, դատարանի զեկուցագիրը ժամանակագրական ձեւով նկարագրում է դատավարությունը, սպորտային ռեպորտաժը նկարագրում է իրադարձությունները խաղաղաշտում: Լրագրողները կանգնած են խաղաղաշտի եզրին եւ սահմանափակվում են տեսածի եւ լսածի վերարտադրումով: Լրագրողները մնում են դիտորդի դերում եւ հաճախ, ինչպես օրինակ դատավարությունների ժամանակ, հարցեր տալու մեծ հնարավորություն չեն ունենում:

Թղթակցությունը բավարարվում է վերապրածով, ռեպորտաժը լրացուցիչ փաստեր է հավելում եւ պատահածը նկարագրում հնարավորին չափ պատկերավոր: Չնայած դրան, ներկայացման ձեւերի միջեւ սահմանները մեզանում միաձուլվում են: Թղթակցությունից նույնպես շատ բան է պահանջվում:

Սրան լրացնելու է գալիս գնահատական տալը, ինչը չպետք է հասկանալ, թե տեղեկատվության փնջի մեջ համարձակորեն պետք է կարծիք ներգրավվի: Գնահատականը սկսվում է ընտրության ժամանակ:

Շատ թերթեր այլեւս փառասիրություն չեն ցուցաբերում՝ օրինակ քաղաքի ավագանու նիստի ընթացքը ամբողջապես եւ ծավալուն վերարտադրելու: Այսօր միաժամանակ եւ՝ ընդլայնում են, եւ՝ սեղմում: Քաղաքային ավագանու նիստին մասնակցող թղթակիցները ամենայն հավանականությամբ բաց կթողնեն օրակարգի որոշ կետեր, որոնք նրանց անկարելուր կթվան, որպեսզի կարողանան ավելի հիմնավոր ներկայացնել էական թեմաները: Նույնը՝ Լանդթագում: Ընդլայնել նշանակում է, որ լրացուցիչ հարցեր կտրվեն միայն քաղաքի ավագանու նախագահին, դատախազին, ֆուտբոլային թիմի մարզչին: Մենք պարզաբանումներ ենք ավելացնում, ինչպես պահանջում է Վերներ Յոլցերը: Մենք փորձում ենք պատմել, այլ՝ ոչ միայն թվարկել, ինչպես խորհուրդ է տալիս Պետեր Բյոնիշը: Ցանկալի է նաեւ նկարագրել մթնոլորտը: Քսան տարի առաջ գերակշռում էր առարկայական վերարտադրման ցանկությունը, տես՝ Նինա Գրունենբերգ: Հիմա թեմայից, առիթից եւ լրագրողի գնահատականից է կախված, թե ինչ պետք է առաջին պլան մղվի. արդյոք մենք ավելի շատ փաստերի<sup>6</sup>, թե՞ ավելի խորքային գիտելիքների կարիք

ունենք: Կասկած չկա, որ որոշ թղթակցություններում թույլատրված է, մինչև եւ իսկ պահանջվում է նաեւ գույնը, կենդանի մատուցումը: Գերտ Բախմանը զգուշությամբ համար նախազգուշացնում է գույների չափազանց խտացումից.

«Գույնը միշտ այնտեղ, որտեղ այն հնարավոր է: Այնուամենայնիվ, այն չպետք է արվի տեղեկատվության հաշվին: Միայն գեղեցիկ գրելը ընթերցողի համար շատ քիչ է: Գովեստի արժանի է գույն ունենալը, եթե դրանով չի անտեսվում լուրը, խորքային տեղեկատվությունը: Գունեղ բաղադրիչները միսն են, փաստերը՝ ոսկորները: Եթե նույնիսկ ինչ-որ բան պետք է կտրվի - հանվի, ապա միսը, այլ՝ ոչ ոսկորները: Ամբողջական տեղեկատվությունն առաջնային է, որը չի նշանակում, թե այդ տեղեկատվությունը պետք է ձանձրալի շարադրված լինի»:

Գնահատելը երբեմն վերածվում է թերագնահատելուն: Այստեղ ամենից առաջ լրատվական գործակալություններն են հստակ սահմաններ գծում: Դոկ. Բենիրշկե.

«Թղթակցությունը կարող է դասավորել իրադարձությունները, ցույց տալ փոխակերպությունը, վերլուծել, բերել սեփական կամ այլոց գիտելիքներ՝ լուրը ավելի հավաստի դարձնելու համար: Սա արդեն գնահատական է: Եթե թղթակիցները անում են դա, նրանք պետք է հրապարակեն կամ հայտնեն իրենց աղբյուրները. «Խոսում է ժբ-ի թղթակիցը դեպքի վայրից», չէ ո՞ր թղթակիցն է ենթադրում, որ ինչ-որ բան է խմորվում, նա ներքին մղում ունի իրավիճակին այս կամ այն գնահատականը տալու: Սակայն դա մեր գործը չէ՝ ասելը լա՞վ է, թե՞ վատ, հաճելի՞ է, թե՞ ցանկալի»:

«Ռոյթերը» համամիտ է.

«Թղթակիցների զեկուցումները (նկարագրական ռեպորտաժները) «Ռոյթերի» ծառայությունների կարելու բաղկացուցիչ մասն են... Սկզբունքորեն նկարագրական ռեպորտաժների համար գործում են նույն խիստ կանոնները, ինչ լուրերի համար. աղբյուրները պետք է միանշանակ նշվեն, հեղինակի հետեւությունները՝ որպես այդպիսին ճանաչելի դարձվեն»:

Ահա մի լրագրող անցնում է քաղաքի փողոցներով, ուր քիչ առաջ ցույց էր տեղի ունենում: Ցուցարարների երթերը ցրվում են. «իրավիճակը ակնհայտորեն հանդարտվել է», կարող է գրել թղթակիցը: Արդեն «ակնհայտորեն» բառից պարզ է դառնում, որ թղթակիցը տեղակացնում է՝ անձամբ իր տեսածից ելնելով:

Այս կապակցությամբ երեւան է գալիս սահմանում տալու խնդիրը: «Ռոյթերս»-ը թղթակցային զեկուցումները «նկարագրական ռեպորտաժներ» է անվանում, քանի որ դրանք վերարտադրում են ոչ միայն դեպքերը, այլև աշխատում են ռեպորտաժի միջոցներով:

Սակայն ի՞նչ է նկարագրական ռեպորտաժը: Ինչո՞վ են իրարից տարբերվում թղթակցությունը, նկարագրական ռեպորտաժը եւ ռեպորտաժը: Արդյո՞ք յուրաքանչյուր կենդանի պատկերում, յուրաքանչյուր գունեղ նկարագրություն արդեն նկարագրական ռեպորտաժ է: Այս իմաստով «feature»-ը գործածվում է նաեւ որպես բայ: Ինչ-որ բան «նկարագրահաղորդագրել»: Սարսափելի բառ է:

Սահմանումները տարբեր գործակալություններում տարբեր են: ժբ-ն նկարագրական ռեպորտաժներ ասելիս հասկանում է «թեմաներ, որոնք պարտադիր չէ, որ կապված լինեն արդիական մի դեպքի հետ եւ թեթեւ գրչով գրված լինեն»: Լրագրողների մեծամասնության համար feature-ն պատկերավոր ներկայացման հոմանիշ է: Սակայն ամենահետաքրքիր սահմանումը տվել են ոչ թե լրագրողները, այլ մի մյուսխենյան նյարդաբան: Այդ մասին «Ռեպորտաժ - նկարագրական ռեպորտաժ» գլխում:

Նախեւառաջ պետք է խոսվի գրելու մասին. մատչելիության չորս չափումների մասին: Մենք դրա կարիքն ունենք ինչպես սթափ լուրի, այնպես էլ գունեղ նկարագրական ռեպորտաժի համար: Այն մեզ պետք է նաեւ ամբողջությամբ ընթերցված լինելու համար: Որպեսզի ավելի շատ ընթերցող կարդա ու ավելի շատ բան բաց չթողնի:

## Լրագրային լեզու 1

### Չասկանալի լինելու չորս չափումները

- ▶ «Մեր նպատակն է. առավելագույն տեղեկատվություն առաջարկել հնարավորինս փոքր տարածքի վրա: Իսկ տեղեկատվությունը նպատակին պետք է հասնի արագ եւ արդյունավետ: Պատմությունը պատմեք հակիրճ եւ պարզ, խնայեք ընթերցողի ժամանակը, բառեր մի շռայլեք»:

- ▶ « ... Յուրաքանչյուր ավելորդ բառ իր նպատակի ուղիղ հակառակ է ազդեցություն է ունենում... Պետք է խնայել ընթերցողի ժամանակը, ջանքերը եւ համբերությունը. դրանով կվաստակենք նրա վստահությունը, այն ինչ գրված է, արժեքավոր է ուշադիր ընթերցողի համար... Բոլոր ավելորդությունները անբարենպաստ ազդեցություն ունեն»:

Առաջին պահանջը «USA Today»-ից է: Երկրորդը՝ մի փոքր ավելի հին է, այն առաջադրել է Արթուր Շոպենհաուները:

Ավելի խնայողաբար վարվել ընթերցողի ժամանակի հետ: Եթե սա անհրաժեշտ էր արդեն Շոպենհաուների ժամանակ, ապա ինչքան ավելի անհրաժեշտ է այսօր: Լեզվի հակիրճության կարիք ունենք «իբրև ստիպված ինքնապաշտպանություն մշտապես նոր հրապուրանքների սոսկալի հեղեղից»-, ասում է լեզվաբան, պրոֆեսոր, դոկտոր Յանս Էգերսը: Սա կարելի է արտահայտել նաև շատ ավելի բարդ ձևով: Թյուբինգեն համալսարանի գիտնականները հատուկ ուսումնասիրել են հեռուստատեսային լուրերի տեքստերի շարահյուսությունը եւ հանգել հետևյալ եզրակացությանը.

«Լուրերի շարահյուսորեն ամբողջական տեքստն ավելի վատ է վերարտադրվում եւ (դրա վերաբերյալ հարցերին ավելի վատ են պատասխանում), քան շարահյուսորեն պարզ տեքստը: Իմացաբանորեն ներիմաստ եւ շարահյուսորեն պարզ տեքստը ավելի վատ է վերարտադրվում, քան շարահյուսորեն պարզ տեքստը՝ լրացուցիչ տրամաբանական-իմացաբանական կապերով»:

Ստիպված եղանք դիմել այլ լեզվաբանների եւ հաճայեցի՞նք հետևյալ իմաստային թարգմանությանը.

«Նախադասության բարդ կառուցվածքով լուրերը ավելի վատ են հասկացվում, քան լուրերը՝ նախադասության պարզ կառուցվածքով (եւ ավելի վատ են պատասխանվում տեքստի վերաբերյալ հարցերը): Բարդ բառերով եւ նախադասության պարզ կառուցվածքով տեքստը ավելի վատ է հասկացվում, քան պարզ նախադասությունը՝ տրամաբանական-հասկանալի բառերով:

Իսկ հիմա ամբողջը պարզեցված, իբրև խորհուրդ երիտասարդ լրագրողներին.

*Նախադասության պարզ կառուցվածքով եւ պարզ բառերով լուրերը ավելի հեշտ են կարդացվում, քան բարդ արտահայտություններով, բարդ կազմությանը նախադասությունները:*

Այբբենական ճշմարտություն:՞ն: ժբա-ի համար ստացվող նյութերում ամենակարեւոր սխալները եղել են եւ շարունակում են մնալ.

- ▶ հանգամանալից արտաքին ձեւակերպումը՝ ուղղակիորեն պատահածի առանցքին անցնելու անկարողությունը
- ▶ չափազանց երկար նախադասությունները
- ▶ շատ քիչ բառացի մեջբերումները
- ▶ բյուրոկրատիայի եւ տնտեսության մասնագիտական լեզվին հատուկ արտահայտությունների մեծածավալ փոխառումը:

Ի՞նչ ենք հասկանում հանգամանալից ասելով: «Երբ հաղորդագրության սկիզբը այնպես է կազմված, որ մարդ ստիպված է առաջ անցնել երկրորդ պարբերություն՝ եղելությունը պարզելու», - ասել է Յանս Բենիդիկտեն ժբա-ի տնօրեն եղած ժամանակ: Դա նշանակում է գործել:

Թե ինչ հետեւանք է ունենում անհստակությունը, նույնիսկ չափվել է: Յամբուրգյան հոգեբաններ դոկ. Ինգհարդ Լանգերը, դոկ. Ֆրիդեման Շուլց ֆոն Թինը եւ դոկ. Ռայնհարտ Թաուշը պարզեցրել են բարդ տեքստերը եւ արձանագրել. ուղղված նյութի ընթերցողները հիսուն տոկոսով ավելի շատ տեղեկություններ էին մտապահել, քան բնագրի ընթերցողները: Հոգեբանների եզրակացությունը. նրանք պահանջում են.

- ▶ պարզություն
- ▶ ստորաբաժանում - կարգավորություն
- ▶ հակիրճություն - ստույգություն
- ▶ եւ լրացուցիչ խթան

Բայց հոգեբանները ավելացնում են մի զգուշացում: Մենք պարզեցված ձեւով վերարտադրում ենք. զգո՛ւյշ: Լրացուցիչ խթանը օր.՝ մեջբերումը միայն այն դեպքում է ազդեցիկ դառնում, երբ տեքստը պարզ է ու համատեսելի: Ոչ պարզ նախադասությունները կենդանի դարձնող տարրերի միջոցով էլ ավելի են մեծացնում շփոթը:

# Դրույթ 1. Պարզություն

## Ինչքա՞ն պետք է լինի Նախադասության երկարությունը

Պարզությունը սկսվում է նախադասության կառուցվածքից: Անշուշտ, կարճ նախադասությունը չպետք է լինի հպանցիկ, իսկ երկար նախադասությունը՝ ձանձրալի ու երկարաշունչ: Կան վարպետներ, ովքեր տասը տողից ավելի երկարության նախադասությունն այնպես հմուտ են կառուցում, որ մենք հաճույքով ենք ընթերցում: Այնուամենայնիվ, զգույշ է պետք լինել: Ընդհանրապես, ե՞րբ է նախադասությունը դառնում չափազանց երկար:

Այստեղ մենք մի քանի հայտնագործություն ենք արել: «Մայրենի լեզու» ամսագրում 1929-ին տպագրվել է Էրնստ Ֆուքսի ուսումնասիրությունը՝ «Նախադասության կառուցվածքի գաղտնիքը» թեմայով: Նա քննադատում է գիտահանրամատչելի մի գիրք: Այստեղ «ուղղակիորեն վխտում են 100 եւ ավելի բառերով, խճճված հրեշ-նախադասություններ», - գանգատվում է Ֆուքսը:

Իսկ այսօր: «Նախադասության առավել նպաստավոր երկարությունը» թեմայի մասին խոսելիս սիրում են մեջբերել նաեւ Լյուդվիգ Ռայներսի գիրքը՝ «Ոճաբանության այբբենարանը»: Դիտենք նախադասությունների երկարության աղյուսակը.

- ▶ Շատ հեշտ հասկանալի. 1-ից մինչեւ 13 բառ
- ▶ Չեշտ հասկանալի. 14-ից մինչեւ 18 բառ
- ▶ Հասկանալի. 19-ից մինչեւ 25 բառ
- ▶ Դժվար հասկանալի. 25-ից մինչեւ 30 բառ
- ▶ Շատ դժվար հասկանալի. 30 բառից ավելի:

Հաճախ չի նշվում, որ Ռայներսը այս գիրքը լույս է ընծայել 1951-ին: Այս ընթացքում փոփոխվել են ընթերցանության սովորույթները, նախադասություններն ավելի են կարճացել, եւ ընթերցողներն ըստ երեւոյթին սովորել են դրան:

Մի ժամանակ քսան բառանոց նախադասությունները ժբա-ում լավ չափանիշ էին համարվում: Հիմա հակիրճություն են գերադասում: Մեջբերում ենք պրոֆեսոր Վերներ Քյոնիգի «dtv-ատլաս գերմաներեն լեզվի համար» գրքից.

«Վիճակագրական հետազոտությունները ցույց են տվել, որ նախադասության երկարությունը 18-րդ եւ 19-րդ հա-

րյուրամյակների համեմատ պակասել է: Այն ժամանակ գեղարվեստական գրականության մեջ 25-ից 30 բառ ունեցող նախադասությունները ամենահաճախակին էին (Լեւսինգ 24, Գյոթե 30), այսօր իշխում են 10-ից 12 բառանոց նախադասությունները»:

«Գերմաներենում նախադասության կառուցվածքի փոփոխությունները» ուսումնասիրել է նաև լեզվաբան Հանս Էգերսը՝ «Ֆրանկֆուրտեր Ալլգեմայնե Ցայթունգ»-ի եւ Ռովոլթս հրատարակչության «Գերմաներենի հանրագիտարան»-ի օրինակով: Ամենահաճախակին 16 բառանոց նախադասություններն էին: Էգերսի եզրահանգումը.

«Մեր այսօրվա գրավոր լեզվում նախադասությունները միջին հաշվով ավելի են կարճացել: Մենք գերադասում ենք պարզ գլխավոր նախադասություններ կամ քիչ երկրորդական նախադասություններով բարդ ստորադասական նախադասություններ»:

Պատասխան փորձ՝ մեր սեփական բառահաշվիչ մեքենայի, համակարգչային ծրագրի\* միջոցով: Այսպես, մենք ուսումնասիրեցինք մյունխենյան «Աբենդցայթունգի» հազար տող: Նախադասությունների միջին երկարությունը 12,55 բառ էր: 71,8 տոկոսը բավարարվում էր 15 եւ պակաս բառերով:

Փորձ SZ-ում: Հաշվում ենք Հանս Ուլրիխ Քենփսկու ռեպորտաժներից մեկը նոր Չինաստանի մասին:

Նա հին դպրոցի մեծ լրագրողներից է, սակայն ոչ նրանցից, ովքեր հակված են որոշ բովարարային թերթերի ժամանակակից ասթմատիկ լեզվին: Մյունխենյան համակարգչային լեզվաբան Ֆրանս Գյունթները SZ-ում հաշվարկել է միջինը 14-ից 16-ական բառով նախադասություններ: Արդյո՞ք Քենփսկին գերազանցել է այդ: Եվս մի անակնկալ. նրա նախադասությունների միջին երկարությունը 14,55 բառ է: Միայն հինգ նախադասություն կա, որ 30-ից ավել բառ ունի, այսպիսով՝ 57,1 տոկոսը 15-ից պակաս ունի: ժբա-ն էլ այլեւս չի

\* Բառահաշվման ժամանակ խնդիրն այս է. եթե տեքստը պարզապես ստացվում է համակարգչի միջոցով, կարող է աղավաղվել լեզվական զմեհատականը: Քանի որ համակարգիչը որպես նախադասության ավարտ է հաշվում նաև միջակետերը հապավումներից հետո կամ ժամանակային տվյալների դեպքում (ժամը 19.05, հունիսի 3.եւ այլն), եւ դրանով իսկ հաղորդում չափազանց շատ կարճ նախադասությունների մասին: Կամ հաշվվում են նաև կրկնակետերը, որոնք ոչ մի դեպքում չեն եզրափակում նախադասությունը, այլ միացնում են նախադասության երկու տողերը: Այսպիսով պետք է հսկվի, թե ինչն է համակարգիչը այդպես հաշվում ...

հասնում 20 թվին. այստեղ մենք գտնում ենք 17-18 բառ երկարությամբ նախադասություններ:

Նախադասության երիզորդը հազվադեպ է դարձել, սակայն չի վերացել: Այն նույն համարում, որից մենք վերցրեցիք Քենմիսկու ռեպորտաժը, գտանք 769 նիշով, 106 բառով, երկու միջանկյալով, ինը ստորակետով եւ միակ վերջակետով նախադասություն: Այնտեղ խոսքը արվեստի տեքստերի քննարկման մասին էր, բանաստեղծուհի Ֆրեդերիկե Մեյրյոքերի մասին հիացմունք էր արտահայտվում.

«Նույնիսկ նրա ստեղծագործության գիտակը կզարմանա, թե որքան ուղղակիորեն է նա «Ակներեություն» տեքստում բանաստեղծական եւ մեթոդաբանական ցուցումներ տալիս իր աշխատանքի վերաբերյալ, ինչպիսի մեծ արձակ բանաստղծություն է իրենից ներկայացնում «Կապույտ զեկույցը» (quasi una fantasia կապույտ գույնի մասին), ինչպիսի հուզիչ մտերմություն է բովանդակում «Նկարչության մասին» նրա սիրային բանաստեղծությունը. եւ հետո այնտեղ կան տեքստեր «Գործողություն, մի աստիճան բարձրանալով» (ըստ Դուշամբի)» եւ՝ ամենածավալունը, ամենահինտենսիվը, արտակարգ համարձակը՝ Պիկասոյի «Վոլարոյան սյուլիտ»-ի օրինակով «Գրկախառնություն» ռադիոպիեսը, որը մի մոգական, համարյա կլանող համապատասխանություն է հայտնաբերում Պիկասոյի այս նկարների խմբի եւ սիրահարների երկխոսության միջեւ ...»

Առօրյայում մենք կարող ենք բավարարվել (առանց բառահաշվիչ մեքենայի) մի պարզ կանոնով. եթե որեւէ նախադասություն աչքի է ընկնում բազում տողեր ձգվելով, մենք պետք է ստուգենք՝ արդյոք դյուրամա՞րս է այդ նախադասությունը: Արդյոք նախադասության շղթան մեզ հմտորեն առա՞ջ կտանի: Կան գուցե ավելի լավ է որդեգրենք «USA Today»-ի կանո՞նը, որը մեզ հանձնարարում է. «Յուրաքանչյուր նախադասությունում միայն մեկ միտք»:

## **Դրույթ 2. Ստորաբաժանում - կարգավորում**

**«Նախադասություն՝ արձակված նետի պես»**

Արժե, ինչպես միշտ, մեջբերել Վոլֆ Շնայդերին: Նա արագ եւ

պարզ ասում է, թե ինչն է բանը, ընդ որում նրա նախադասությունները բնավ էլ միշտ կարճ չեն: Նրա համար միայն նախադասության երկարությունը չէ վճռորոշ:

«Որպեսզի նախադասությունը առավելագույնս հասկանալի լինի, այն պետք է ո՛չ կարճ, ո՛չ էլ սոսկ գլխավոր նախադասություն լինի (թեև երկուսն էլ հաճախ օգնում են առաջ գնալու). այն պետք է լինի թափանցիկ, հստակ, համատեսելի իր մտքերի եւ բառերի հաջորդականությամբ: Իսկ սա հենց գերմաներենում հատկապես դժվար է»:

Նախադասությունը պետք է լինի նպատակակետին արձակված նետի պես: Գոյականից բայը: Դրա համար նորից անդրադառնանք այս գլխի սկզբի օրինակին.

*«Ըստ Դաշնային վիճակագրական վարչության հաշվարկների՝ Դաշնության հին երկրամասերում, նախորդ տարիների պես, դժբախտ պատահարների հավանականությունը (արտահայտված իբրև ճանապարհատրանսպորտային պատահարներում տուժածների թիվ՝ յուրաքանչյուր 100.000 բնակչի հաշվով) ամենափոքրն է Ռուրի շրջանի մեծ քաղաքներում»:*

Մենք կարիք չունենեք նույնիսկ հաղորդագրությունից ամենահետաքրքիրը դուրս բերել, ինչպես որ մեզ գործակալություններն ու թերթերն են ուսուցանում: Եթե մենք ընդամենը արձակենք այս նախադասությունը, դարձնենք ավելի թափանցիկ, եթե վերադասավորենք նրա բովանդակությունը, այն արդեն ավելի պիտանի կդառնա թերթի համար: Փորձենք դա անել: Ուրեմն սկզբում լուրը, երկրորդ նախադասության մեջ՝ աղբյուրը, ապա՝ մանրամասնությունները.

*«Դժբախտ պատահարների հավանականությունը Դաշնության հին երկրամասերում ամենափոքրն է Ռուրի շրջանի մեծ քաղաքներում: Սա երեւում է Դաշնային վիճակագրական վարչության հաշվարկներից: Հետազոտվել է ճանապարհատրանսպորտային պատահարների թիվը՝ յուրաքանչյուր 100 000 բնակչի հաշվով»:*

Եվ հետո հետեւում են մյուս մանրամասները: Միայն ամենակարեւորն առաջ տանելու դասավորությամբ է նախադասությունը, ողջ

հաղորդագրությունը ավելի համատեսելի եւ դրանով իսկ ավելի հասկանալի դառնում:

Ինչպես ասվեց, մեզ սա պետք է որպես փրկություն տեղեկատվության հեղեղից: Այնուամենայնիվ, ամեն օր թերթերում կգտնենք խճճող մանրամասնությունների օրինակներ: Իրավիճակը այնպիսին է, ինչպես տարիներ առաջ այն բնութագրել էր Վոլֆ Շնայդերը.

«Ահա մի գրող նստած մտնտում է, թե ինչպես անի, որ մեն - միակ նախադասության մեջ մի դյուժին ամբողջական եւ կիսատ մտքեր խցկի, իսկ հետո հազար ընթերցողներ պետք է նստեն եւ պարբերությունից մորից վերծանեն այն, ինչ հեղինակը խցկել է դրա մեջ»:

Հիշենք «USA Today»-ին. «Յուրաքանչյուր նախադասությունում միայն մեկ միտք»: Միայն մեկ մտահաղացում, մեկ գաղափար յուրաքանչյուր նախադասությունում:

### **Դրույթ 3. Հակիրճություն եւ հստակություն**

#### **Ջնջեք ավելորդը, եւ նախադասությունը կդառնա ավելի սահուն**

Կարճ նախադասություններն էլ կարող են լինել բազմաբառ, շրջանցել թեման, ծանծրացնել ավելորդ մանրամասներով: Հենց այս նկատի ունենալով՝ լեզվաբանները հակիրճություն եւ հստակություն են պահանջում:

Մենք այստեղ չենք տա թերթերի անուններ. բերված օրինակները սխալներ են, որոնք բոլորն են թույլ տալիս.

Բավարական թերթերից մեկում տեղական նորությունների էջը բացվում է ահա այսպիսի մի երկար սկզբով.

*«Արձակուրդները շատերի համար լիցքաթափում եւ սթրեսային առօրյան մի քանի շաբաթով մոռանալ են նշանակում: Սակայն դրա համար նախ պետք է մի քանի մարկ ավելի վաստակել: Դրամի մշտական սղությանը ամենից առաջ տառապում են աշակերտներն ու ուսանողները, որի պատճառով արձակուրդների սկզբից մի քանի շաբաթ առաջ այստեղ եւ այնտեղ իրենց ծառայություններն են առաջարկում, մինչեւ որ մի հարմար աշխատանք են գտնում»:*

Միայն այսքանից հետո մուտքը հասնում է իր նպատակին.

*«Այն դպրոցականների իրավիճակը, որոնք իրենց բախտը պետք է փորձեն X գյուղում, այս տարի լավ չէ: Անբարենպաստ կոնյունկտուրան տեղական գործարաններին ստիպում է ոչ միայն սահմանել ոչ լրիվ աշխատանքային օր, այլևս վերջիվերջո բացասական հետեւանքներ է ունենում աշակերտների եւ ուսանողների համար»:*

Իհարկե, բովանդակությունը տրված է վերնագրում. «Վատ ժամանակներ արձակուրդի օրերին աշխատողների համար»: Այնուամենայնիվ, նախաբանը չափազանց երկար է. արձակուրդների նշանակության մասին ընդհանուր արտահայտություններն ընթերցողին ձանձրացնում են: Այն ամենը, ինչ ընթերցողին ինքնըստինքյան հասկանալի է, հոգնեցնում է, թվում անպետք: Ուզում են նոր բան իմանալ եւ իսկույն: Նույն վայրից դժբախտ պատահարի մասին մի թղթակցություն.

*«Աղետալի կարող էր վերջանալ մի մոտոցիկլիստի զբոսանքը Օ-ի մոտի խճուղում: Ժամը 20.30-ի մոտ նա հասավ պետական 2150 մայրուղու խաչմերուկին եւ ուզում էր հատել այն: Նա ահագին ուշ նկատեց մի կնոջ, որն իր մեքենայով ընթանում էր N քաղաքի ուղղությամբ ...»:*

Մոտ 50 բառից հետո ենք միայն վերջապես տեղեկանում, որ մոտոցիկլիստը եւ մարդատար մեքենան ընդհարվել են: Թեթեւ վնասվածքներ: Երկու դեպքերում էլ Բենիրշկեի թերությունների ցուցակի թիվ 1 սխալը. Չզձգված ձեւավորում.

- ▶ «Չդառնալ շատախոս», - ասում է «USA Today»-ը: Բառերի խնայողությունը սկսվում է արդեն նախադասությունը կառուցելիս.
- ▶ Չաջորդ խորհուրդն է. խուսափել կրավորական կառուցվածքներից.

*«Բերգ. - Մի դեռեւս անհայտ երիտասարդի կողմից Բերգում (Շտարենբերգի շրջան), մի 67 ամյա թոշակառու կնոջից, որն իր քրոջ հետ դուրս էր եկել զբոսնելու, գողացվել է նրա 400 մարկ պարունակությամբ ձեռքի պայուսակը: Գողը կողքով անցնելիս ...»*

Ինքներդ ստուգեք՝ երբ գործածում ենք ներգործական սեռը, նախադասությունն իրոք ավելի արագ է հասնում թիրախին:

*«Բերգ. - Մինչ այժմ անհայտ մի երիտասարդ Բերգում (Շտարենբերգի շրջան) գողացել է մի թռչակառու կնոջ ձեռքի պայուսակը՝ 400 մարկով: Տիկինը զբոսնելու էր դուրս եկել իր քրոջ հետ ...»*

► Հանել միջանկյալ բառերն ու արտահայտությունները

«USA Today»-ը ցանկանում է, որ իր աշխատակիցները խուսափեն անցումներից, ինչպես օրինակ՝ «մյուս կողմից»-ն է: Լավ կառուցված պատմության մեջ նման անցումների անհրաժեշտությունը քիչ է:

Լեզվաբան Է. Ա. Ռաուբերը նախազգուշացնում է ավելորդ ձեւակերպումների մասին.

*«Մի բառ, որը ոչինչ չի արտահայտում կամ կրկնում է ասվածը, անհմաստ աղմուկի օպտիկական վերարտադրումն է: Եթե տեքստերը ձանձրալի են, ապա նրանից է, որ դրանցում սանտիմենտներով աղմուկի օպտիկական գրառումներ են հանդիպում: Դա թերթերում հատկապես զավեշտալի է, քանի որ բոլոր թերթերի խմբագիրները բողոքում են, թե շատ քիչ տեղ ունեն...»*

Արդյոք դուք նկատեցի՞ք արձակուրդների մասին հաղորդագրության մեջ «վերջիվերջո» բառը: Այն մեր ցուցակում անմիջապես ջնջվող բառերի թվում է: Այդ ցուցակը սկսվում է «մյուս կողմից»-ից եւ «բայցեւայնպես»-ից եւ հասնում մինչեւ «դրանից դուրս»-ը: Երբեմն բառերը կուտակվում են պատահաբար եւ դրանով իսկ ավելորդ են դառնում. այս հատվածից մենք յոթ անգամ «նաեւ» ենք հեռացրել:

► Ոչ մի անպետք փաստ

Փաստերի հնոտիավաճառությամբ ինչ-որ մեկը իրեն կարելուրում է չափազանց շատ մանրամասների միջոցով: Կլաուս Յակոբին ճշգրտում է սա.

*«Յուրաքանչյուր մանրամասն գունեղ համարելը համարած թյուրըմբռնում է: Մեզ համար օգտակար են միայն*

այն մանրամասները, որոնք ինչ-որ բան են ընդգծում: Եթե վարչապետը ժամանում է «Մերսեդեսով», հիշատակման արժանի չէ. երբ արհմիության անդամը «Յագուարով» է գնում աշխատավարձերի շուրջ բանակցությունների՝ այո: Որ շինարար բանվորը շապիկ է կրում, ոչ ոքի չի հետաքրքրում: Բայց երբ մի բանկիր է այն կրում գրասենյակում, մենք պետք է դա նշենք»:

Դեռ 1949-ին «Շախգելը» իր գրեթե մոռացված կանոնադրությունում նախազգուշացնում էր ծեծված արտահայտություններից: Այն, ինչ այդ ժամանակ ձեւակերպվեց, առանց սահմանափակումների գործում է հաջորդ տասնամյակների համար: Ահա թղթակցության ներքին ձեւի մասին հիմնադրություններից չորսը.

«Շախգել»-ի պատմությունները պետք է

- չպարունակեն կրկնություններ: Զգուշացեք եզրափակիչ ամփոփումներից:

- գրված լինեն կարճ, ճշգրիտ նախադասություններով: Գլխավոր նախադասությունը պետք է գերիշխի: Երիզորդի նման վերջ չունեցող նախադասությունները հակասում են «Շախգելի» ոճին, քանի որ նրանք մեծամասամբ անհասկանալի են եւ դժվար ընթերցվող: Իսկ «Շախգելի» ընթերցումը պետք է լինի հնարավորինս հեշտ:

- խուսափեն բոլոր տեսակի տափակաբանություններից: Ծեծված արտահայտություններն ու էժանագին ճոռոմախոսություններն արգելվում են:

- փնտրեն սեփական, դիպուկ, բայց՝ կարճ ու հստակ ձեւակերպումներ, սակայն՝ առանց ջղաձգությունների»:

Կլաուս Յակոբին նույն թեմայի վերաբերյալ.

«Մենք գերադասում ենք ավելի հստակ խոսքը՝ մաշվածից, «հագիվիագ քաշ գալ»-ը՝ «եկավ»-ից: Բայց մենք զգուշանում ենք վերամբարձությունից: Մեզ մոտ ոչ թե «թխվածքեղենի գնի մակարդակը բարձրանում է», այլ՝ «թանկանում է բուլկին»:

Այս բոլորը նորից պարզեցնենք մեկ նախադասությամբ՝ կանոն երիտասարդ լրագրողների համար.

*Ջնջեք ավելորդը, եւ տեքստը կդառնա ավելի սահուն:*

## Դրույթ 4. Խթանում

### Մեջբերումները (ցիտատները) ամենալավ համեմուճքներն են

Մենք կրճատեցինք, հղկեցինք, ջնջեցինք: Եվ ապա կարող է գալ այն պահը, երբ մենք պետք է ինչ-որ բան ավելացնենք. խթանումը:

Համբուրգյան վերոհիշյալ հոգեբանները հասկանալիության այս չափը նկարագրում են այսպես.

Լրացուցիչ խթան. «Սրանով մենք հասկանում ենք հեղինակի միջոցները, որոնք ընթերցողի մոտ պետք է առաջացնեն հետաքրքրություն եւ անձնական մասնակցության զգացում: Իրականացման մի քանի հնարավորություններ. բացականչություններ, ուղիղ խոսք, ընթերցողին ուղիղ դիմելը, պատմության մեջ մարդկանց ներգրավելը, տեղեկատվությունը հետաքրքիր պատմության մեջ տեղադրելը, գրավիչ բառեր, սրամիտ կամ տպավորվող ձեւակերպումներ»:

Պահպանելով հոգեբանների հերթականությունը, դիտարկենք հնարավորությունները. սկզբից բացականչությունները: Դրանք մի ժամանակ (որքան վաղուց էր դա) բուլվարային թերթերի հատկանիշն էին: Հայացք գցենք BZ-ին: Բեռլինում շողում է արեւը: Թերթը ուրախանում է.

*«Բեռլինը ցնծում է. վերջապե՛ս ամառը ցույց տվեց իր արեւային դեմքը»:*

Արդեն վաղուց բացականչությունները (տես՝ «Հանգույց» գլուխը) բոլոր լրագրողների համար թույլատրելի խթանող միջոց են: Վերցնենք «Ֆոկուսի» պատահական ընտրված մի համար. ահա մի թղթակցություն հեռուստակայանների մենամարտի մասին: Նրա սկիզբը.

*«Ծանր կշտամբանքներ ARD-ի հասցեին»*

Մի ֆուտբոլիստ չի ընդունում Մյունխենի առաջարկը: Եվ «Ֆոկուսը» բացականչում է.

*«Անհաջողությունն Մյունխենի «Բավարիա» ֆուտբոլային ակումբի համար»:*

«Դի Վոխե»-ն այստեղ բացառություն չի կազմում: Այն հաղորդում է տարադրամի վերաբերյալ կոնֆերանսի մասին.

*«Մասստրիխտը մեռավ. կեցցե՛ Եվրոպան»:*

Այս օրինակները ցույց են տալիս. բացականչությունը, այսպես ասած «արքունիք» մտնելու թույլատրություն է ստացել, ընդունելի է նույնիսկ ֆելիետոնի համար:

Խթան N 2. Ուղիղ խոսք: Որ այն հաճախ բացակայում է, դեռ Հանս Բենիրշկեն է բողոքել.

*«Ինձ ցավ է պատճառում յուրաքանչյուր հաղորդագրություն, որում ասույթները վերարտադրվում են միայն անուղղակի խոսքով: Անուղղակի խոսքը, իհարկե, պիտանի է ավելի մեծ ասելիքներ ամփոփելու համար: Բայց գոնե հիմնականները պետք է բերվեն որպես ուղիղ խոսք»:*

Այս հարցի վերաբերյալ մենք նորից գործի դրեցինք մեր բառահաշվիչ սարքը: Հանս Ուլրիխ Քենփսկու Չինաստանի մասին ռեպորտաժում նախադասությունների 18,8 տոկոսը պարունակում է ուղիղ խոսք: «Աբենդգայթունգի» ռեպորտաժներում դրանք 20 տոկոս են կազմում: Մենք չենք ուզում գերազնահատել այս թվերը: Սակայն վիճակագիրները ուշադրություն են հրավիրում. բացի հարցուպատասխանի ձևով հարցազրույցից ուղիղ խոսքից օգտվում են թղթակցությունն ու ռեպորտաժը: Գերմանա-ամերիկյան լեզվաբան Ռուդոլֆ Ֆլեշը նույնիսկ կարծում է.

*«Արհեստավարժը ուղիղ խոսքի հակում ունի եւ իր նյութի մեծ մասը վերցնում է չակերտների մեջ: Դիլետանտը, ընդհակառակը, խորշում է չակերտներից»:*

Այստեղ dpa-ի ձեռնարկից մի զգուշացում տեղին կլինի.

*«Մեջբերումները չպետք է սահմանափակվեն ընդհանուր համատեքստից կտրված մի քանի բառով: Որպես կանոն,*

պետք է մեջբերվեն ամբողջական նախադասություններ կամ հատվածներ: Մեջբերումը կարող է նաև այն ժամանակ կտրված լինել համատեքստից, երբ նրա անսովոր բովանդակությունը վերարտադրվում է՝ առանց նրա հատուկ տոնը, ուղեկցող ժեստը եւ դեմքի ոչ սովորական արտահայտությունը նշելու»:

Մենք պետք է մարդկանց խոսեցնենք: Արդյոք իրավունք ունե՞նք նաև նրանց դիմելու: Հոգեբանները խորհուրդ են տալիս, շատ խմբագիրներ՝ երկար ժամանակ մերժում էին: Անձնակա՞ն հարցեր շոշափել: Ընդունված չէ: Մինչդեռ վերաբերմունքը փոխվել է:

Դիմելը թույլ է տրված, եթե դրանով ընթերցողի ուշադրությունն ենք հրավիրում իր համար կարելուր նորության վրա: «USA Today»-ի համար դա նույնիսկ ընթերցողին պատմության մեջ ներքաշելու ցանկալի հնարք է: «Բիլդինգ» ստորեւ բերված օրինակում խմբագիրները թերեւս հոնքերը զարմացած վեր կբարձրացնեն՝ այնքան ուրիշ է շատերի համար հոդվածը մի կողմ չդնելու կոչը.

*«Գո՞հ չեք ձեր բնակարանից, թերություննե՞ր եք հայտնաբերել: Ապա կարդացեք, քանի մարկով կարող եք նվազեցնել ձեր բնակարանատիրոջը տրվող վարձավճարը: Գերմանական վարձակալների միությունը ամփոփել է ամենակարելուր դատողությունները»:*

Երբեմն մեթոդը օժանդակ ոճական միջոց է, որը թույլ է տալիս թեթեւ գրույց վարել: «Ֆոկուսը» մի ֆիլմ քննարկելիս.

*«Դու՞ք էլ եք միշտ ցանկացել իմանալ, թե ինչպես են ճարտասանությամբ փրկում Սիլվեսթեր Սթալոնեի նասնակցության մի լիովին ձախողված ֆիլմ: Ասելով ճշմարտությունը: Թերթենք Ռենի Հարլինսի «Ժայռ» դրամային նվիրված պրակի էջերը եւ կարդանք ածականները»:*

«Ցայթը» նմանապես ակնհայտորեն չի մերժում ընթերցողին դիմելը: Այն հաղորդում է Մարսյան ճանապարհորդությունների մասին.

*«Դուք երբեւիցե երագե՞լ եք հեռու-հեռուները մեկնելու մասին: Նոր Ձեւանդիա, Ֆիջի կղզի կամ Անտարկտիկայի ամմարդաբնակ հեռուները: Այդ բոլորը մանրուքներ են»:*

Ամփոփում. դիմելը թույլատրելի է, եթե այն ծառայում է ընթերցողին եւ թեմային: Եթե այն դառնում է խորամանկութեամբ ձեռք բերված վստահություն, ապա՝ ո՛չ:

Չոգեբանների հաջորդ խորհուրդը. մարդկանց ներգրավել պատմության մեջ, լրատվությունը հետաքրքրական պատմության մեջ տեղադրել, գրավիչ բառեր: Այս ամենը փոխկապակցված է եւ ընդգրկվում է մարդ հիմնաբառի մեջ: Պարզաբանենք մի սարսափեցնող օրինակով: Սկսնակ լրագրողները հարցազրույց էին վերցրել SOS-մանկական գյուղի մի աշխատակցից: Եվ նրանից լսել էին. «Երեխաներին պետք են մայր, քույր եւ եղբայր, տուն, հարեւան, գյուղ»:

Սա ինչ-որ բան ասում է: Սակայն զրույցը վերարտադրելիս ուսանողներից մեկը գրեց. «Յուրաքանչյուր երեխայի ընտանեկան միջավայր է պետք»: Ստացվել է անկենդան արտահայտություն:

Մենք պետք է մարդկանց ներքաշենք խաղի մեջ: Լեզվաբանները, ինչպիսիք են Ռայմերսը եւ Ֆլեշը, խորհուրդ են տալիս. ձեր տեքստում հաշվեք բոլոր անձնական եւ ստացական դերանունները, դրան գումարեք բոլոր գոյականները, ինչպիսիք են՝ տղամարդ, կին եւ երեխա, որոնք ինչ-որ ձեւով առնչություն ունեն մարդկանց հետ: Անձնանուններն ինչքան շատ լինեն, այնքան՝ ավելի լավ: Նրանց թվի հետ աճում է նաեւ տեքստի հասկանալի լինելը:

Անձնանունները, լավ իմաստով, հրապուրիչ բառեր են. հասկացություններ, որոնք անմիջապես պատկերներ եւ զգացումներ են արթնացնում: Հիմա միայն կարելոր է այն, թե ինչ զգացումներ են նրանք արթնացնում: Շտեֆի... Բորիս... Գործազուրկ... ավելի փոքր վարձավճար: Եթե կարդանք թերթերի տիտղոսաւեջերը, կարող ենք հեշտությամբ կազմել հրապուրող բառերի համրագիտարան, հասկացությունների բառարան, որոնք վերջերս արդիական են դարձել կամ միշտ են այդպիսին եղել. սեր, արեւ, սպանություն ... Եվ այստեղ շատ արագ կարելի է կազմել համեմատության աստիճանները՝ ընդունելից մինչեւ զավեշտալին: Մի հատկապես գեղեցիկ օրինակ է մնացել գրիպի վերջին ալիքի ժամանակներից: Գրիպ՝ մի բառ, որն արդեն սարսուռ է առաջացնում: Սկզբում մոլեգնում էին միայն հարբուխն ու հազը: Արեւելքից վիրուսային գրիպ է սպասվում, բայց ավելի շուտ՝ անցողակի: Սա մամուլի ասուլիսի թեման էր: SZ-ը այս ամենին համաբավարական երանգ տվեց.

*«Ողջ Բավարիայում այժմ հարյուր հազարավոր մարդիկ տառապում են հարբուխից եւ հազից, մրսածության իսկական ալիք է համակել երկիրը»,- հինգշաբթի օրն ասաց*

*Բավարիայի ինունաբանական եւ պատվաստուկային նախապահպանության ընկերության նախագահ Նիկոլաուս Ֆրյուվայնը»:*

Ավելի ուշ խոսք եղավ նոտեցող գրիպի վիրուսի մասին: Բավարիան կարող է լինել տարածման հաջորդ շրջանը: Մյունխենի «Աբենդգայթունգն» ավելի շատ տեղական կտրվածքով էր նայում.

*«Մյունխենի կեսը տառապում է հարբուխից եւ հազում է, ձեռնարկություններում հիվանդների քանակը հասնում է ռեկորդային մակարդակի: «Սա դեռ դժբախտության կեսն է», - հանգստացնում են բժիշկները. շատ ավելի վտանգավոր է գրիպի համաճարակը, որը դեռ նոր է նոտենում: Վիրուսներն արդեն Ասիայից ճանապարհվել են դեպի Գերմանիա...»:*

Վիրուսներ ... Ասիայի՞ց: Ինչպիսի՞ գրգռիչ բառեր: Եվ ահա մի այլ թերթի թղթակցի այլեւս կանգնեցնել չէր լինի: Նրա գրածը հաջորդ օրը տավեց այն թերթում, որը սովորաբար կրճատելու ճարտար վարպետ է: Մանրէներ եւ գրիպ. այ՛ թե որտեղ կարելի է թափ վերցնել: Մեջբերում ենք բառացի.

*«Գրիպի մի հսկայական ալիք է գալիս Կենտրոնական Ասիայի տափաստաններից, այնտեղ արդեն շատ մարդ է մահացել: Մարդիկ փսփսում են. սա Չինգիզ խան գրիպն է՝ մոնղոլ-դահիճի անունը կրող: Բավարիայի ինունային եւ արեւադարձային բժշկության ընկերությունը զգուշացնում է. ով վարակվի, բարձր ջերմությամբ եւ ծակող գլխացավերով առնվազն 3 շաբաթով անկողին կընկնի»:*

Ուրեմն՝ Դիթեր Դիլդերբանթի ասածը ճիշտ է . որոշ թերթերում հեռախոսը սուր ճչում է, մինչդեռ այլ տեղերում զանգում կամ հնչում է ...

Խթանի հակոտնյան կրկնությունն է: Երբ որեւէ բառ բազմիցս է հանդիպում, դա կարող է սպանել ընթերցանության ցանկությունը: Այդպես շատերն են մտածում: Այդ պատճառով նրանք խուսափում են մի բառից, եթե նույնիսկ այդ շրջանցումը կարող է հանգեցնել թյուրիմացությունների: Նկատի ունենք «ասել» բառը:

# Լրագրային լեզու 2

## Վախ «ասել» բառից

Նախ մի հատված Յեմինգուեյից, մի քանի տող նրա «Կիլիմանջարոյի ձյունները» պատմվածքից.

«Ես գրել եմ ուզում», - *աղերսեց* նա:

«Դու պետք է մի քիչ արգանակ խմես՝ ուժերդ պահպանելու համար»:

«Ես այս գիշեր կնեռնեմ, - *տնքաց* նա: - Ինձ պետք չէ ուժերս պահպանել»:

«Խնդրեմ՝ առանց մեղրդամի, Չարի», - *հառաչեց* նա:

«Չապա մի քիթդ գործի դիր: Ես արդեն մինչեւ ազդրիս կեսը փտել եմ»:

«Խնդրում եմ, խմիր արգանակը», - *լացեց* նա:

«Լավ»:

Արգանակը շատ տաք էր: Նա ստիպված էր սառեցնել գավաթի մեջ, մինչեւ որ Չարին կարողանար այն խմել:

«Դու փառահեղ կին ես», - *փայլեց* նա ...

Եվ սա Յեմինգուեյ է: Արդյոք այս ամենը երրորդ տեսակի ժամանցային վեպի նման չէ՞: Իսկ ի՞նչն է պատճառը:

Շատ պարզ է. ամենուր, որտեղ Յեմինգուեյը «ասել» բառն է գրել, այստեղ փոխարինվել է այսպես կոչված հոմանիշով՝ այնպես, ինչպես սիրում են անել շատ լրագրողներ: Որոշ թղթակցություններում զրուցակցին երբեք չի հաջողվում որել բան ասել. նա *կարծում է, շեշտում, ընդգծում, բացականչում, հայտարարում, խոստովանում, նշում ...* Եվ դրանով հատկապես սկսնակներն են շատ հպարտանում: Յիմնավորումը՝ «այդպես ենք սովորել դպրոցում: Կրկնությունը վատ է ...»:

Իսկապե՞ս վատ է, ամե՞ն դեպքում:

Յեմինգուեյի օրինակը ցույց է տալիս. նրա չոր լեզուն հոմանիշներով կեղծվում է: Դրանք բառի փոխարինիչներ են, հաճախ ոչ ստույգ, անհամապատասխան, հաճախ լրիվ սխալ: Ոչ ոք չի կարող բառեր **լացել**. վատթարագույն դեպքում **լացելով կարտաբերի**: Կամ **լացելով կասի**:

Այնուամենայնիվ, ուսանողները կարող են մի հանրաճանաչ օրինակ վկայակոչել: «Շախգեղը» ցույց է տալիս, թե ինչպես են խաղում

հոմանիշներով. շաբաթաթերթի միակ համարում հեշտորեն գտնվեց ասել բառին փոխարինող հիսուն բառ, եւ դա դեռ բոլորը չէր:

Քաղաքագետները փաստարկում են, հայտարարում, ծեւակերպում, ցնծում, հավասարակշռում, բողոքում, լուսավորում, արձանագրում եւ հարվածը հետ մղում, երանգավորում, տրտմջում, հեզում, աղմկում, հառաչում, հիանում, հայիոյում, կատակում, հայտնում նշանաբառը, հարց լուծում, հավաստիացնում, հիմնավորում եւ ընդունում կամ հանգստացնում: Հարցվողները վստահեցնում են, համաձայնում, գրանցում, արդարացնում, ամփոփում, իմաց են տալիս կամ ակնարկում, նրանք ետ են մղում կշտամբանքները եւ հիշում, պատմում, սպառնում, նախազգուշացնում, կարծում, ինչ-որ բան արտահայտում, խոստովանում, պնդում եւ պարզաբանում, նրանք նկարագրում են, մեջբերում, պարզում, նրանք կշռադատում են, ծաղրում, վստահ են լինում, դատում, ավելացնում, ավետում, ըմբոստանում եւ սարսափում, մոլեգնում, սպասում, հրաժարվում: Մեկին թվում է, մյուսին՝ համակում:

Տուեցակը հեշտորեն կարելի է ընդարձակել մի հանրաճանաչ թերթի՝ վատ օրինակներով.

... ծիծաղում է ... կարծում է Պետրան ... Պետրան հիշում է ... Պետրան փայլում է ... ուրախանում է ZDF-ի հաղորդումների տնօրենը ... մրթմրթաց նա ... մեկ անգամ եւս տխուր արտաբերեց նա ... գոռաց Վալերին լսափողի մեջ ... բողոքեց Վալերին ... առարկեց Վալերին ... երջանկությամբ խոստովանեց ... տեղեկացավ նա .. արագ ինչ-որ բան ավելացրեց ... ուրախ ծաղրեց ... գոչեց Վալերին ... լուրջ հայտարարեց ... արձանագրեց փոքրիկը ... հաստատեց Ռիկին ... առարկեց Տոբիասը ... ըմբոստացավ նա ... տեղեկացավ Հուբրիխը ... շունչ քաշեց Անդրեասը ... ծիծաղեց Ռոթշոփֆը ...

Հապա ինչպե՞ս գտնենք ճիշտ բառ-ուղին ձանձրալիի եւ զվարձալիի միջեւ: Օրինակ Բեն Վիթերը՝ «Ցայթից» նախազգուշացնում է.

«Արտահայտության մշտական փոփոխումն, ըստ էության բարձր դասարանցիների շարադրության մնացուկ է: Այն կարող է նույնիսկ ծիծաղելիության հասցնել: Կամ անճշտության: Այնուամենայնիվ «ասել» բառը բոլոր ոճերին հարմար չէ, բառը պետք է նորից եւ նորից կրկնվի ամբողջ տեքստում, եթե այն համահունչ է ողջ կառուցվածքին, բա-

ռերի ռիթմին: Ըստ որում, «ասել» բառը պետք է երկրորդական դեր խաղա, կարելորն այն է, թե ինչ է ասվում: Այս բառը հեշտորեն կարող է կարճ ու կտրուկ թվալ: Սկսնակը, սակայն, այլ արտահայտություններ պետք է գործածի միայն այն դեպքում, երբ նրանք իսկապես ավելի ճշգրիտ են, քան «ասել»-ը, երբ, օրինակ, բառն այլևս չի սազում, քանի որ դիմացինը գոռում էր»:

Բեն Վիթերի պատահական վերցված մի հոդված ցույց է տալիս նրա ոճը. այդ աշխատանքում՝ Կարլո Շմիդի հետ հարցազրույցում, որը «Ցայթի» գրեթե մի ամբողջ էջ է զբաղեցնում, նա մոտավորապես քսան անգամ «ասել» է գրում, բայց եւ նույնչափ հաճախ խույս է տալիս դրանից՝ մի քանի անգամ նկարագրող արտահայտություններով, որոնց ուղղակի խոսքեր են հետեւում.

«Չուզված էր հնչում նրա ձայնը դրանից առաջ եւ ամեն բառի հետ դառնում ավելի զգաստ ... »  
«Ես առողջ եմ: - Նա խոսքն ընդհատեց: - Ո՛չ ես չեմ կարող տրվել մեկամաղձությանը»:  
... Նա ձայնը բարձրացրեց. «Ահա թե ուր է հասցնում մարդկային ստորությունը ...»:

Կարլո Շմիդը «կրկնում է», նաեւ՝ «արձանագրում», «մրթմրթում», «վարանում»: Նկատելի է, որ հոմանիշները ընտրված են խնամքով՝ մթնոլորտը նկարագրելու համար:

Խոսքը հենց այս ճշգրտության մասին է. այն տարբերություն է դնում լավի եւ վատի միջեւ: Այս տեսակետին համաձայն են բոլոր փորձառու լրագրողները:

Կանոն սկսնակների եւ ուսանողների համար.

զգուշացեք հատկապես այնպիսի բայերից, ինչպիսիք են՝ շեշտելը, ընդգծելը, հայտարարելը, արձանագրելը, պնդելը, ազդարարելը: Դրանցով հաճախ գերարժեքավորվում են ծեծված մտքերը, ընկերության նախագահի պարզ ճառը վերածվում է կառավարության հայտարարության: Նաեւ խոստովանելն է երբեմն չափազանցված եւ անհեթեթ է հնչում. «Նա հատկապես մեծ հաճույքով այցելում է «Բրատուրստոյուկլ» նրբերշիկանոցը, երեկ մեզ խոստովանեց X կինոաստղը ...»:

«Խոստովանել»-ը չափազանցնում է, «կարծել»-ը դրան հակառակ՝ թուլացնում: Դրանում անվստահություն կա. «Կարծում են, այս ճանապարհը տանում է կայարան». սա, անշուշտ, նշանակում է.

«ես ենթադրում եմ, որ ճանապարհն այստեղ է տանում, բայց հաստատ չգիտեմ»:

Եթե «ասել»-ու համար պետք է փոխարինող բառ գործածվի, ապա անպայման բժախնդրորեն ստուգեք նրա ճշգրիտ նշանակությունը: Իրոք այն սազում է, ավելի՞ դիպուկ է, քան «ասել»-ը: Չկա՞ ավելի լավ բառ: Արդյոք չեմ կարող հրաժարվել դրանից: Պետք չէ վախենալ «ասել» բառից, բայց բերեք նաեւ այլ արտահայտություններ, որոնք ավելի ստույգ են բնորոշում խոսեւածելը:

## Լրագրային լեզու 3

### Կետադրություն լրագրողների համար

#### Վերջակետ, ստորակետ, միջակետ

Կետադրությամբ մենք ուզում ենք նշաններ դնել, եւ սա պետք է բառացիորեն հասկանալ: Նշանները մասնատում են մեր մտքերը, ընդգծում կարելորդ եւ, օրինակ, ազդանշան են տալիս, թե երբ պետք է բարձրացնենք կամ իջեցնենք ձայնը: Նշանները՝ ոչ լեզվական հաղորդակցություն արտահայտման, այսինքն՝ անխոս բացատրվելու ձեւերն են: Կետադրական նշանները զգալի են դարձնում զարմանքը, հարցը, անվստահությունը կամ համոզվածությունը: Այո, այդպես է: Իսկապե՞ս այդպես է:

Սկզբում վերջակետը: Սա կետադրական այն նշանն է, որը պետք է հնարավորին չափ հաճախ դնել: Շատ տեքստեր ավելի են լավանում, երբ վերջում մի քանի կետ ենք ավելացնում. այսինքն՝ առկա նախադասությունները կրճատում ու նորերն ենք կազմում: Եթե դրա հետեւանքով որոշ ստորակետեր վերանան, ավելի լավ: Բայց կարճ նախադասությունների գովքը մենք արդեն «Լրագրային լեզու - 1»-ում ենք ասել:

Այս կապակցությամբ մենք մի նոր ֆենոմենի հանդիպեցինք: Լրագրողները ակնհայտորեն վախենում են վերջակետից, առնվազն առաջին նախադասությունում: Այն շատերի համար պարզապես չի հերիքում: Ոչ մի դեպքում թույլ չպետք է տրվի, որ ընթերցողները ձայնն իջեցնեն: Սակայն ինչպե՞ս: Ամենահասարակ եւ հաճախ ամենավատ ձեւը մեզ ծանոթ է, որպես բացականչական լրագրություն: Չէ՞ որ հնարավոր չէ ուղղակի գրել.

«Ավագանու անդամ Հայնցը մահացել է: Նա ինֆարկտ է ստացել»:

Ստացել. անհաջող է հնչում: Բացականչական նշանով մենք ավելի շուտ տազնապ կազդարարենք:

*«Մահացել է ավագանու անդամ Հայնցը»: «Սրտամկանի ինֆարկտ»:*

Ավելի նրբաոճ թերթը բացականչականի փոխարեն բութ կղներ.

*«Մահացավ ավագանու անդամ Հայնցը՝ երեկ 57 տարեկան հասակում նա վախճանվեց սրտամկանի ինֆարկտից»:*

Հաճախ թերթի յուրաքանչյուր երկրորդ տեքստ սկսվում է բութ պարունակող նախադասությամբ: Եվ նույնը վերաբերում է յուրաքանչյուր նկարի մակագրությանը: Վոլֆ Շնայդերը ըմբոստանում է դրա դեմ. դա ո՛չ տրամաբանական է, ո՛չ էլ ժամանակագրական: Սակայն Դուդենի բացատրական բառարանը դեմ չէ դրան: Մեջբերում ենք «Ստորակետ, վերջակետ եւ մնացած բոլոր կետադրական նշանները» գրքույկից.

«Բութը ոչ թե ավարտի նշան է, այլ անցում է բնորոշում: Այսպիսով, բութի խնդիրն է՝ հաջորդողից օպտիկորեն առանձնացնել որեւէ նախադասություն կամ նախադասության հատված, որոնք տեքստ են ներածում կամ ազդարարում: Այն ընթերցողներին պետք է դադարի դրդի, բայց առանց տեքստի երկու մասերի միջեւ կապը խզելու»:

Բութի մրցակիցն է միջակետը:

«Մահացավ ավագանու անդամ Հայնցը. սրտամկանի ինֆարկտ»:

Միջակետը ասում է՝ ուշադրություն. հիմա մի բան կիմանաք: Այս կետադրական նշանը մուտք է գործել նաեւ բարձրաոճ ժուռնալիստիկա: Միջակետը օգնում է բառերը խնայել եւ պոնտեր մշակել: Մենք այն գտնում ենք ամենուր, յուրաքանչյուր տեսակի թերթերում եւ ամսագրերում:

Այն հնարավոր է դարձնում մի անուն, մի հասկացություն, մի կարգախոս նախադրելը.

«Ազատ ժամանակ. ՁԻԱՅ-փորձագետ Կարլ-Օտտո Յա-  
բերմեիլի համար սա գրեթե օտար արտահայտություն է»:  
(WAZ)

«Երեխաներն իշխանության գլուխ. քաղաքում երեխաների  
խոսքն ավելի լսելի եւ ազդեցիկ դարձնելու համար քաղաքի  
ավագանու՝ երեխաների եւ երիտասարդության հարցերով  
զբաղվող հանձնաժողովը ընդհանուր հայեցակարգ ընդու-  
նեց»:  
(SZ)

Այն օգնում է նաեւ մի քանի հետաքրքրաշարժ բառեր շարել մե-  
կը մյուսի ետեւից, առանց խանգարող բայերի.

«Էբերսվալդե, Յոյերսվերդա, Յյունկսե, Ռոստոկ, Մյոլն. եւ  
սպա՝ Ջոլինգեն: Արտասահմանցիների նկատմամբ խայ-  
տառակ արարքների շղթան չի ընդհատվում»:  
(«Ցայթ»)

«Կարկուտ, անձրեւ եւ ամպրոպ. չորեքշաբթի երեկոյան  
մի փոթորիկ ճայթեց Մյունխենի վրա»:  
(AZ)

«Խցանում, խցանում, խցանում. Բեռլինի փողոցները լեփ-  
լեցուն են, ժամեր շարունակ ավտոմեքենաները կանգ են  
առնում փողոցում: Սակայն շատ քիչ վարորդներ են մտա-  
ծում իրենց մեքենան ավտոտնակում թողնելու մասին»:  
(BZ)

Սիջակետը հնարավորություն է տալիս խուսափել հանգամանա-  
լից միջանկյալներից կամ երկրորդական նախադասություններից.

«Այսօր յուրաքանչյուր երրորդ ավտոմեքենա Գերմանիա-  
յում երթեւեկում է կատալիզատորով. տասը միլիոն փո-  
խադրամիջոց»:  
(«Վեկթ»)

«Յինգ տարի նա Գերմանիայի խիղճն էր. պետության նա-  
խագահը»:  
(«Բիլդ»)

Դիտարժան է նաև հետեւյալը. մեկից մինչեւ տասներկու թվերը, որպես կանոն, գրվում են տառերով՝ այդպես է պահանջում Դուդենը եւ ավանդույթը: Դրան հակառակ «Բիլդ»-ը մասամբ անցել է նաև տասներկուսից ցածր թվերը թվանշաններով տպելուն՝ հավանաբար տեղ խնայելու համար:

Բացի այդ, միջակետը ծառայում է մի փոքր դադար տալու համար, մի սուր բան, անակնկալ մի միտք, մի նոր արտահայտություն ազդարարելու համար: Դա հաճույքով կիրառում են նույնիսկ այն հեղինակները, ում սովորաբար չես մեղադրի մոդայիկ լեզվական կամ քաղաքական խաղերի հակում ունենալու մեջ: Այսպես, պրոֆեսոր Յանս Մայերը՝ Բավարիայի մշակույթի նախկին նախարարը, «Ֆոկուսում» գրում է կաթոլիկ եկեղեցու նոր կաթեխիզիսի մասին.

*«Այն լավ է վաճառվում, սակայն մամուլում վատ գրախոսականների է արժանացել. համեմայն դեպս՝ Գերմանիայում»:*

Եվ նրա մտքերը կրկին ավարտվում են միջակետով.

*«Ես դեռ կշարունակեմ կարդալ «Կաթոլիկ եկեղեցու կաթեխիզիս»-ը. ավելի լուրջ եւ համոզիչ քննադատելու հույսով»:*

Նույնն է նաև «Շպիգելի» մոտեցումը: Բնապաշտպանության նախարարներից մեկը չի ուզում ընդունել որոշակի սահմանային ցուցանիշներ.

*«Նրա կարծիքով միայն «լայնածավալ ջանքերով» կարելի է ինչ-որ բանի հասնել. այդ պատճառով նա զգուշանալով ընդհանրապես ոչինչ չի անում»:*

Մեր տրամադրության տակ գտնվող ոճաբանական ձեռնարկներում զարմանալիորեն միայն «USA Today»-ն է, որ նախազգուշացնում է միջակետից.

*«Խուսափեք նրանից: Այն երկար է եւ չափազանց հաճախ է գործածվում»:*

Իսկապե՞ս: Մենք դա էլ ենք հաշվել: Օրինակ, «Աբենդցայթունգի» հազար տողում միջակետը հանդիպում է 71 անգամ: Արդյո՞ք

սա արդեն չարաշահում է: Դժվար թե: Սակայն այն շատ է գործածվում վերնագրերում: Բայց զգույշ եղեք. միջակետը բարդ ստորադասական նախադասությունները ավելի համատեսելի չի դարձնում: Երբեմն նախադասություններ ենք կարդում, որոնցում գործածվում են միջակետ եւ դրան ի լրումն փակագծեր՝ միեւնույն նախադասության մեջ: Ազդեցիկ միջոց է՝ ընթերցողներին շփոթեցնելու համար:

Այստեղից դաս.

«Երբ բուժն ու միջակետն աչք են ծակում, քանի որ չափազանց հաճախ են գործածվում, ապա մենք պետք է միջամտենք: Երբեմն բավական է դրանք պարզապես փոխարինել վերջակետով»:

Սկսնակների համար սա նշանակում է՝ վերանայեք ձեր կետադրական նշանները: Գրեթե բոլորն իրենց պատմությունները համակարգչով են գրում, եւ յուրաքանչյուր համակարգիչ հնարավորություն է տալիս հաշվել կետադրական նշանները (փնտրելու գործառույթի միջոցով): Հենց սա պետք է մերթընդմերթ անենք՝ սեփական վատ սովորությունները հայտնաբերելու համար:

Կա եւս մի կետադրական նշան, որին կասկածանքով են նայում, նույնիսկ եթե միայն մեկ անգամ է հայտնվում՝ հարցական նշանը: Շատերի համար սա անվստահության ազդանշան է: Նրան փոխարինելը հեշտ է.

*«Ի՞նչ զենքից է կատարվել մահաբեր կրակոցը: Ոստիկանությունը շարունակում է քննել...»*

Փոխակերպենք հարցը, ինչպես շատերն անում են ինքնաբերաբար.

«Ոստիկանությունը դեռ քննում է, թե ինչ զենքից է կատարվել մահաբեր կրակոցը»:

Սակայն այս օրինակում նկատում ենք. հարցական նշանով նախադասությունը ավելի կենդանի է ներգործում, այն ավելի կարճ է եւ ներկայացնում է էականը: Այստեղ նշանը առաջ է մղում պատմությունը: Ուրեմն, ինչո՞ւ չգործածել, եթե տեղին է:

Ավելի մեծ կասկածանքով մենք պետք է վերաբերվենք չակերտների: Մենք դրանք գործածում ենք այնպիսի մի նպատակով, ինչի համար նրանք հորինված չեն ...

## Կորչե՛ն չակերտները

Այդ վեհամուլ չակերտները: Չակերտները, որոնք նաեւ կոչվում են սագաթաթիկներ, նապաստակի ականջներ կամ ուլորագծեր, մի ժամանակ նույնիսկ ներթափանցեցին քաղաքականություն: Ամենավառ օրինակը թերեւս արդեն վախճանված Գերմանիայի Դեմոկրատական Զանրապետությունն էր: Որոշ թերթերում միշտ գրվում էր միայն «ԳԴԶ»: Չակերտները կարծես պետք է ասեին. ԳԴԶ-ն երեւի իսկական պետությունն է: Լավագույն դեպքում՝ այսպես կոչված պետություն է:

Չակերտները չեն փոքրացնում, դրանք նվաստացուցիչ նշաններ չեն: Նրանք երբեք այդ իմաստով գործածվելու համար չեն ստեղծել: Մեզ մոտ չակերտները հայտնվեցին 17-րդ դարի սկզբին, որպես եզրագծիկներ՝ մեջբերումներն անջատելու կամ տեքստի որոշ մասեր ընդգծելու համար: Ընդգծելու՝ Նվաստացնելու մասին խոսք չկա: Մեջբերման նշան գիտական անվանումը շատ ավելի ճշգրիտ է բնորոշում նրա նպատակը: Նշանը պետք է գալիս, գրում էին դեռ 1744-ին, «երբ վկայակոչում ենք մի գրքի կամ հեղինակի բառերը»:

Բայց չակերտները շարունակում են սխալ նշանակությամբ երեւալ լրագրերի էջերում. օրինակ, Դուդենի բառարանը հատուկ հաճույքով այն ժամանակ են չակերտներով անվանում «լեզվի պապ», երբ կասկածում են, որ այն իրոք այդպիսին է: Սակայն չշեղվենք. չակերտները չեն հնարվել դեգրադացիայի կամ հեզմանքի համար, նրանք դրա համար չեն կոչված: Ծեծված արտահայտությունը դրանց միջոցով ավելի լավը չի դառնա: Կլաուս Յակոբին իր լրագրողների համար խաղի կանոններում ասում է.

«Օրինակ, Ռեփերբանի (հասարակաց տների փողոց) փոխարեն ուրախության մղոններ արտահայտությունը, առանց հեղինակի անվանման, չակերտների մեջ չի դրվում: Կամ մենք ընդունում ենք այդ հիմար արտահայտությանը, որի դեպքում չակերտների կարիք չկա: Կամ՝ չենք ընդունում. այս դեպքում չպետք է գործածելիք»:

Չարաշահումը շարունակվում է: Ամեն օր լրագրերում տեսնում ենք բառեր, որոնք փոքր ինչ վեհերոտությամբ են գործածվում: Այդ պատճառով դրանք չակերտների մեջ են առնվում: Օրվա օրինակներ. ... «սուպերմեն» Կլաուսը, «ռոքի պապիկ», «պերճաշուք հյուրանոց»..., ինքնակոչ «փորձագետ»... Յակոբիի խորհուրդը տարածվում է նաեւ դրանց վրա: Վերացրեք դրանց թե բառերը եւ թե չակերտները:

Չակերտները պետք է ավելի շատ պարզություն, համատեսություն մտցնեն տեքստերի մեջ՝ ուղղակի խոսքն անջատելու համար: Սակայն ժամանակակից տեքստերը, ցավոք, դրանք դնում են նաև ինչ-որ բան անորոշ թողնելու համար: Բոլորին հայտնի մի օրինակ. ՄԱԿ-ում խոսվում էր ագրեսիա հասկացության մասին՝ Իսրայելի կապակցությամբ: Որոշ պետություններ այդ բառը նույնիսկ չէին ուզում տեսնել օրակարգում: Փոխզիջում. «ագրեսիա» բառը գրվեց չակերտների մեջ: Ոմանց համար սա պարզորոշ նշանակում էր. Իսրայելը մեղադրվում է ագրեսիայի մեջ: Ոմանք էլ կարող էին ժպտալ, քանի որ բանավեճի առարկան ընդամենն այսպես կոչված «ագրեսիան» էր: Յուրաքանչյուրը կարող է հասկանալ այն, ինչ ուզում է: Սրանով չակերտները հավասարվեցին բացեիբաց աչքով անելուն: Հանկարծ գրածին չհավատաք: Խոսքի մեջ խառնաշփոթ առաջացնելու համար մեզ թերեւս չակերտները պետք չեն: Դա մեզ առանց այդ էլ հաջողվում է:

Լեզվի նոր, ավելի խորը զգացողությունը մեզ պարզ ասում է. որ ձեռնարկն էլ քրքրես՝ հեզմանքն ու նվաստացնելը չակերտների գործը չեն: Չակերտը իբրեւ աչքով անե՞լ: Մենք մեզ խաբված ենք զգում: Նման չակերտներն ավելորդ են: Հիմնական կանոն. չակերտներում միայն ուղիղ խոսք:

Իսկ եթե մի մեջբերում ձգվում է մի քանի պարբերություն.

- ▶ չակերտները դրվում են միայն սկզբում եւ հետո մեջբերման վերջում: Անկախ նրա երկարությունից:
- ▶ «Շպիգելը» դա անում է ամերիկացիների պես: Մեջբերում ենք «Շպիգելի» ներքին օգտագործման համար նախատեսված ձեռնարկից. «Եթե մեջբերումը մի քանի պարբերություն է զբաղեցնում, ապա յուրաքանչյուր պարբերություն բացվում է չակերտով, իսկ փակվում է միայն մեկ անգամ՝ մեջբերման վերջում»:

## «Լավ լուրի» մասին

### «Գերմանական մամուլի գործակալության» հիմնական կանոնները

Ամեն օր 500-ից ավելի հաղորդագրություններ են տրամադրվում գերմանական լրագրերին, որոնց աղբյուրը մեկն է՝ «Գերմանիայի

մամուլի գործակալությունը» (ԺԲ): Այն աշխարհում մեծությամբ հինգերորդն է: Ինչքան մեծ է առաջարկը, այնքան խիստ են թերթերի պահանջները ԺԲ-ի նկատմամբ: Պահանջվում է ճշգրտություն եւ արագություն, այն էլ՝ ճշգրտություն ոչ միայն փաստերում, այլեւ լեզվում: Ամեն բառ պետք է տեղում լինի եւ ոչ մի դեպքում չպետք է թյուրըմբռնումներ առաջացնի: Բացի այդ էլ ի՞նչն է առաջնային:

Թե ԺԲ-ն ինքը որն է համարում իր խնդիրները, տարիներ առաջ շարադրել են այն ժամանակվա գլխավոր խմբագիր Հանս Բենիդեքեն եւ Գերմանիայի բաժնի ղեկավար Հայնց Քյոսթերը՝ ազատ վարձու աշխատողներին եւ երիտասարդ խմբագիրներին ուղղված նամակում, որը սկանակի համար մի ուղեցույց է, իսկ փորձառու խմբագրի համար՝ յուրատեսակ առաջնորդող սկզբունք, գույքագրում, հուշաթերթ, գրեթե ամենուր անխուսափելի բանավեճի համար: Դա է պահանջում ԺԲ-ն իր լուրերից. իսկ ի՞նչ ենք պահանջում մենք: Որքանո՞վ են մեզ մոտ մեղմացել հին կանոնները, որքանո՞վ հնացել, որքա՞ն է նոր կանոնների անհրաժեշտությունը: Այդ պատճառով մենք այստեղ տպագրում ենք նամակի ողջ տեքստը:

ԺԲ-ի նոր սերունդը, գլխավոր խմբագիր դոկտոր Վիլմ Հերլինի գլխավորությամբ, Բենիդեքենի եւ Քյոսթերի մտքերը շարունակում է ընդունել որպես հիմք իր աշխատանքում: Միայն ԺԲ-ի ընդգրկման վերաբերյալ մի քանի թվեր թարմացման կարիք ունեն:

Ստորեւ նամակի տեքստը.

«Սիրելի գործընկերներ,

Դուք լուրերի խմբագիրներ եք Գերմանիայի մամուլի գործակալությունում, որը լրատվական ծառայություններ է մատուցում ԳՂՀ գրեթե բոլոր թերթերին, ռադիո եւ հեռուստակայաններին, ինչպես նաեւ աշխարհի 70-ից ավելի երկրների բաժանորդներին:

Մեր խնդիրը հասցեատերերին ժամանակի իրադարձությունների մասին արժանահավատ, արագ, կշռադատված եւ սպառիչ տեղեկացնելն է:

Այս աշխատանքը, գործակալության կանոնադրության համաձայն, կատարվում է անկողմնակալ, անկախ եւ բացառապես ճշմարտացի տեղեկատվությանը ծառայելու նպատակով:

Սրանք են, հակիրճ ձեւակերպված, մեր աշխատանքի սկզբունքները: Թե ինչ պետք է անենք գործնականում, մի քանի բառով հնարավոր չէ արտահայտել:

Լուրի իմաստն այն է, որ հնարավոր դարձնի նրան հետեւելը, նրանով առաջնորդվելը: Այն պետք է տեղեկություններ մատուցի, որոնք մեզ պետք են նախքան որոշում ընդունելը: Յուրաքանչյուր ոք կա-

խում ունի տեղեկատվությունից՝ սեփական անելիքը ըստ դրա կարգավորելու համար: Ինֆորմացիան նախորդում է ազատ հասարակության քննադատական վերաբերմունք ունեցող մարդկանց կողմից կարծիքի ստեղծմանը:

Եթե մի լուր պետք է պիտանի լինի, որ մարդը կարողանա «դրանով առաջնորդվել», ապա այն պետք է որոշ պայմանների բավարարի:

Այն պետք է հնարավորին չափ արդիական լինի եւ իրադարձության մասին տեղեկացնի հնարավորին չափ անմիջական, այսինքն՝ հիմնվի լուրջ աղբյուրների եւ ո՛չ ասեկոսեների վրա:

Այն հասցեատիրոջ համար պետք է նշանակալի լինի կամ առնվազն նրա մասնակցության զգացում ստեղծի ու շարժի հետաքրքրությունը:

Այն լուրը, որն այնքան հակիրճ կամ այնքան ընդգրկուն չէ, որքան պարտադրվում է թեմայով, չի համապատասխանում իր ուղղակի նպատակին: Լուրը իր հաղորդելիքը պետք է ասի կարճ, բայց պարզ, այսինքն՝ հասկանալի եւ անհրաժեշտ խորքային պարզաբանումներով :

Մի հին կանոն ասում է, որ լուրը պետք է պարունակի վեց W.

WER (Ո՞վ)

WAS (Ի՞նչ)

WANN (Ե՞րբ)

WO (Որտե՞ր)

WARUM (Ինչո՞ւ)

WIE (Ինչպե՞ս)

Սա իդեալական պահանջն է: Լուրի արժեքը չի նվազում, եթե չեք պատասխանում բոլոր վեց W-երին: Սակայն առնվազն Ո՞վ-ն ու Ի՞նչ-ը անհրաժեշտ են:

Գոյություն ունեն լուրի տարբեր սահմանումներ: Լուրը սահմանելու գերմանական փորձերը փոքր ինչ վերացական են: Նրանք լուրի մեջ տեսնում են «կետ-առ-կետ փոփոխության նկարագրություն»: Մեր գործնական ժուռնալիստիկայի համար լուրի ամերիկյան սահմանումը ավելի նպատակահարմար է թվում: Նրա էական տասը տարրերն են.

1) Թարմության արժեքը.

Անմիջապես կամ հրատապ (immediacy)

2) Անսովորը.

Լարում եւ գործողություն (drama)

Պայքար կամ հակառակ տեսակետ (conflict)

Հռչակավոր կամ հայտնի անձիք (prominence)

Արտակարգ իրադարձություններ (oddity)

Առաջընթաց (progress)

3) Ազդեցություններ անձնական ոլորտում.

Հետեւանքներ մեր ամենօրյա կյանքի համար (consequences)

Համահնչունություն սեփական խնդիրների հետ (proximity)

Սիրո թեման (sexs)

Զգացմունքային մասնակցություն (emotions):

Լուրի հնարավոր տարրերի այս սահմանումը անկասկած գործնական արժեք ունի, եթե նույնիսկ ոճը փոքր ինչ «ամերիկյան ապրելակերպի» դրոշմ է կրում:

Անկասկած, հաղորդագրության ամենօրյա առաջարկում կան «պարտադիր հաղորդագրություններ»: Դրանք հաղորդագրություններ են, որոնք պետք է արվեն, քանի որ կարծես պատկանում են օրվա տեղեկատվական միջուկին եւ դրանով իսկ անհրաժեշտ են՝ հասարակությանը լավ իրազեկելու համար: Սակայն բացի այդ պարտադիր հաղորդագրություններից մենք մեզ ամեն օր պետք է նորից հարցնենք. ի՞նչ է տեղ հասնում:

Տպագրվելու (կամ ռադիոյում գործածվելու) հավանականությունը կախված չէ միայն բովանդակությունից, այլ հաղորդագրության ձեւից եւ պահից: Ամեն դեպքում՝ նկատի ունենալով գերմանական լրագրերի ու ռադիո- հեռուստակայանների տարբեր բնույթը, մենք չենք կարող ելնել նրանից, որ մեր բոլոր հասցեատերերը նույն կերպ կգնահատեն այս երեք չափանիշները:

Լրագրային սեկտորում իրավիճակն այսօր այսպիսին է.

dpa-ի հաշվարկումներով, 1997-ի հունվարի 1-ի դրությամբ, կա ընդհանուր առմամբ 139 հրապարակախոսական միավոր, այսինքն՝ լիովին հագեցված խմբագրություն: Դրանք մշակում են 391 հիմնական եւ շուրջ 1621 կողմնակի հրատարակություններ: Այլ կերպ ասած՝ միայն բազիսային ծառայությունը, ուղղակիորեն կամ անուղղակի, մատուցվում է ավելի քան 1000 լրագրերի՝ 2486 միլիոն ընդհանուր տպաքանակով:

Մենք կարող ենք ելնել այն բանից, թե որքան փոքր է թերթի տպաքանակը, այնքան փոքր է խմբագրական եւ տեխնիկական ծավալը: Մեր գործառույթը միայն լրատվական հունք մատուցելը չէ: Գերմանական հասարակության էական մասի լայնորեն ու խորությամբ տեղեկացված լինելը ավելի շատ կախված է նրանից, թե մենք ինչպես կառաջարկենք լրատվական նյութը մեր բաժանորդներին:

Լուր մշակողի գործը ավելի հեշտ է այն դեպքում, երբ նա կարող է դիմել հնարավորին չափ միասնական նպատակ ունեցող խմբի: Մենք պետք է հաղթահարենք «ավտոբուսային ծառայություն» ստեղծելու դժվարությունը. առաջինն իր մեջ պետք է ներառի գերմանական մա-

մուլի, ինչպես նաև ռադիոյի եւ հեռուստատեսության ողջ դիապագոնը: Այդ դիապագոնը բնորոշվում է ոչ միայն տպաքանակների մեծությամբ, այլև լրագրերի այնպիսի բազմազան տեսակներով, ինչպիսիք են օրինակ «Վելթը» եւ «FAZ»-ը կամ «Ջյուդոյչե Ցայթունգ»-ը՝ մի կողմից եւ ավելի մեծ տարածաշրջանային մամուլը՝ «Շվեբիշե Ցայթունգ»-ը կամ «Հանովերշե Ալգեմայնե Ցայթունգ»-ը կամ «հայրենական եւ տեղական մամուլը»:

Լուր մշակողն իր հաղորդման հետաքրքրական արժեքը միշտ պետք է գնահատի ընթերցողի կամ ունկնդրի, լայն հասարակության տեսանկյունից:

Սա վերաբերում է նաև ամենահետաքրքիր լուրին՝ սենսացիային: Սենսացիան դառնում է այդպիսին միայն լուրի հասցեատիրոջ կամքով:

Լուրի արժեքը հաստատուն մեծություն չէ: Այն բաղկացած է լուրի բացարձակ եւ հարաբերական արժեքների գումարից: Լուրի բացարձակ արժեքը որոշվում է հաղորդագրության տեղեկատվական բովանդակությամբ: Լուրի հարաբերական արժեքը չափվում է օրվա ամբողջ իրադարձությամբ, այսինքն՝ ըստ այն կարելուության, որը տվյալ հաղորդագրությունը ստանում է օրվա ընթացքում: Այն հաղորդագրությունը, որն անմիջականորեն կապված է օրվա հիմնական իրադարձությունների հետ, ավելի բարձր հարաբերական արժեք ունի, քան հաղորդագրությունը, որն այդ կապակցությունը չունի: Կոնտրաստային հաղորդագրությունը սակայն, որը որեւէ կոնտեքստից դուրս է, կարող է համեմայն դեպս ունենալ բարձր հարաբերական արժեք, հենց իր «oddity»-ի շնորհիվ:

Նա, ով որոշում պետք է կայացնի լուրերի մասին, ինչպես սիրո մեջ, հաճախ ղեկավարվում է առաջին տպավորությամբ: Այդ պատճառով կարելի է արդեն վերնագրում պարզ, ստույգ եւ հրապուրիչ ասել, թե ինչ է հաղորդագրության նյութը: Նույն նշանակությունն ունեն առաջին նախադասությունն ու ողջ առաջին պարբերությունը՝ մեր մասնագիտական ժարգոնով «լիդ» կոչվածը: Այն պետք է լինի կարճ, արտահայտիչ եւ ուղիղ: Սահմանափակումները, հատուկ հանգամանքները, գործող եւ խոսող անձանց թվարկումները՝ բոլոր իրենց տիտղոսներով հանդերձ, այս ամբողջը կարող է ընդհանուր առմամբ հետո տրվել:

Թղթակիցը եւ խմբագիրը լավ կանեն, եթե մի բարդ ընթացքի, երկար ճառի կամ ծավալուն հայտարարության դեպքում մի պահ քննադատական հայացք գցեն դրանց, ազատվեն իրադարձության ձեւական եւ արտաքին հանգամանքներից եւ իրենք իրենց հարցնեն, թե ո՞րն է նոր եւ ամենահետաքրքիր պահը: Լավ առաջաբանի օրինակ.

«Համբուրգ (dpa) - Հռենոսը այսօր ավելի մաքուր է, քան տասը տարի առաջ: Այս կարծիքն են արտահայտել քիմիական արդյունաբերության միության գործադիր տնօրեն Վոլֆգանգ Մունդեն եւ միության փոխնախագահ Հելմուտ Ջիլլերը Համբուրգի «Դեր Շպիգել» հանդեսին տված հարցազրույցում: Միության գործադիր տնօրեն Մունդեն «Շպիգելի» հետ հարցազրույցում տեղեկացրել է, որ ըստ Հռենոսի պաշտպանության հանձնաժողովի չափումների ... եւ այլն ...»

Հաղորդագրությունը չընթրցվող կլիներ, եթե թղթակիցն այն կազմած լիներ պաշտոնական հաղորդագրության ձեւով. «Ինչպես տեղեկացրեց քիմիական արդյունաբերության միության գործադիր տնօրեն Վոլֆգանգ Մունդեն համբուրգյան «Դեր Շպիգել» հանդեսի հետ հարցազրույցում, Հռենոսում ծանր մետաղների բաժնեմասը, ըստ Հռենոսի պաշտպանության հանձնաժողովի չափումների, նվազել է 60-ից 90 տոկոսով: Դրանով ...»

Դժվար է ավելի լավ հաղորդագրություն կառուցել, քան օրինակ ստորեւ տրվածը.

Paris, Feb. 5 – M. Pierre Mendes-France was swept from power in the French national assembly early today and went to president Reny Coty to resign the premiership he held for 233 days.

Defeated by 319 votes to 273 on a vote of confidence on his North African policy, he left the chamber amid pandemonium and creis of fascist.

Լիդում հնարավորին չափ պետք է գործածել ոչ թե ստատիկ բայեր (ինչպիսիք են՝ գտնվել, կանգ առնել, ընդգրկել), այլ շարժում արտահայտող բայեր: Բացի այդ, այս կանոնները նաեւ վերաբերում են թղթակցությունների մեծ մասին, եթե նույնիսկ դրանք «տաք լուրեր» չեն շարադրում: Սկզբում պետք է դրվի նոր պահը, փոփոխված իրավիճակը եւ ոչ թե պատմական մասը:

Սակայն մի ամբողջ ընթացք մեկ բայում խտացնելիս լրագրողը պետք է ուժեղ հոտառություն ցուցաբերի: Օրինակ, նա պետք է մանրագնին ստուգի. արդյոք արդարացվա՞ծ է այնպիսի բայը, ինչպես «սպառնալ»-ն է, թե՞ բավական է «նախագուշացնելը», արդյոք «քննադատել», «հարձակվել», «պնդել», «տեղեկացնել», «ապշեցնել», «մերժել» եւ այլ բառե՞րն են պատշաճ, թե՞ ավելի զգուշավորները:

Հաղորդագրության վճռական ասելիքը չպետք է լինի ո՛չ քո-ղարկված, ո՛չ էլ չափազանցված: Հաղորդագրության էական տար-րերը պետք է ներկայացվեն իրենց նշանակալիության հերթակա-նությամբ, այնպես որ հաղորդագրությունը վերջից հնարավոր լինի կրճատել՝ առանց բուն տեղեկատվական բովանդակությունը էա-պես փոփոխելու: Պարտադիր չէ, որ վեց W-երը (տես՝ վերելում) ներկայացված լինեն առաջին պարբերությունում, դրանք կարող են նշվել նաեւ հաղորդագրության ընթացքում այնքանով, որքանով միայն կլրացնեն եւ կպարզաբանեն անպայման անհրաժեշտ Ո՞վ-ն ու Ի՞նչ-ը:

Հաղորդագրության նախապայմանը չպետք է լինի ընթեր-ցողի կամ ունկնդրի մեծ գիտելիքը: Հաղորդագրությունը պետք է լինի համապարփակ, այսինքն՝ պարունակի այն խորքային տվյալները, որոնք անհրաժեշտ են հաղորդագ-րության ընդհանուր հասկանալիության համար:

Կասկած չկա. շատ լուրեր ուղղված են միայն հետաքրքրվողնե-րի որոշակի նեղ շրջանակի: Ասվածը նրանց վերաբերում է միայն սահմանափակ ձեւով: Բայց լուրերը, որոնք վերաբերում են բոլո-րին (այդպիսին է առնվազն ներքին քաղաքականության մասին հա-ղորդագրությունների մեծ մասը), պետք է պարունակեն բոլոր բաղ-կացուցիչ մասերը, որոնք նույնիսկ ոմն լիզխեն Մյուլերին թույլ կտան լուրը հասկանալ եւ իր համար կիրառել որպես «լուր»: Մենք հաղորդում ենք մեր հաճախորդների եւ հասարակության համար եւ ընդ որում՝ առանց փորձագետներին մշտապես վախվորած հայաց-քով նայելու:

Կրկնում ենք. լուրը հաղորդագրություն է, որով կարելի է առաջ-նորդվել: Լուրը, որի հիման վրա ես կկայացնեմ իմ որոշումը, պետք է ոչ միայն ճիշտ ժամանակին հաղորդվի, այլեւ ամենից առաջ լինի արժանահավատ: Հենց մեր աշխատանքում է, որ արժանահավա-տությունը, ճշգրտությունը ավելի բարձր են դասվում, քան արագու-թյունը: Նախքան լուրը հաղորդելը այն պետք է ստուգվի, այսինքն՝ նախքան փոխանցվելը, պետք է ստուգելով հաստատվեն հաղոր-դագրության աղբյուրը, մանրամասները, անունները եւ ժամանա-կային տվյալները:

Ինչ էլ լինի հաղորդագրության բովանդակությունը, այն պետք է ուղիղ դիմի ընթերցողին կամ ունկնդրին: Վերջինս պետք է կարողանա հաղորդագրության տակ ինչ-որ բան պատկերացնել: Դա նշանակում է, որ հաղորդագրությունը պետք է ձեւակերպված լինի

ո՛չ թե վերացական, այլ՝ կոնկրետ: Այն պետք է պարունակի մանրամասնություններ, որոնք բովանդակությունը ձկուն եւ պատկերացնելի են դարձնում: Հաղորդագրությունը, ժամանակակից լեզվով ասած, պետք է գունեղ լինի: Հատկապես այն դեպքում, երբ տեղեկացնողը մասնագետ է, արտահայտման ոճը զուտ մասնագիտական չպետք է լինի: Ազատ մամուլ ունեցող որեւէ երկրում լուրը չի դիմում արտոնյալների եւ գործիչների շրջանակին, այլ՝ բոլորին եւ այդ պատճառով պետք է հասկանալի լինի բոլորի համար:

Լուրերի երկարության վերաբերյալ տարբեր օրենքներ կան: Դրանցից ամենապարզը ասում է «a strong story should be long», դա նշանակում է, որ հույժ կարելու հաղորդագրությունը ավելի երկար ներկայացման կարիք ունի, որը կպարունակի այն ամենը, ինչ անհրաժեշտ է իրադարձությունն ընկալելու եւ նրա տեղը որոշելու համար:

Անեկդոտի ձեւը, որպես կանոն, հարմար է միայն համեմատաբար թեթեւ, ավարտված իրադարձությունների համար: Կարելու քաղաքական ընթացքը մեծամասամբ խորքային տվյալներ է պահանջում, որոնք թափանցիկ եւ հասկանալի են դարձնում բուն իրադարձությունը «կետ-առ-կետ փոփոխությունը»:

Նա, ով ուզում է արժանահավատ տեղեկություն տալ, պետք է լինի անկողմնակալ եւ տեղեկացնի առանց վերապահումների, առանց քաղաքական միակողմանիության կամ նպատակաուղղվածության: Մեր հաղորդագրություններում տեղ չունեն բանավեճը եւ ծաղրի երանգները:

Նա, ով հաղորդելու բան ունի, միշտ պետք է հիշի, որ իր ընթերցողների եւ ունկնդիրների ժամանակն ու ուշադրությունը թանկ են: Այն չպետք շահագործվի վճարի միջոցով: Եվ հատկապես լուրի նկատմամբ է դրվում ըստ էության եւ կենտրոնացված պատմելու պահանջը: Հաղորդագրությունում պետք է հրաժարվել հանդես եկող անձանց երկար տիտղոսներից, երկարաշունչ տեղանուններից եւ առիթի մասին մանրամասն տվյալներից: Եթե գործող անձը մի քանի տիտղոս ունի, օրինակ՝ նախարար եւ կուսակցության նախագահ, ապա այդ տարբեր անվանումները կարող են կամ փոխ առ փոխ նշվել հաղորդագրության ընթացքում կամ գործածվել այն պաշտոնի ավելի ստույգ բնութագրման համար, որում անձը հանդես է գալիս հաղորդվող իրադարձության ժամանակ:

Օտար բառերից եւ կարճ կյանք ունեցող մոդայիկ բառերից շատ դեպքերում պետք է խուսափել: Միայն հազվագյուտ դեպքերում կարող է օտար բառ գործածվել: Հաղորդագրության առաջին երկու կամ երեք նախադասություններում օտար բառ կարող է հայտնվել

միայն այն ժամանակ, երբ դա ուղիղ խոսքի մեջքերում է կամ արտահայտություն, որն իբրեւ մասնագիտական հասկացություն հաղորդագրության մի մասն է:

Հաղորդագրության մատչելիությանն է ծառայում նաեւ ծավալուն եւ երկար, բարդ ստորադասական նախադասություններից խուսափելը: Նախադասությունը չպետք է զբաղեցնի երկուսից կամ ամենաշատը՝ երեքից ավելի տող: Հարաբերական երկրորդական նախադասությունները տեղին են, երբ նրանք, իրենց անվան իմաստով, ավելի ճշգրիտ են նկարագրում գլխավոր նախադասության առարկան: Գոյականները ծանրաբեռնում են յուրաքանչյուր նախադասություն: Սա հատկապես վերաբերում է այն գոյականներին, որոնք ավարտվում են «ուրյուն»-ով: Այնտեղ, որտեղ դա հնարավոր է, պետք է գործածվի ներգործական ձեւով բայ: Հատուկ զգուշություն են պահանջում ածականները: Դրանց հետ պետք է վարվել խնայողաբար եւ շատ քննադատորեն: Սխալ, հարյուր տոկոսով չսագող ածականը կարող է կործանել ողջ հաղորդագրության արժանահավատությունը: Ոճական միջոցներն ամեն դեպքում պետք է համապատասխանեցված լինեն հաղորդագրության նյութին: Ամենահամոզիչ են փաստերը կամ ավելի շատ հենց իրենք՝ գործող անձիք: Այդ պատճառով փաստերի մասին անմիջական հաղորդագրությունները կամ իրավասու անձանց արտահայտությունները հաղորդագրության ամենաազդու միջոցն են:

Ուղիղ խոսքի մեջքերումը հաղորդագրության մեջ մեծամասամբ տալիս է հատուկ վավերականության, իսկության եւ անմիջականության բնույթ: Նա, ով կարող է անձանց եւ ականատեսների վկայակոչել, ավելի լավ դիրքում է, քան նա, ով հաղորդում է միայն գործերի մասին: Բայց անձիք եւ գործերը պետք է գտնվեն համոզիչ, անառարկելի եւ անմիջական կապի մեջ: Այլապես կհանգենք արժանահավատ արտահայտության հակառակ երեւույթին:

Կարելի է լուրը պետք է նաեւ մեկնաբանություն պարունակի: Ընթերցողը կամ ունկնդիրը պահանջում է պատասխան այն հարցին, թե իր համար հաղորդագրությունն ինչ կարող է նշանակել: Նման մեկնությունը չպետք է շեղվի նյութից: Հաղորդագրության սահմանափակ իմաստի շուրջ ապագայի էժանագին կանխատեսումները, չարդարացված ընդհանրացումները կամ չափազանցված մեկնությունները ժամանակի ընթացքում բերում են արժանահավատության կորստի: Նաեւ հաղորդագրության բառապաշարն է զգույշ գործածում պահանջում: Նա, ով բառերի ընտրության ժամանակ չափազանց բարձր տոն է վերցնում, շատ արագ է մաշում իր արտահայտման միջոցները:

Ամեն դեպքում, հաղորդագրության հասցեատիրոջը պետք է փնտրել անձանց համեմատաբար մեծ կատեգորիայում: Հաղորդագրության հասցեատերը կարող է լինել գործատու, ավելի հաճախ գործառու, սպառող, երբեմն բաժնետեր, հաճախ ավանդատու, մեծամասամբ՝ ընտրող, շատ դեպքերում արձակուրդի մեջ գտնվող մի մարդ, վարորդ կամ հետիոտն: Նա, ով հաղորդագրություններ է գրում, երբեք չպետք է ելնի այն բանից, թե մասնագետի է դիմում: Ով իր հաղորդագրության լեզուն նպատակաուղղում է մասնագետի, ինքնակամ կորցնում է իր լսարանի մեծ մասը:

Հաղորդագրությունը հաջողության մեծ հեռանկար ունի հատկապես այն ժամանակ, երբ այն ընթերցողին կամ ունկնդրին ընծեռում է նույնացման հնարավորություն: Այդ հնարավորությունը գոյություն ունի առաջին հերթին այն դեպքում, երբ լուրը պարունակում է տարրեր, որոնք անմիջականորեն շոշափում են համապատասխան անձի կենսոլորտը: Այն առկա է նաեւ այն դեպքում, երբ հաղորդագրությունը կարող է կիրառվել իբրեւ որոշում կայացնելու համար օգնություն:

Նա, ով ուզում է տեղեկացնել, նախեւառաջ ինքը պետք է տեղեկացված լինի: Միայն հիմնավոր իմացությունն է նրան թույլ տալիս ընտրել այն լուրերը, որոնք անհրաժեշտ են ընդհանուր տեղեկության համար: Լրատվությունը պահանջում է ջանասիրություն եւ մանրակրկիտ աշխատանք, փաստերին ենթարկվել, քննադատական մոտեցում, կոռեկտություն թղթակցության առարկայի նկատմամբ եւ ճշմարտության հանդեպ պատկառանք:

Այսքանը՝

dpa ...»:

### III ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Արձանագրությունից դեպի  
խաչածել հարցաքննություն

Հարցեր հարցնելու մասին  
Նախ՝ սառցահատը

Հարցազրույց հարցազրույցի մասին  
Երբ խոսքը գիր է դառնում...

Արձանագրության այլընտրանքը  
Սղագրության փոխարեն հոգեգրություն

# Արձանագրությունից դեպի խաչաձեւ հարցաքննություն

Հատված իտալացի լրագրողուհի Օրիանա Ֆալաչիի հետ ամերիկյան «Թայմ» հանդեսի հարցազրույցից.

**ԹԱՅՄ. - «Ձեր հարցազրույցներում դուք երբեմն ուղղակի վիրավորում եք: Ինչո՞ւ են Ձեզ դեռ ընդունում»:**

**ՕՐԻԱՆԱ ՖԱԼԱՉԻ. -** «Ես երբեք չեմ վիրավորում, սակայն կարող եմ դաժան լինել: Հարցերն են դաժան, քանի որ ճշմարտության որոնումը մի տեսակ վիրաբուժական միջամտություն է: Իսկ դա ցավոտ է»:

**ԹԱՅՄ. - «Ինչո՞ւ եք Ձեր զրուցակիցներին սադրում զայրույթի ու զգացմունքի պոռթկումների: Ֆելիքին ձեզ անվանում էր անամոթ փոքրիկ վիուկ»:**

**ՕՐԻԱՆԱ ՖԱԼԱՉԻ. -** «Այո, իսկ ես նրան անվանում էի կեղտոտ ստախոս: Ես նրանց սադրում եմ, որովհետեւ պարտավորվում եմ, որովհետեւ իմ հարցազրույցները երբեք անկիրք չեն, որովհետեւ ես սիրահարվում եմ իմ դիմացիցին, եթե նույնիսկ ատում եմ նրան: Հարցազրույցն ինձ համար սիրո պատմություն է, պայքար, սեռական հարաբերություն»:

Այսպիսով, ի՞նչ է հարցազրույցը: Ճշմարտության դաժան որոնում: Վիրաբուժական միջամտություն հռետորական միջոցներով: Օրիանա Ֆալաչին՝ բոլոր լրագրողուհիներից ամենասրալեզուն, զրույցի ժամանակ համեմայն դեպս առանձին հաճույքով է քրքրում հին վերքերը: Նա հարցերը որպես դանակներ է դեմ անում, ցավագին՝ զոհերի համար, սակայն ինքն է, որ գոռում է: Օբյեկտիվությունը նա չի ընդունում: Հարցազրույցները Օրիանա Ֆալաչիի համար ինքնանկար են ու միաժամանակ նաեւ պառլամենտական բանավեճ: Սա ինքն է ասել:

Գյուներթր Գաուսը, որը 60-ական թվականներին հայտնի է դարձել «Անձի վերաբերյալ» եւ «Արձանագրության համար» հեռուստատեսային հաղորդումներով, իր հարցերով նույնպես հերձում էր զրուցակիցներին, քննում եւ բացահայտում նրանց արարքների շարժառիթները: Բայց նա հերձում էր՝ առանց վիրավորելու: Նա միշտ մնում էր հավասարակշռված, քաղաքավարի, գործնական: Գաուսի համար հարցազրույցը պարզապես «համառ հարցերի մի-

ջոցով որեւէ տղամարդուց կամ կնոջից ընդհանուր հետաքրքրութիւն ներկայացնող անձնական կամ գործնական բան իմանալու փորձ է»:

Միմյանց տեսել են,- այսպէս է վերջիվերջո «իմտերվյու» հասկացութիւնը սահմանում Դուդենը իր ծագումնաբանական բառարանում.

*Նոր օտար բառ լրագրական լեզվում, որը 19-րդ դարի վերջին վերցվել է նույն նշանակութիւնը ունեցող անգլո-ամերիկյան «իմտերվյու» բառից, որն ինքը ծագում է ֆրանսերէն *entrevue* «պայմանավորված հանդիպում» բառից: Հիմքում ընկած է ֆրանսերէն «*entrevoir*»՝ «միմյանց (կարճ ժամանակով) տեսնել, իրար հանդիպել, պատահել» բայը, ֆրանսերէն *voir* «տեսնել» բառի նորակազմութիւն...*

Իսկ այսօրվա նշանակութիւնը Դուդենն այսպէս է տեսնում.

*«Հասարակության համար նախատեսված զրույց (թերթի) թղթակցի եւ մեծ մասամբ հայտնի անձնավորության միջեւ՝ օրվա հրատապ հարցերի կամ այլ բաների մասին, որոնք հատկապէս հետաքրքիր են հարցուփորձ արվողի անձնավորության պատճառով...»:*

Անկասկած, աղբյուրին ուղղված հարցերով է սկսվում ամեն ինչ: Այսպէս լրագրողը տեղեկութիւնները ձեռք է բերում առաջին ձեռքից: Զրույցի կողմնակի առնչութիւնը, ընդ որում՝ «մեծ մասամբ հայտնի անձնավորության» հետ, շատ ցանկալի է: Առաջին ձեռքը տպավորութիւն է թողնում. հեղինակավոր զրուցակցի անունը հետաքրքրութիւն է արթնացնում, զարդարում թերթը:

Զրույց. սա սակայն ճշգրիտ բառը չէ, այն չի կարող նկարագրել «իմտերվուի» բազում տարատեսակները: Թղթակիցը կարող է հնազանդորեն տեղեկութիւն հավաքել, հիշողութիւնից իր գիտելիքները հանել, համեստորեն հարցնել, բայց նա կարող է նաեւ սատանայի փաստաբան լինել, խաչածեւ հարցաքննութիւն վարել դատախազի խստութեամբ կամ սադրել, ինչպէս Ֆալաչին: Նա կարող է, բայց արդյո՞ք իրավունք ունի:

Շատ թերթերում թղթակցի կարծիքը չի հետաքրքրում: Հայնրիխ Դիթմարը՝ Ռուրի շրջանից մի փորձառու խմբագիր, օրինակ, իր աշակերտներին սովորեցնում էր.

«Քո սեփական անձը հանիր հարցազրույցի պատմությունից: Ընթերցողներին հետաքրքրում է ոչ թե լրագրողը, այլ զրուցակիցը»:

Ամերիկացի Ջոն Յոհենբերգը իր «Պրոֆեսիոնալ լրագրողը» դասագրքում նույնպես թղթակիցներին զսպվածության է հորդորում.

«Ոչ մի դեպքում հարցազրույց վարողը չպետք է այնքան տարվի, որ թույլ տա իրեն ներքաշել աշխույժ բանավեճի մեջ, որում նա կստանձնի հարցազրույցի մեծ մասը, իսկ նրա զրուցակիցը կդառնա մի տեսակ ձանձրացած ունկնդիր»:

Ոչ մի դեպքում աշխույժ չբանավիճե՞լ: Սեփական անձը պատմությունից հեռո՞ւ պահել: «Շպիգելի» զրույցում սատանայի փաստաբանը թքած ունի այսպիսի խորհուրդների վրա: Նա ինքնավստահորեն հանդես է գալիս որպես իրավահավասար զրուցակից, որն իր սեփական գիտելիքն է ներմուծում հարցային խաղում ու չի խուսափում բանավեճի ճանապարհից, այլ ղեկավարում է այն:

Ջրույցի ժամանակ: Ամեն հարցազրույց չէ, որ այդպես կարող է կոչվել, կարծում է «Շպիգելը»: 1971 թվականի մայիսի 31-ի ներքին հրահանգներից մեկը ցույց է տալիս, թե որն է տարբերությունը.

«Շպիգելի» զրույցները երբեք չեն մտածվել ու չեն վարվել որպես հարցազրույց, այսինքն՝ որպես փորձագետի քննում լրագրողի միջոցով, որի որակը նման դեպքում նրա հարցերի ճշտությունն ու սղագրության ճշգրտությունն է: «Շպիգելի» զրույցները պետք է լինեն ու ձգտում են լինել (եւ եղել են հաջողության դեպքում) քննարկային ու բանավեճային զրույցներ, որոնց ժամանակ յուրաքանչյուր կողմից պահանջվում է պահպանել գործիմացության մաքսիմումը»:

«Շթերնը» նույն կարծիքին է: Այդ մասին կարելի է կարդալ 1978 թվականի սեպտեմբերի 28-ին.

«Հարցազրույցներ «Շթերնում» շատ են եղել: Ջրույցներ հազվադեպ են տպագրվել: Դա պետք է փոխվի: Հարցազրույց եւ զրույց լրագրային ձեւերի միջեւ փոքրիկ տարբերությունը դժվար է սահմանել: Մի փորձ անենք. հարցազ-

ըրույցն այն է, երբ մեկը հարցնում է, իսկ մյուսը պատասխանում, երկուսն էլ՝ հնարավորին չափ կարճ ու ստույգ: Ջրույցն այն է, երբ երկուսն իրար հետ զրուցում են, թեթև զրույցի տոնը թույլատրելի է, կատակը՝ ցանկալի, հեգնանքը՝ կարելի, եթե նույնիսկ խոսքը լուրջ բաների մասին է: Գործի իմաստը հանդիսատեսին հետաքրքիր, կարելորկամ ազդեցիկ մարդկանց ներկայացնելն է, որոնք (միեւնույն է, որ բնագավառում) պատմական նշանակություն ունեցող անձի գնահատականն են վաստակել... Այսպիսի զրույցները ավելի շատ ժամանակ են պահանջում (նախապատրաստվելու ու զրույցը վարելու ժամանակ) եւ ավելի շատ տարածության (հրապարակման ժամանակ) կարիք ունեն, քան հարցազրույցները»:

## «Պարոն Շտրաուս, այդպես չի կարելի...»

Ջրույցին հատկանշական է այն, որ լրագրողը ոչ միայն տեղեկություն է խնդրում, այլև իր սեփական տեսակետն է ներկայացնում: Միեւնույն ժամանակ, նա բավարարվում է համեմատաբար ավելի քիչ հարցական նախադասություններով, ինչը հարցազրույցն արտաքուստ անմիջապես ճանաչելի է դարձնում: Այս տեսակետից դիտենք «Շպիգելը» զրույցը Ֆրանց Յոզեֆ Շտրաուսի հետ (2 փետրվարի 1978): «Շպիգելը» 83 անգամ դիմում է Շտրաուսին, որից 40-ը՝ ոչ հարցական շեշտադրումով, այլ՝ արձանագրումով: Հարցազրույցի երկար հատվածներն այսպիսով հետեւյալ կերպ են կարդացվում.

**ՇՊԻԳԵԼ.** «Այն, ինչ Միությունը անում է Քոլի հետ, թույլ տվեք դեմոնտաժ անվանել...»

**ՇՏՐԱՈՒՍ.** «Դուք փոքր ինչ նման եք նրան, ով տունը վառում է ու հետո գոռում, թե հրշեջ խումբը չկա»:

**ՇՊԻԳԵԼ.** «Քոլին մենք չենք վառել: Քրիստոնեա-սոցիալական միության անդամներից մեկը, որին Դուք ճանաչում եք ու գնահատում, մեզ ասաց, որ մեկ երրորդով Քոլն ինքն է իրեն դեմոնտաժի ենթարկում, մեկ երրորդով այդ անում է Շմիդտը, իսկ մնացյալ մեկ երրորդով այն անում են Քրիստոնեա-սոցիալական միությունը եւ Շտրաուսը»:

**ՇՏՐԱՈՒՍ.** «Ուրեմն պարոն Շմիդտը եւ ես՝ միասին երկու երրորդ ունենք, դա լուրջ մեծամասնություն է կազմում»:

Հռետորական հարցերի, սահրող ու կասկածի ենթարկող հաստատունների ցանկությունը, որոնք պետք է պաշտպանություն ու բողոք առաջացնեն, տասնամյակներ շարունակ անփոփոխ է մնացել: Հատկանշական են դարձվածքներ, ինչպիսին են ստորեւ բերվածները. սրանք վերցված են «Շպիգելի» այն տարվա համարներից, որում նա տոնում էր իր 50 ամյակը եւ կարող էր հետադարձ հայացք նետել շուրջ երեք հազար գրույցների վրա.

*«Բայց չէ՞ որ Դուք չեք կասկածում, թե ...»*

*«Այսպիսով՝ Դուք լրջորեն ուզում եք ողջունել մի քաղաքական համակարգ, որը...»*

*«Ձեզ համար անհասկանալի է, որ ...»*

*«...Դա պարադոքսալ է հնչում»*

*«Փառք ու պատիվ Ձեր էնտուզիազմին, ...»*

*«Դուք այդքան վստա՞հ եք ...»*

Իհարկե տրվում են նաեւ հարցեր, որոնց վերաբերյալ լուրջ պատասխան չի սպասվում, ինչպես Բավարիայի վարչապետ Էդմունդ Շտոյբերի հետ հարցազրույցի ժամանակ.

**ՇՊԻԳԵԼ.** «Դաշնային վարչապետ դառնալու ոչ մի ձգտում, ոչ մի տենչ կուսակցության նախագահի համար, ո՞ր է գնալու Ձեր կարիերան: Գուցե ուզում եք դառնալ Ֆրանց Բեկենբաուերի հետոն՞ողը՝ Մյունխենի «Բավարիա» ֆուտբոլային ակումբի նախագահ՞»:

**ՇՏՈՅԲԵՐ.** «Դա ուտոպիական է: Բայց ավելի իրական, քան Դաշնային վարչապետ դառնալը»:

Որեւէ կասկածի տեղիք չտալու համար՝ ասենք. հարցազրույցի ժամանակ թույլատրվում ու ազնիվ է սեփական կարծիքն արտահայտելը, անշուշտ ավելի ազնիվ, քան ռեպորտաժում կամ նկարագրական ռեպորտաժում: Քանի որ հարցվողը հնարավորություն ունի անմիջապես պատասխանելու եւ սխալը շտկելու: Իսկ երբ լրագրողը խրատում է հարցվողին «Պարոն Շտրաուս, չէ՞ որ այդպես չի լինի», երբ փաստարկները ստուգվում են՝ միմյանց հետ բախում ստեղծելով, ապա տեղի է ունենում այն, ինչը «Շպիգելի» մշտական սպասելիքն է. քննարկում, բանավեճ, որը մյուս կողմից, հրապարակախոս Հանս-Յոախիմ Նեթցերը՝ նախկինում «Բայերիշեր Ռունդֆունկ»-ի գլխավոր խմբագիրը, այլեւս հարցազրույց չի անվանում: Քանի որ «այն չի տեղեկացնում, այլ բացահայտում է,

այն գրույց չէ, այլ՝ հավատաքննություն»:

Արդյո՞ք հավատաքննությունը բանավեճի համեմատական ձեւն է: Արդյո՞ք պետք է շարունակել պիտակավորել, սահմանել, կատալոգ կազմել: Հանս Յոախիմ Նեթցերը դա խորհուրդ չի տալիս. «Կարելի է հարցազրույց ժանրային հասկացությունը բաժանել հարցազրույցի քսան տարբեր ձեւերի, գործնականում շատ արագ մի քսանմեկերորդն էլ կպատահի: Այստեղ հասկացություններ են գործածվում, ինչպիսին են տիպականացնող եւ մթնոլորտային հարցազրույց, պատկերազարդ կամ ներկայացուցչական հարցազրույց: Ֆրանսիացի սոցիոլոգ Մորինը, օրինակ, խոսում է ծխական, անեկդոտային կամ երկխոսական հարցազրույցների մասին: Սակայն ինչպես ասվեց՝ մենք շատ հաճախ ու շարունակ տարբերակների կհանդիպենք, որոնց եղած անվանումներից ոչ մեկը չի սագի: Այդ պատճառով ես ամենապարզ ստորաբաժանումը ամենաիմաստավուն եմ համարում»:

Ամենապարզ ստորաբաժանումը, որը նկատի ունի Նեթցերը, գործնականում պետք է բացառի թյուրիմացությունները լրագրողի եւ խմբագրի միջեւ: Ի՞նչ է պահանջվում, գործածվում, ցանկալի: Դա ի՞նչ պետք է լինի: Հարցազրույց՝

- ▶ ... գործի՞ մասին
- ▶ ... անձի՞ մասին
- ▶ ... թե՞ խառը ձեւով:

Եթե խառնենք, ապա հանձնարարությունը կարող է հնչել օրինակ՝ այսպես. «Հարցրեք քաղաքապետի թեկնածուին քաղաքի կենտրոնի բարելավման մասին: Բայց նաեւ մի քանի անձնական հարց տվեք: Անձամբ ինքը որտե՞ղ է ապրում: Որտե՞ղ կուզենար ապրել: Ինչքա՞ն ժամանակ է արդեն ապրում մեր քաղաքում»:

Անհրաժեշտ է քննարկել նաեւ հարցազրույցի արտաքին ձեւը: Ո՞րն է այս դեպքում լավագույնը:

- ▶ Արձանագրություն՞ հարցուպատասխանի փոխանակմամբ, ինչպես «Շպիգելն» է նախընտրում,
- ▶ թե՞ անուղղակի եւ ուղղակի խոսքի փոխանակում:

Փոխանակում, որում միայն հիմնական նախադասություններ են մեջբերվում, իսկ մնացածը ամփոփվում է հաշվետվության ձեւով:

Թե դրանից հետո հարցազրույցը ինչ կդառնա՝ խաչածեւ հարցաքննություն, թե խաչածեւ արձանագրություն, տեղեկատվական

հարցախաղ, թե քիչ նյութով տեքստ, իհարկե երբեմն կախված է պատահականությունից, մեծ մասամբ սակայն՝ հարցերի որակից: Դրա համար հարկավոր է ոչ միայն տաղանդ, այլև ջանասիրու-թյուն. ոգեշնչմանը նախորդում է քրտնեղը:

## **Ինչպես են հարցուփորձ անում հանրաճանաչ մարդկանց**

«Ինչպես պաշար գնելու են դատարկ ուսապարկով գնում, այնպես էլ հարցազրույց անցկացնելու պետք է գնալ ու-ղեղի դատարկ տոպրակով: Քանի որ ինչքան ավելի հի-մար են հարցերը, այնքան ավելի հիմար են պատասխան-ները: Իսկ ինչքան ավելի հիմար են պատասխանները, այնքան ավելի շատ փող ես ստանում դրա համար»:

Այս դեղատոմսի հեղինակը Ջիզֆրիդ Ջոներն է, որը մի ժամանակ հայտնի էր որպես Մյունխենի «Աբենդցայթունգի» կարծիք արտա-հայտող հոդվածաշարի մշտական հեղինակ: Անկասկած, հիմար պատասխաններն ավելի լավ են վաճառվում, հարցազրույցը դարձ-նում ուրախ, ընթեռնելի, յուրօրինակ: Սակայն դատարկ գլխի մեթո-դը վստահորեն խորհուրդ է տրվում միայն մեկ առանձնակի դեպ-քում՝ Ջիզի Ջոների եւ նրա պատմությունների համար: Ուրեմն, ի՞նչ պետք է անել: Մի քանի խելացի հարցերով զինվելը նույնպես բա-վական չէ, կարծում է ամերիկյան հեղինակ Կոռնելիուս Ռայանը («Ա-մենատերկար օրը»): Լրագրողն ըստ էության պետք է իմանա, թե ինչ է ասելու իր զրուցակիցը՝ դեռ նախքան նրան խոսքը ուղղելը: Ռա-յանի կանոնը.

«Ոչ մեկից հարցազրույց մի վերցրեք, եթե նախապես ար-դեն չգիտեք պատասխանների 60%-ը»:

Ինչու՞ այդպես: Պետք է մոտավորապես իմանաս պատասխան-ները, որ կարողանաս վարել հարցազրույցը, նախապատրաստես հակափաստարկները եւ գուշակես վիճահարույց կետերը: Պետք է ծանոթ լինես հարցազրույցի մասնակցի ասելիքին, որպեսզի 13-րդ անգամ չտաս նույն հարցը, որին նա արդեն 12 անգամ պատասխա-նել է: Միայն նա, ով գիտի, թե մյուսը մինչ այդ ինչ է ասել, կարող է բռնացնել նրա հակասությունները կամ սրել ականջները, եթե նոր բան ասվի: Բացի այդ, հանրաճանաչ մարդիկ նաեւ շատ հարցու-փորձ արված մարդիկ են: Այն ինչ նրանք վերջին ժամանակում ասել

ու գրել են, ինչ բերվել է հայտարարություններում ու մամուլի հաղորդագրություններում, ինչ այսօր տվյալ անձի վերաբերյալ գրված է թերթում, այդ ամենը հարցազրույց վարողը պետք է ուսումնասիրած լինի: Առնվա՛զն: Խուսափող անգիտությունը համարվում է անքաղաքավարություն: Եվ հեղինակությունը արձագանքում է բարկությամբ:

Ուրեմն ինչքա՞ն ջանք պետք է գործադրես, որպեսզի կարողանաս կայանալ հարցազրույցի ժանրում: Լրագրության ամերիկյան ուսուցիչները սա հանգեցնում են 10:1 հիմնական կանոնին.

«Փորձված գրողներն ընդունում են, որ հարցազրույցի յուրաքանչյուր թույլ համար պետք է տասը թույլ նախապատրաստվել»:

Այսպես է գրված Ջոն Բրեդիի (որն ինքը պրոֆեսիոնալ հարց տվող է) «The Craft of Interviewing» գրքում: Տասը՝ մեկի, չափազանցված է հնչում: Ինչպե՞ս է դա մեզ մոտ: Բրեդիի գործընկերները ԳԴԴ-ում նույնպես օրեր շարունակ նախապատրաստվում են կարևոր հարցազրույցների: Միշտ մի քանի կիլոգրամ արխիվային նյութ է խոտանվում:

Այժմ որպես օրինակ կարող է հանդիսանալ Կարայանի հետ մի պատմական հարցազրույց «Վելթ ան Ջոնթագ» լրագրում: Ահա մի հարցազրույց այդ հարցազրույցի մասին՝ հեղինակ Ֆելիքս Շնիդտի՝ երաժշտության ամենաանվանի մասնագետ լրագրողներից մեկի հետ.

**ՉԱՐՑ. «Ինչպիսի՞ն է հարցազրույցին նախապատրաստվելու Ձեր աշխատանքը»:**

**ՇՄԻԴՏ.** «Ես ընթացքի որոշակի պլան ունեմ, կարդում եմ համապատասխան անձի մասին առկա բոլոր նյութերը, հետո զտելով՝ վեր եմ հանում խնդիրների այն շրջանակները, որոնք կարևոր են, եւ փորձում եմ այդ մարդու մասին փնտրել ու պեղել լրացուցիչ նյութեր : Իհարկե, ուզում եմ նաեւ անձնական ոլորտից բաներ իմանալ: Պետք է այնպես նախապատրաստվես, որ հարցազրույցի ժամանակ մի պահ հարցվողը մտածի. այս լրագրողը իմ մասին ավելի շատ բան գիտի, քան ես՝ ինքս...»:

**ՉԱՐՑ.** «Իսկ ինչպե՞ս էր դա Կարայանի դեպքում: Դուք նրան արդեն ճանաչու՞մ էիք: Դուք Կարայանի գիտա՞կն եք»:

**ՇՄԻԴՏ.** «Ես գիտեմ Կարայանին, ես արդեն երկու հարցազրույց վարել եմ նրա հետ «Շպիգելի» համար: Վերջին հարցազրույցից առաջ ես համապատասխան գրականությանը մեկուսացա շաբաթվա վերջում՝ հանգստյան օրերին»:

**ՀԱՐՑ.** «Շաբաթվա վերջում՝ Ստույգ քանի՞ ժամ»:

**ՇՄԻԴՏ.** «Շաբաթ օրը՝ հինգ, կիրակի օրը՝ վեց»:

**ՀԱՐՑ.** «Դուք զրույցի ընթացքի պլան կազմում եք»:

**ՇՄԻԴՏ.** «Ես մեծամասամբ 40 կամ 50 հարց եմ մտածում, որոնց, իմ կարծիքով, պետք է պատասխանվի: Ես դրանք տալիս եմ ամեն դեպքում: Սակայն ես համառորեն չեմ կառչում ընթացքի պլանից: Երբ մի հուշող բառ է ի հայտ գալիս, որը թույլ է տալիս ենթադրել, որ դրա հետևում մի հետաքրքիր բան կա թաքնված, ես շարունակում եմ քչփորել, բայց հետո կրկին վերադառնում եմ իմ սխեմային: Եվ հակառակը, երբ մեկը չի ցանկանում անկեղծ պատասխանել, ես անցնում եմ հաջորդ կետին, բայց հետո շարունակ վերադառնում եմ պատասխան չստացած հարցերին: Ես դա անում եմ այնքան ժամանակ, մինչև նա այլևս չի խուսափում կամ հայտարարում է. «Այդ մասին ես չեի ցանկանա խոսել»: Սա նույնպես պատասխան է»:

**ՀԱՐՑ.** «Ինչպե՞ս ընթացավ Կարայանի հետ հարցազրույցը: Ինչքա՞ն այն տևեց»:

**ՇՄԻԴՏ.** «Սկզբում մի նախնական զրույց էր, որի ժամանակ մենք խոսում էինք դեսից-դենից: Յետո հետևեց երեքժամյա հիմնական հարցազրույցը: Նյութը, որը ստացվեց՝ շուրջ 90 մեքենագիր էջ, մշակեցի, թեմատիկորեն կարգավորեցի եւ Կարայանին ներկայացրի: Նա ուզում էր որոշ բաների մասին մեկ անգամ եւս մտածել, որոշ հատվածներ ընդգծել ու ընդլայնել: Դա կրկին տեղի ունեցավ հարցազրույցի ձեւով. երեք հանդիպում, ընդհանուր առմամբ՝ վեց ժամ տեւողությամբ: Եվ ամբողջը տևեց մոտ կես տարի, դա ամենաերկար հարցազրույցն էր, որ երբեք տվել էր Կարայանը եւ այն էլ՝ ամեն առումով»:

Գրեթե նույն խոսքերով՝ ինչ-որ Շմիդտը, մանրագմին նախապատրաստական աշխատանք էր պահանջում դեռ Գյունտեր Գաուսը: Նա նույնպես մի ժամանակ Բադեն Բադենի հեռուստատեսության ղեկավարն էր: Նրա՝ «Անձի մասին» եւ «Արձանագրության համար» հարցազրույցների շարքերը ZDF-ի (Գերմանական հեռուս-

տատեսութեան երկրորդ ակիբ) ծրագրերի հանձնաժողովը սկզբուն բնորոշէց իբրեւ դաժան ու անողոք: Ավելի ուշ Գաուսին մեծարուն էին, որպէս գերմանական հեռուստատեսութիւնը ժամանակակից հարցազրույց ներմուծողի:

Իր մեթոդների, իր տեխնիկայի, իր ոճի մասին Գաուսը ասել է «Բայերիշեր Ռունդֆունկ»-ին տված հարցազրույցում.

*«Իմ հեռուստատեսային շարքի ժամանակ ես բազմիցս համոզվել եմ, որ երբ որեւէ մարդու հետ ավելի քան 45 րոպե հարցազրույց ես ուզում վարել (ինչը երկար ժամանակ է) նրա կյանքի պայմանների եւ իր կողմից ներկայացվող գործի մասին, ապա ավելի իրագրել պետք է լինես, քան հարցվողը ինքը, որքան էլ որ սա տարօրինակ է հնչում: Ինչպէ՞ս է հնարավոր հարցվողից ավելի լավ տեղյակ լինել նրա կենսագրությանը: Դա ամենեւին էլ տարօրինակ է: Չէ՞ որ նա չի պատրաստվել: Պատրաստվել է հարցազրույց վարողը՝ լրագրողը, որը նրան հարցուփորձ է անում, որը պետք է պատրաստի կարելու մանրամասներ ունենա, կարելու ժամանակային մանրամասներ: Ե՞րբ է նա գրել այս թեմայի վերաբերյալ դոկտորական աշխատանքը: Ե՞րբ է ընդունվել կուսակցություն: Ի՞նչ հանգամանքներում է նա կուսակցության անդամ դարձել: Սրանք բաներ են, որոնք հարցազրույց վարողը պետք է ստույգ իմանա, որոնց մասին թերեւս սկզբից պետք է մտածի: Այսպիսով, ես վատ կարծիքի եմ միամիտ հարցազրույցի մասին, որում սիրողական կերպով, թերեւս ձեւացող սիրողականությամբ լրագրողը միամիտ հարցուփորձ է անում գրուցակցին եւ դրանով իսկ նրան հնարավորություն է տալիս իր իմացածից հաղորդել ճիշտ այնքանը, որքանը նա ճիշտ է համարում տրված հանգամանքներում: Ես հո չե՞մ կարող նրան ստիպել հաղորդել ավելին, քան նա ուզում է»:*

*(Հարցազրույցը վարում էր Ռայմարդ Վիլիելմ Շմիդտը «Բայերիշեր Ռունդֆունկ»-ից)*

Մասնագետներն առաջին հայացքից սա կնկատեն. Գյունտեր Գաուսի հետ հարցազրույցը բառացի եւ անփոփոխ վերցված է մագնիտոֆոնի ժապավենից՝ բոլոր միջանկյալներով, կրկնություններով, երկար նախադասություններով, որոնք բխում են ցանկացած հանպատրաստից ձեւակերպված տեքստից: Կարայանի հետ հարցազրույցի մեջբերումները, դրան հակառակ, ավելի կարճ, ավելի հստակ, ավելի սահուն են: Դրանք նույնպէս ձայնագրվել են, բայց հետո խմբագրվել, այսինքն՝ ազատվել կրկնությունների ու ավելորդ բառերի բեռից:

Գաուսը «Բայերիշեր Ռունդֆունկ»-ում ավելին կարող էր ասել նախապատրաստական աշխատանքի մասին: Նրա խորհուրդները մի նախադասությամբ.

*«Ոչ միայն կարդալ ամեն ինչ տվյալ անձի մասին, ոչ միայն նրա ընկերների հետ խոսել, այլև՝ նրա հակառակորդներին»:*

Արդյոք դա մի՞շտ է հնարավոր: Առարկությունն ակներև է եւ պատրաստ. Գաուսի եւ Ֆելիքս Շմիդտի այս հարցազրույցներում խոսքը առանձնակի դեպքերի մասին էր, երկար ժամանակ նախապատրաստված զրույցների: Լրագրողները բավական ժամանակ ունեին՝ եւ տրամադրվելու, եւ հարցուփորձ անելու ընկերներին ու թշնամիներին, եւ՝ օգտվելու գրադարանից: Թերթը, սակայն, պահանջում է արագություն: Հարցազրույցի՝ այսօր տպվելու գաղափարն ու դրդապատճառը զուցե հենց երեկ կեսօրից առաջ է ծագել: Ինքնաբուխ հարցումները, սակայն, որոնք հանապատրաստից պիտի վարվեն, գրեթե նույնքան հազվադեպ են, որքան Կարայանի հետ թեթև զրույցի ժամերը: Նույնիսկ թերթերի ամենօրյա քառատրոփը համարյա միշտ թողնում է կես ժամ, որն անհրաժեշտ է՝ մի քանի կենսագրական տվյալներ իմանալու եւ տվյալ անձի գործընկերօջից, ընկերոջից, մեներջերից կամ ներկայացուցչից մի քանի տվյալներ ստանալու համար: Դրույթը նույնն է՝ միանտություն միայն ծայրահեղ դեպքում: Մնացած դեպքերում՝ այնքան շատ նախապատրաստվածություն, որքան հնարավոր է: Իսկ մեծամասամբ, շատ բան է հնարավոր:

Մյուս կողմից՝ կարելի՞ է արդյոք չափից շատ նախապատրաստվել: Ով չափազանց շատ գիտի, հեշտությամբ կարող է տրվել իր ամբողջ գիտելիքը հաղորդելու գայթակղությամբ: Այդպես հարցազրույցն ականայից վերածվում է փորձագետների հարցազրույցի, որին ընթերցողները կամ ունկնդիրները այլեւս չեն ցանկանում հետևել: Վերջապես, երբ լրագրողը՝ իր կարդացած գիտելիքներով, իր զոհին գրեթե խոսք չի տալիս, ապա դա արդեն անախորժություն է: Կան սրամտություն:

«Աբեմդցայթունգը» օգտագործեց այս հնարքը, երբ հարցազրույց վարեց պրոֆեսոր Կոնրադ Յուզեի՝ առաջին ծրագրավորվող հաշվիչ մեքենան ստեղծողի հետ: Վերջինս պետք է բացատրեր, թե ինչպես է գործում իր սարքը: Որ «Աբեմդցայթունգը» դրա մասին ավելի շատ էր խոսում, քան հարցվողը, մեծամտություն չէր, այլ ինքնապաշտպանություն, ինչպես ցույց է տալիս հարցազրույցից ստորև բերված հատվածը.

*Պրոֆեսոր Յուզե. «...կարելի է պարզապես ասել, որ կա երեք հիմնական գործողություն՝ միացում, անջատում, բացատում: Իսկ ծրագիր՝ նշանակում է արլգորիթմ կազմել»:*

**«Պարոն պրոֆեսոր, բայց պարոն պրոֆեսոր»:**

Պարոն պրոֆեսորը գիտակցեց, որ սա թերեւս բոլորովին էլ այն պարզ լեզուն չէր, որն ակնկալում էինք, եւ զենքը ուղղվեց հակառակ կողմ: Այժմ ես կարող եմ փնտրել ամենապարզ նկարագրությունը (հավաքած՝ հինգ գրքերից): Իսկ նա ուղղում էր:

**«Այսպիսով՝ պարոն պրոֆեսոր, մեքենայի շարժիչները բենզին են վերամշակում, համակարգիչները հոսանքի ազդակներ են վերամշակում, ավելի ճիշտ ասած՝ հաշվիչ մեքենաները միայն ի գիտություն են ընդունում. արդյո՞ք հոսանք կստանան, թե՞ ոչ: Ճի՞շտ է»:**

**Քիչ էր մնում՝ ասեի. «Չասկացա՞ք»:**

*Պրոֆեսոր Յուզեն համաձայնեց. «Ավտոմեքենայի շարժիչի դեպքում էներգիա է փոխակերպվում, այստեղ՝ տեղեկատվություն: Չավանաբար այսպես կարելի է ասել»:*

**«Այժմ,- շարունակում էի բացատրել համակարգի գյուտարարին,- հոսանքի ազդակներով, ինչպես Մորզեի այբուբենով, եթե իհարկե այն համապատասխանաբար ծածկագրվի, հնարավոր է ամեն ինչ ասել՝ թվեր, նշաններ, բաներ կամ Գյոթեի ստեղծագործությունները: Ճի՞շտ է»:**

*Պրոֆեսոր Յուզեն գոհ էր. «Այո, դրանով կարելի է ներկայացնել ամենատարբեր տեղեկություններ ...»:*

**«Պարզ հաշվիչի դեպքում ուրեմն ազդակները կարող են շարժման մեջ դնել հաշվիչ մեխանիզմը, որը գրառում է. երկու ազդակ գումարած երկուսը՝ ստացվում է չորս»:**  
**Յուզեն ըմբռնում էր:**

Եվ այսպես աստիճանաբար բացատրվեց համակարգի ամբողջ աշխատանքը: Մի բացառիկ դեպք: Իհարկե: Բայց բացառություններն արգելված չեն: Որպես բացառություն, նրանք կարող են հանգիստ փորձարկվել:

Յուզեին միայն այս պատճառով չէինք մեջբերում: Այս հարցազրույցը ցուցադրում է այսպես կոչված փակ հարցերը, որոնք թեման նեղացնում են եւ ստիպում են պատասխանել մի կարճ արտահայտությամբ՝ այդ կամ ոչ ասել:

Կարծիքաբաններն ու հոգեբանները հարցերի շատ ավելի կատեգորիաներ գիտեն: Արժե նրանցից սովորել:

## Հարցեր հարցնելու մասին

### Նախ՝ սառցահատը

Լրագրողին անհրաժեշտ է զեկույց, որի տակ հոգեբաններն, ի տարբերություն զինվորականների, լավ հարաբերությունների հաստատում են հասկանում: Պարզապես անհրաժեշտ է (իսկ դա արդեն «ռապորտ» է) կապ գտնել, մյուսին հաղորդակից դարձնել եւ հարցազրույցի ընթացքը ավելորդ խոչընդոտներից ազատել:

Ամենաապահով մեթոդը ազնիվ պարզաբանումն է, թե ինչու ես հարցազրույց ցանկանում, թե այն ինչ նպատակ ունի: Սա է լրագրական պարզ դպրոցական իմաստությունը: Ով փողոցում որեւէ քաղաքական գործչի կամ կնոջ վրա է հարձակվում. «Ինչքա՞ն փող ունեք ձեր գրպանում» հարցով, պետք է նկատի ունենա, որ կարող է կոպիտ մերժվել. «Ձեր ի՞նչ գործն է»: Դրա փոխարեն բացատրությունը մտերմացնում է, կապ է ստեղծում. «Գնալով՝ ավելի շատ մարդիկ են վճարում առանց կանխիկ դրամի, օգտվում չէքային քարտերից՝ գրպանում միայն մի քանի մարկ պահելով: Այդ պատճառով թույլ տվեք հարցնել ...»:

Այս մուտքը կարող է կորզման մեղմ ձեւ դառնալ: Երբեմն դժվարին թեմաների դեպքում, քիչ է մնում ասես. «Այդ մասին այնքան շատ սխալ, կեղծ, ոչ ստույգ բան է պատմվում ու գրվում: Այսպիսով՝ ասացեք, խնդրեմ ...»: Գուցե նա, ումից հարցնում ես, այս խոսքերից հասկանա. «Եթե Դուք մեզ հարցազրույց չտաք, Ձեր մասին վաղը կրկին ինչ-որ սուտ բան կլինի թերթում»:

Մի քանի ներածական նախադասություն կարծիք ուսումնասիրողի համար ամենեւին բավական չէ: Պրոֆեսոր Էլիզաբեթ Նյոլե-Նոյմանը Ալենսբախից այսպես է սովորեցնում.

«Հարցվողին հարցազրույց տալու դրդելը (հարցազրույցից հրաժարվելու շարժառիթները վերացնելը, հարցազ-

րույց տալու շարժառիթներն արթնացնելը) հատկապես կարելու է սկզբում, սակայն պետք է հնարավորինս որոշիչ լինի ողջ հարցաթերթիկի, լրագրողի դեպքում՝ հարցման համար»։ Հարցից առաջ համեմատաբար երկար ներածութիւնները նպատակահարմար չեն, հարցաթերթիկը հարցազրույց վարողին պետք է հնարավորինս արագ բերի հետեւյալ արտահայտությանը. «Այժմ կարո՞ղ եմ տալ առաջին հարցս».

Այսպիսով, արդեն դիմելիս պետք է սկսել մի հարցով, որը զրուցակցին կներքաշի երկխոսության մեջ: Տիկին Նյոլե-Նոյմանը շարունակում է.

«Այս առաջին հարցը (հարաբերում ստեղծող հարցը, սառույցը կտրող հարցը) ոչ մի վտանգավոր բան չի պարունակում. այն կարճ է, հեշտ է պատասխանվում, նախելառաջ վստահություն ներշնչելու եւ հետաքրքրություն արթնացնելու համար՝ հարցվողների այն խմբում, որոնք ամենից շուտն են հրաժարվում հարցազրույցից (անվստահության կամ տարակուսելիության պատճառով), դրանք են սոցիալական ստորին խավերը, թերի կրթված, նվազ հետաքրքրություններով մարդիկ, ծերեր, կանայք:

Առաջին հարցի առաջադրանքը՝ կապ հաստատելն ու հարցվողին շահագրգռելն այնքան կարելու է, որ այն կարող է լինել նաեւ դեմ նետելու մի հարց, այսինքն՝ առաջադրանքի առումով ավելորդ: Մնացածում ոչ միայն առաջին, առաջին երեք-չորս հարցերը պետք է ընտրվեն՝ կապ ստեղծելու մտքով»:

Ի՞նչը կարող է լավագույնս մտերմացնել: Ինչի՞ց խոսել. եղանակի՞ց, գների աճի՞ց, առողջությունի՞ց, ինչպես իր հարցազրույց վարողներին խորհուրդ են տալիս ալեհնաբախցիները:

Հարցախաղի փորձառուների, շտապող հեղինակությունների դեպքում, կարող են դուռը թափով բացել, հարցազրույցի սկսնակների կամ դժվար զրուցակիցների դեպքում, պետք է հանգիստ դուռը ծեծել: Տիկին Նյոլե-Նոյմանի գործելակերպը.

«Քանի որ հարցվողները՝ հասարակական վարժված զգուշությամբ, վախենում են հարցազրույցի ժամանակ բացա-

սական կարծիքներ հայտնելուց, ապա ամենից առաջ նրանց հնարավորություն են տալիս գովելու... այն հույսով, որ նրանք դրանից հետո իրենց ավելի ազատ կզգան՝ նաեւ պարսավելիս: Հարցերը, որոնց բնակչության մեծ մասը «ոչ» կպատասխանի, հարմար չեն, որպես առաջին հարցեր»:

Կարծիքների հարցում անցկացնողներն էլ առանց նախաբանի չեն հարցնի. «Որտե՞ղ եք ապրում, քանի՞ երեխա ունեք: Քանի՞ տարեկան եք»: Դա կարող է վախեցնել: Տիկին Նյոլե-Նոյման.

«Անձի քաղաքացիական կացության մասին տվյալները պատկանում են ոչ թե հարցազրույցի սկզբին, այլ վերջին. սկզբում դրվելիս դրանք հարցազրույցին հարցաքննության բնույթ են տալիս»:

Գերմանական լրագրողական դպրոցի մի քանի դասարաններ իրենց առաջին հարցազրույցներում հետեւել են այս կանոնին՝ անձի վերաբերյալ հարցերը վերջի համար են պահել, իսկ հետո հանկարծ մոռացել են դրանք տալ: Ուրեմն զգուշություն: Ամենավերջում պետք է հատկապես զգոն լինել, որպես լրագրող եւ որպես կարծիք ուսումնասիրող: Տիկին Նյոլե-Նոյման.

«Գործնականում նրբախնդիր թվացող հարցերը կամ այն հարցերը, որոնք անազնիվ պատասխանների կարող են մղել, հարցաթերթիկի վերջում են թողնվում՝ ելնելով այն բանից, որ մինչ այդ փոխվստահության մի որոշակի կապ ստեղծված կլինի հարցազրույց վարողի եւ հարցվողի միջեւ... եւ որ հարցվողը արդեն փոքր-ինչ հոգնած, ավելի անտարբեր կլինի եւ ավելի քիչ ջանք կթափի՝ անազնիվ պատասխանների համար: Սակայն այսպիսի ենթադրությունները մինչ այժմ ստուգված չեն»:

Ավարտին՝ դժվարի՞նք: Լրագրողները հազիվ թե ցանկանան մնան ռիսկի դիմել՝ արդեն միայն վախենալով, որ վերջում այլեւս բավական ժամանակ չի մնա վիճահարույց խնդիրներին այնքան անդրադառնալու համար, որքան անհրաժեշտ է: Իսկ նրանք եկել են դժվար հարցերի համար: Ավելի լավ է՝ նաեւ ընթերցելիության համար, եթե հարցազրույցը տաքանալուց հետո շիկանա: «Ո՛չ բոլոր դժվարին հարցերը, այլ միայն ամենադժվարինը պետք է վերջինը

տալ», - ասում են փորձառու հարցազրույց վարողները: «Եթե այնուհետև զրույցն ընդհատվում է, ապա լրագրողն արդեն մնացած ամեն ինչն ունի. իր հարցազրույցն արդեն դարակում է»:

Տակտիկապես կարելոր է ոչ միայն այն, թե երբ է հարցը տրվում, այլև նույնքան կարելոր է, թե ինչպես է այն շարադրվում: Այստեղ ուրոշ բան կա՝ ուշադիր լինելու եւ խուսափելու:

## Բաց եւ փակ հարցեր

«Այստեղ ցավում է: Իսկ այնտե՞ղ: Դուք Ձեզ հաճախ եք առավոտյան վատ զգում», - իր հիվանդից ուզում է իմանալ բժիշկը: Սրանք փակ հարցեր են, որոնց կարելի է պատասխանել կարճ այո կամ ոչ-ով, ինչը համենայն դեպս հարցվողների 90%-ին չի խանգարում մի քանի դիտողություններ ավելացնել, ինչպես պարզել է սոցիոլոգ Յուրգեն Ֆրիդրիխսը:

«Այսպիսի հարցերով, մենք դա տեսնում ենք հեռուստատեսային խաղերում, հնարավոր է արագ գտնել, նույնիսկ մի այնպիսի անսովոր մասնագիտություն, ինչպիսին է մորթե կոշիկ կարող կնոջ մասնագիտությունը: Այս մեթոդը արագ կօգնի բժշկին, եթե որոշակի հիվանդության կասկած կա: Դրա փոխարեն, ուրիշ հիվանդությունների ախտանշանները կարող են անտեսվել: Մյուսխեսնյան հոգեբան Միխայիլ Շյոնհալսը այդ պատճառով որակավորման դասընթացների ժամանակ սովորեցնում է բժիշկներին սկսել բաց հարցերով, որոնք մի քանի պատասխան են ենթադրում. «Որտե՞ղ է ցավում: Ինչի՞ց եք զանգատվում»: Հիվանդին պետք է խոսեցնել, եւ նա կհայտնի այն ախտանշանները, որոնք փակ հարցերի դեպքում բաց են թողնվում»:

Կարծիք ուսումնասիրողները կողմնակից են փոփոխության: Տիկին Նյոելե-Նոյմանը եւ նրա գործընկերները փակ հարցերի երկար շարքը համարում են հիասթափեցնող, նրանց կարծիքով, դրանք հարցվողին հնարավորություն չեն տալիս ինչ-որ բան ասել իր խոսքերով: Մյուս կողմից՝ ազատ ձեւակերպված պատասխանի լարվածությունից հետո զիջումներով լիցքաթափումը շատ ցանկալի է (...«Ի՞նչ եք անում կիրակի օրը: Գո՞նե այդ օրը կուշտ քնու՞մ եք»):

Լրագրողները հաճույքով կհետեւեն հոգեբանների խորհրդին եւ բաց հարցերի միջոցով (միաժամանակ սառույցը կտրելով) կքննարկեն թե՛նա՞ն՝ իր ողջ ընդգրկման լայնությամբ, նախքան հարցը մանրամասնելը: Սակայն ընդհանուր հարցերին հաճախ չափազանց ընդհանուր են պատասխանում:

Յուրաքանչյուր լրագրող վերապրել է արդեն դա, երբ աղետներից հետո հարցուվորձ է արել ականատեսներին. ծոցատետրը լցվում է անորոշ արտահայտություններով:

*Լուֆֆհանգայի առեւանգված ինքնաթիռի ուղեւորներից մեկը՝ ազատագրման մասին. «Դա մի ահավոր թեթեւացում էր: Ամեն ինչ շատ արագ կատարվեց: Իսկ երբ մենք հետո արդեն օդանավակայանում ապահով էինք ... »  
Վերին Բավարիայում գնացքի վթար վերապրած մի կին.  
«Պատերազմի նման էր: Սարսափելի շառաչեց: Հետո ամեն ինչ վերջացավ»:*

Այսպիսի դեպքերում միայն մի բան է օգնում. փակ, գոնե սահմանափակող, հարցերով շարունակել պրպտել: Որտե՞ղ էր նստած պատանդը ազատագրման պահին: Իսկապե՞ս լուսային ճառագայթ է բռնկվել, որը բոլորին կուրացրել է: Ամնիջապե՞ս են կրակել: Ի՞նչ էին գոռում սահմանապահները: Ի՞նչ էին անում գնացքի վթարից ողջ մնացածները բախման պահին: Նրանք ճգնվե՞լ են, նրանք ճիշեր լսե՞լ են: Ի՞նչ է եղել նրանց կողքի նստածներին:

«Սկզբում բաց, հետո փակ» նմուշով հարցերն անվանում են ծագարի մեթոդ՝ ընդհանուրից անցնել հատուկին: Ձագարը կարող ենք նաեւ շրջել: Լրագրողը մի մանրամասն է վեր հանում եւ դրանով հարցազրույցի մեջ ներքաշում մեծ թեման: Բայց ինչպես ասվեց, հենց փակ հարցերն են, որ վտանգ են պարունակում՝ որոշ բաներ չլուսաբանված թողնելու, իսկ հարցազրույցում հարցերի բաց մնալը վտանգավոր, դժվար ուղղվող սխալ է: Դրանից խուսափելու համար համառություն է պատգամվում: Իսկ երբեմն՝ խստություն:

## **Հնարք վիրավորելու ժամանակ**

Հարձակումները թույլատրելի են, սուր խոսքը՝ ընդունելի: Ինչքա՞ն հեռու կարելի է գնալ: Մինչեւ վիրավորանքնե՞ր: Կարելի՞ է, օրինակ՝ Կարայանի երեսին ասել, թե ինքը մարդկանց տանջում է: Կարելի է, եթե միայն դա բավականին քաղաքավարի է կատարվում, եթե նույնիսկ ոչ օբյեկտիվը ներկայացվում է իբրեւ օբյեկտիվ: Ահա հնարքը նման դեպքումի համար. լրագրողը երբեք, երբե՞ք ինքը չի վիրավորի: Նա թույլ կտա վիրավորել, եթե դա անհրաժեշտ է վիրավորանքի խոսքն ուրիշին վերագրելով: Չնայած դրան՝ նա պետք է պատրաստ լինի զայրացած արձագանքների:

Ֆելիքս Շմիդտ. «Պ-ն ֆոն Կարայան, շարունակ ասում են, թե Դուք մարդկանց տանջում եք, թե Դուք չափազանց շատ եք պահանջում նվագախմբից, թե Դուք ուզում եք Ձեր երաժիշտներից փոքրիկ կատարյալ Կարայաններ սարքել: Ծի՞շտ է»:

Կարայան.«Մարդկա՞նց տանջում: Նա, ում ես ամենաշատն եմ տանջում, ես ինքս եմ: Ես ինձանից սարսափելի շատ բան եմ պահանջում... Սակայն եթե ամփոփելու իրավունք կտաք, ապա ճիշտն ասած՝ ամբողջ հարցազրույցի ժամանակ շարունակ միայն լսել եմ. Ձեզ սրա համար եմ կշտամբում, Ձեր մասին այս կամ այն բանն եմ ասում: Չէ՞ որ սա խաչաձեւ հարցաքննությունն է: Դուք քննիչ չեք, եւ մենք պետք է խոսենք այն բանի մասին, ինչ մեզ հուզում է՝ թե ինչպես են երաժշտությունն արարում»:

Որտե՞ղ են վերջանում դիվանագիտությունն ու թույլատրված խստությունը, որտե՞ղ է սկսվում անտակտությունը: Ե՞րբ են հարցերը տեղին, ե՞րբ՝ կոպիտ: Հողին ամուր կանգնած է նա, ով կիրառում է հետեւյալ սկզբունքները

- ▶ Եթե հանդիմանությունները կախված են օդում, եթե իսկապես փաստորեն վիրավորական մեղադրանքներ են շրջում եւ եթե դրանք պետք է արտաբերվեն՝ ապա հնարավորին չափ նշելով աղբյուրները, որոնք չպետք է սահմանափակվեն միայն «Ասում են...» արտահայտությամբ: «Ո՞վ է դա ասում» հակահարցի պատասխանը պետք է պատրաստ լինի:
- ▶ Խիստ, ոչ հարգալից հնչող եւ անհարմար հարցերը թույլատրված են, մինչեւ իսկ անհրաժեշտ, երբ հիմնավոր հետաքրքրություն կա, երբ այլապես հասարակության համար բավականին չպարզաբանված հարցեր են մնում: Նպատակը պետք է ակնհայտ լինի. խոսքը ճշմարտության մասին է:
- ▶ Բովանդակությունը չէ, որ արդարացի հարցերը կոպիտ է դարձնում, այլ՝ տոնը: Չափավորը միշտ պատշաճ է:

Նուրբ հարցերի մասին խոսելը կարող է միանգամայն տվյալ անձի սրտով լինել: Այժմ նա կարող է ծուռը շտկել, վիճելի իրադրությունը ներկայացնել իր տեսանկյունից, հանդիմանությունները անպետք անվանել: Ոչ մի քաղաքական գործիչ չի համարի, թե հարցազրույց վարողը հարձակվում է իր վրա, եթե վերջինս ասի. «Ըստ

DPA-ի ընդդիմությունը Ձեզ այսօր հանդիմանել է, թե Դուք տնտեսությունը քայքայման եք հասցրել: Ձեի՞ք ցանկանա այդ մասին կարծիք հայտնել»:

Որոշակի հարցեր, որոնք ահագին հանդուգն են հնչում, մյուս կողմից՝ այնքան էլ անգյուտ չեն, որքան կարծում է լրագրողը: Քաղաքական գործիչը գուցե այդ հարցը բազմիցս է լսել: Իսկ պատասխանը առօրյա գործ է: Հուզմունքի ոչ մի պատճառ: Նրա արյան ճնշումը դրա փոխարեն բարձրանում է երբեմն ոչ թե խիստ, այլ միայն զայրացուցիչ հարցերի դեպքում:

## Հռետորական թակարդներ դնելը

Արդյոք անուղղակի, ուղղակի, հռետորական, բաց թե փակ հարցերն են նպատակահարմար՝ դա որոշվում է մասնակի դեպքում: Հաճախ լսում եւ կարդում ենք նաեւ մի քանի այլ հարցատեսակներ, թեւ դրանց համար գործում է հետեւյալ գնահատականը. շատ պայմանական հանձնարարելի:

Ամենաշատը հնարավոր է վիճել հիպոթետիկ հարցերի շուրջ: Իհարկե, քաղաքական գործչից կցանկանայինք լսել, թե ինչ կպատահեր, եթե... Բայց «ինչ կլիներ, եթե» կառույցով հարցերին (որոնք քաղաքական գործչին ստիպում են պարտավորվել ապագա աննախատեսելի հնարավորություններով իրադրությունը կանխատեսելիս) մարդիկ դժկամորեն են պատասխանում, ինչպես Շտրաուսը «Աերոավտոբուս» թեմայի վերաբերյալ ստորեւ բերված հարցազրույցում.

**ՇՊԻԳԵԼ.** «Արդյոք Ձեզ իսկապես կանհանգստացնե՞ր, եթե վերջում, անհաջողության դեպքում, մի քանի միլիարդ մարկ հարկային գումար ընկներ ջուրը»:

**ՇՏՐԱՍԻՄ.** «Դուք ելնում եք նախապայմաններից, որոնց իրականանալու համար այսօր նկատելի հիմքեր չկան: Ես չեմ սիրում պատասխանել «եթե...» հարցերին: Հարցրեք ինձ, թե կարող եմ մի իրավիճակ պատկերացնել, որի դեպքում Կարմիր բանակը եւ ԱՄՆ-ի ռազմական ուժերը ուսուսի կկռվեն: Եվ ես Ձեզ կասեմ. Այո, Մարսից եկածների ներխուժման դեպքում՝ երբ Մարսից հզոր զորամիավորումներ կժամանեն Երկիր»:

Ապագա կանխագուշակելու նկատմամբ հակակրանքը միայն Շտրաուսին չէ հատուկ, այն միջազգային տարածում ունի: Ամերիկյան հեռուստալրագրող Բարբարա Ուոլթերսը՝ իր արհեստում լավագույն վճարվողը, մի «ի՞նչ կլիներ, եթե...» հարցի պատճառով մերժվեց արքայազն Ֆիլիպի կողմից. «արդյոք դուք չի՞ք ցանկանա քաղաքական գործիչ լինել, եթե արքայազն չլինեիք»: Վերջինիս պատասխանը ամենեւին քննարկման առարկա չէ: Բարբարա Ուոլթերսը դրանից հետեւություն արեց, որ հիպոթետիկ հարցերը քաղաքական գործիչների նման ողջամիտ մարդկանց համար չեն, եւ միայն այն մարդկանց դեպքում են տեղին, ովքեր արդեն իսկ մասնագիտության բերումով հաճույքով են գործի դնում իրենց երեւակայությունը, օրինակ՝ արվեստագետների դեպքում: Ուրեմն այս հարցը տեղեփոխեք ֆելիետոնային ասեկոսների ոլորտ:

Անվստահությունը նաեւ արթնանում է, երբ հարցվող զգում է, որ մի կեղտոտ թաս են հրում հենց իր ոտքերի առաջ, որպեսզի ինքն ուղիղ մեջն ընկնի: Այս հռետորական թակարդները խեղաթյուրված հարցերի միջոցով են տրվում, դրանք կանխորոշում են պատասխան, որը չեն ցանկանում տալ, դրանք սպասում են Այո կամ Ոչ պատասխանի, եթե նույնիսկ Ոչ-ն ու Այո-ն տեղին չեն: Ազատ դեմոկրատական կուսակցության քաղաքական գործիչ Օտտո Գրաֆ Լամբսդորֆը սիրում է մեջբերել այդ տեսակի մի օրինակ. «Ճի՞շտ է, որ դուք այլեւս չէք ծեծում Ձեր կնոջը: Ապա այս հարցին այո կամ ոչ պատասխանե՞ք»: Պրակտիկայում այսպիսի հարցերը հաճախ նրբորեն ծպտվում են, չնայած դրան դիտավորությունը եւ տրամադրությունը նկատվում են:

Վերջապես լրագրողին ձախորդություն է սպասվում, երբ նա բառերով եւ ենթահարցերով ծանրաբեռնված հարց է տալիս: Նրան որպես կանոն մասամբ են պատասխանում: Յետաքրքիր է, այսպիսի կրկնակի եւ եռակի հարցերին հետեւել մամուլի ասուլիսների ժամանակ. արդյո՞ք լրագրողը նկատում է, որ իր զրուցակիցը ամենը չի մտապահում: Թե՞՞ նա արդեն հարցնելու ժամանակ մոռացավ՝ ինչ էր ուզում իմանալ:

Հարցը կրկնելը, մյուս կողմից, կարող է ուժեղացնել կապը, շփումը, ասում են հոգեբանները: Դրանով հետաքրքրությունն է ցուցադրվում: Հարցվողը դրական է արձագանքում նորմալ դեպքում: Նրբանկատ թեմաների ժամանակ աներեսաբար հարցնելը երբեմն ճիշտ հակառակ ազդեցությունն է ունենում: Հարցվողը կասկածոտ է դառնում: Նա սահմանափակում է սկզբում պարզ արտահայտածը, երկրորդ արձագանքը զգալիորեն ավելի թույլ է, ինչպես ցույց է տալիս հետեւյալ օրինակը, որը տեղի է ունեցել «Բայերիշեր

Ռուսոնոմիկ»-ի մի հաղորդման համար ձայնագրման ժամանակ: Հարցազրույցը հիվանդանոցներից մեկի տնօրենի հետ էր.

**ՀԱՐՑ.** «Պարոն պրոֆեսոր, Դուք նոր ասացիք, որ կլինիկաներում կիրակի օրերին երեխաների մահացությունը ավելի մեծ է, քան աշխատանքային օրերին, ես Ձեզ ճի՞շտ եմ հասկացել, »:

**ՊՐՈՖԵՍՈՐ.** «Դա ճիշտ է որոշակի առումով: Եթե կիրակի օրը ավելի քիչ երեխաներ են ծնվում, ապա հարաբերական ետծննդյան մահացությունը դեռ չի նշանակում, որ բացարձակ թվերով ...»

## Ազատ ձեռքերով հարցուփորձ անել

Ինչքանով է սպառնալի ազդում ծոցատետրի ու մատիտի տեսքը: Դա վախեցնում է, կարծում են Ամերիկայում՝ այնտեղ, որտեղ հնարվել է թերթային հարցազրույցը: Լրագրողը զրույցի ժամանակ հնարավորինս պետք է խուսափի իր սովորական գործիքներից եւ գրիչը տառացիորեն դեմ չանի զոհի կրծքին: «Եթե նշումներն անհրաժեշտ են, արեք աննկատ», - ասում է «New Survey Journalism» դասագիրքը: «Էլ ավելի լավ է ուշադիր լսել եւ գրի առնել կարեւորագույն կետերը հարցազրույցն ավարտելուց հետո»: Ջրույցի ժամանակ պետք է նույնիսկ խուսափել «հարցազրույց» բառից:

Նույնն է ավանդվում նաեւ Միացյալ Նահանգների շատ լրագրողական դպրոցներում: «The Craft of Interviewing» գիրքը, ի հաստատումն դրա, պրակտիկայից, այլոց թվում օրինակ է բերում բեսքսելինների հեղինակ Թրուման Քեյփոթից: Նրա փորձը. երբ մարդիկ գիտակցում են, որ իրենց բառերը գրի են առնվում, նրանք վստահությունը կորցնում են, պարտադրված են զգում՝ ասելու այն, ինչ ուզում է լսել լրագրողը:

Թրուման Քեյփոթը այդուհետեւ աշխատում էր առանց ծոցատետրի եւ ձայնագրիչի: Նա վարժեցնում էր իր հիշողությունը թեսթային հարցազրույցներում, որոնք նա վարում էր «ազատ ձեռքով», ապա գրավոր շարադրում եւ վերստուգում՝ ձայնագրությունների հետ համեմատելով: Երբ նրա՝ հիշողությամբ կատարված արձանագրությունները 97% ճշգրտության հասան, նա նորից ձեռնամուխ եղավ լրագրային հետաքննություններին. ցերեկները հարցուփորձ էր անում վկաների, իսկ գրառումները՝ կատարում էր երեկոյան՝ հյուրանոցում:

Աշխատանքային այս ոճը խորհուրդ էր տրվում նախկինում նաև Գերմանիայում: Վալտեր Յայդեն 1941-ի իր «Ժուռնալիստիկայի ձեռնարկում» նկատի ուներ սակայն ոչ միայն հարցվողներին, այլև լրագրողների ինքնավստահությունը:

«Չարցնողը չպետք է հարցվողի առջև նստի որպես փոքր մարդ՝ գրառման պատրաստ մատիտով եւ յուրաքանչյուր բառ սղագրի: Զրույցի ժամանակ, որը հարցվողին առանց այն էլ հիշեցնում է հասարակության մասին եւ նրան կրկնակի զգույշ դարձնում, ընդհանրապես պետք է հրաժարվել գրի առնելուց»:

Այսօր քաղաքական գործիչները կամ գիտնականները եռակի զգույշ կարծազանքեին, եթե նրանց առջև նստած լիներ դատարկ ձեռքերով մեկը: Չավանաբար անմիջապես կիտետելեր հարցը. «Դուք նշումներ չե՞ք անում»: Իսկ խմբագիրները մղձավանջային երազներ կտեսնեին հրապարակվող հերքումների մասին, եթե նրանք ենթադրեին, որ նյութը գրվել է լրագրողի հիշողության մեջ տպավորված հարցազրույցի ոչ ստույգ պատառիկներից:

Չրապարակայնորեն արտահայտվելու գաղտնի վախը թեև դեռ շատ տարածված է, սակայն լրագրողների համար իրադրությունն այլ է դարձել:

Նախկինում բավական էին իմաստային առումով ճիշտ արված մեջբերումները: Այսօր ճշգրտություն է պահանջվում, զնալով՝ ավելի շատ ճշգրտություն: Չարցվողները եւ ընթերցողը սովորել են ճշգրտությանը, որը հնարավոր է դարձնում ձայնագրիչը: Գրողների ինքնագիտակցությունն էլ է անշուշտ բարձրացել՝ Չայդնի ժամանակների հետ համեմատած: Մատիտը կամ խոսափողը Ֆալլաչին փոքրիկ մարդ չեն դարձնի, ավելի շուտ փոքրիկ մարդուն՝ Ֆալլաչի:

Գաղտնի նշումներ անելը կարող է ճիշտ լինել միայն բացառիկ դեպքերում: Նորմալ դեպքում հարցազրույցը լրտեսում չէ: Անագնիվ է թվում դիմացինի մոտ ձեւացնել՝ իբր ընդամենը չպարտավորեցնող զրույց է տեղի ունենում, համեմայն դեպս, ամենօրյա հարցուփորձերի ժամանակ: Չարցազրույցը հարցազրույց է: Դա պետք է իմանա նաև հարցվողը: Առանց բարձրաձայն ասելու ուժի մեջ է մնում այն, ինչ ամերիկյան ոստիկանները պարտավոր են հայտարարել (ինչպես ֆիլմերում) ձերբակալության պահին. այն ամենը, ինչ այժմ կասվի, կարող է օգտագործվել ձեր դեմ: Չամենայն դեպս այն պետք է տպագրվի:

Անշուշտ, գրի առնելը ձանձրացնող է, բացակայում է հայացքների կրոնտակտը: Աննկատ է մնում մարմնի լեզուն. հաջորդ խորհուրդը՝ միայն առանցքային նախադասությունները գրի առնել, հեշտ է տալ, բայց դժվար է կատարել: Ահա նախադասությունները խոստումնալից

են սկսվում, գրիչը սկանում է թղթի վրայով, իսկ հետո նախադասությունը ավարտվում է ոչ էական մի բանով: Կամ մի քանի երկրորդական արտահայտություններին հանկարծ մի կարելուր ասելիք է հետևում, անսպասելիորեն նախորդածը նույնպես հետաքրքիր է դառնում: Այժմ լրագրողը պետք է շտապի ետ բերել այն, ինչը չի գրառել: Վերջը. մեծամասամբ չափազանց շատ է գրառվում, իսկ հարցազրույց վարողը դեռ այն զգացումն ունի, որ չափազանց քիչ էր:

Ընդհանրապես ինչի՞ համար է ծոցատետրի ու մատիտի հետ կապված այդ չարչարանքը: Ինչու՞ հենց չմիացնել արձանագրող մեքենան՝ էժան ձայնագրող սարքը: Տեխնիկայի նկատմամբ վախը մեծամասամբ անհիմն է: Սարքը, ըստ մեր ցանկության, գրանցում է յուրաքանչյուր բառ: Եվ այստեղ սկսում են դժվարությունները:

Հարցազրույցը թափ է առնում, գրելու դադարները վերանում են, զրուցակիցը տեսադաշտում է: Բայց էլեկտրոնիկան ժամանակ չի խնայում: Հակառակը: Հարցնելու ժամանակ ձեռքբերվածը կորչում է մշակման ժամանակ: Ահա նստած ես սարքի առաջ եւ՝ միացնում ես, եւ՝ մեքենագրում, եւ՝ հետ տալիս ժապավենը. դա հաճախ ժամեր է տևում: Մի կարճ հարցազրույցն անգամ սարսափելի երկար կարող է թվալ, երբ դրանից հետո ստիպված ես արտագրել: Հիմնական կանոնը.

▶ Երկու ռոպե հարցազրույցը = մեքենագրված մեկ էջի:

Վայրկյաններով ճշգրիտ լինելու համար. ռադիոյի հաղորդավարի նորմալ արագությամբ մեկ ռոպե 50 վայրկյանից ստացվում է երեսուն տող՝ երեսունական զարկով, դրանք բառացի թղթին հանձնելու դեպքում: Մեծ թերթերը չեն խուսափում այս ջանքից: Վեցժամյա հարցազրույցը, որը 1978թ. վարեց «Փլեյբոյը» Ռուդոլֆ Աուզթայնի հետ, գրի առնվելուց հետո կազմեց 160 էջ (տողում 40 նիշով): Եվ դեռ ավելորդն արդեն բաց էր թողնվել: Դրանից 40 էջ առանձնացվեց տպագրության պատրաստ օրինակի համար: Այսպիսի դեպքերում մեծ ջանքերով է հղկվում եւ ձեւավորվում. յուրաքանչյուր հարցազրույց լի է կրկնություններով ու ավելորդ բառային բեռով, խոստումներով ու քերականական վրիպումներով: Մյուս կողմից՝ նախադասությունները սկսվում են ու չեն ավարտվում, վանկերը կուլ են տրվում կամ մոռացվում: Նախադասություններ, որոնք ավելի քան 20 կամ 30 տող կզբաղեցնեին, անջատում են պահանջում:

Համառոտելն արդեն դժվար է, բայց հետո էլ դեռ պետք է բաց թողնվածը, կուլ տվածը լրացվի հարցվողի ոճով: Վերջում անհրաժեշտ է դառնում ամբողջ հարցազրույցը «թեմատիկորեն վերակար-

գավորել», ինչպես դա ձեւակերպել է Ֆելիքս Շմիդտը: Այլ խոսքերով՝ հարցազրույցի մասերը պետք է տեղափոխվեն, նոր անցումներ պետք է գտնվեն՝ հարցերի կարմիր թելը կրկին կանոնավոր արձակելու համար, որը նույնիսկ կարգապահ հռետորների մոտ է հաճախ խճճվում:

Արդյո՞ք հարցազրույցի այսպիսի գեղարարությունը հանդուրժելի է: Ի՞նչն է ընդունված եւ թույլատրված: Ինչպիսի՞ կանոններ են գործում հարցախաղի համար Բոննում եւ ոչ միայն այնտեղ: Դրա մասին մի հարցազրույց՝ Գերմանիայի Սոցիալ-դեմոկրատական կուսակցության գործիչ, դոկտոր Զանս-Յոխեն Ֆոգելի հետ:

Հարցվելու մասին հարցուփորձը տեւեց 10 րոպե 56 վայրկյան: Արագ գործ: Դրանից թղթի վրա ստացվեց մեքենագրված համարյա վեց էջ: Ստորեւ, ձախ կողմում՝ բնագիր ձայնագրությունը, աջ կողմում՝ Ֆոգելի կողմից հավանության արժանացած սեղմված ձեւակերպումը: Համառոտումները առաջին հերթին կատարվել են այնտեղ, եւ դա թախանձալի խնդրանք է յուրաքանչյուր խմբագրի, որտեղ համառոտելը ամենաքիչ պրոբլեմայինն է՝ հարցերում:

## Հարցազրույց հարցազրույցի մասին

Երբ խոսքը գիր է դառնում...

*Բոննյան կանոնները  
հարց ու պատասխանի խաղի համար՝  
ըստ դոկտոր Զանս-Յոխեն Ֆոգելի  
(Գերմանիայի Սոցիալ-դեմոկրատական կուսակցություն)*

(ձախ կողմում՝ մագնիտոֆոնից գրանցվածը, աջ կողմում՝ խմբագրված եւ հեղինակագործած տարբերակը)

**ՀԱՐՑ.** «Այսպիսով, պարոն դոկտոր Ֆոգել, ի՞նչ կարծիքի եք հարցազրույցին մասնակցելու մասին: Որպես քաղաքական գործիչ, Ձեզ համար ո՞րն է իմաստը, ո՞րն էք Դուք համարում հարցազրույցի նշանակությունը, արժեքը: Որ հարցուպատասխա-

**ՀԱՐՑ.** «Որպես քաղաքական գործիչ, Ձեզ համար ո՞րն է հարցազրույցի իմաստը, արժեքը: Արդյո՞ք այն է, որ հարց եւ պատասխան փոխանակելու խաղում ընթերցողի համար թեման ավելի պարզ ու համատեսելի է դառնում»:

նի փոխանակային խաղի միջոցով ընթերցողի համար որեւէ թեմա ավելի պարզ, հասկանալի ու համատեսելի<sup>6</sup> է դառնում»:

**ՖՈԳԵԼ.** «Այո: Ես կարծում եմ, որ հարցվողները, հատկապես քաղաքական գործիչները, երբեմն հակված են, եւ դա կախված է նրանց մասնագիտությունից, առավելագույնս ճշգրիտ պատասխաններ չտալ, այլ մի փոքր անորոշության մեջ թողնել, մեկնաբանման հնարավորություն թողնել, նաեւ խորհրդավոր արտահայտվել: Դա հարցազրույցի ժամանակ, հատկապես երբ հարցազրույց վարողը գիտի նյութը, որի վերաբերյալ նա հարցեր է տալիս եւ երբ հարցնողը մի տեսակ հոգեւոր առաջնորդ է ներկայանում, շատ, շատ ավելի դժվար է: Անմիջական տարերային հարցազրույցները կարող են ահավոր մերկացնող լինել, «դիմակազերծող» մոդայիկ բառից խուսափելու համար. բառի ընտրության, ասելու ձեւի միջոցով եւ իհարկե՛ նաեւ իմաստի միջոցով...»

**ՀԱՐՑ.** «Հիմա ես անմիջապես կանցնեմ հաջորդ հարցին, որը մեզ համար ամենադժվարն է: Տարիներ առաջ, նախկինում, ամեն ինչ միայն մատիտով էր գրի առնվում, այդ ժամանակ անշուշտ շատ ավելի դժվար էր արձանագրել մեջբերման սխալներ

**ՖՈԳԵԼ.** «Հարցվողները, հատկապես՝ քաղաքական գործիչները երբեմն հակված են ոչ ամենայն ճշգրտությամբ պատասխանելու: Նրանք սիրում են մեկնաբանման հնարավորություն թողնել: Սիբիլեի նման՝ խորհրդավոր արտահայտվելը անմիջական, տարերային հարցազրույցի ժամանակ շատ ավելի դժվար է, հատկապես, երբ հարցազրույց վարողը գիտի նյութը եւ մի տեսակ հոգեւոր առաջնորդ է ներկայանում: Հարցազրույցները կարող են ահավոր մերկացնող (խուսափում եմ «դիմակազերծող» մոդայիկ բառից) լինել, բառի ընտրության, ասելու ձեւի միջոցով, իհարկե՛ նաեւ իմաստի միջոցով»:

**ՀԱՐՑ.** «Դուք թու՛յլ եք տալիս, որ Ձեզնից արված մեջբերումները հղկվեն կամ քերականորեն ուղղվեն՝ իհարկե պայմանով, որ իմաստը չի խեղաթյուրվի: Խոսքը չէ՞ որ գիր չէ: Խոսքի ժամանակ կրկնությունները,

րը: Այժմ գրեթե ամեն ինչ առկա է ձայնագրությամբ: Ինչքանո՞վ եք Դուք թույլատրում, ինչքանո՞վ եք Դուք թույլ տալիս, որ Ձեզինց արված մեջբերումները՝ իհարկե իմաստը չխեղաթյուրելու նախապայմանով, ըստ անհրաժեշտության հղկվեն կամ քերականորեն փոփոխվեն: Չէ՞ որ խոսքն ու գիրը նույնը չեն: Գրելու ժամանակ... Է՛հ, խոսելու ժամանակ Դուք անհրաժեշտության դեպքում կարող եք Ձեզ կրկնություն թույլ տալ, Դուք դա ստիպված եք անել՝ հասկանալի լինելու համար: Այժմ գրելու ժամանակ դա ուզում են կրճատել: Որքանո՞վ է թույլատրելի, (իհարկե իմաստը չփոխելու պայմանով), որ խմբագիրը տեքստում միջամտի»:

**ՖՈԳԵԼ.** «Այստեղ պետք է նորից տարբեր խաղատեսակներ տարբերակել: Ամեն դեպքում, մեզ մոտ Բոննում, օրենք է դարձել, որ նման ձայնագրված հարցազրույցի հիման վրա ստեղծված տեքստերը մեծամասամբ հեռագրի կամ լրագրերների միջոցով դեռ խմբագրման ավարտից առաջ ժամանակին տրամադրվեն հարցվողին: Նա պետք է միայն խմբագրական փոփոխություններ կատարի, իհարկե նա կարող է նաեւ, այսպիսին է խաղի կանոնը, ըստ էության փոփոխություններ կատարել: Իսկ վերջում հարցնողը եւ հարցվողը՝ երկուսն էլ որո-

ւստ անհրաժեշտության, ըմբռնման համար նույնիսկ անխուսափելի են: Ապա դրանք պետք է կրճատվեն: Որքանո՞վ են տեքստի մեջ այսպիսի միջամտությունները թույլատրելի ձայնագրիչի ժապավենից գրամեքենայի վրա փոխադրելիս»:

**ՖՈԳԵԼ.** «Մեզ մոտ՝ Բոննում, օրենք է դարձել ձայնագրված հարցազրույցի խմբագրված գրառումը հեռագրի կամ լրագրերների միջոցով խմբագրման ավարտից առաջ ժամանակին հարցվողին տրամադրելը: Խմբագիրը պետք է միայն խմբագրական փոփոխություններ կատարի, նա կարող է, սակայն, նաեւ ըստ էության փոփոխել: Հետո հարցազրույց վարողը եւ հարցվողը որոշում են՝ արդյո՞ք տեքստը առկա ձեւով պետք է լույս տեսնի: Եթե չկա պայմանավորվածություն, ապա լրագրողին պետք է իրավունք տրվի, որ նա առանց հարցնելու տեքս-

շուն են, թե արդյո՞ք ամբողջը լույս տեսնելու է: Եթե չկա պայմանավորվածություն, այլ ասվում է. «Թողնում ենք Ձեր հայեցողությանը», ապա հարցազրույց վարողին պետք է իրավունք տրվի, առանց հարցնելու, տեքստը լեզվական տեսակետից հղկել: Երբեմն դա ճիշտ է: Քանի որ ոմանք կգարմանային, եթե պարզապես գրվեր այն, ինչ իրենք ասել են: Ժամանակի ընթացքում որոշ փորձ են ձեռք բերում, բայց եթե դա չունես, ապա այն, ինչ նորմալ է ասվել, եւ տրամաբանական էլ հնչում է, հաճախ կարդացվում է այնպես, կարծես տվյալ անձը լեզվին չի տիրապետում: Այստեղ նախադասության սկիզբն է պակասում, այնտեղ վերջում բացակայում է բայը: Այսպիսով, արդեն իսկ հարցվողի շահերից ելնելով, հարցազրույց վարողին լռելյայն պետք է լիազորել, որ խմբագրորեն... որ նա խմբագրական փոփոխություն կատարի»:

**ՀԱՐՑ.** «Ընդհանուր առմամբ կա՞ն հարցազրույցի տեխնիկաներ, որոնք Դուք անպատշաճ եք համարում: Ձեր զգացողությունն ինչպիսի՞ն է. Ձեզ հետ ընդհանուր առմամբ պատշաճ են վարվում»:

**ՖՈԳԵԼ.** «Ես զգում եմ, որ ընդհանուր առմամբ ազնիվ են վարվում, այո: Նկատի ունեն, եթե

տը լեզվական տեսակետից հղկի: Դա կարող է լիովին հարցվողի շահերին համապատասխանել: Քանի որ ոմանք կգարմանային, եթե ամեն ինչ այնպես հրատարակվեր, ինչպես ասվել է: Փորձ չունեցողների նորմալ ասածը, որը նաեւ տրամաբանական է հնչում, հաճախ այնպես է կարդացվում, կարծես նա լեզվին չի տիրապետում: Կարող է պակասել նախադասության սկիզբը, կամ վերջում՝ բայը: Արդեն իսկ հարցվողի շահերից ելնելով՝ պետք է լռելյայն լրագրողին լիազորել՝ խմբագրական փոփոխություններ կատարել»:

**ՀԱՐՑ.** «Ձեր զգացողությունն ի՞նչ է ասում. Ձեզ հետ ընդհանուր առմամբ պատշաճ են վարվում»:

**ՖՈԳԵԼ.** «Այո: Եթե դժգոհություն կա, ապա մեծամասամբ

դժգոհությունն է առաջանում, ապա ավելի շուտ այն դեպքերում, երբ համաձայնեցված տեքստում, որն ի վերջո ստացվել է հարցազրույցի վերջին պահին, այն պնդմամբ՝ իբր տեղը չի հերիքել կամ ավելի անհետաձգելի մի բան էլ է առաջ եկել, հենց այն պատասխանը կամ հարցն է դուրս մնում, որում ինքդ հատուկ շահագրգռված ես...»

**ՀԱՐՑ.** «Այսպիսով, հարցազրույցը Ձեզ համար լավ միջոց է որբել գործի հանգամանքները, հնարավոր է, բարդ հանգամանքները...»

**ՖՈԳԵԼ.** «Այո...»

**ՀԱՐՑ.** «... խոսքի եւ պատասխանի միջոցով պարզաբանելու, պարզ ներկայացնելու»:

**ՖՈԳԵԼ.** «Դա ինձ համար միշտ նաեւ փորձաքար է, երբ ինձ չի հաջողվում որբել հանգամանք, կարծիք, տեսակետ պարզաբանել հարցազրույցի ժամանակ հարցնողին, ապա ես մեկ անգամ եւս պետք է մտածեմ: Կամ ես դեռ նյութը լավ չեմ ուսումնասիրել, կամ դրանում իսկապես տրամաբանական անճշտություն կա: Նման դեպքում դա միանգամայն կարելոր թեսթ է»:

այն դեպքում, երբ համաձայնեցված տեքստից վերջին ռուպեին, տեղը չհերիքելու պատճառաբանությամբ, հարց եւ պատասխան են ջնջում, որոնցում ինքդ հատկապես շահագրգռված ես»:

**ՀԱՐՑ.** «Այսպիսով, հարցազրույցը Ձեզ համար լավ միջոց է՝ որբել գործի բարդ հանգամանքները հարցի ու պատասխանի միջոցով պարզ ներկայացնելու»:

**ՖՈԳԵԼ.** «Հարցազրույցն ինձ համար միշտ նաեւ փորձաքար է: Եթե ինձ չի հաջողվում որբել հանգամանք կամ կարծիք պարզաբանել հարցազրույց վարողին, ապա ես պետք է այդ մասին մեկ անգամ եւս մտածեմ: Այդ դեպքում կամ ես ինքս դեռ նյութը լավ չեմ ուսումնասիրել, կամ այն տրամաբանական անճշտություն է պարունակում»:

## ԻՆՋՆ Է արգելված եւ ԻՆՋՆ Է առաջարկված

Դոկտոր Ֆոգելը դեմ էր զրույցը ձայնագրելուն: Համաձայնությունը ամեն դեպքում պետք է տրված լինի՝ խոսքով կամ լռեյայն: Դա պահանջում են քաղաքավարությունն ու քրեական օրենսգիրքը: Սարքը գաղտնի միացնելը, խոսափողը՝ կոճակի անցքում, 201 հողվածի համաձայն, կլիներ «խոսքի գաղտնիության խախտում»:

Այն սպառնում է.

(1) Մինչեւ երեք տարի ազատազրկումով կամ դրամական տուգանքով պատժվում է նա, ով առանց լիազորության.

1. ձայնագրում է ուրիշի ոչ հրապարակայնորեն ասված խոսքը ձայնակրի վրա կամ

2. այդպես պատրաստված ձայնագրությունը օգտագործում է կամ երրորդ անձի է տրամադրում:

(2) Պատժվում է նաեւ նա, ով առանց թույլտվության

1. ուրիշի ոչ հրապարակայնորեն ասված, նրա իմանալու համար չարտոնված խոսքը գաղտնի լսում է սարքով.

2. 1 պարբերության 1 կետի համաձայն ձայնագրված կամ 2 պարբերության 1 կետի համաձայն գաղտնի լսած, ոչ հրապարակայնորեն ասված ուրիշի խոսքը հրապարակայնորեն հաղորդում է բառացի տեքստով կամ նրա էական իմաստով:

[ ... ]

Հանցանքը թերեւս հետապնդվում է միայն դիմումի առկայության դեպքում:

Մի այլ վտանգ. Ի՞նչ կլինի, եթե հարցվողը հարցազրույցի միայն մի մասը թույլատրի՝ հրապարակման: Եթե նա հանկարծ ասի. «Շարունակությունը ձայնագրված է, սակայն՝ գաղտնի է, միայն Ձեզ համար»:

Դա հաճախ է պատահում: Օրինակ, սովորություն է դարձել, որ քաղաքական գործիչները խմբագրություններին տրվող հարցազրույցներում խոսեն բաց, սակայն «ոչ հրապարակման համար» եւ այդպիսով, ոչ հրապարակայնորեն բոլորի մասին: Գաղտնիությունը

պահպանվում է: Դա լրագրողների համար պատվի գործ է: Ինչ կարելի է պաշտոնապես ասել եւ գրել, հետո համաձայնեցվում է: 1976 թ. մի անգամ հինգ լրագրողներ խախտեցին այս համաձայնությունը: Դա նրանց համար նաեւ պատվի հարց էր: Դրանից մի գեներալական սկանդալային իրադարձություն ստացվեց:

Դեպքը. օդային նավատորմի հրամանատար Վալտեր Կրուպինսկին եւ նրա տեղակալ Կարլ-Յայնց Ֆրանկեն լրագրողների էին հրավիրել ճաշի, որի ժամանակ «ոչ պաշտոնապես» քննարկվում էին առաջիկայում սպասվող խնդիրները: Այն ժամանակ, այլ հարցերի թվում, խոսվեց նաեւ այն մասին, թե արդյո՞ք այդ արմատական գնդապետ Յանս-Ուլրիխ Ռուդելը պետք է հրավիրվեր ռազմաօդային ուժերի ավանդական հանդիպմանը: Յրավիրման դեմ ոչինչ չկա առարկելու, համարում էին գեներալները, «քանի դեռ Բունդեսբազում նստած են ձախ ծայրահեղականներ եւ կոմունիստներ, որոնք նախկինում Սոսկվայում էին, ինչպես Յերբերտ Վեյները»:

Լրագրողներն այս խոսքերը փոխանցել էին խղճի թելադրանքով: Իսկ Կրուպինսկին ու Ֆրանկեն ստիպված էին մեխից կախել իրենց գեներալական գլխարկները եւ թողնել ծառայությունը: Արդյո՞ք լրագրողները խախտել էին պայմանավորված գաղտնիությունը: Գերմանական մամուլի խորհուրդը թիկունք եղավ նրանց եւ վճարականությամբ մերժեց մատնության վերաբերյալ կշտամբանքը: Խղճի թելադրանքով վարվելու պատճառաբանությունը ընդունվեց:

Ընդ որում մամուլի խորհրդին պարզ դարձավ, որ այս թեմայի շուրջ դեռ հարկավոր է մտածել: Այդ պատճառով այն խոստացավ վերանայել իր կանոնագիրը եւ խմբագրական աշխատանքի հրահանգները՝ «մասնագիտական նորմերի եւ խղճի միջեւ նորից տեսանելի դարձած լարվածության առիթով»: Թե երբ է խղճի թելադրանքով վարվելու պատճառաբանությունը բավականաչափ լուրջ գաղտնիությունը խախտելու իրավունքի համար, դա դեռ հազիվ թե որեւէ կանոնագիր կարողանա սահմանել. դա դեպքից դեպք պետք է նորից որոշել:

Այս տեսակետից գերմանական լրագրությունը կարծես մինչ այժմ խոհեմ է եղել: Գաղտնիության խախտումները հազվադեպ են: Երբ ոստիկանության պետը խնդրում է մի լուրջ հանցանքի դեպքում հետապնդման մանրամասները դեռ չիրապարակել, երբ քաղաքական գործիչը հայտնում է այն որոշումների շարժառիթները, որոնք դեռ նոր պետք է պաշտոնապես հրապարակվեն, երբ այսպիսով գաղտնիության հիմքերը նպատակահարմար եւ պարտադրող են, լրագրողը հանգիստ խղճով կարող է լռել եւ կլռի: Նրան է վերաբերում նաեւ այն, ինչ մյուսխեսնյան վիրաբույժ պրոֆեսոր Վոլֆգանգ Ցենկերը մի

անգամ մի դասախոսության ժամանակ պահանջել է բժշկից. «Ամեն ինչ, ինչ նա ասում է, պետք է ճշմարիտ լինի: Բայց պարտադիր չէ ասել այն ամենը, ինչ ճշմարիտ է»: Ահա մի հրաշալի նշանաբան մանուկի խոսակների համար, որը պետք է պատից կախել:

Սակայն բարոյագիտությունից վերադառնանք ձեւին եւ ոճին:

## Արձանագրության այլընտրանքը

### Սղագրության փոխարեն հոգեգրություն

Ենթադրենք՝ բոլորն ամեն ինչից գոհ են: Հարցերի ու պատասխանների արձանագրությունը ընթեռնելի է ու կենդանի, հաստատված ու խմբագրին հաճելի: Ոչ մի էական ասելիք չի բացակայում: Հարցազրույցը փաստաթուղթ է դարձել: Սակայն այն բացթողուններ ունի: Բաց են թողնված անկարելոր թվացող, բայց գուցե բնորոշ հատվածները: Չտպագրված է մնում չասվածը. մարմնի լեզվով արտահայտվածը: Չեն ամրագրվել զրույցի տրամադրությունը, մթնոլորտը, գույնը: Մնում են բառեր՝ առանց խորքի, երկխոսությունների՝ առանց կուլիսների, դատարկ բեմի առաջ:

Չմոռանանք, մենք դեռ խոսում ենք զրույցի բառային հղկված արձանագրության մասին, «Շպիգելի» ոճով՝ հարց - պատասխան:

«Դա նման է ֆիլմի սցենարի, ռադիոպիեսի կամ Շիլլերի դրամայի, որ մենք պետք է կարդանք դպրոցում. բայց այն պետք է լսել կամ տեսնել», - գրում է Հանս-Յոախիմ Նեթցերը: «Տպագրված հարցազրույց. սա նշանակում է հարցազրույցի սղագրություն: Եթե այն տպագրվում է առանց խմբագրվելու, ապա մեր աչքը սայթաքում է, մեզ խանգարում է նախադասության անհարթ կառուցվածքը, քերականության պակասը: Եթե խմբագրվում է, ապա այն չափազանց սահուն է, պակասում են դադարները, ա՛հ-երն ու օ՛հ-երը, մենք հաղորդակից չենք դառնում պատասխանի հապաղումին, որը երբեմն ավելին կարող է արտահայտել, քան պատասխանը»:

Թեև երբեմն կարելու է միայն ասածը, բայց խնդրեմ. Նեթցերը համարում է, որ նման արձանագրությունները ամենեւին էլ պետք չէ տպագրել, եւ միայն նա չէ այդ կարծիքին. «Ֆրանկֆուրտեր ալգեմայնե»-ն «Շպիգել»-ի ոճով հարցազրույցները տպագրում է միայն բացառիկ դեպքերում, անշուշտ նաեւ այն պատճառով, որ չի ցանկանում անել այն նույնը, ինչ մնացած բոլորը:

Պատմողական հարցազրույցը շատերին շարադրման ավելի լավ ձեւ է թվում: Ուղղակի եւ անուղղակի խոսքի, մեջբերումների ու հաղորդագրային հատվածների փոփոխական խաղը թույլ է տալիս կրճատել գրուցակցի շատախոսությունը, համառոտել մի քանի հիմնական նախադասություններ, հնուտ գրողներին այն ազատություն է տալիս՝ արձանագրությունը դարձնելու մարդու հոգեզրույթուն, հարցազրույցի ֆելիետոնային նկարագրություն:

Ասվածի ամփոփված վերարտադրումը ունի թղթակցության կամ նկարագրական ռեպորտաժի բոլոր առավելությունները, մնալով սակայն հարցազրույց, որը դրանից զատ ավելի քիչ տեղ է զբաղեցնում, քան արձանագրությունը:

Որպես այս մեթոդի օրինակ, Օրիանա Ֆալլաչիի հարցազրույցից մի հատված՝ Վիետնամի ոստիկանության սարսափազդու գեներալ Նգույեն Նգոկ Լուանի հետ, այն մարդու, որը լրագրողների առաջ սեփական ձեռքով՝ առանց դատավճռի, առանց հարցաքննության գնդակահարեց մի վիետկոնգցու.

*«Դուք նույնպե՞ս բուդդայական եք, գեներալ»:*

*«Մադամ... Դուք կարող եք ինձ նաեւ հարցնել, թե արդյոք ես հավատո՞ւմ եմ Աստծուն, մադամ»:*

*«Դուք նրան հավատո՞ւմ եք գեներալ»:*

*«Ոչ, մադամ»:*

*«Իսկ ինչի՞ն եք հավատում, գեներալ»:*

*«Ծակատագրին, մադամ: Օ՛հ, այս ցավը: Quelle douleur!»:*

*Ու հանկարծ անդեմ այս դեմքը ինչ-որ մարդկային բան ստացավ, մի ցավագին ծամածռություն թեքեց բերանը, որը բացվեց իր ամբողջ անվայելուչ լայնությամբ՝ ցույց տալու համար սակավ կանաչ ատամների մի շարք:*

*«Je m' excuse ... իմ խոցը»:*

*Եվ այդպես, ինձ իր սակավ կանաչ ատամները ցույց տալով, նա տեղում մնաց մի քանի վայրկյան: Հետո ճնշեց ցավը, իր թույլ ձեռքը սարդոստայնի պես քնքշորեն սեղմեց մարմնին: Եվ նա ասաց մահամերձի իր այս կարճ վիպերգով, որ նա չափազանց շատ պրոբլեմներից, չափազանց շատ զլխացավանքներից առաջացած տասներկուամատնյա աղիքի խոց ունի: Մի՞թե ես հավատում եմ, որ նրան հաճույք է պատճառում ոստիկան խաղալը: Նա միլիոնատիրոջ ընտանիքից է սերում, մի enfant gate, երեսառած երեխա է, եւ նրան իհարկե պետք չէ այս ողորմելի ռոճիկը, ո-*

*րով նրան մտադրված է վարձատրել կառավարությունը՝  
ամսեկան 25 հազար պիաստր»:*

*(«Մենք, հրեշտակներս ու հրեշներս» գրքից,  
Econ հրատարակչություն)*

Ուղղակի խոսք - նկարագրություն - անուղղակի խոսք: Լրագրող Չայմո Ֆուքսը իր «Գործնական ժուռնալիստիկա» գրքում սա նույնիսկ «իդեալական» կամ ավելի ճիշտ՝ խոսքը վերարտադրելու առավել նպաստավոր եղանակ է համարում: Չայմո Ֆուքս. «Վերարտադրման համակցված ձեւը միացնում է ուղղակի եւ անուղղակի խոսքի առավելությունները, միեւնույն ժամանակ հնարավորության սահմաններում խուսափում դրանց թերություններից... Կանոնը միանգամայն պարզ է. առանցքային նախադասությունները բառացի են մեջբերվում, մնացածը ամփոփվում է սեփական վերաշարադրմամբ»:

Առավել նպաստավոր ձեւը: Թե նկարագրման ո՞ր ձեւն է լավագույնը՝ կախված է հարցազրույցի նպատակից: Պետք է այն վավերագրություն լինի, թե՞ ավելի շուտ նկարագրական ռեպորտաժ: Պատմողական հարցազրույցի դեպքում հատկապես մեծ է նաեւ լեզվական սաթաքումների վտանգը. ուղղակի-անուղղակի խոսքի փոփոխական խաղը կարող է արվեստի գործ դառնալ: Այն կարող է վերարտադրման ամենապարզ ձեւը լինել: Կամ ամենապարզունակը:

## **Գրականություն**

Dovifat, Emil/Wilke, Jürgen,  
Zetungslehre in zwei Bänden, Sammlung Göschen, Walter de Gruyter,  
Berlin - New York 1973

Ecker, Hans-Peter/Landwehr, Jürgen/Settekorn, Wolfgang/Walther, Jürgen,  
Textform Interview, Pädagogischer Verlag Schwann, Düsseldorf 1977

La Roche, Walter v.,  
Einführung in den praktischen Journalismus, List Verlag, München 1995  
(Neuaufgabe)

Schneider, Wolf/Raue, Paul-Josef,  
Handbuch des Journalismus, Rowohlt, Reinbek bei Hamburg 1996

Grundlagen der Fragetechnik, ursprünglich aus Aufsätzen von Elisabeth Noelle-Neumann zitiert, werden in nachstehendem Buch zusammengefaßt und erläutert:

Noelle-Neumann, Elisabeth/Petersen, Thomas,  
Alle, nicht jeder-Einführung in die Methoden der Demoskopie, Deutscher Taschenbuch Verlag, München 1996

Langer, Inghard/Schulz v. Thun, Friedemann/Tausch, Reinhard,  
Sich verständlich ausdrücken, Ernst Reinhardt Verlag, München 1981

Rauter, E. A.,  
Die neue Schule des Schreibens, Econ, Düsseldorf 1996

Reiners, Ludwig,  
Stilkunst, C.H. Beck'sche Verlagsbuchhandlung, München 1991  
(Neuaufgabe)

Schneider, Wolf,  
Deutsch für Profis, Goldmann-Verlag, München 1992

Brady, John,  
The Craft of Interviewing, Writer's Digest Books, Cincinnati/Ohio 1976

Deutsche Journalistenschule (Hrsg),  
Praktischer Journalismus, Ein Lehr- und Lesebuch mit Beiträgen  
namhafter  
Journalisten, München 1963  
Bayerische Staatsbibliothek München, Signatur 665 2508, 65 2225

Hohenberg, John,  
The Professional Journalist, Verlag Holt, Rinehart and Winston Inc., New  
York- London 1973

Warren, Carl,  
Modern News Reporting, Harper & Brothers, New York 1934

IV  
ՌԵՊՈՐՏԱԺ - ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ  
ՌԵՊՈՐՏԱԺ

Տպագրված հեռուստատեսություն  
մեզ պետք է

Ինչպես է ստեղծվում  
Նկարագրական ռեպորտաժը  
Յ. Ու. Քենֆսկու օրինակով

Նկարագրական ռեպորտաժ.  
բնորոշ գիծը

Չետամուտ լինելով մանրամասների  
Փնտրել - տեսնել - հավաքել

Ռեպորտաժի նոր ձևեր  
Խլու՞րդ, թե խցի՞կ

# Տպագրված հեռուստատեսություն մեզ պետք չէ

Ռեպորտաժ. « ... անմիջական իրադրությունը ներկայացնող, մթնոլորտը ներառնող, մեծ մասամբ ականատեսի կարճ հաղորդում իրադարձության վերաբերյալ: Ռեպորտաժը համենատաքար նոր գրական սեռ է: Մի քանի նախորդներից հետո այն ժամանակակից լրագրության հետ գործածության մեջ է դրվել 19-րդ դարի վերջին...»:

Նկարագրական ռեպորտաժ. «հաշվետվություն, որն ուրվագծում է որևէ իրադրության էական կետերը: Լրագրության մեջ դա կատարվում է ռեպորտաժի ոճային միջոցներով, սակայն նկարագրական ռեպորտաժը՝ խորքի պարզաբանմամբ եւ լուսաբանմամբ դուրս է գալիս ռեպորտաժի սահմաններից»:

*(Մայերի հանրագիտարան)*

Կարճ, կարճ, կարճ. արդյո՞ք սա են ցանկանում ընթերցողները: Հեռուստատեսությունն ու մամուլը կարծես հավատում են դրան: Ինչպես «Շպիգելում», այնպես էլ «Շթերնում» հոդվածների ժավալները փոքրացել են, իսկ հեռուստատեսությամբ նույնպես հետապնդում է այն վախը, թե երկար տեքստերի դեպքում հեռուստադիտողները կարող են արագ նյարդայնանալ ու փոխել ալիքը:

Այսուհանդերձ, մենք այժմ փորձում ենք վերահայտնաբերել հին ռեպորտաժը: Սակայն այն փոխակերպվում է, ինչպես ամբողջ լրագրությունը: Նկարագրող ռեպորտաժը, որը նախեսառաջ տալիս է իրադարձության պատկերը եւ որը մնում է մակերեսին, այլևս չի բավարարում, եթե նույնիսկ այն լուսանկարչական ճշգրտությամբ է նկարագրում եւ պատկերավոր տպավորություններ ու տպավորիչ պատկերներ է ամենադիպուկ ձեւով շարում մինյանց կողքի: Սակայն մեզ պետք չէ տպագրված հեռուստատեսություն:

Լրագրողը պետք է կարողանա պատմել, սակայն միեւնույն ժամանակ նա պետք է ներթափանցի իրադարձության խորքը, հայտնաբերի կապերը եւ տեսանլի դարձնի: Հիանալի կլիներ, եթե հաջողվեր գրել այնպես, ինչպես ժամանակին «Ցայթն» էր պահանջում. «...որ ընթերցողը կարծի, թե մասնակցել է իրադարձությանը»: Սակայն նա պետք է նաեւ կարող տեքստը այն զգացողությամբ, թե ինքը ոչ միայն դիտում է, այլև եզրակացության հանգում: Լավ ռե-

պորտաժը հարյուրավոր դիտարկումներ է արձանագրում, ընդ որում՝ դուրս է բերում ամենաէականները: Այն իր ընթերցողների ուշադրությունը հրավիրում է նրանց աչքի առջև անմիջականորեն ընթացող իրադարձություններից ամենակարեւորի վրա: Ռեպորտաժը կարող է երկար լինել, եթե ձանձրալի չէ եւ եթե այն բացում է թեման ու ջուր չի ծեծում: Բայց այդ դեպքում արդյո՞ք ճիշտ է “ռեպորտաժ” անվանումը: Արդյո՞ք այն չպետք է կոչվի նկարագրական ռեպորտաժ: Այս գլխում մենք կգբաղվենք այս հասկացություններով:

Անկախ սահմանումից. շատերին լրահաղորդի (ռեպորտյորի) աշխատանքը թերթում հատկապես մեծ հաճույք է պատճառում: «Այն, - գրել է ժամանակին Էգոն Էրվին Կիշը, - միշտ ամենաազնիվն է, ամենաօբյեկտիվն ու ամենակարեւորը»: Քանի որ միշտ, «նույնիսկ ամենափոքր նշման հիմքում ընկած է պահակախմբի մի երթ, որեւէ ճանապարհ, զրույց ... լրագրողական ուսումնասիրության արդյունքները առաջին ձեռքից են, կյանքից»:

Վերջին տասնամյակներում մեկը մեզ ցույց տվեց, թե ինչպես են ռեպորտաժին նոր չափում տալիս. դա «Ձյուդդոյչե Յայթունգ»-ի նախկին հատուկ թղթակից Յանս Ուլրիխ Քենփսկին է: «Յայթը» հիանում էր նրանով. «քանի որ նա այն եզակի լրագրողներից է, որը պարզ, մաքուր, ոչ խուճուճ լեզվով ընթերցողին հաղորդում է, թե ինչի մասին է խոսքը, եւ ինչն է էությունը»: Ավելին, նա մի քանի սերունդների օգնեց՝ հայտնաբերել այն, ինչն ինքը «խորքի այծմեականություն» է անվանում, ժամանակակից մամուլի նպատակ:

Այս գրքի հեղինակը մի քանի տասնամյակ ի վեր հետեւել է Քենփսկու ռեպորտաժներին բազմաթիվ երկրներից: Մենք մեզ թույլ ենք տալիս հետադարձ հայացք: Քանի որ այն ցույց է տալիս այն, ինչը մեզ պետք է գալու նաեւ ապագայում:

## Ինչպես է ստեղծվում նկարագրական ռեպորտաժը

### Յ. ՈՒ. Քենփսկու օրինակով

Պատերազմ Իսրայելում: Գեներալը ծովի ափին մամուլի ասուլիս՝ կեչիների եւ պինիաների տակ: Մյուս ափին Գոլանի ժայռաբլուրները: Սիրիական զրահամեքենաները գրոհելով հասել են Գալիլեա երկրի խորքը, ավելի հեռու, քան մինչ այժմ խոստովանել են զինվորականների խոսնակները: Նրանք ծովից ընդամենը 10-15կմ

հեռավորության վրա էին: Պատերազմն այնքան արագ էր սկսվել, որ շատ զբոսաշրջիկներ դեռ ընդհանրապես չէին ընկալել իրադրությունը: Շատերը մնում են՝ չպատկերացնելով վտանգը: Մամուլի ասուլիսը հենց նոր է սկսվում, երբ մի հանգստացող լողազգեստով անցնում է փոքրիկ անտառի միջով՝ ծովից դեպի հյուրանոց: Որտեղի՞ց է նա: Մի լրագրող անմիջապես հարցնում է. մարդը Վուպերթալից է:

Լուսանկարիչները շտապեցնում են: Ե՞րբ են գնալու ճակատ: Նրանք գործողություն են ուզում, տեսարաններ պատերազմից: Նրանց ի՞նչ հետաքրքիր է գնդապետը, որն աշխարհագրական քարտեզի վրա, որի տեղանունները դեռ մի բան էլ եբրայերենով են գրված, մի քանի սլաքներ է նկարում ու ռազմերթի ուղղությունը ցույց տալիս:

Նրա ասածը «Նոյե Ցյուրիխեր Ցայտունգ»-ը 1973-ի հոկտեմբերի 12-ին ամփոփում է մի թղթակցության մեջ.

*«Ռոշ Պինա, Գոլանի բարձունքներ, 10-ը հոկտեմբերի – Ռազմական գործողությունների վայրից ստացվող տեղեկություններն այսօր հակասական են նույնիսկ Իսրայելում: Բոլոր հաղորդագրությունները հաջողությունների մասին պետք է զգուշությամբ ընդունել: Կեսօրից հետո Կապերնատմից ոչ հեռու գնդապետ Ասկիրը՝ Գոլանի ռազմաճակատի պարեկի համհարզը, թղթակիցներին իրավիճակն այսպես է ներկայացրել. Դորդանանի հարավային սահմանից մինչև Նեվեհաթիվ ռազմական գործողությունները շարունակում են ընթանալ չթուլացող ուժգնությամբ...»*

Ռազմաճակատ մեկնող առաջին լրագրողների թվում Զանս Ուլ-րիխ Քեմփսկին է՝ «Ջյուդդոյչե Ցայթունգ»-ի հատուկ թղթակիցը: Նա մանրամասն գննել է սպային, այդ մարդու նկարագրությամբ է սկսում նրա նկարագրական ռեպորտաժը մամուլի այդ ասուլիսի մասին.

*«Գնդապետը թափով շարժում է իր ցուցափայտը, որը զարդարված է ինքնափորագիր նախշերով՝ շրջաններ գծելով աշխարհագրական քարտեզի վրա: Դրանով նա նշում է սիրիական պետության մի տարածք, որը Իսրայելի տանկային զորամասերը գրավել են, որպես իբր թե ապահով բազա: Շրջաններից մեկի կենտրոնում նկատելի է մի լայն ռազմական ճանապարհ: Կարծես որեւէ մեկը չգիտի, թե այն ուր է տանում, գնդապետը բացատրում է դրա նշա-*

*նակությունը. եթե չեն սխալվում, սա Դամասկոս տանող ճանապարհն է: Եվ մի մարդու դեմքի արտահայտությանը, որն ուզում է հասկանալի արտահայտվել, ըստ որում՝ առանց որեւէ կոնկրետ բան հայտնելու, նա համոզիչ փաստարկ է բերում. «Ես չեմ կատակում, ես ասում եմ ճշմարտությունը»:*

*Գնդապետը միջազգային ռազմական թղթակիցներին դասախոսություն է կարդում սահմանի հյուսիսային շրջանի իրադրության մասին: 25 տարի առաջ, հրեական պետության հիմնադրումից ի վեր, նա երեք պատերազմների է մասնակցել: «Ես,- ասում է նա,- հոգնել եմ պատերազմներից ...»*

Բնորոշ իրադրություն է: Իսրայելը պատերազմի մեջ է, երկիրն էլ այդ գնդապետի նման հոգնած է պատերազմներից, բայց ոչ հուսալքված, այլ խիստ վճռական արագ վերջ դնելու: Երկիրը կուշտ է պատերազմից: Ձեռնափայտն ու սպայի նկարագրությունը ավելին են ասում երկրում տիրող տրամադրության մասին, քան դա կաներ որեւէ մեկնաբանություն: Դրանք ցույց են տալիս խորքը: Հենց դա է կարելոր Քեմփսկու համար:

## **Խորքերի այժմեականությունը**

Հաջորդ օրը Թել-Ավիվի Դան հյուրանոցում նախաճաշի ժամանակ նա այդ մասին պատահաբար զրուցում է լրագրողների հետ: Միանգամայն ընդհանուր զրույց. արդի լրագրության մասին, ռեպորտաժների մասին՝ ոչ միայն ռազմական: Քեմպսկին ամենուրեք փնտրում է այն, ինչ նա «խորքերի այժմեականություն» է անվանում: Նրա խոսքերը մեղմ տոնով զայրույթի պոռթկում էին մակերեսային լրագրության դեմ, որը ցույց է տալիս միայն արտաքին հայտանիշերը, բայց ոչ ներքին կապերը ... Այսպիսով, ի՞նչ է ուզում Հանս Ուլրիխ Քեմպսկին: Նա Հանպատրաստից դա այսպես ձեւակերպեց.

- ▶ «Գոյություն ունի խոսքերի այժմեականություն: Յուրաքանչյուր կարելոր խոսք, որ որեւէ քաղաքական գործիչ ասում է հրապարակայնորեն, մյուս օրը հայտնվում է թերթում:
- ▶ Գոյություն ունի իրադարձությունների այժմեականություն: Քաղաքական գործիչը մեկնում է, ժամանում, մեկի ձեռքն է սեղմում: Մենք դա հաղորդում ենք:

- ▶ Եվ կա խորքերի այժմեականություն: Ինչու՞ նա դա ասաց: Ինչու՞ է մեկնում այդ երկիր: Ինչքանով է անկեղծ բարեկամական ձեռքստեղծումը: Ի՞նչ է կատարվում, ի՞նչ ճանապարհ է բացում: Ի՞նչ է թաքնված դրա հետեւում: Ինչպիսի՞ն է տրամադրությունն իրականում: Դա ասելն է մեր խնդիրը»:

Ինչպե՞ս է նա փնտրում այդ խորքերի այժմեականությունը: Ինչպե՞ս է նա գործում, ի՞նչ կանոններ է դնում իր առջեւ, ինչպե՞ս է գրում: Շարունակե՞նք հետեւել Քենսկուն, օրինակ՝ Վիեննայում, 1979-ի գարնանը, Լեոնիդ Բրեժնեւի եւ Ջիմի Քարտերի՝ բարձր մակարդակի հանդիպման ժամանակ:

Լրագրողների համար սա ստանդրափ խանգարում առաջացնող ոչ-իրադարձություն էր: Ամեն ինչ փակ, ամեն ինչ գաղտնի, ամենուրեք ուստիկանություն, ոչ մի հարցազրույց: Վիեննայի Յոֆբուրգ պալատում լրագրողների աշխատանքի համար տեղեր են ստեղծված: Յենց դրանց կողքին սուրճի պատրաստման մեքենա: Մի փոքր հեռու՝ հեռուստացույց: Ավստրիական հեռուստակայանները, ինչպես միշտ, նման իրադարձությունների ժամանակ վերին աստիճանի ջանասեր են եւ հաղորդում են այն ամենը, ինչ կարելի է տեսնել: Պե՞տք է արդյոք քաղաքական գործիչների՝ հրապարակային առանձին հանդիպումների ժամանակ ընդհանրապես ներկա լինել, ինչ-որ տեղ ճգնված կանգնել ամբոխի մեջ, երբ այստեղ Յոֆբուրգում ամեն ինչ կարելի է տեսնել հեռուստակրանին՝ խոշոր պլանով նկարահանված, հեռուստաօբյեկտիվով մոտեցրած: Ի՞նչ պետք է, օրինակ, գնալ Շվեյխատ օդանավակայան, ուր կեսօրին ժամանելու է Լեոնիդ Բրեժնեւը: Ի՞նչ կարող է պատահել: Բրեժնեւը կարճ ճառ կասի, կանցնի պատվովաշտի կողքով, հետո կանհետանա լիմուզինում ...

Յենց դա էլ տեղի է ունենում: Կարմիր գորգ, ազգային հիմներ, ձեռքստեղծումներ, պատվո վաշտ: Ինչպես միշտ եղել է: Այնուամենայնիվ Յանս Ուլրիխ Քենփսկին, որին «Նյուսուիկը» մեծարել է, որպես լավագույն գերմանացի լրագրողի, որ պատերազմից հետո Գերմանիայում ներմուծեց քաղաքական նկարագրական ռեպորտաժը, լրագրող, որին ընդունել են ինչպես Բրեժնեւը, այնպես էլ Չոու Էն-լայը, որը կառավարական ճգնաժամերի պատճառ է դարձել եւ հարցազրույցներով շարժման մեջ դրել միջազգային քաղաքականությունը, այս մարդը նույնպես կանգնած է Շվեյխատում, կարմիր գորգից երկու մետր հեռավորության վրա, եւ դիտում է: Սրտանց ողջույն. նա հանդիպում է խորհրդային պատվիրակությունից մեկին, որը Բրեժնեւից առաջ է ժամանել: Քենփսին նրան վաղուց է ճանաչում: Մի քանի հիշողություններ են փոխանակվում: Միա՞յն

հիշողություններ: Քենփսկին մի քանի հարցեր էլ ունի... Ծոցատես-  
րը ձեռքին նա հետո հետեւում է Բրեժնեւի առաջին հայտնվելուն՝  
Վիեննայում: Քենփսկին հույսը չի դնում հեռուստատեսության վրա:  
Ինչու՞: Նա այդ մասին գրում է երկու օր անց «Ձյուդոյչե ցայ-  
թունգ»-ում.

*«Որ 72 ամյա Լեոնիդ Բրեժնեւը հալումաշ է եղած ծանր հի-  
վանդությունից, հեռուստադիտողի համար կարող է լրիվ  
աննկատ մնալ: Հեռուստատեսային պատկերները հաճախ  
ակամայից ստում են, օրինակ՝ Բրեժնեւին ներկայացնելով  
որպես բավականին պնդակազմ, արջի նման մի մարդու՝ ա-  
ռատ մազերով, փնջակալած հոնքերով, ողորկ դեմքի իշ-  
խող արտահայտությամբ: Բայց այդպիսի տպավորությունը  
խաբուսիկ է: Բրեժնեւը, որը մի ժամանակ իր ամբողջ գիրու-  
թյամբ՝ նաեւ ամրակազմ էր, ճարպոտել է: Այտերը, կզակի  
մասն ու վիզը ուռած են: Նա քայլում է իրանի անբնական  
կերպով անշարժացած վերնամասով ու մանր քայլերով,  
ընտ որում ոտքերը, սար բարձրացող բեռնակրի ոտների  
նման ծնկների մասում շարունակ ձկված են... Բացի այդ՝  
ծնոտի հիվանդությունը դժվարություն է առաջացնում խո-  
սելու ժամանակ: Չախ ականջին նա լսելու ապարատ է  
կրում: Թվում է՝ թե նրա ոգու կայտառությունը չի պակասել,  
սակայն որոշ պահերի նա ինքնամոռաց մարդու տեսք ունի,  
ինչպես մեկը, որը մտովին ներկա չէ ...»*

Չնայած բոլոր թիկնապահներին՝ լրագրողներն այնուամենայ-  
նիվ այնքան էին մոտեցել կուսակցության առաջնորդին, որ կարո-  
ղացել էին նկատել ականջում դրված լսելու սարքի կոճակը: Իսկ  
այն, ինչ թաքնված էր հայացքից, Քենփսկին հարցրել էր խորհրդա-  
յին եւ ամերիկյան պատվիրակությունների անդամներից, ոչ միայն  
նրանց մամուլի քարտուղարներից:

## **«Պետք է կատարել տնային առաջադրանքները...»**

Քենփսկին (ծնված 22թ. Պոներում) Վիեննա էր եկել արդեն բազ-  
մաթիվ նշումներով: Նա օրեր շարունակ պատրաստվել էր (թեեւ որ-  
պես լրագրող), դիտել էր զինաթափման վերաբերյալ բոլոր կարեւոր  
քննարկումներն ու գիտեր նյութը: Հանս Ուլրիխ Քենփսկի. «Այնուա-

մենայնիվ պետք է կատարել տնային առաջադրանքները: Ես ուղղակի սերտում էի ՍՍՍ-2-ի պրոբլեմատիկան, մինչեւ զգացի, որ արդեն կարող եմ դրա վերաբերյալ սեմինար անցկացնել... Դա ինձանից շատ օրեր խլեց... Պետք է յուրացնել, հիմնական գիտելիքներում լավ պատրաստ լինել: Դրանից հետո միայն լրահաղորդը կարող է վստահությամբ ու հանգիստ զբաղվել զուգընթաց հարցերով ... »

Նա այդ պատճառով էլ Վիեննա էր ժամանել զագաթաժողովը սկսվելուց 2 օր առաջ: Լավ կապերը կամ ժամանակին արված ամրագրումը նրա համար սենյակ էին ապահովել «Հիլթոն» հյուրանոցում, որտեղ կանգ էին առել ամերիկյան պատվիրակության կարեւորագույն անդամները:

«Իրադարձության ժամանակ ամբողջովին զբաղված ես լինում հրատապ հարցերով, դառնում ժամադրությունների գերի: Ուրոշ փորձ ունեցող լրագրողը չի ժամանի՝ լեզուն դուրս գցած, եթե դրանից ինչ-որ կերպ կարելի է խուսափել: Նրան ժամանակ է հարկավոր՝ ընտելանալու, հավատարմագրման հետ կապված ձեւակառությունները (որոնք էկզոտիկ երկրներում հաճախ ժամանակ խժռող են) կատարելու համար, նրան ժամանակ է հարկավոր՝ մարդկանց եւ տեղանքը ճանաչելու, ծանոթ զգալու համար: Ժամանակը վստահության տարր է ... Եվ ես արդեն նախօրոք խոսում եմ բազմաթիվ մարդկանց հետ, ովքեր բան ունեն ասելու: Հաճախ դրանով միայն ժամանակ ես վատնում, բայց երբեմն այնուամենայնիվ ինչ-որ նոր բան է ի հայտ գալիս»:

Ամեն դեպքում, նախքան կոնֆերանսի սկսվելը Քենփսկին շատ ժամեր ոտքի վրա է: «Առհասարակ նման առիթների դեպքում ես սովորաբար նախօրոք դիտում եմ նաեւ իրադարձության վայրը»: Վիեննայում նա նույնպես մասնակցում է Մարիա Թերեզիայի սրահ կատարվող էքսկուրսիային, որտեղ Քարտերն ու Բրեժնեւը առաջին անգամ կկանգնեն միմյանց դիմաց: «Նախօրոք ես դեռ հնարավորություն ունեմ տալու բոլոր այն հարցերը, որոնց համար ավելի ուշ ժամանակ չի մնա: Ահա այստեղ մի գեղեցիկ գորգ է փռած: Ո՞ր թվականին գործված կլինի»:

## **«Երբեմն ես լուսանկարչի նման եմ աշխատում...»**

Ինչի՞ վրա է ուշադրություն դարձնում Քենփսկին: «Ես սովորություն եմ դարձրել. երբ որեւէ տեղ եմ մտնում, որը կարող է որեւէ դեր

խաղալ, ինքս ինձ համար նշում եմ ամենաչնչին մանրամասները ... Ես հաշվում եմ առաստաղի լամպերը, նկարները, պատուհանները ... Ես չգիտեմ, թե արդյոք կօգտագործե՞մ դա: Ես գրի եմ առնում: Քանի որ հիշողությունը շատ անվստահելի շտեմարան է ... Երբեմն ես աշխատում եմ մի լուսանկարչի նման, որն ահավոր շատ է չխկացնում, բայց հետո նյութի իննսուն տոկոսը չի օգտագործում. նրա համար կարելու է՝ ունենալ մի քանի, բայց լավ հաջողված կադրեր: Ես իհարկե նյութի իննսուն տոկոսը չէ, որ տեսակավորելով ավելորդ եմ համարում, բայց կեսը հաստատ դեմ եմ նետում»: Դոֆբուրգը՝ հանդիպումից առաջ, Դոֆբուրգը՝ հանդիպման ժամանակ. Քենփսկին կարող է համեմատել, նա զգում է, որ սրահների տրամադրությունը չի փոխվել: Եվ այդ տպավորությունը նա գրանցում է.

*«Բացի նրբագեղ բազկաթռռներից, որոնցում վարանելով տեղավորվեցին Բրեժնեևն ու Քարտերը, մնացած ամբողջ կահույքը դուրս է բերվել Մարիա-Թերեզիայի սենյակից: Այդպիսով՝ տեղ է ստեղծվել մի խումբ լրագրողների համար: Սակայն սրահի աչքի ընկնող պերճաշուքությունը պահպանվել է՝ ալ կարմիր ատլասե պաստառներ, պատի մետրանոց հայելիներ, ոսկյա ծանր զարդարանքներ՝ կաթնագույն առաստաղին, ջահեր՝ շողացող բյուրեղապակուց, հմուտ կերտված սպիտակ ձենապակե բուխարի եւ վառվռուն ծաղկե նախշազարդերով կապույտ գորգ: Ֆեռդալական դարաշրջանի բույրը բավական ուժեղ է՝ երկու գլխավոր գործող անձանց շփոթվածությունը մեծացնելու համար: Այն ժամանակ, երբ Ամերիկայի նախագահը մոլորված անկոչ հյուրի դժբախտ կիսաժպիտ է ցույց տալիս, Խորհրդային պետության եւ կուսակցության ղեկավարը բութ հայացքով նայում է իրեն ուղղված տեսախցիկների օբյեկտիվներին, ինչպես մեքենայի մասերի, որոնց կիրառման նպատակը նրան անձանոթ է»:*

Քենփսկին կարող է վայելել մանրամասնությունները. նա դրանք խնամքով ընտրել է ու հավաքել: Ինչու<sup>6</sup>: Քանի որ իսկական մանրամասները ընթերցողի մոտ զարմանք են առաջացնում. իսկապե՞ս լրագրողն այդքան մոտ է գնացել: Քենփսկի.

*«Մեզ պետք է կենդանի, գունեղ նկարագրություն: Շնորհիվ հեռուստատեսության՝ համն ընկել է ընթերցողի բերանը: Այժմ նա ավելին է ուզում: Իսկ լրագրողը նրան ավելին*

կարող է տալ, քան հեռուստատեսությանը: Պարզապես այժմ ավելի արագ է, քան տեսախցիկը: Ընթերցողը սակայն միայն սուղ տեղեկություններ չի ուզում, քնծիծաղ, «ախ այդպես» - ապրում: Ընթերցման այս ցանկությունը չի բավարարվում կարծ պատմություններով. սա նկարագրական ռեպորտաժի շանսն է: Այստեղ պատմություն է արարվում: Իսկ դրա համար մանրամասները կարելու են, շատ կարելու. դրանք կարող են հայտանշական լինել, ավելին հայտնել, քան պաշտոնական ճառերն են ասում, դրանք կարող են ցույց տալ տրամադրությունը, մթնոլորտը»:

## «Սկզբից մինչև վերջ ներկա լինել...»

Այս մանրամասները որոնելով՝ Քենփսկին Վիեննայում ոչ մի իրադարձություն բաց չի թողնում: «Պետք է սկզբից մինչև վերջ ներկա լինես: Որպես լրագրող չես կարող գոյատևել, եթե մշտապես չդիտես ... Պետք է ոտքի վրա լինես, «legman», ինչպես ամերիկացիներն են ասում, եւ ոչ թե հյուրանոցային լրագրող, որն այնտեղ, առանց շատ բան տեսնելու, միայն իր ներքին կանխակարծիքներն է թղթին հանձնում...»

Ոչ մի նախապաշարվածություն: Սա Քենփսկու համար կարելու կետ է: «Յուրաքանչյուր լրագրահաղորդ պետք է փորձի, եթե նա նույնիսկ շատ բան գիտի, անկանխակալ մոտենալ իրադարձությանը: Ես գրեթե յուրաքանչյուր իրադարձություն այնպես եմ ուսումնասիրում, ասես առաջին անգամ եմ զբաղվում այդ թեմայով»:

Երեկոյան ժամը 21-ն է: Քենփսկին ի մի է բերում բոլոր փաստերը: Վաղը ժամը 13-ին նա պետք է հեռախոսով հաղորդի իր աշխատանքը. առավոտյան ժամերը բավական չեն: Նա, որպես կանոն, օգտագործում է գիշերվա մի մասը: Քենփսկուն մեկ անգամ եւս տեսնում են սվիտերով սենյակից դուրս գալիս՝ նա գնում է՝ թերթ առնելու. մի ամսաթիվ պետք է ստուգվի:

Նախելառաջ Քենփսկին 7-8 թերթ դատարկ թուղթ է փռում իր առաջ, յուրաքանչյուրը մեջտեղից կիսում գծով՝ յուրաքանչյուր թերթ համարակալվում է: Այժմ սկսվում է այն գործողությունը, որը Քենփսկու համար երբեմն ամբողջ աշխատանքի ամենադժվար ու ամենաերկարատև մասն է, ավելի երկարատև, քան գրելը. սկսվում է նյութի թատերգությունը, հերթականության սահմանումը, ընտրումն ու տեսակավորումը: Եվ դուրս մետումը: Վիեննայում Քենփսկին նշումներով երկու ծոցատետր է լցրել: Ի՞նչն է դրանից պիտանի: Քենփսկի. «Այժմ սկսվում է արժեքավորելն ու զառ գցելը»:

Ի՞նչը պետք է ամրագրվի. ինչի՞ց կարող է հրաժարվել: Ո՞ր ամբողջությունները պետք է մտնեն պատմության մեջ, ո՞ր տեսարաններն են հարմար դրան: Կարելու է երկու նախագահների նկարագրությունը. մեկը հիվանդ է, մյուսը՝ գերլարված: Կարելու է նաև Վիեննայի մթնոլորտը: Ինչպիսի՞ն էր երկու կողմերի արձագանքը: Ի՞նչ էր պատահել տիկին Քարտերին: Ինչպե՞ս սկսել: Ո՞ր տեսարանն է լավագույնս հարմար մուտքի համար:

Ութ դատարկ թերթերը հետելյալ պատճառն ունեն. Քենպսկուն պատմության համար «Ջյուդոյչե Ցայտունգ»-ը 3-րդ էջում տրամադրել է մեքենագրված 7 ու կես էջ տեղ, յուրաքանչյուր էջը՝ 30 տող (ամեն տողում՝ շուրջ 60 նիշ): Մի պարբերությունը մեծ մասամբ 15 տող է զբաղեցնում այդպիսով լրացնելով կես էջը:

## Հիմնական միտքը այսպես է զարգացվում

Տեսակավորելու ժամանակ Քենփսկին ճշգրիտ որոշում է, թե որ մանրամասնը որ պարբերության մեջ է լինելու: Նա յուրաքանչյուր կես էջի վրա ձեռքով նշում է հենց այն, ինչը այնտեղ ուզում է գրել. «Փաստեր, թվեր, անուններ, մեջբերումներ, տպավորություններ, նաև արդեն ձեւակերպումներ, որոնք այդ պահին միտքս են գալիս... Այս ամենը գրված է այստեղ»:

Պատմության կարմիր թելը անպայման վերջին պահին չի հյուսվում: Ընթացքի մասին Քենփսկին մեծամասամբ արդեն խորհել է դեռ ուսումնասիրության ժամանակ: Հերթականության որոշման ժամանակ սակայն տեղի է ունենում նյութի մասերի վերջնական բաշխումը.

«Վերջում ես ամբողջը կրկին աչքի են անցկացնում. Որտե՞ղ կարելի է կամ որտե՞ղ պետք է կրճատել: Հետո այս բաշխմանը ես հետևում եմ անխախտ: Թատերգական կառույցի համար ինձ երբեմն երկուս ու կես ժամ է հարկավոր: Եթե ժամանակը սուղ է, դա իհարկե շատ ավելի հապճեպ է կատարվում: Նման դեպքում գրելն էլ է բավականին սրընթաց: Երբ ցայտնոտի մեջ եմ, մեկ էջի համար 10 րոպեն ամենաարագն է, նորմալը՝ 20 րոպե: Իդեալական դեպքում մի խառնուրդ է առաջ գալիս, որն այսպիսի տեսք ունի. սկզբում ընթերցողին հրապուրելու համար մի խայծ, հետո այդ խայծը շարունակում եմ, դրանից հետո վերադառնում եմ ձանձրալի թվացող նյութին, որը թերեւս այդքան էլ ձանձրալի չէ, հետո պատմությունը պետք է նորից հետաքրքիր դառնա: Պետք է նկարել փոխնիփոխ. տեսարանը՝ վրձնի լայն հարվածով, հետո նորից շատ կարճ փաստեր: Դրա համար ինձ պետք են մանրամասներ, գույն, մեջբերումներ»:

Յուրաքանչյուր պարբերությունն մի փոքրիկ հատուկ պատմություն է, ամբողջ պատմության ավարտուն հատված, առանձին թեմա, մեծամասամբ 15 տողից բաղկացած. «Սա ընթերցողի համար հաճելի չափաբաժին է»: Կարելու են անցումները: Յուրաքանչյուր պարբերություն պետք է տանի դեպի մյուսը, ոչ մեկը չպետք է միայնակ բլոկ լինի՝ մյուսի հետ չկապված:

Վիեննայի մասին նրա նկարագրական ռեպորտաժում դիտենք, թե նա դա ինչպես է անում: Քեմփսկին նկարագրել է Բրեժնեվի առողջական վիճակը.

*«... որոշ պահերի նա ինքնամոռաց մարդու տեսք ունի, ինչպես մեկը, որ մտովի ներկա չէ»:*

Հաջորդ պարբերությունը կապվում է դրա հետ.

*«Բրեժնեվն ու Քարտերը ավելի լավ վիճակում կլինեին, եթե նրանց հանդիպումը երկու տարի առաջ տեղի ունեցած լիներ ... Այն ձգձգվեց, քանի որ...»*

Այժմ հաջորդում է հետադարձ հայացք ռազմավարական գեներալ կրճատման վերաբերյալ բանակցությունների նախապատմությանը... Միշտ նախորդ պարբերության վերջին խոսքերը կամուրջ են գցում դեպի մյուսը: Աշխատանք մանրամասնի վրա, մինչև վերջ: Իսկ ինչպիսի՞ տեսք պետք է ունենա ամբողջ նյութը, որ Քեմփսկու աչքին հաջողված երևա:

«Պատմությունը պետք է ընթերցողին ներկայացնի այն ամենը, ինչը հարկավոր է վերջինիս. ամբողջ ծավալվածը, բոլոր կարելու տեղեկությունները՝ գումարած խորքի նյութն ու գույնը: Այն պետք է ընդգրկի բոլոր անհրաժեշտ պարագաները՝ հոգեբանություն, վերլուծություն եւ կանխատեսում: Դրանից հետո ընթերցողն այլևս կարիք չպետք է ունենա հետագա տեղեկությունների կամ առաջնորդող հոդվածի դիմելու... Նա պետք է այն զգացումն ունենա, թե բոլոր էական բաներն ինքն արդեն գիտի: Եթե ամբողջ նյութը, դրանից բացի, ձեւականորեն, թատերգորեն այնպես է կերտված, գրված ու տեսարանների բաժանված, որ պատմությունն ըստ էության կարդացվի որպես լավ կարճ պատմվածք, եթե սա հաջողվել է, ապա ես զգում եմ, որ նկարագրական ռեպորտաժը ստացվել է»:

Ոչ մի մանրամասն չպետք է հնարել. թանձրացնել եւ ոչ մոգոնել: Սա նկարագրական ռեպորտաժի առաջին հիմնական կանոնն է: Այն վերաբերում է նաեւ այս տեքստին: Քեմփսկու մասին մեր գրածի մեջ ոչինչ երեւակայություն չէ, ոչ մի տեսարան հետո չի սարքվել: Այս

գրքի հեղինակը օրեր շարունակ հետեւել է Քենփսկուն Երուսաղէմում, ինչպես նաեւ Թել Ավիվում, Բոննում, Մյունխենում ու Վիեննայում, իսկ հետո ընդլայնել ու լրացրել է իր տպավորությունները՝ գրույցի միջոցով:

Միեւնույն ժամանակ հողվածի եւս մի ոճաբանական միջոց է օգտագործվում. պատմությունն անձնավորվում է, մի լրագրողի օրինակով ցույց է տալիս այն, ինչը բնորոշ է շատերին: Արդյո՞ք սա արդեն բավական է, արդյո՞ք այս գլուխը կարելի է արդեն նկարագրական ռեպորտաժ անվանել:

Ոչինչ չի օգնի: Այժմ կրկին պետք է սահմանվի. ի՞նչ է ընդհանրապես նկարագրական ռեպորտաժը: Այս հարցի կապակցությամբ մյուս գլխում կխորհրդակցենք նաեւ Մյունխենից՝ մի ներուպաթուղգի հետ...

## Նկարագրական ռեպորտաժ. բնորոշ գիծը

Նկարագրական ռեպորտաժ (Feature) հասկացությունը գերմաներենի մեջ է ներսահել անգլերենից եւ այժմ էլ դեռ այս ու այն կողմ է «սահուն»՝ չգտնելով իր հաստատուն տեղը: Feature տերմինը հաճախ են օգտագործում, բայց երբ հերթը հասնում է սահմանելուն, լրագրողները դժվարությունների մեջ են ընկնում: Ոչ մի ուրիշ բառի դեպքում պարզաբանումները իրարից այդքան չեն տարբերվում, որքան այս բառի դեպքում.

«Feature հասկացությունը մեզ մոտ ընդունված չէ», - ասացին «Ֆրանկֆուրտեր ալգեմայնե» թերթի մեր գործընկերները, թեւ իհարկե այս թերթը նույնպես արտահայտիչ ու պատկերավոր ռեպորտաժներ է հրապարակում. աշխատանքներ, որոնք մի ուրիշ տեղ դասական նկարագրական ռեպորտաժ են համարվում: Իսկ ի՞նչն է «Ֆրանկֆուրտեր ալգեմայնե»-ն որպես ռեպորտաժ բնորոշում:

«Ֆրանկֆուրտեր ալգեմայնե»-ն մի բրոշյուր է հրատարակել իր հրատարակչության մասին՝ «Ամեն ինչ թերթի մասին» վերնագրով: Այնտեղ նա գրում է ռեպորտաժի մասին.

«Ռեպորտաժը թեւ դեպքեր ու իրավիճակներ է հաղորդում ընթերցողին, բայց այն դրանք նկարագրում է մի որոշակի անհատի՝ լրագրողի տեսանկյունից: Լավ ռեպորտաժը գույն ունի: Այն պետք է ընթերցողին մասնակից դարձնի. կարծես նա ականատես է եղել: Այն հաղորդում է ոչ

միայն Բունդեսբազի քվեարկության արդյունքները, ոչ միայն Ֆրանսիայի նախագահի հայտարարության գործնական բովանդակությունը, ոչ միայն կուսակցական համագումարում փաստարկների փոխանակումը: Այն սկսում է քվեարկության մթնոլորտից, նկարագրում նախագահի շարժումներն ու ձայնի հնչերանգը, տալիս կուսակցական համագումարի անցուդարձի գունեղ պատկերը: Գործը, օբյեկտիվ իրադարձությունը պահպանվում է, այդ պատճառով էլ ռեպորտաժը բերվում է լուրերի էջում: Բայց դրան է ավելանում մթնոլորտը՝ ընկալված հաղորդողի զգայունությամբ: Ի տարբերություն լուրի, որն ընթերցողին լերկ փաստեր է ներկայացնում, նկարագրող ռեպորտաժը միայն այն ժամանակ է կենդանի պատկեր հաղորդում, երբ հաղորդողը երևում է իր աչքերով ու անհատականությամբ: Ռեպորտաժները պահանջում են լուրջ, փորձով ստուգված բանիմացություն, կիսատոների հոտառություն եւ կշռադատված կարծիք այն մասին, թե դրանք ինչ կիսատոներ են, որ այս պահին գործին կշիռ են տալիս»:

## **Ինչ է ասում dpa-ն եւ ինչ է կարծում ներոպաթոլոգը ...**

«Գերմանական մամուլի գործակալությունը» (dpa) շատ լավ գիտի «նկարագրական ռեպորտաժ» արտահայտությունը: Ինչո՞վ է այն տարբերվում ռեպորտաժից: Հանս Բենիրշկե. «Մենք ռեպորտաժ հասկացությունը այն ժամանակ ենք օգտագործում, երբ մեծ թվով անմիջական ու անձնական տպավորություններ են մշակվում նյութի հետ մեկտեղ, երբ որեւէ մեկը, օրինակ, որպես սկանատես (թերեւս նույնիսկ առաջին դեմքով) իր տպավորություններն է հաղորդում ջրհեղեղի մասին»: Նկարագրական ռեպորտաժ ասելով՝ հասկանում ենք թեմաներ, որոնք պարտադիր չէ, որ կապված լինեն որեւէ հրատապ դեպքի հետ եւ ավելի թեթեւ գրչով են գրված, թեմաներ, որոնցում գերակշռում են նկարագրություններն ու զգայական ընկալումները. օրինակ՝ մի թեթեւ գրույց այնպիսի մոդայիկ թեմայի շուրջ, ինչպիսին է մարմնի ազդանշանների թեման»:

Մյուսները օգտագործում են «նկարագրական ռեպորտաժ» արտահայտությունը, որպեսզի դրանով ասեն. տեքստը գունեղ, արտահայտիչ է գրված, այն պատկերում է իրադրությունը: Խորհրդակցենք նաեւ մի ներոպաթոլոգի՝ պարոն Է. Թ. Մայերի (Մյունխենից)

հետ: Նա հասկացության մի ուշագրավ սահմանում է տվել: Թերթի մի քանի հոդվածների քննարկման ժամանակ նա «Մյունխենյան բժշկական ուղեցույց»-ում բացատրում է իր գործընկերներին ոճական տարբեր ձեւերը հետեւյալ բնորոշմամբ.

«Գիշտ է, նկարագրական ռեպորտաժը պետք է ուրվագծի որեւէ իրավիճակի էական կետերը ռեպորտաժի ոճային միջոցներով, սակայն միեւնույն ժամանակ այն՝ խորքի ու կապերի պարզաբանմամբ, պետք է ավելին լինի, քան փաստաթուղթ, այսինքն՝ ժամանակապատմագրական վավերագիր: Մի խոսքով, ռեպորտաժները պետք է ընդգրկեն առանձին ճակատագրեր՝ առանց համընդհանուր լինելը պնդելու: Դրան հակառակ՝ նկարագրական ռեպորտաժը պետք է ընդգրկի համընդհանուրը, որը ցույց է տրված առանձին օրինակով»:

Է. Թ. Մայերը ելնում է բառի իմաստից եւ այստեղ նա իրավացի է: Իրոք feature բառը չպետք է թարգմանվի միայն որպես «գույնզգույն» կամ «պատկերավոր»: Լանգենշայդտի մեծ բառարանում (եւ Վեբսթերի «New World Dictionary»-ն համամիտ է դրան) «Feature»-ն նախեւառաջ նշանակում է «դիմագիծ»: Մյուս նշանակություններն են.

- ▶ «բնորոշ կամ կարեւոր (բաղադրիչ) մաս կամ գիծ, հիմնական գիծ»
- ▶ «տեսք, հատկանիշ, բնորոշը... Բնորոշել, բնորոշ կերպով ներկայացնել, գլխավոր կամ հիմնական գծերով նկարագրել ...»

Եթե հետեւենք Մայերի բառային ախտորոշմանը, ապա ոճաբանական ձեւերը տեսանելիորեն կբաժանվեն հետեւյալ կերպ.

Որեւէ դատաքննության մասին թղթակցությունը սահմանափակվում է նրանով, որ վերարտադրում է դատավարության ընթացքը: Այստեղ ոչինչ չի ավելացվում, այստեղ նախեւառաջ խտացվում է, ամենակարեւորը դուրս բերվում եւ պատկերավոր կերպով նկարագրվում:

Դատաքննության մասին ռեպորտաժում լրագրողը կարող է շեղվել իրադարձությունների ընթացքից: Նա ոչ միայն նկարագրում է այն, ինչը բոլորի աչքի առաջ է տեղի ունենում, այլ լրացուցիչ տեղեկություններ է ձեռք բերում: Ովքե՞ր են օրինակ՝ մարդիկ, որ նս-

տած են դահլիճում: Ի՞նչ արժե այսպիսի մի դատավարությունը, որ-  
քա՞ն թանկ է հեղինակավոր փորձագետը: Եզակի դեպքն իրազննե-  
լի է դարձվում մանրամասնություններով:

Մայերի մեկնաբանությամբ՝ նկարագրական ռեպորտաժը նկա-  
րագրում է դատաքննությունը, որպեսզի դրանով վեր հանի տվյալ  
դատավարության հիմնականը, որը տիպիկ կարող է լինել հասարա-  
կության մի խավի կյանքի, արդարադատության վարվելակերպի,  
բայց եւ նմանատիպ դեպքերի համար: Համակենտրոնացման ճամ-  
բարների նախկին աշխատողների դատավարության մեկ օրը ցույց  
կտա, թե ինչպես են իրենց պահում այն ամբաստանյալները, որոնք  
հանցանքից տասնամյակներ հետո ամենախիսկական հասարակ քա-  
ղաքացու պես են հանդես գալիս եւ համապատասխան մասնագի-  
տություններ ունեն: Թե այդքան երկար ժամանակից հետո ինչքա՞ն  
բան կարող են հիշել վկաներն ու մեղադրյալները: Ինչպե՞ս է արձա-  
գանքում հասարակությունը: Կա՞ն արդյոք բանավեճեր վաղեմու-  
թյան ժամկետի վերացման մասին:

Այս ամենը կրկնենք մի ուրիշ օրինակով.

Ռեպորտաժը ներկայացնում է աղետի պատկերը: Վառելանյութ  
տեղափոխող մի բեռնատար մեքենա ընթացքից մտել է քեմփինգ:  
Չլսված, եզակի դեպք:

Նկարագրական ռեպորտաժը ուսումնասիրում ու նկարագրում է  
վրատեթի ենթարկված աշակերտի փոքրիկ դեպքը՝ երեխաների իրա-  
վիճակը մեծ քաղաքներում ներկայացնելու, վտանգները ցույց տալու  
համար:

Արդյո՞ք այժմ նկարագրական ռեպորտաժ հասկացության շուրջ  
վեճը պարզված է: Տավոք, ո՛չ: Երբ թերթում ենք ծագումնաբանա-  
կան բառարանը, նոր կասկածներ են առաջ գալիս: Ռեպորտաժը  
լատիներեն բառ է եւ նշանակում է բանաքաղել, հավաքել: Դա ա-  
նում է նաեւ նկարագրական ռեպորտաժը. ուրեմն ռեպորտա՞ժն է գլ-  
խավոր հասկացությունը: Իսկ «ռեպորտ»-ն իր հերթին մի աստիճան  
ավելի բա՞րձր, քան ռեպորտաժը, մանավանդ որ «ռեպորտ» ասե-  
լով՝ հասկանում ենք թեմայի առանձնապես ծավալուն ներկայացու-  
մը: Ակնհայտորեն դժվար է սահման անցկացնել ռեպորտաժի եւ  
նկարագրական ռեպորտաժի միջեւ, յուրաքանչյուր թերթ կուզենա  
պահպանել իր խմբագրության սահմանումը: Իսկ դրանք, ինչպես  
ասացի, տարբեր են:

Մենք միանում ենք նրան, ինչ մեզ ասել էր ներոպաթոլոգը. նկա-  
րագրական ռեպորտաժը պետք է ցույց տա բնորոշը, համընդհանուրը:

Ոմանց նկարագրական ռեպորտաժը կարող է թվալ ռեպորտաժի  
«գունավոր եղբայր», սակայն Ուդո Ֆլադեի կարծիքով, որը մինչեւ

1986-ը «Աբենդոցայտունգի» գլխավոր խմբագիրն էր, նկարագրական ռեպորտաժը մի աստիճան բարձր է, քան ռեպորտաժը, որը որոշ հատվածներում լուրի բնույթ կարող է ունենալ եւ լուրին հատուկ W-հանգույցով սկսվել: «Նկարագրական ռեպորտաժին ավելի շատ բան է թույլատրված՝ ավելի շատ սուբյեկտիվություն, ավելի շատ գույն», - ասում է Ֆլադեն, որը երկար տարիներ պատասխանատու է եղել «Ձյուղդոյչե ցայտունգ»-ի 3-րդ էջի համար: «Սակայն նյութի հմուտ կառուցումը, արտահայտիչ լեզուն, գույնը պահանջվում են ինչպես նկարագրական ռեպորտաժից, այնպես էլ ռեպորտաժից. ոճաբանական միջոցներն ու նախշերը գրեթե նույնն են»:

Այս նախշը, որը ընկած է երկու ձեւերի հիմքում, կարիք ունի այստեղ ավելի մանրամասն ուսումնասիրվելու: Օղակ առ օղակ: Արդյո՞ք մյուս լրահաղորդները նույն կարծիքի են, ինչ որ Քենփսկին:

## Չետամուտ լինելով մանրամասների

### Փնտրել - տեսնել - հավաքել

Քենփսկու օրինակը՝ շատ կարճ ձեւակերպմամբ.

**Փնտրել.** Յուրաքանչյուր պատմության լավ նախապատրաստվել... Տնային առաջադրանքները կատարել: Նախօրոք տեղեկություններ փնտրել արխիվում, գրադարաններում, մամուլի գրասենյակներում: Արդյո՞ք ճամաչում եք հնարավոր զրուցակիցների, մարդկանց, ում հետ պետք է զրուցել: Երբ մի մեծ իրադարձություն է նախատեսվում, կարելի՞ է արդյոք վաղօրոք դիտել գործողության վայրը:

**Տեսնել.** Ամենուրեք ներկա լինել եւ ոչ թե գրասեղանի մոտ նստած հարցուփորձով տեղեկանալ աշխարհից: Չհավատաք, եթե ասեն, թե հեռուստատեկրանին նույնքան կտեսնեք: Սեփական տպավորությունը ոչնչով հնարավոր չէ փոխարինել... Տեսնելը ոտքի աշխատանք է:

**Հավաքել.** Նշումներ կատարեք: Ամենալավ հիշողությունն անգամ քիչ վստահելի է: Հավաքեք ավելի շատ մանրամասներ, քան հավանաբար անհրաժեշտ է: Ձեզ շատն է հարկավոր, որպեսզի հետո կարողանաք ընտրել:

**Խստորեն ընտրել.** Ընտրել - տեսակավորել - դասավորել: Էլ ի՞նչ է պակասում, ի՞նչն է պետք վերստուգել: Ի՞նչը

կարող է դեն նետվել: Ընտրելու ժամանակ արդեն դասավորել: Ամենաուշը հիմա արդեն սկսվում է ձեր սցենարի դրամատուրգիան: Ո՞ր տեսարանը, ո՞ր մանրամասն է հարմար սկզբի համար եւ ո՞րը՝ վերջի: Ինչպե՞ս է ծավալվում պատմության «կարմիր թելը»: Երկար ռեպորտաժների դեպքում օգտակար է նյութի գրավոր բաժանումը հիմնական բառերով: Դրանց օգնությամբ գրելն ավելի արագ է ընթանում:

**Փնտրել - տեսնել - հավաքել:** Սրանով է սկսվում աշխատանքը: Քենփսկին այսպես է սկսում աշխատանքը պատմության վրա: Վերցնել Զոլցերը, նախկինում թղթակից Աֆրիկայում, ավելի ուշ «Ֆրանկֆուրտեր Ռունդշաու» թերթի գլխավոր խմբագիրը, ժուռնալիստական ուսումնասիրությունը նույն կերպ է անցկացնում. ջանասիրաբար՝ խնամքով ուշադրություն դարձնելով երկրորդականին: Զոլցերի համար լավ նախապատրաստվածությունն ինքնին հասկանալի նախապայման է:

Փնտրելը, որպես կանոն, մեծ ջանքեր պահանջող, երբեմն էլ վիատեցնող գործ է: «Մինչեւ հիմա էլ ինքս ինձ բռնացնում եմ ընկճվածության հիշողությունների վրա: Ինչ-որ տեղ եմ ժամանել, եւ միտքս միայն իմ պատմությունն է, եւ հանկարծ այն զգացումն է առաջանում, որ այստեղ ոչ մի պատմություն էլ չկա, այստեղ միայն սարսափելի շոգ է, այստեղ փոշոտ է ու հոգնեցուցիչ, ու ոչ ոք չի ցանկանում քեզ հետ խոսել...» Զոլցերը նույնպես հարյուրավոր մանրամասներ է գրառում: «Բացի պաշտոնական հարցազրույցներից՝ նաեւ հարեւանցի դիտողություններ, ինքնաբերաբար աչքի զարնող փողոցի անուններ, գույներ, տրամադրություններ»:

Նույնիսկ քաղաքացիական պատերազմի ժամանակ տեղական թերթի հայտարարությունների էջին նետված հայացքը կարող է շատ հետաքրքիր լինել: Զոլցեր. «Այստեղ ծանուցվում է դասական երաժշտության մի համերգի մասին, երբ քաղաքի նյուս մասում ընտրատարածքների առջեւ ռումբեր են պայթում: Այս մանրամասներն են, որ ընթերցողին զգացնել են տալիս իրադարձության վայրում տիրող մթնոլորտը, տրամադրությունը ... »:

## **«Ճանաչելու երջանկությունը...»**

Մանրամասներ, որոնք մեծ ջանքերի գնով են հավաքվում. այս մանրամասները Սիզիգմունդ ֆոն Ռադեցկիի համար «ճանաչման մի զգացում է, մի բան, որը չի կարելի հնարել... Մանրամասնը ավել-

լին է, քան բնորոշը: Այն կարող է իրոք կենդանի շունչ տալ մարդուն, իրադրությանը կամ դարաշրջանին: Երբ դրան հանդիպում ես գրականության մեջ, ապա զգում ես. սա փորձ է: Դրա համար էլ այս չհորինելին կարելի է գտնել ամենուրեք՝ կյանքում, հիշողություններում, թերթում... Չէ՞ որ աշխարհը լի է մանրամասներով, պետք է միայն երեւակայություն ունենաս՝ դրանք ընկալելու համար»:

Ճանաչելու երջանկություն: Պետք է որ այն լինի: Իրադարձությունը մոտիկից վերապրելու, տեսնելու, զգալու, լսելու, թե ինչ է կատարվում. այս ուրախությունն է լրագրողներին կապում իրենց մասնագիտությանը: Մանրամասների որոնումը, սակայն, միեւնույն ժամանակ մի մարտավարական օժանդակ միջոց է, տեղեկություն ստանալու օգտակար ճանապարհ: Մի մանրամասնի որոնումն օգնում է գտնել շատ ուրիշները:

Եվ դա միշտ է այդպես, ինչպես շուկայի, այնպես էլ դժբախտ պատահարի մասին ռեպորտաժում: Մանրամասների վերաբերյալ հարցերից, խելացի հարցերից ոստիկանությունը, քաղաքական գործիչների մամուլի քարտուղարները խույս չեն տա: Մանրամասնի վերաբերյալ հարցը կարող է կարթի խայծ դառնալ, որով լրագրողները ոչ միայն մեկ, այլ շատ ուրիշ ձկներ էլ ափ կհանեն: Բայց լրագրողը ինքը պետք է կեռը գցի, նա չի կարող ուրիշին որսալ տալ: Միայն անձնական տպավորությունն է օգնում, միայն լրագրողն ինքը կարող է աննշան թվացող մանրամասները շատ բան ասող մանրամասների վերածել, որոնք հատկապես այն ժամանակ են հարկավոր, երբ օրինակ՝ քաղաքական գործիչների՝ որեւէ երես առ երես հանդիպում է ընթանում, իսկ պաշտոնական հաղորդագրությունները շատ չոր են ու ընդհանուր:

Ի՞նչ կարող է անել լրագրողը, երբ կառավարության խոսնակը գալիս է ու քաղաքական գործիչների հանդիպման մասին հաղորդում. «Սեղանին վարդեր էին դրված: Ուտում էին...»: Թղթակիցները դա հառաչելով գրի են առնում: Նրանք անձնական տպավորություններ են ուզում, ոչ թե պատմված:

Մանրամասնը ստանում է իր կշիռը, երբ այն ոչ միայն զարդարում է, այլև տեղեկացնում, բացատրում, լրացնում, պատկեր նկարում: Երբ այն տալիս է խորքի այժմեականությունը, ինչի մասին խոսում էր Քենփսկին: Մանրամասները չպետք է աղավաղեն էականը, այլ ընդհակառակը. դրանք պետք է հայացքն ուղղեն հենց էականին: Մանրամասների փաթեթը դեռ պատմությունն է: Դրանց օգնությամբ լրահաղորդը միայն պատկերների է բաժանում գործողությունը: Մանրամասները միայն օժանդակ միջոց են՝ գործողության ընթացքը տեսանելի դարձնելու համար: Կարելորդ հենց այդ ընթացքն է:

## Ընտրել - տեսակավորել

### Թղթի կտորների որս գրամեքենայի մոտ

Մանրամասները ընտրվում են: Հանս Ուլրիխ Քենփսկին դեռ գրել սկսելուց առաջ ստույգ որոշում է, թե ամեն մի պարբերությունում ինչ է լինելու: Ոչ բոլորն են ուրվագծում պատմության այդքան ճշգրիտ դրամատուրգիա, այդքան ստույգ պլան: Վերներ Յոլցերի մոտ դա ավելի շուտ վերածվում է կտրածոների որսի:

«Քանի որ ես այդպես էլ մի նորմալ ծոցատետր չունեցա, նշումներն անում եմ թղթակտորների, երբեմն նույնիսկ գարեջրի գավաթների տակդիրների վրա: Եվ դրանք շաղ են տալիս շուրջս, երբ նստում եմ գրամեքենայի մոտ: Սա ռեպորտաժի համար ամենակարելուր նախապատրաստական աշխատանքն է՝ նյութն ընտրելն ու տեսակավորելը: Գրելը սկսում եմ նրանով, որ սկզբից մինչև վերջ կարդում եմ նյութերս եւ հետզհետե տեսակավորում մտքումս՝ ի՞նչն է կարելուր եւ ի՞նչը՝ անպետք»: Նա էլ է շատ բան դեմ նետում: «Իմ հավաքածից հաճախ միայն կեսը, այսինքն՝ միայն էականն է արտացոլվում պատմության մեջ»:

**Մի փոքր հայացք «Շպիգելին»:** Ինչպե՞ս են այնտեղ վերաբերվում առաջներում մոլեռանդորեն պեղվող մանրամասներին: Իր գոյության առաջին տարիներին հանդեսը փայլում ու շլացնում էր մանրամասների հրավառությամբ. նախարարի քարտուղարուհին ոչ թե ուղղակի բացել էր մամակը, նա, ինչպես պարզել էր լրագրողը, օգտագործել էր ոչ թե մկրատ, այլ գրչահատ: Արդյո՞ք մանրամասներին վերաբերող հարցում թերթն այժմ ավելի տնտեսող է դարձել: Այս մասին դուկտոր Հելմուտ Գունմիորը «Շպիգելի» հրատարակչի գրասենյակից. «Այս ընթացքում «Շպիգելի»-յան պատմությունների նոր ձևեր են մշակվել. հանդեսն ավելի շատ նյութեր է տպագրում, իսկ դա նշանակում է, որ դրանք ավելի կարճ պիտի լինեն: Այդ պատճառով նախկին պատմություններում անձնական կամ խիստ անձնական մանրամասների առատությունը, որը ոմանց չափազանցված էր թվում, չի խրախուսվում: Պետք է հրապարակվի եւ հրապարակվում է նաեւ, առանց երկարությունը հաշվի առնելու, այն, ինչն իրոք էական է»:

Թվել միայն այն, ինչը կարելու է: Բոլոր մանրամասները, բոլոր տեսարանները նորից են նայվում, ստուգվում: Արդյո՞ք դրանցից մե-

կը հատկապես աչքի չի ընկնում: Վերներ Յոլցեր. «Գրեթե բոլոր իմ ռեպորտաժներում ես փորձել եմ սկզբում որեւէ բնորոշ գործողություն նախադրել, որեւէ տեսարան պատկերել: Այդ պահին կրկին վերանայում ես վերապրած: Երբեմն ես 20 տեսարան եմ ունեցել, որոնք հարմար կլինեին սկզբի համար, սակայն ոչ մեկն ինձ դուր չի եկել, ոչ մեկը հնարավոր չի եղել ճիշտ ձեւի բերել... Ավելի դժվար բան չկա, քան նկարագրական ռեպորտաժի մուտք գտնելը: Այն երբեմն ավելի դժվար է գրել, քան դրանից հետո ամբողջ պատմությունը: Երբեմն ես 10-12 անգամ եմ սկսել: Քանի դեռ ես այն տպավորությունն եմ ունեցել, որ սա այն չէ, ինչին կուզենայի տրամադրել ընթերցողին, սկիզբը շարունակ նետել եմ գամբյուղը: Մինչեւ մի շատ որոշակի մթնոլորտ, մի իսկապես նշանակալի տեսարան եմ գտել, ահագին չարչարանքներ եմ կրել»: Իսկ իր գրամեթոդայի շուրջ ծոված թերթիկներից մի քանիսը նա մի տասնյակ անգամ է ձեռքը վերցրել: Երբեմն դեռ նետված թիվ 1 սկիզբը այնուամենայնիվ հենց ամենալավն էր ...

Լրագրային գործը տքնանք է. իսկ այս զգացումը՝ «այսօր գործը դժվար է առաջ գնում», շատերին է ծանոթ: Նույնիսկ այնպիսի մի փորձված լրագրող, ինչպիսին էր Ջիզֆրիո Ջոնեթը, հաճախ երկար նստում էր դատարկ ծոցատետրի առաջ: «Սատանան սպիտակ, քառանկյուն աչքեր ունի», ասում էր Ջիզիո: Այնքան չար, սեւեռուն հայացքով էր նայում նրան թուղթը: Եվ նա նստում ու սպասում էր, որ ինչ-որ բան կկատարվի: «Բայց ոչ թե գրելու, այլ, որ ինչ-որ մեկը դուռը կբախի կամ էլ հեռախոսի զանգը կհնչի»: Ցանկացած ընդհատում ողջունելի էր, ցանկալի էր ամեն բան, ինչ կխանգարեր գրելուն: «Երբեմն ես հայիոյում եմ թղթին. դու՛ տակաճք կամ էլ հայիոյում եմ մատիտներին ու մասնագիտությանս ընդհանրապես»:

Յեռուստակերանի մոտ մեզ հետ հաճախ նույնն է կատարվում ...

## «Գտնել թե՛մա թե՛մայի մեջ...»

Այսպիսով, փնտրվում է մի նշանակալի տեսարան սկզբի համար... Տեսարան մարդկանց մասնակցությամբ: Գուցե միայն մե՞կ մարդու: Մարդու, որը կարող է դառնալ պատմության գլխավոր կերպարը: Սա «Շթերնի» թղթակից եւ «Գեոի» լրագրող Ռայներ Ֆաբիանի (եւ ոչ միայն նրա) համար դառնում է մի հատկապես կարեւոր ոճաբանական միջոց. անձնավորել եւ դրանով թե՛մատիկ դարձնել, գտնել թե՛ման թե՛մայի մեջ... Այդ որոշումը հենց գրելիս չի կայաց-

վում, այլ այն պետք է նախօրոք ընդունված լինի: Լրագրողները շատերի հետ են զրուցում, բայց հետո վերադառնում մեկին, ինչպես դա արեց Ռայներ Ֆաբիանը, երբ նա գրեց Սինայի անապատի գրավված տարածքներից իսրայելցիների նահանջի մասին.

*«12 տարի առաջ, մի ուրբաթ երեկոյան, հրեա Խայմ Ֆայֆելը արթմնի երազում էր: Ճաղատ կանտորը կանգնած էր ամերիկյան Ցինցինատիի իր սինագոգում՝ համայնքը ոտքերի առաջ: Նա Կաբալետ Շաբաթ էր երգում, բայց բոլորովին այլ բանի մասին մտածում. «Սեզամի փողոցի մի խանութպանի մասին: Կանգնել մի վաճառասեղանի հետևում, շաղակրատել տնային տնտեսուհիների հետ, փոքրիկ տոպրակների մեջ կոնֆետ լցնել. սա էր այն, ինչի մասին, որ երազում էի»: Այսօր 48 ամյա Խայմ Ֆայֆելը նստում է մանր-մունր ապրանքների իր խանութում՝ Սինայի թերակղզում: Նա արեւածաղկի սերմ է չրթում, կճեպները թքում սեղանին ու խորհում իր կյանքի մասին: 1974-ին կանտորը հետևել էր Մոշե Դայանի կոչին: Նա տեղափոխվեց նոր հիմնված անապատային Յամիթ քաղաքը ...»*

Եվ թե քանի հարց է տվել Ֆաբիանը՝ բոլոր այս մանրամասները իմանալու համար: Ո՞րն է նրա նպատակը: Ֆաբիան.

*«Անձնավորել՝ նշանակում է գրել մարդկանց մասին: Դրանով թեման նեղացվում է, մասերի բաժանվում, մի կետի վրա կենտրոնացվում»:*

Հազարավոր կամ տասնյակ հազարավոր մարդկանց պորբլեմները նկարագրելու համար՝ նա, եթե հնարավոր է ու տեղին, կընտրի մի առանձին անձի, որի կյանքը բնորոշ է բոլորի իրավիճակի համար: Այսպես հանրագումարի է բերվում ու մի կետի վրա պրոյեկտվում մի թեմա, որը սկզբում իր ամբողջ լայնությամբ անընդգրկելի է թվում: Սա այն է, ինչը Ֆաբիանը անվանում է անձնավորել ու թեմատիկ դարձնել: «Իսրայելը կամ Պաղեստինը թեմա չեն ռեպրոտաժի համար: Պետք է գտնել թեման թեմայի մեջ», - նրա դեպքում կանտորի պատմությունը:

Խայմ Ֆայֆելի օրինակով նա ուսումնասիրում է մարդկանց վիճակը Սինայի անապատում, այն, թե նրանց երազանքներն ինչ են դարձել: Իռլանդիայում Ֆաբիանը գուցե մի երեխայի ճակատագիր վերցնե՝ քաղաքացիական պատերազմը պատկերելու համար:

Նույնը նա կաներ նաեւ, եթէ պետք լիներ պատկերել Սյունիսեանի սննդամթերքի շուկան: Դրա կայացման մասին կարելի է կարդալ նաեւ թվերով լեցուն տարեկան հաշվետվություններում. Ֆաբիանի համար սրանից միայն այն ժամանակ ռեպորտաժ կստացվի, եթէ նա մի առանձին մարդու կյանքի օրինակով կարողանա տեսանելի դարձնել, թէ վիճակագրությունն ինչ է նշանակում:

## **Պատմություն հյուսելու նմուշը «Ընթերցողի ուշադրությունը պահել ...»**

Սկզբում հայացքը որսացող խայծ, խայծի շարունակություն, վերադարձ: Այսպես է Ռայներ Ֆաբիանը կառուցում իր պատմությունը: Այսպիսին էր նաեւ Քենսկու դրամատուրգիան: Նույնն է ցանկանում նաեւ Յենրի Նանենը. «Շերնում» մենք միշտ կընտրենք մի մուտք, որը ա) բեմական է եւ բ) ընթերցողին նույնացման հնարավորություն է տալիս: Բեմական ասելով՝ հասկանում ենք ընթացք, իսկական պատմություն, սկիզբ՝ գործողությամբ...»:

«Շերնի» գործելակերպը փորձված է նաեւ «Բիլդ ամ Ջոնթագ»-ում: Եվալդ Սթրուվեն քարոզում էր իր երիտասարդ լրագրողներին.

- ▶ հմտորեն մուտք գործել որեւէ տեսարանով
- ▶ ջանալ ընթերցողի ուշադրությունը պահել
- ▶ տեղեկությունները հնարավորին չափ այնպես բաժանել, որ ընթերցողը ամբողջ հողվածի ընթացքում այն զգացումն ունենա, թէ շարունակ նոր բան է իմանում
- ▶ մի գեղեցիկ մանրամասն, որպես «աղ» պահել վերջի համար: Ընթերցողը պետք է հետաքրքրված մնա մինչեւ վերջին տողը:

Անձնավորել. սրա կողմնակիցն է նաեւ Ռոդ Ֆլեյդը՝ մի ժամանակ «Աբենդգայտունգի» գլխավոր խմբագիրը: Նրա ձեռքի տակով հազարավոր ռեպորտաժներ են անցել: Դրանց միջի լավերի համար բնորոշ էր հետեւյալը.

«Նկարագրական ռեպորտաժ գրողը ամեն ինչ բաժանում է գործողությունների ու պատկերների, նա ճառագայթով սթափ թափանցում է հրատապ լուրի մեջ, մարդկայինը բերում առաջին պլան, նա դրոշում է պատմության գործողությունների ընթացքը եւ այն կարմիր թելի նման տանում առաջին տողից մինչեւ վերջինը, նա հոգում է յուրաքանչյուր

պարբերության վերջի եւ ամեն մի նոր պարբերության կամ մտքի սկզբի միջեւ՝ հմուտ անցումների համար, նա գործող անձանց, տուժածներին, զոհերին, վերապրածներին այնպես է նկարագրում, որ ընթերցողը նրանց իրականում տեսնում է իր աչքի առաջ, նա դրամատիկական շեշտեր է դնում այնտեղ, որտեղ լարվածությունը թուլանում է, որպես լրագրող, նա ներկայացվող թեմայի սահմաններում որոշ չափով ռեժիսորություն է անում. անկախ թեմայից՝ քաղաքական, տնտեսական թե մարզական: Վերջին նախադասությունները՝ շրջանը փակելու համար, կրկին կանդորադառնան առաջին պարբերությունից վերցված մի առանցքային բառի»:

Թերթենք Ֆաբիանի ռեպորտաժը: Ինչպե՞ս վերջացավ կանտորի պատմությունը, որը Ցինցինատիում երազում էր՝ Իսրայելում մանրավաճառությամբ զբաղվելու մասին: Եվ որը իրականացրել էր այդ ցանկությունը:

Կյանքը անապատում հիասթափություն է: Ռայներ Ֆաբիանի եզրափակող նախադասությունը.

*«Գիտես, ասում է ճաղատ մանրավաճառը, երբեմն ես նորից երազում եմ: Ես հիշում եմ Ցինցինատին, ու թե որքան խաղաղ էր այն ժամանակ»:*

Տեսարան - պատկերավոր նկարագրություն - վերադարձ - տեղեկություններ: Մարդիկ առաջին պլան - տեսարաններ - եզրափակիչ պոնտ: Արդյո՞ք այս սխեման արտահայտում է միասնական գերմանական նկարագրական ռեպորտաժը: Ո՛չ:

Այս եղանակով կարելի է ներկայացնել ամեն ինչ. քաղաքական սուր ռեպորտաժ, սրտառուչ պատմություն, լարվածություն, մերկացում, արկած: Այս նմուշով կառուցված են Վալրաֆի ռեպորտաժները, բայց նաեւ նրա հակառակորդների նկարագրական ռեպորտաժները, նմուշը թույլատրում է լրագրության բոլոր տարատեսակները՝ լրատվական, սուբյեկտիվ, հետաքննական, հեզմական, փաստաբանական լրագրություն, առաջին դեմքով գրված եւ ժամանակագրական ռեպորտաժներ:

Այս թվարկումից առնվազն մեկ բառ բացատրման կարիք ունի, դա հետաքննական լրագրությունն է: Կրկին անգամ հարց. ի՞նչ է սա: Իսկապե՞ս կան ռեպորտաժի կամ նկարագրական ռեպորտաժի նոր ձեւեր, որոնց մասին առօրյայում ընդհանրապես չես մտածում:

# Ռեպորտաժի նոր ձեւեր

## ԽԼՈՒ՞ՐՈՂ, ՅԵ՞՞ Խցիկ

Մեկը զբաղվում է հրապարակային լրագրությամբ. նա գրում է միայն այն, ինչ լսում է, ինչ նրան ասում են, նա տեսնում է միայն այն, ինչ նրան ցույց են տալիս: Այդ ամենը կարող է ազնիվ, օգտակար, իսկ առօրյայում նույնիսկ ճիշտ լինել. քաղաքային ավագանու ամեն հաղորդագրության ետևում տեղական Ուոթերգեյթ թաքնված չէ: Բայց «հրապարակային լրագրություն» բառն ինքնին արդեն տհաճություն է ցույց տալիս: Երեւի միայն դա չէ լրագրողի առաջադրանքը: Արդյոք նա պետք է միայն ռե - ակցիա՞ ցուցաբերի, թե՞ նաեւ ակցիա. վարագույրները մի կողմ քաշի՞, երբ ինչ-որ բան է թաքցվում, ինչը չպետք է զաղտնի մնա հասարակությունից: Ազրե-սի՞վ = պրոգրեսի՞վ: Այդ երեւույթի համար Ամերիկայից եւս մի բառ ներմուծվեց, եւ լրագրությունն անմիջապէս փոխառեց այդ հասկացությունը, բայց ցավոք չթարգմանեց՝ **ինվեսթիգեյթիվ** լրագրություն:

- Այ սա է պետք, այստեղ է սկսվում նոր լրագրությունը, սա ենք ուզում սովորել,- ասում են ուսանողները:

Եթե նրանք որոշ չափով լավ խմբագիր կամ ուսուցիչ ունեն, ապա նրանք դա արդեն սովորում են: Միայն բառն է նոր. հասկացությունը, որն այն ընդգրկում է, այնքան հին է, ինչքան լրագրությունը: Նկատի ունենք ժուռնալիստիկան, որը հետախուզում է, հայտնաբերում, քըչփորում, շարունակում քըչփորել, մերկացնում, հետազոտում՝ investigate բառը այլ բան չի նշանակում: Վեբսթերի բառարան՝ to search (into), to inquire - փնտրել, հարցնել:

Այս մասին պրոֆեսոր Ջոն Յոհենբերգը՝ Նյու Յորքի հայտնի Կոլումբիա համալսարանից.

«Չետաքննական (Investigativ) լրագրություն ասելով՝ պարզապէս հասկանում ենք, որ մեկ կամ մի քանի լրագրողներ մի պատմության հետեւից են գնում եւ կարելոր տեղեկություններ բերում, որոնք նրանք չէին ստանա պարբերական կամ պաշտոնական աղբյուրներից»:

Բայց դա անում է յուրաքանչյուր իսկապէս լավ լրագրող. այն լրագրողը, որը քաղաքական գործչի ուսի վրայով է նայում, մի Քեմփսկի, որն ամեն ինչ նորից է ստուգում ու իմանում ճշմարտությունը, մի Ֆաբիան, որը Սինայի անապատի մասին Սինայի անապա-

տից է հաղորդում ու չի բավարարվում արխիվային գործով: Հետաքննական լրագրությամբ զբաղվում է նաեւ տեղական թերթի այն խմբագիրը, որը սեփական նախաձեռնությամբ ուսումնասիրում է իրավիճակը տեղական հիվանդանոցում կամ զբաղվում է հասարակական շենքերի գների կասկածելի բարձրացման հարցերով:

## **Բոլոր փաստերը պետք է ճիշտ լինեն...**

Փորփրելն ու կրկին հարցում կատարելն արհեստում նույնքան անհրաժեշտ են, որքան անխոնջ ջանասիրությունը, որը Ուոթերգեյթի գործում լրագրողներին շարունակ մի վկայից մյուսին էր մղում: Դրա համար հարկավոր են հաստատականություն, բայց եւ՝ երեւակայություն:

Ինչի՞ համար: Ոչ թե հնարելու, այլ միայն գտնելու: Էզոն էրվին Քիշը՝ սլացող լրահաղորդը, այդ մասին ասել է. «Արդյո՞ք ճշմարտության նկարագրման համար երեւակայություն պետք չէ: Ծիշտ է, երեւակայությունն այստեղ չպետք է ընդարձակվի այնքան, որքան կցանկանա: Միայն փաստի եւ փաստի միջեւ ընկած նեղ արահետն է իրեն թույլատրված՝ պարելու համար»: Սակայն երեւակայությունը հարկավոր է: Ինչի՞ համար. այդ մասին կարդանք «Ցայթի» լրագրող Ռուդոլֆ Վալտեր Լեոնարդի մենագրությունում.

«Բոլոր փաստերը պետք է ճիշտ լինեն, եւ դրա համար, ամենից առաջ դրա համար թափվող ջանքն ու աշխատանքը երբեք շատ չեն կարող լինել: Սակայն միայն փաստերը բավական չեն: Դրանով է ռեպորտաժը տարբերվում վավերագրությունից: Եվ արդեն վավերագրությունը կարիք ունի սուբյեկտիվ երեւակայության, որը կորոշի, թե փաստացի տվյալների անվերջ քանակից որոնք են հաղորդվելու արժանի: ... Լրագրողի երեւակայությունը կիրառվում է փաստերի, փաստաթղթերի, տվյալների նպատակահարմար ընտրության եւ դասավորության համար: Աշխատանքի մասին խորհելու ժամանակ մի քիչ փիլիսոփայությունն անշուշտ չի վնասի»:

Լեոնարդը սա գրել է «ռեպորտաժ» թեմայի վերաբերյալ խորհրդածությունում: Վերնագիրը՝ «Խցի՞կ, թե՞ խլուրդ» մատնանշում է, թե ինչպես է իր համար հնչում հիմնական հարցը: Արդյո՞ք լրահա-

դորդը պետք է միայն դիտի, հիշի, տվյալներ վերամշակի, թե՞ նա կարող է նաեւ խլուրդ լինել, որը զարտուղի ճանապարհներով փոռում-մտնում է այն նյութի մեջ, որից կազմված է իրականությունը:

Հիշենք Գյունտեր Վալրաֆի ռեպորտաժները. արդյո՞ք նրա մեթոդները թույլատրելի են: Կարելի՞ է արդյոք, ինչպես նա էր անում, կեղծ անվան տակ սողոսկել մի ուրիշ թերթ, ձեռնարկություն, որպես իր իսկ կողմից ուղարկված գաղտնի գործակալ՝ այնպիսի բաներ լրտեսելու համար, որոնք համապատասխան անձանց համար չափազանց տհաճ են:

Կարելի՞ է, պե՞տք է, ե՞րբ է դա արդարացված: Ռուդոլֆ Վալտեր Լեոնարդ.

«Այն որ Վալրաֆն այնտեղ, որտեղ կողմնակի անձանց տեղեկություններ տալուց հրաժարվում են, սողոսկում է իրագեկների մի փոքրիկ խմբի մեջ, կարող է հակասել շատ բարոյական պատկերացումների. լրագրային էթիկային սա համապատասխանում է: Ամբողջական կոմպոզիցիա ստեղծել կարողանալու համար՝ լրագրողը նույնիսկ այն ժամանակ պետք է փորձի ամեն ինչ պարզել, երբ նա, անհրաժեշտ նկատառումներից ելնելով, հասկանում է, որ ամեն ինչ պետք չէ գրել: Անհրաժեշտ նկատառում կլիներ օրինակ՝ նրա տեղեկատուների անվտանգությունը»:

Նպատակն իբր արդարացնում է միջոցները, սակայն այն չի պաշտպանում պատժից: Լրագրողը, որը կեղծ կոչումով, կեղծ անվան տակ, կեղծ տվյալներով է գործում, կարող է հեշտությամբ հայտնվել քրեական հոդվածների մացառուտում՝ պաշտոնատար անձի իշխանության յուրացում, բնակարանի անձեռնմխելիության խախտում. խարդավանքի դեմ օրենքների մի ամբողջ ցուցակ կա:

Չնայած դրան՝ Վալրաֆի մեթոդը շատ լրագրողների երազանքն է: Ոչ միայն որպես հյուր, այլև որպես խաղի մասնակից, բախտակից վերապրել թեման, ինչպես Ջեկ Լոնդոնը, որը ընկղմվում էր Լոնդոնի ետնախորշերի մեջ՝ դրանք նկարագրելու համար: Լավ է, երբ լրագրողները վարձվում են որպես օգնող բանվորներ՝ շինարարությունում աշխատանքային պայմաններին ծանոթանալու համար: Ամենալուրջ թերթն անգամ համաձայն կլինի, որ լրագրողն ուսանող ձեւանա՝ բնակարան վարձելու հետ կապված դժվարություններին ծանոթանալու համար: Նման դեպքերում ինչքա՞ն հեռու կարելի է գնալ՝ իհարկե միշտ ճշմարտությունից ոչ մի քայլ չհեռանալու նախապայմանով: Սահմանները յուրաքանչյուր թերթ ինքը պետք է ո-

րոշի՝ հրատարակչության իրավաբանի օգնությամբ. ամենալավը նրան նախօրոք հարցնելն է, թե որտեղ է վերջանում լրագրողի ազատությունը:

## «Խորանալ ... »

Արդյո՞ք մեզան ռեպորտաժների համար, որոնք որոնման հաստատակամություն, ժամանակ ու խորություն են պահանջում, բավական է «հետաքննական լրագրություն» պիտակը: Ամերիկացիները դրա համար այլ արտահայտություններ էլ են գտել. in depth reporting եւ «Interpretative reporting»: In depth reporting նշանակում է խորանալ, նույնիսկ երկար ժամանակ մասնակցել: Չմնալ մակերեսում, ոչ միայն հաղորդել քաղաքական գործիչների՝ հետնախորշեր կատարած այցի մասին, այլև հիմնովին պատմել հենց հետնախորշերի մասին, «ամբողջովին խորանալ այն մարդկանց կյանքի մեջ, ում մասին ուզում ես հաղորդել», ինչպես ասում է ամերիկացի լրագրագետ Jerome Aumante-ն: Դրանից ստացվում է մեկնող, մեկնաբանող, պարզաբանող լրագրություն, որն ընթերցողին պետք է բացատրի ոչ միայն իրադարձությունը, այլև նրա զարգացումը, որը դատում է, դատապարտում:

Ամեն դեպքում. փաստերը պետք է ճիշտ լինեն: Ամեն խոսք պետք է ճիշտ լինի: Սակայն Լեոնարդը սրանում ամենեւին էլ միայն իրավաբանական կողմը չի տեսնում.

«Վալրաֆի եւ կուսակցական մերկացման մասին ռեպորտաժի դեմ այլ մտորումներ են խոսում: Արդյո՞ք խլուրդը (օգտագործելով Ջոն Լեկլերի փոխաբերությունը) պետք է գետնափոր անցքերում պրպտի: Երբ նա, նպատակին հասնելով, ճիշտ այն է նկարագրում, ինչ ինքը տեսնում է, լսում, ճաշակում, հոտ քաշում, զգում, ապա նա հարստացնում է մեր բոլորի տեղեկատվական մակարդակը, մեր աշխարհայացքը, նա լուսավորում է մեզ: Բայց եթե մեկը ճանապարհ է ընկնում՝ միայն գտնելու համար այն բանի հաստատումը, որ վերելիները հիմար են ու չար, իսկ մենք այստեղ ներքեւում, թեւ փոքր ենք, բայց մաքուր, ապա նա նույն հաջողությամբ կարող էր տանը մնալ: Չէ՞ որ նա ոչ մի նոր բան չի իմացել: Անձնական կամ կուսակցական տեսակետների ու հայացքների պատշաճ հրապարակման համար գոյություն ունի առաջնորդող հողվածի

հարգարժան լրագրային ձեւը: Առաջնորդող հողված գրողը, որը քողարկվում է որպէս լրագրող, վատ դեր է խաղում: Լրագրողական ուսումնասիրության ժամանակ կարելի է թաքնվել միայն այն դեպքում, երբ այլապէս փաստերի հայթայթումը հնարավոր չէ: Ստեղծագործելու նպատակը ճշմարտությունն է: Ամեն աղավաղումից այն կաղավաղվի»:

## **Յենրի Նաննեն.** **«Լրագրողների խելոք ձեւանալու դեմ ...»**

Դատողությունը չպետք է նախապաշարմունք դառնա: Սակայն դա շատ հաճախ է պատահում: Յենրի Նաննենը մի անգամ «Շերմունում» գրել է. «Նրան, ով մասնագիտության բերումով գերմանական թերթեր է կարդում, չի լքում այն զգացումը, թե ռեպորտաժը կարծես մտահոգված, տեղի է տալիս լրագրային մեկնաբանների խելոք ձեւանալուն»:

Ռեպորտաժը պետք է խուսափի խմբագրանման երանգներից՝ ամենեւին էլ չհրաժարվելով կարծիքից: Յուրաքանչյուր սեփական հայացք սուբյեկտիվ գործ է, դա միանգամայն պարզ է Քենփսկուն, Յոլցերին ու Ֆաբիանին: Մեկնաբանության վերածված ռեպորտաժը էական տարբերությունն այն է, որ խոշոր գրողները կարծիք արտահայտում են, բայց առաջնությունը դրան չտալով: Նրանք երբեք չեն ասի, արեւածագը գեղեցիկ է: Նրանք այնպէս կնկարագրեն, որ ընթերցողը մտածի. ախ, ինչքան գեղեցիկ է այն եղել: Նրանք փաստեր են բերում, որոնք կարող են կարծիք առաջացնել: Նրանք նկարագրում են, բայց չեն հրահանգում: Մինչեւ հիմնավորելը նրանք խորամուխ են լինում հարցի էության մեջ: Սակայն նրանք փաստերից չեն շեղվում: Սա է ելակետը.

«Այսպէս կոչված փաստերը, որոնց տակ պետք է հասկանալ լրագրողի տեսած իրականությունը, պետք է հաղորդվեն: Սակայն ինչպէս պետք է հաղորդվեն, սա է հարցը»,- տարիներ առաջ գրում էր հրապարակախոս Էրիխ Կուբին.

«Լուրի եւ մեկնաբանության միջեւ, սուբյեկտիվության եւ օբյեկտիվության առումով, գտնվում է ռեպորտաժը: Լրագրողական արհեստի շրջանակում անըմբռնելի բարոյական ֆենոմենների թվին է պատկանում այն, որ երբեմն լսում ես այն պնդումը, թե կան օբյեկտիվ ռեպորտաժներ,

այո՛, նույնիսկ պահանջներ կան, որ ռեպորտաժը օբյեկտիվ լինի: Եթե կարելի է հարցնել՝ ինչո՞վ է տարբերվում ռեպորտաժը լուրից: Եթե տարբերակեմ, ելնելով ընդունված պրակտիկայից, ապա միայն նրանով (բացառությամբ նրան, որ ռեպորտաժը կարող է ավելի երկար լինել, քան լուրը), որ լուրի մեջ սուբյեկտիվությունը քողարկվում է, մինչդեռ ռեպորտաժն իրենից պահանջ է ներկայացնում ընթերցողին՝ իրականությունը, այն մի կտոր իրականությունը, որի մասին հենց խոսվում է, տեսնել լրագրողի աչքերով ...»:

Արդյո՞ք այս դեպքում սուբյեկտիվության ամենաազնիվ, ամենաբարձր ձևը առաջին դեմքի ձևը չպետք է լինի: Շատերը խուսափում են դրանից. «ես»-ը կարող է սնապարծ, անհամեստ, աներես թվալ: Ռուդոլֆ Վալտեր Լեոնարդը սրան բոլորովին այլ կերպ է նայում.

«Լրագրողի ճիշտ հասկացված էս-ը համեստության էս է. համաշխարհային ոգին, այսպես է ասում այդ էս-ը, դա անշուշտ այլ կերպ է տեսնում: Դու էլ, ընթերցող, դա անշուշտ այլ կերպ կտեսնեիր: Ես, որ իմ ընկալման սահմանափակ կարողությամբ, իմ նախապաշարմունքներով, գուցե քնատ կամ միայն ցրված, հարբուխից կամ հոգսերից տանջված ստանձնել եմ կամ ինքս եմ իմ վրա վերցրել հանձնարարությունը՝ քո փոխարեն ինչ-որ բան ապրելու, որի հնարավորությունը դու չունեիր, եւ դա քո համար նկարագրելու. էս դա հիրավի, ինչպես որ փորձում եմ այստեղ նկարագրել, տեսել եմ, լսել, հոտ առել, ճաշակել, զգացել»:

Այս սուբյեկտիվության միջոցներից մեկը ռեպորտաժում կարող է լինել նաեւ հեզմանքը, ինչպես դա «Ջյուդոդոյէ Ցայթունգ»-ում ցույց է տալիս Յերբերտ Ռիլ-Յոյզեն: «Ցայթը» նրա աշխատանքները բնութագրեց «որպես խելացի, սառը, մեծամիտ, ինքնահավան», թեւ նա բառի բուն իմաստով ինքնահավան չէ: Յերբերտ Ռիլ-Յոյզեի համար բացահայտ սուբյեկտիվությունն ավելի շուտ ժուռնալիստական ազնվության ցուցադրում է, հենց այն խոստովանությունը, որ առաջարկվում է ոչ թե համապարփակ հասկացողություն, այլ առանձին մարդու հայացքներն ու իմացությունները: Ներկայացնենք Ռիլ-Յոյզեի՝ հեզմանքի հատուկ սահմանումը. «Ոչ թե խայթոտու-

թյուն, ոչ թե ցինիկություն, ոչ թե չարախնդություն, այլ դյուրագգայունություն ու զգացմունքներ, որոնք դառնությունից ու սարկազմից կարող են հասնել մինչև բացարձակ ծաղրանքի»: Որպես Ռիլ-Յոյզեի ռեպորտաժների մի փոքրիկ նմուշ, ներկայացնենք նրա դիտարկումները Հռենոսով նավարկության ժամանակ.

*«Մեր նավը դանդաղ անցնում է հինավուրց տների կողքով, որոնք այնտեղ երազկոտ փարված են գետի ափին... Կեսօր է, ապրիլյան արեւը զգուշորեն խաղում է գետի ալիքների հետ, եւ նա, ով պարաս է, ուրախանում է հիմա բաց գուններանգներով, որոնցում ջրի մեջ բեկվում է լույսը. կանաչ շողշողում է ալիքը, կապույտ էլ կա, եւ նույնիսկ մի փոքր էլ ոսկեգույն՝ մուգ ֆոնի վրա: Իսկապես ապշեցուցիչ է, թե մի քանի լիտր բաց թողնված քսայուղը արեւի շողերի տակ ինչպիսի փայլ է տալիս արգանակին ...»*

Խաբվում է նա, ով գայթակղվում է եւ առաջին տողերից հետո կարծում, թե մի իսկական ռոմանտիկ հայեցողություն է կարդում: Ջրում արեւի խաղից հանկարծակի ուստյուն դեպի փաստերը: Գույների փայլ եւ յուղի արգանակ. Ռիլ-Յոյզեն փորձում է առօրյայում հայտնաբերել տեսածի եւ իրականում գոյություն ունեցողի միջեւ հակասությունները, նա չափազանցնում եւ խիստ նվազեցնում է, երբ օրինակ հաղորդում է Լանդթագի մի պատգամավորի ընդունելության ժամի մասին. «Շատ բան նրանից այսօր չի սպասվում՝ ընդամենը մի քանի հրաշք»: Սակայն այսպիսի լեզվական խաղերը միայն օժանդակ միջոց են «կորզելու այն, ինչ էական ու բնորոշ է պատմության համար»:

Այստեղ էլ է շրջանը փակվում: Ռիլ-Յոյզեի նպատակը ոչնչով չի տարբերվում Քենփսկու կամ Վերներ Հոլցերի նպատակից. այն է՝ խորքը բացահայտել, ավելի մանրագնին դիտել, պատմություն պատմել, «սուբյեկտիվ, բայց ճշմարտացի» լինել: Ռիլ-Յոյզեն զրույցում դա մի քանի անգամ է կրկնում: Անհմաստությունը հայտնաբերելու համար նա ստիպված է ավելի հիմնովին ուսումնասիրություն անցկացնել, քան մեկը, որին տեսածը բավական է:

Արդյո՞ք հնարավոր է սովորել ծաղրելն ու հետաքննելը: Նույնիսկ այստեղ լավ մտահղացումները միշտ չէ, որ պատահականություն են: Ծաղրելուն նախելառաջ նախորդում է ուսումնասիրությունը: Ով ուզում է սուբյեկտիվ լինել, պետք է միեւնույն ժամանակ մանրամասն ուսումնասիրի իր դիտարկման օբյեկտը: Նյութի խորքը փորփորելու փորձը՝ սա է միշտ առաջին քայլը:

## Գրականություն

Höhne, Hansjoachim,

Report über Nachrichtenagenturen, Bd. 1: Die Situation auf den Nachrichtenmärkten der Welt, Bd. 2: Die Geschichte der Nachricht und ihrer Verbreiter, Nomos Verlagsgesellschaft, Baden-Baden 1977

Steffens, Manfred,

Das Geschäft mit der Nachricht, Hoffmann und Campe, Hamburg 1969

Steinbuch, Karl,

Maßlos informiert - Die Enteignung unseres Denkens, Herbig Verlagsbuchhandlung, München-Berlin 1978

Watzlawick, Paul,

Wie wirklich ist die Wirklichkeit?, R. Piper & Co. Verlag, München-Zürich 1976

Wilke, Jürgen (Hrsg.),

Agenturen im Nachrichtenmarkt, Böhlau Verlag, Köln-Weimar-Wien 1993

Auf empfehlenswerte Lehrbücher zu den Themen Nachrichten, Reportage, Feature usw. wird auch im Literaturverzeichnis am Ende des Kapitels Interview hingewiesen.

V  
ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՀՈՂԿԱԾ -  
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ - ՌԵՊԼԻԿ

Կողմնորոշվելու օգնություն  
կարծիքների հեղեղում

Դրա համար նաեւ կիրք է պետք ...  
Չափանիշներ կարծիք-հողվածի համար

Զգուշացեք հեգնանքից ...

Մշտական այս դատողությունները ...  
Մեկնաբանող ժուռնալիստիկա.  
պարզել, շարադրել, մեկնել

# Կողմնորոշվելու օգնություն կարծիքների հեղեղում

*«Ես բողոքում եմ, ես բողոքում եմ գեներալ դե Պելյոյի եւ մայր Դավարի դեմ՝ հանցավոր դատաքննություն անցկացնելու համար... Ես բողոքում եմ պաշտպանության նախարարության դեմ ... Եվ վերջապես ես բողոքում եմ առաջին ռազմական տրիբունալի դեմ՝ օրենքը բռնաբարելու համար»:*

Սա հատված է հայտնի առաջնորդող հոդվածից, որը լույս է տեսել 1898թ. հունվարի 13-ին՝ փարիզյան «Ավրորա» թերթում: Գրող Էմիլ Զոլան սա գրել է՝ ի պաշտպանություն կապիտան Ալֆրեդ Դրեյֆուսի, որը կեղծ ապացույցների հիման վրա, լրտեսության մեջ մեղադրվելով, աքսորվել էր Սատանայի կղզի: Զոլան դրանից հետո ռազմական դատարանին վիրավորելու համար դատապարտվեց մեկամյա բանտարկության: Նախքան դատավճիռը ի կատար կածվեր՝ նա փախավ Անգլիա:

*«Իհարկե, Վիրջինիա, ձմեռ պապ կա: Նա կա նույնքան հաստատ, որքան կան սերը, մեծասրտությունը եւ հավատարմությունը, որոնք, ինչպես դու գիտես, առատորեն սփռված են եւ մեր կյանքի խորին գեղեցկությունն են կազմում: Ա՛խ, որքան անմխիթար կլիներ մեր աշխարհը առանց ձմեռ պապի»:*

Սա նույնպես առաջնորդող հոդված էր, ու ոչ մի այլ հոդված այնքան հաճախ չի տպագրվել, որքան սա: Այն կարդում էին 1897թ. սեպտեմբերի 21-ին Նյու Յորքի «Սան» թերթում: Խմբագիր Ֆրենսիս Ֆարսելուս Քարչը դրանով պատասխանել էր ութամյա Վիրջինիա Օ՛Րանլոնի նամակին, որն ուզում էր իմանալ՝ արդյոք ձմեռ պապ կա՞: «Չայրիկն ասում է. եթե «Սան»-ում այդպես է գրված, ուրեմն դա ճիշտ է»: Նաեւ մեր ժամանակներում այս նամակագրությունը թերթերն ամեն տարի կրկին հանում են գզրոցից եւ հրատարակում Սուրբ ծննդյան տոներից:

## Էմիլ Դովիֆաթ Գրոհել, պահանջել, պարզել...

Երկու օրինակն էլ ցույց են տալիս, թե որքան գունեղ է հնարա-

վորությունների ներկայանալը կարծիք-հողվածի համար: Այն թեթև գրույցից հասնում է մինչև բանավեճի շանթող խոսքերը, սիրառատ խրատից մինչև կրակոտ մեղադրանք: Լրագրության տեսաբաններ էմիլ Դովիֆատն ու Յուրգեն Վիլկեն գտան հետեւյալ ստորաբաժանումը.

Մտավոր խմբավորման դեպքում կարող ենք տարբերել. պայքարող առաջնորդող հողված, որը գրոհում է, պահանջում, գերում, ակցիա է եւ կարող է քաղաքական արարք լինել: Դիրքորոշող եւ հիմնավորող առաջնորդող հողված, որն ուզում է համոզել դիպուկ փաստարկներով եւ ստիպողական տրամաբանությամբ: Պարզաբանող եւ տեղեկացնող առաջնորդող հողված, որն ինչ-որ բան է պարզ շարադրում, դժվարագույն կապեր բացում եւ ընթացքի մեջ դնում: Հետահայաց խմբագրական, որն ասում է, թե ինչ է ստացվել եւ թե ինչպես է այդպես ստացվել, հաճախ թեթև կամ վառ արտահայտված գոհունակությամբ, թե նա դա վաղուց է ասել: Հատուկ լրագրողական հմտության առարկա են հիշատակային հողվածները: Նրանք պահանջում են խոսքի արժանապատվություն՝ առանց կեղծ պաթոսի, տակտ, եւ երբ մարդն ու նրա գործը դրան արժանի են, նաեւ մարդկային ջերմություն: Ակնարկային առաջնորդող հողված, որն առանց մարգարեության հավանականորեն ասում է՝ ինչ է լինելու: Եվ վերջապես հայեցական առաջնորդող հողված, որը ենթակա է շաղակրատության մակարդակին իջնելու վտանգին, բայց հենց այդ պատճառով էլ հաճույքով է կարդացվում, եթե լավ է գրված:

Դովիֆատն ու Վիլկեն առաջնորդող հողված արտահայտությունը գործածում են որպես ընդհանրապես կարծիք-հողված արտահայտության հոմանիշ:

Արդյոք առաջնորդող հողվածը ավելի բացատրող, թե՞ ավելի բանավիճող պետք է լինի. որոշվում է դեպքից դեպք, օրեցօր, թերթից թերթ: «Ցայթի» առաջնորդող հողվածը՝ առաջին էջի ձեւավորումը, նախ եւ առաջ գնահատական տվող վերլուծություն է, «Մյունխենների Մերկուր»-ը մինչև օրս էլ նախընտրում է բանավեճը, «Ֆրանկֆուրտեր ալգեմայնե»-ն ուզում է երկունս էլ, առաջնորդող հողվածի խնդիրը, ըստ FAZ- ի սահմանման, «ոչ միայն կարեւորագույն իրադարձությունների բացատրությունն է, այլեւ դրանց վիճելի մեկնությունը: Առաջնորդող հողվածը ընթերցողին առաջնորդում է մի ճանապարհով, որով շարժվում է որեւէ թերթի քաղաքականությունը»:

Կարծիք-հողվածը տարբեր անվանումների տակ հանդիպում է ոչ միայն քաղաքականության մեջ, այլ ցանկացած բաժնում՝ հաճախ բնորոշված անփոփոջ խորագրով՝ ասենք «Սահող լույս», «Փաստեր եւ կարծիք», «Օրվա թեմա», «Նշումներ լուսանցքում» կամ «Նոթատետր»:

## Վ. Ե. Զյուսքինդ. «Մեկնաբանությունը գլխավոր հասկացությունն է...»

Լրագրողները հազվադեպ են ասում «կարծիք-հոդված»: Նրանք ավելի շատ խոսում են մեկնաբանության, մեկնաբանելու մասին: Ընդհանրապես ընդունված է Վ. Ե. Զյուսքինդի սահմանումը, որը տասնյակ տարիներ շարունակ «Զյուդդոյչե Ցայթունգ»-ում պայքարում էր ավելի լավ գերմաներենի համար: Նա գրում էր.

«Մեկնաբանությունը գլխավոր հասկացությունն է. առաջնորդող հոդվածը նույնպես կարող է մեկնաբանություն լինել, մինչև որոշակի աստիճան այն նույնիսկ միշտ է այդպիսին եւ միայն (բոլորովին էլ ոչ այնքան կանոնավոր ձեւով, ինչպես նրանից իրականում պահանջվում է) իր հետեւությունների, իր զուգորդությունների ու իր մտահղացումների արտահայտման շնորհիվ այն բարձրանում-դառնում է այն, ինչն արդարացնում է նրա բարձր դիրքը պարբերականում: Իր ավելի փոքր ձեւում մեկնաբանությունը ավելի որոշակի է, ինչի մասին վկայում է նրա անվանումը. պարզաբանող, մեկնաբանող ծանոթագրություն՝ հանրահայտի կամ որպես նորություն՝ թերթի կողմից հայտնած իրադրության վերաբերյալ ...»:

*/Գործնական ժուռնալիստիկա/*

Մեկնաբանությունները /այս բառը ծագել է լատիներեն commentarius՝ գրառում, նոթատետր բառից/ չեն սահմանափակվում միայն իրենց համար ստեղծված ռեզերվացիաներով՝ առաջնորդող հոդվածի սյունակներով, կարծիքների էջով եւ տարբեր բաժինների արկղիկներով ու էջաշարվածքներով: Կարծիք է առաջարկում նաեւ թղթակցությունը, որը պարզ ասում է. ես նկարագրում եմ իրավիճակն այնպես, ինչպես տեսնում եմ այստեղ տեղում՝ ականատեսի բոլոր առավելություններով ու թերություններով հանդերձ, որը կարող է միայն մի հատված տեսնել, բայց ոչ ամբողջը:

Կարծիքը հանդիպում է նաեւ իբրեւ շեղագիր լրացում. թերթերի մեծամասնությունը, հետեւելով ավանդույթին, հստակ առանձնացնում է լուրն ու մեկնաբանությունը: Եթե հաղորդագրությանը /հիմնականում աստղանիշով/ դրվում է լրագրային լուսանցքում, ապա կարծիքը նաեւ գրելաձեւով ակնառու կերպով պետք է տարբերվի տեղեկատվությունից:

Լրագրողի կարծիքն ամեն դեպքում պահանջարկ ունի, ամրապնդվում է, առաջ անցնում, կիրառվում որպես օգնություն՝ տեղեկատվության հորձանուտում կողմնորոշվելու, որպես օժանդակություն ընթերցողի՝ ինքնուրույն կարծիք կազմելուն: Այն որսում է օրվա զրույցի թեման, շեշտը դնում է ամենակարեւորի վրա, այն միտում է եւ մատնանշում է միտումները: Համեմատություն է առաջ բերում:

Շանթոլ խոսքը միշտ չէ, որ պետք է վիրավորական իմաստ ունենա: Սրա մասին վկայում է բավարական առաջին ատյանի մի դատարանի որոշումը. խիստ արտահայտությունը կարող է ասվել որեւէ զրույց սկսելու, ավարտելու կամ նրան այլ ընթացք հաղորդելու նպատակով: Նույնը վերաբերում է նաեւ մեկնաբանությանը: Այն պետք է.

- բանավեճ սկսի որեւէ թեմայի շուրջ
- նոր ընթացք ցույց տա կամ՝
- որեւէ իրադարձության վերաբերյալ վերջնական դատողություն հայտնի:

Կարծիք-հոդվածները, ինչպես ասվեց, իրավունք ունեն կրակոտ մեղադրել կամ զրուցել, կարող են նախատել, վերլուծել, պաշտպանել, հեզմել, մեկնաբանել, վիրավորել, զրպարտել, գովել, բժախնդիր կամ մանրախնդիր լինել, քարոզել, ծաղրել, դատապարտել, կշռել՝ միայն թե, հնարավորության սահմաններում, հավասարակշռված չլինեն, ինչպես մենք դա կլսենք հետագայում: Թե նրանք էլ ինչ կարող են եւ ինչ չեն կարող անել, հարցնեցինք «Ցայթի» հրատարակիչ Թեո Ջոնմերից եւ առաջնորդող կրթոտ հոդվածների հեղինակ Ռոբերտ Լայխթից:

## Դրա համար նաեւ կիրք է պետք ...

### Չափանիշներ կարծիք-հոդվածի համար

Ռոբերտ Լայխթը մեզ հայտնի միակ լրագրողն է, որը դեռ ուսանող ժամանակ ուզում էր դառնալ միմիայն առաջնորդող հոդվածներ գրող, եւ որն ավարտելուց հետո այս խնդրի համար դիմեց «Չլուդոյչե Ցայթունգ»: Նա ծաղրի չենթարկվեց, այլ ստուգվեց եւ աշխատանքի հրավիրվեց կարծիքների էջի համար որպես վերլուծաբան, այսինքն՝ որպես խմբագրական հոդվածագիր: SZ-ում նա

առաջ գնաց, մինչեւ 1997-ի աշունը «Ցայթի» գլխավոր խմբագիրն էր եւ հետագայում էլ մնաց այդ հրատարակության հեղինակ:

Նա՝ կրքոտ հողվածագիրը, այսպիսով, գրում է այն թերթի համար, որն առաջնորդող հողվածին տրամադրում է ամենաաչքի ընկնող տեղը, որ կարող են հատկացնել լրագրերը կամ հանդեսները: Դա բացումն է, այսինքն՝ առաջին մեծ հողվածը առաջին էջում:

Արդյո՞ք վերջին տարիներին ինչ-որ բան փոխվե՞լ է: Ռոբերտ Լայխթը պատկանում է 60-ականների սերնդին, որոնք կարծում էին, թե կարող են կարծիքի, պաշտպան կանգնելու, ազիտացիայի միջոցով աշխարհ փոխել: Նրանք ասում էին այն, ինչ մտածում էին եւ դա ասում էին ազդեցիկ հնչեղանգով: «Յավասարակշռված» բառը կասկածելի էր հնչում: Ոչ, նրանց կարծիքը հավասարակշռված չպետք է լիներ, բայց անշուշտ մանրագնին ու համոզիչ հիմնավորված: Լայխթը փոքր-ինչ զարմացած արձանագրում է, որ հաջորդ սերունդը, որը գալիս էր խմբագրություն, առաջնորդող հողվածն այլեւս ամենահետաքրքիր, ամենակարեւոր լրագրային արտահայտչամիջոցը չի համարում, նրան ավելի շատ ռեպորտաժն է հրապարակում: Ինչը նշանակում է դրական իմաստով փաստերի միջոցով կարծիք ձեւավորել:

«Ցայթի» առաջնորդող հողվածները նաեւ արտաքննապես են փոխվել: Լայնարձակ տպագրական ձեւավորումը, հակիրճ խոսքի նկատմամբ հակվածությունը իրենց ազդեցությունն են թողնում. «Մեր հողվածները, հիրավի, ընդհանուր առմամբ, ավելի կարճ են, քան նախկինում: Բոլոր էջերում: Առաջնորդող հողվածը կորցրել է իր ծավալի 30 տոկոսը»:

Ռոբերտ Լայխթի համար սա թերությունն չէ. «Այդպես հեղինակը ստիպված է ավելի հակիրճ ու ավելի ճշգրիտ փաստարկել ինչ-որ կետի վերաբերյալ: Այլեւս առաջվա նման թեմայի նախապատմությունը ներկայացնելու համար շատ տեղ չի մնում»: Առաջին էջի երկրորդ առաջնորդող հողվածը առանց այն էլ միշտ ստիպված էր բավարարվել ավելի քիչ տեղով: Վերլուծության համար ավելի քիչ տեղ. սա հիմնականում նշանակում է ավելի անձնական, ընդգծված կարծիք:

Ուրեմն խոսքն ինչի՞ մասին է: Առաջնորդող հողվածն առաջին հերթին պետք է բացատրի՞, թե՞ նախ եւ առաջ գրոհի: Այն ի՞նչ է՝ քաղաքական խորհրդատվություն պետք է լինի, հարցնում են երիտասարդ լրագրողները եւ այն էլ՝ կշտամբանքով:

Խնդիրները Լայխթի համար նախկինն են մնացել: «Քաղաքական թեման պետք է այնքան հիմնավոր վերլուծվի, որ հստակ կարծիքի միջոցով ընթերցողներին ստիպի սեփական տեսակետ ձեւա-

վորել: Նրանք կարող են համակարծիք լինել հեղինակին, բայց նույնքան լավ է նաեւ, երբ նրանք խորհելու դրողով, վիճահարույց հարցերը այլ կերպ են գնահատում, քան հեղինակը»:

Առաջնորդող հողվածք, որը միայն գրոհում է կամ միայն բանավիճում, Լայխթը ձանձրալի է համարում: Միայն վերլուծությունը բավական չէ, դրա համար նաեւ կիրք է պետք. «Ով ուզում է ինչ-որ բան քաղաքականորեն շարժել, պետք է դիմի ընթերցողի ոչ միայն մտքին, այլ նաեւ սրտին, դիպչի նրա այն տեղին, որտեղ միատեղվում են հույզերն ու բանականությունը»: Վերջում պետք է գերակշռի օբյեկտիվությունը. «Առաջնորդող հողվածք, որը հաշվի չի առնում, թե որն է քաղաքականության մեջ իսկապես իրականանալի, այլ առաջարկում է միայն ուտոպիա, որքանով էլ բանավիճային եւ ազդեցիկ լինի, վերջին հաշվով իսկապես հիասթափեցնող է»:

Ի՞նչ է անում լրագիրը, որ ճիշտ թեմա է ընտրում եւ դրա համար համապատասխան հեղինակ գտնում: Ընտրությունը չի կարող միայնակ որոշման արդյունք լինել, եւ սա վերաբերում է բոլոր թերթերին:

Ռոբերտ Լայխթ.

«Քաղաքական գերատեսչությունների հետ բանավեճերին համատեղ՝ մենք անցկացրել ենք նաեւ առաջնորդող հողվածի սեփական խորհրդատվություն, որպեսզի ամբողջ կոլեգիան կարողանա մասնակցել թեմայի եւ փաստերի ընտրությանը: Այսպիսով, առաջնորդող հողվածք միայն մեկ առանձին գերատեսչության խոսքը չէ, այլ առաջադրվել է մինչ այժմ առավելապես ամբողջ խմբագրության կողմից»:

Ինչպե՞ս են թերթերն ընտրում ճիշտ թեման եւ ճիշտ հեղինակ գտնում դրա համար: Ընտրության մասին որոշումը մի մարդու գործ չէ, եւ դա ըստ էության վերաբերում է բոլոր թերթերին:

Ռոբերթ Լայխթ.

«Քաղաքական բաժնի բանավեճերի հետ մեկտեղ մենք հիմնել ենք առաջնորդող հողվածի քննարկում, որպեսզի թեմայի եւ փաստարկների ընտրությանը կարողանա մասնակցել ամբողջ կոլեգիան: Այսպիսով, առաջնորդող հողվածք ոչ միայն մեկ առանձին բաժնի ասելիքն է, այլ հիմա ավելին, քան երբեւէ՝ ամբողջ խմբագրության»:

Բոլոր թերթերում, «Ցայթ» շաբաթաթերթում, իհարկե նույնպես, որպես հեղինակ ներգրավվում են այն գործընկերները, որոնք «համապատասխան թեմայի ոլորտում արդեն մեծ գործիմացություն են դրսևորել»: Նմանապես նախապայման է հանդիսանում, իհարկե, որ հեղինակները որպես փորձագետներ չխոսեն միայն փորձագետ-

ների համար: «Հողվածը պետք է դիմի ամբողջ հասարակությանը, ոչ թե միայն՝ նրա մի մասին»:

Առաջնորդող հողվածի շուրջ խորհրդակցությունը տեղի է ունենում ուրբաթ օրը, համարը տպագրության է հանձնվում երեքշաբթի գիշերը: Ուրեմն՝ բավական ժամանակ է մնում թեմայի շուրջ խորհելու եւ դրա վերաբերյալ անհրաժեշտ գրականությունը կարդալու: «Լա՛վ կլիներ...», - տրտնջում են հեղինակները: Բավականին հաճախ մի գիշերվա մեջ իրավիճակը փոխվում է, ի հայտ են գալիս նոր հարցեր, որոնք պահանջում են նոր պատասխաններ: Հաճախ պատահում է նաեւ, որ երեքշաբթի՝ տպագրությանը հանձնելուց քիչ առաջ, պետք է ծնվի նոր առաջնորդող հողված՝ նույն շտապողականությամբ, ինչպես օրաթերթում:

«Ցայթի» հրատարակիչ եւ գլխավոր խմբագիր Թեո Ջոնմերի կարծիքով՝ վերլուծությանը եւ գնահատմանը պետք է ավելանա եւս մեկը, նա առաջնորդող հողվածից պահանջում է նաեւ «նվազագույն լուրեր»:

Որպեսզի ընթերցողին պարզ լինի ելակե՞տը:

«Նաեւ դա: Բայց ես համամիտ եմ նաեւ Պաուլ Սեթի հետ, որը ասել է՝ առաջնորդող հողվածը պետք է պարունակի առնվազն մեկ լուր, մեկ փաստ, որը ընթերցողի համար նոր է: Այսինքն՝ ունենա ոչ միայն կարծիք»: Դրա համար էլ Ջոնմերը գրելուց առաջ միշտ մեկ անգամ եւս վերցնում է հեռախոսը՝ ամենավերջին տվյալները ստանալու համար:

Ինչպե՞ս են ընտրվում հեղինակները: Ամեն թեմայի համար՝ իրավասու հեղինակություն:

Ջոնմեր. «Որեւէ մասնագիտական ոլորտի հեղինակությունը միշտ չէ, որ նաեւ ճիշտ հեղինակն է: Որոշ մասնագետներ իրենց թեման չափազանց լավ են տիրապետում, որպեսզի կարողանան այն ընդհանրական ներկայացնել: Մյուս կողմից՝ հեղինակը թեմայի մասին պետք է այնքան իմանա, որ ոչ միայն ամփոփի ուրիշների կարծիքները, այլ ի վիճակի լինի սեփական գնահատական տալ...»

Այս առիթով առաջ է գալիս «հեղինակություն» հասկացության եւս մի լրագրողական սահմանում. «Մեզ մոտ իրոք կարող է հրահանգներ սահմանել միայն նա, ով կարող է ցույց տալ, թե ինչպես պետք է գրել»: Ասել կուզի՝ որպես հեղինակություն ճանաչվում է նա, ով որպես հեղինակ իր գործընկերների համար կայացել է:

Շատ լրագրերի պրակտիկան, ըստ որի առաջնորդող հողվածի այլունակում խոսքը թողնվում է որեւէ մասնագիտական բնագավառի կորիֆեյի, ավելի շուտ բացառություն է: Գրողները, որպես կանոն, լրագրողներ են, որոնք մի քանի հատուկ ոլորտներում գիտակ եւ

հատկապես փորձառու են՝ որեւէ վերլուծություն հասկանալի պատ-  
րաստելու համար:

Այսպես «Ձյուղդոյչէ ցայթունգ»-ում կա այսպես կոչված ար-  
տիստների թեւ. դա խմբագրության մի բաժին է, որտեղ առավելա-  
պես նստում են մեկնաբանները: Սակայն առաջնորդող հոդվածի  
մասնագետներից յուրաքանչյուրն ունի իր հակումները, զուցե մի  
թեմա, որով նա արդեն վաղուց հատկապես հաճույքով ու հիմնովին  
է զբաղվում:

Արհեստավարժության նման տեսակը պահանջում է գիտելիքնե-  
րի ամենօրյա լիցքավորում: Դրա ճանապարհն է. «Կարդացեք տաս-  
նապատիկն այն ամենի, ինչ պետք է իմանաք», - ասում է մինչեւ  
1992-ը «Ցայթի» խմբագիր եւ հրատարակիչ Դիթեր Շթոլցեն: «Կար-  
դացեք եւ ինքներդ ձեզ հարց տվեք: Պատասխաններ չտաք, քանի  
դեռ հարց չեք տվել: Մի շտապեք, լավ խորհեք եւ հետո նվիրվեք  
գրելուն»:

Կարդացեք: Մարիոն Դոնիոֆը նույնպես իր խմբագիրներից  
միշտ դա էր պահանջում: Թեո Ջոնները սա հաստատում է ծննդյան  
մի մեծարանքի ժամանակ.

«Ցայթի խմբագիրների մի ամբողջ սերնդի նա սովորեցրել է, որ  
գրել կամեցողը պետք է կարդա լրագրեր, հանդեսներ, գրքեր: Վայ  
նրան, ով չհասցներ հիմնովին ծանոթանալ անգլիական կիրակնօ-  
րյա մամուլին եւ ամենից առաջ՝ «Observer»-ին (իր լավագույն ժա-  
մանակ): Բարի եղեք կարծիքներից առաջ փաստեր բերելու: Բայց  
նա երբեք թույլ չի տվել սահմանափակվել՝ միայն փաստ հավաքե-  
լով: Կարդալն ամենից առաջ նպատակ ուներ օգնել մտքերի թռիչ-  
քին»:

Թեո Ջոնները, օրինակ, ամեն օր կարդում է 12 լրագիր, դրանց  
թվում՝ երկու ամերիկյան, երկու անգլիական, երկու ֆրանսիական  
եւ մեկ շվեյցարական: «Ջարմանալի է, թե որքան փաստեր կարելի  
է կարդալ բաց մամուլում՝ մանրամասներ, որոնք հաճախ նույնիսկ  
մասնագետների համար բոլորովին նոր են»:

Թեո Ջոնները կարող էր նույնքան հաջողությամբ խորհուրդ տալ.  
«Լսեցեք տասնապատիկն այն ամենի, ինչ դուք պետք է իմանաք:  
Դիտեք տասն անգամ ավելի, քան կարող եք գործածել օպտիկա-  
կան տպավորությունները»: Նրա՝ առաջնորդող հոդվածագրի փոր-  
ձը անշուշտ միայն միջազգային մամուլից չի բխում. նրա պես լրագ-  
րողները փնտրում եւ գտնում են առիթ՝ իրազեկ մարդկանց հետ  
զրուցելու, կոնգրեսներին մասնակցելու, այն իրադրություններին  
ներկա լինելու, որոնք պատմություն են կերտում:

Ջոններ. «Թղթից ստացած գիտելիքը, բնականաբար, միայն ֆոն  
է տալիս եւ բավական չէ: Օրինակ, պետք է անձնական տպավորու-

թյուն ունենալ գործող անձանց վերաբերյալ նրանց եւ իրադարձությունների մասին դատել կարողանալու համար:

Այդ բանի համար Թեո Ջոնմերն իր առջեւ նպատակ է դրել՝ ամեն տարի աշխարհի մի մասի եւ այնտեղի իրադարձությունների հետ անձնական փորձով ծանոթանալ: «Ով ապրել է երեք ճգնաժամ, կարող է պատկերացնել՝ ինչպես կընթանա չորրորդը»:

Որքա՞ն ժամանակ է տրվում առաջնորդող հողվածագրին՝ որեւէ վերլուծություն նախապատրաստելու: Դա, իհարկե, կախված է այն իրադարձության պահից, որը պետք է մեկնաբանվի, ինչպես նաև՝ գրողի հմտությունից ու խառնվածքից: Ամերիկացիները սրա վերաբերյալ միջին թվեր են առաջարկում: Առաջնորդող հողվածների հեղինակների կեսը մեկից երկու ժամ տրամադրում է նախնական ուսումնասիրման աշխատանքներին, իսկ հետո՝ մեկ կամ ավելի ժամ գրելուն: Սա պարզել են Ջորջիա նահանգի համալսարանի վիճակագիրները: Նման վիճակագրությունը սխալ պատկեր է ստեղծում. որոշ լրագրողներ շաբաթներ, ամիսներ շարունակ քննադատորեն զբաղվում են մի թեմայով, իսկ վերջնական հետազոտությունները հենվում են դրանց վրա:

Ինչպիսի՞ն է վերաբերմունքը սրա նկատմամբ շաբաթաթերթերում: Դիթեր Շթուցեն (կեղծանունը՝ Սերկատոր), որն օրաթերթերում իր լրագրողական գործունեության ժամանակ հաճախ հանպատրաստից, քառորդ ժամվա ընթացքում պետք է ձեւակերպեր տպագրության պատրաստ կարծիքներ, երիտասարդ գործընկերներին խորհուրդ էր տալիս չչտապել.

«Առաջնորդող հողվածին պետք է հատկացնել երեք օր ժամանակ: Մեկ օր՝ շուրջբոլորը հոտոտելու եւ թեման յուրացնելու, մեկ օր՝ կարդալու եւ մեկ օր՝ գրելու համար: Կարելի է հասցնել նաև 2 օրում, բայց դրանից ոչ պակաս: Ով գրում է շաբաթաթերթի համար, պետք է ավելի շուտ սկսի, որ շարունակի մտածել: Եթե հեղինակը համարձակվում է ձեռնամուխ լինել նոր թեմայի, կարող է նույնիսկ չորս շաբաթ մտորել, մինչեւ հասունանա գրելու ժամանակը»

Թեո Ջոնմերին գրելու համար պետք է երբեմն երեք, չորս կամ հինգ ժամ: Նախապատրաստական ժամանակը մա չի սիրում չափել: «Սակայն հողվածից պետք է զգացվի, որ այն շնչակտուր չի գրվել՝ վաղվա առավոտվա համար: Այն պետք է դասավորի իրադարձությունները պատմական հեռանկարում, իսկ դրա համար պահանջվում են մշակված գիտելիքներ»:

Իսկ ո՞՞ճը, լեզու՞ն:

Թեո Ջոնմեր. «Առաջնորդող հողվածը պետք է աչքի ընկնի վերամբարձ լեզվով, բայց չպետք է անթացուպերով շարժվողի տպավորություն թողնի: Լեզուն սակայն պետք է այնպիսին լինի, որ գերազանցի

մասանագիտական մտածողությունը»: Ջոնները, երբ հնարավոր է, նաեւ անձնական հոդվածներում է խուսափում «ես» եւ «Մենք» ձեւերից, որը նրան հիշեցնում է «Pluralis majestatis»-ը՝ Նորին Մեծությունների «մենք»-ը: Վերամբարձ խոսքը չի բացառում խիստ արտահայտությունները:

Իսկ ինչպե՞ս վարվել հեզմանքի հետ: Դրանից նախազգուշացվում է: «Ցայթի» հրատարակիչները միշտ այն կարծիք են եղել, թե հեզմանքն ընթերցողի կողմից չի ընդունվում:

Թեո Ջոններ. «Ընթերցողների երեք քառորդը հեզմանքը համարում է փաստերի արձանագրում: «Թերթում ոչ մի հեզմանք». սրան «Ցայթի» հրատարակիչները թերեւս երբեք չեն կարողացել հասնել՝ չնայած որոշ անհաջողությունների, որոնց մասին դեռ կխոսվի:

## **Պաուզ Պուխեր «Ջնտորեն պարզ գրել...»**

Ո՞ր ոճաձեւերն են թույլատրելի:

«Թույլատրելի է այն ամենը, ինչն ընթերցողին ցույց կտա ճիշտ ուղղությունը, գործի էությունը», - տարիներ առաջ ասում էր Պաուզ Պուխերը՝ «Մյունխներ Մերկուր»-ի գլխավոր խմբագիրը: Այսօր սա ինքնընտանիքյան հասկանալի դրույթ է: Պուխերը շարունակում է. «Սակայն լեզուն պետք է համապատասխանի թեմային, առարկեկի քաղաքական նյութին: Կարելի է լինել հեզմական, սարկաստիկ, ինքնահավան, ողջախոհ, ազդու կամ ծաղրական, բայց խնդրե՛մ՝ ձեւակերպման ժամանակ առանց գլուխկոնծի: Պետք չէ չափազանց շատ ձգտել ինքնատիպ լինելու: Առաջնորդող հոդվածը պետք է արդեն լեզվով ակնհայտորեն տարբերվի քաղաքական լրատվության ոճից: Այն պետք է հնտորեն պարզ գրված լինի՝ առանց մոդեռնիզմների»:

Լեզուն չպետք է հարուցի ընթերցողի դժգոհությունը. «Այն կարող է շատ շեշտված, առիթի դեպքում՝ թունդ լինել, պետք է արտահայտի տրամադրությունը, բայց գրելակերպը չպետք է շեղի գործի բուն էությունից: Զգուշացե՛ք յուրաքանչյուր մեկնաբանությունից, որի դեպքում առաջնայինը գրելաոճն է»:

Ըստ Պուխերի՝ ամենալավն այնքան հնտորեն պարզ գրված հոդվածն է, որ ընթերցողը չի էլ նկատում: Վերջինս չպետք է դժգոհություն գգա լեզվից, կպչի նրան. «Այն կարող է շատ շեշտված, առիթի դեպքում՝ խիստ լինել, պետք է արտահայտի տրամադրությունը, բայց գրելակերպը չպետք է շեղի գործի բուն էությունից: Զգուշացե՛ք

յուրաքանչյուր մեկնաբանությունից, որի դեպքում առաջնայինը գրելառճն է»:

Վախենա՞լ առօրյա խոսակցական լեզվից: Դրա շուրջ նույնպես կվիճեն: Անկասկած, կարելի է կիրառել նաեւ այն չափանիշները, որոնք նշում է նախկինում Մոսկվայում մեկնաբան, հետագայում «Վաշինգտոն փոստ»-ի արտաքին քաղաքականության թեմայով առաջնորդող հոդվածների հեղինակ Ստիվեն Ս. Ռոզենֆելդը.

«Երբ ես որեւէ առաջնորդող հոդված եմ կարդում, հետեւում եմ՝ արդյոք գրողը տիրապետո՞ւմ է նյութին, նպատակասլա՞ց է գրում, թե՛ առանց պլանի... Եթե այնտեղ առկա են չափազանց շատ ճամարտակ արտահայտություններ, ինչպես «այսպես ասած» արտահայտությունը, ինձ մոտ կասկած է առաջանում, որ գրողը միայն կրկնում է ուրիշների մտքերը: Ինչ-որ բանի հաստատ լինելը համոզելը հիմնականում խոսում է այդ ամենի այնքան էլ հաստատ չլինելու մասին: Եթե առաջնորդող հոդվածները ավարտվում են հույսի կամ ավստասանքի արտահայտմամբ, ապա դա կարող է նշանակել, որ հեղինակը բավական հիմնավոր չէ խորհել իր նյութի մասին: Իսկ եթե լեզուն պճնված կամ շինծու տպավորություն է թողնում, ես անմիջապես անցնում եմ սպորտային լուրերին»:

#### **Վ. Ե. Ջյուսքինդ «Յուրաքանչյուր ռեպլիկ մեկնաբանություն է...»**

Վերլուծությունը ընդարձակ տարածություն է պահանջում, կարծիքի համար երբեմն բավական է մի քանի նախադասություն կամ պարբերություն: Պարզաբանումից, ի վերջո, ստացվում է ծանոթագրություն կամ ռեպլիկ՝ գլոսսա:

Մեկ անգամ եւս անդրադառնանք Ջյուսքինդին.

«Հիմնական կանոնը շատ պարզ է. յուրաքանչյուր գլոսսա մեկնաբանություն է, բայց ամեն մեկնաբանություն գլոսսա չէ: Իր փոքր ձեւում մեկնաբանությունը ավելի որոշակի է, ինչպես ցույց է տալիս նրա անվանումը՝ դա պարզաբանող, մեկնող ծանոթագրություն է հանրահայտ կամ թերթի կողմից որպես նորություն հաղորդած իրադարձության վերաբերյալ: Որպես ընդգրկում ու գլխավոր ձեւ, ինչպիսին նա է, մեկնաբանությունը ավելի սերտ է կապված իր առարկայի հետ, քան գլոսսան: Մեկնաբանությունը ծանոթագրություն է, գլոսսան՝ դրան հակառակ, եւ հենց այդ փոքրիկ բառային տեղաշարժն է ստեղծում ամբողջ տարբերությունը՝ ռեպլիկը»:

Գլոսսա. Դուրեմի համար սա նույնպես ռեպլիկ է: Խոսքն արդեն կտրող, կծող է հնչում: Եվ այդպես էլ պետք է լինի՝ որքան կարճ, այնքան կտրուկ է դատողությունը: Չափազանցված կինչի, եթե այժմ ասենք, որ ռեպլիկը այս իմաստով նաեւ նկարագրական ռեպորտաժ է, քանի որ փորձում է վերհանել այն, ինչ հատուկ է նկարագրական ռեպորտաժին, այսինքն՝ որեւէ ընթացքի բնորոշումը: Ռեպորտաժը հասնում է դրան՝ իրականությունը նկարագրելով, գլոսսան դուրս է բերում անիրականը, անհեթեթը, հակասականը, արտասովորը՝ չափազանցնելով, աղավաղելով, ծաղրանկարելով, հեզնելով, ծաղրելով, ծաղրանմանակելով: Այստեղ ներկայացվում են մի քանի օրինակներ՝ «Քյունփֆել-Շլիքման» արխիվային թղթապանակից ...

## **Կինոքննադատ Պոնկի. «Ինչ է իսկական հաղորդակցային հաշմանդամը ...»**

Իլգե Քյունփֆել-Շլիքմանը հայտնի է դարձել՝ որպես «Աբենդցայթունգի» կինոքննադատ՝ «Պոնկի» կեղծանունով: Որպես ոճային մեթոդների ստեղծաշարի վիրտուոզ, սակայն, նա անընդհատ հրավիրվում է՝ գրելու գլոսսաներ ոչ միայն ֆիլմերի, այլև՝ օրվա բոլոր թեմաների վերաբերյալ: Նա գրում է ինչպես շներին վերաբերող խոհարարական գրքերի, այնպես էլ եղանակի մասին: Ուրեմն՝ Պոնկին ...

... մոդայիկ բառերի, հատկապես հաղորդակցության մասին.

*«Դժվար է հավատալ, թե ամեն օր որքան հնամաշ բառային խոտան է լիկլիկում մարդու ուղեղում եւ ինքն իրեն չտիրապետած պահերին՝ փնթիորեն լցվում գրամեքենայի մեջ: Սա, այսպես կոչված, հաղորդակցային աղբն է... Հենց գալիս է հաղորդակցման պահը, անմիջապես հայտնվում է նաեւ հաղորդակցվելու անունակությունը: Հոգեբույժը սպասում է հարեւան սենյակում, խմբակային թերապիա անցկացնելու համար, քանզի իսկական հաղորդակցային խեղանդամը տառապում է ծանր թերարժեքության բարդույթներով: Նա գիտի, որ դա հիվանդություն է, եթե հավես չունի իր կողքինի հետ անդադար փոխանակել մտքեր՝ վարվեցողության շեղումների շուրջ: Այնպես որ, անառարկելիորեն հաղորդակցվում են: Ծնողներն ու երեխաները, ուսուցիչներն ու աշակերտները, վաճառողներն ու հաճա-*

խորդները, տղամարդիք ու կանայք (ինչը կաթոլիկական ծայրահեղության դեպքում՝ կարող է հանգեցնել հաղորդությունից զրկելուն)»:

... երբ մի անմիտ կարողացավ անարգել մտնել Անգլիայի թագուհու ննջարանը.

«Հենց սա է գիշերային հանգստի խանգարման մեջ ամենահամակրելին. որ հնարավոր է նման աստիճանի աներեւակայելի հիմարություն: Մի երկրպագու տենչում է հասնել թագուհու մահճակալին, տազնապի ազդանշանի ձայնը հասնում է մինչեւ Շոտլանդիա, հերթապահությունը զլորող ոստիկանը մտածում է, որ դա երեւի սխալմամբ Բուկինհեմյան տնական մուկն է կամ հերթապահ պալատական սարդը եւ շարունակում է կարդալ իր եղգար Վոլիսը (Wallace): Հենց սա է, կարող ենք եզրակացնել, որ այսքան հզոր է դարձնում այս միապետությունը. որ այն այդ պատճառով միանգամից տակը չի անում եւ հիմա երեւի քննարկման է առաջարկում օրենքի նախագիծ, որն անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու պարտավորություն է նախատեսում՝ պալատական վանդակապատից մինչեւ 20 մետր հեռավորության վրա պարսպ-սարսպ շրջող պոտենցիալ հանցագործների համար ...»:

... սեքսուալ կյանքում՝ անկեղծության մասին.

«Այն ժամանակվանից, երբ Օսվալտ Քոլլեն վաթսունական թվականներին, որպես լուսավորված, սեքսուալ, զվարթ էություն ունեցող նոր սերնդի հոգեհայր, խոսեց այն ամենի մասին, ինչի մասին չեն խոսում, որոշ բաներ փոխվեցին դեպի լավը... Իսկ բանալու անցքից մոլի նայողները բանալու անցքի պակասության պատճառով հայտնվեցին փողոցում ...»:

... տեսամազնիտոֆոնի մասին.

«Մշակույթի խմբակային սպառումը այս ընթացքում սուսիկ-փուսիկ ձեռք է բերել մի գեր, ճարպոտ, ցանկասեր սպառող կենդանու: Լափում է ամեն ինչ, ամեն ինչ դուրս է թքում կոճակը սեղմելով գիշեր ու ցերեկ... Հեռուստաթմբա-

*մոլին փոխարինելու է գալիս տեսաերիզային կրետինը...»:*  
... ռադիո-ցուցահանդեսից հետո.

*«Բայց ինչ պետք է անի այսօր բոլոր կողմերից խլացված, ականջը տարած, ստերեոնրճահարված եւ վիդեո-շլացած ռադիովարձ ու հեռուստավարձ վճարողը, երբ հեռուստածրագիրը նրան անցկացնում է ռադիո-ցուցահանդեսային աղացով: Մի բան նրա համար պետք է արագ պարզ դառնա՝ այն ամենը, ինչ նրան հարկավոր է հոգեկան անջատվածության համար, արդեն հավաքված է մի տեղ... Եթե մենք դրան մի քիչ էլ դիմանանք, վերջնականապես կհասունանա ժամանակը՝ նոր աշխատատեղեր ստեղծող կարոտախտային սարքի համար. ծալովի հանգստասենյակ՝ բացարձակ լռությունով: Ոսկե լռություն՝ ստերեո ռեժիմով»:*

... երբ նոր ալիքի կինոգործիչները պրեմիերայի հրավիրատունսի վրա տպել էին տվել. «խնդրվում է հազնել մուգ կոստյում»:

*«Բայց չէ՞ որ հայտնի է՝ ոչ թե արդուկի ծալքերն են այլատերված, այլ այն իրավիճակը, որում ապրում է տաբատը: Իսկ կինոարվեստի կարգին խրախուսումը ամենալավ արդուկն է... Այսպես է աշխարհը ժամանակ առ ժամանակ կարգի գալիս: Գայգենդորֆցիների մոտ այսուհետեւ իրենց տարագ-սմոքինգով պետք է գնաս: Ձիբեռբերզը հարկադրում է ֆրակը: Իսկ այն օրը, երբ ես ստիպված կլինեմ Ախտերնբուշի պրեմիերային գնալ փոքր սեւ զգեստով, այդ օրը ես կփոխեմ բաժինս ու կանցնեմ սպորտի»:*

... երբ Մյունխեն քաղաքը տհաճ վարանումից հետո միայն Ռայներ Վերներ Ֆասբինդերին Բոգենհաուզենում պատվավոր շիրիմ հատկացրեց.

*«Որ այդ մասին դեռ կշռադատել են, դա ուղղակի մարդկային գիծ է: Որովհետեւ Ֆասսբինդերին հետմահու պատվավոր քաղաքացու կոչում տալ՝ նույնպես չէին ուզում: Թե չէ դրանից հետո բոլոր կարգին պատվավոր մեռելները գերեզմանում շուռ կգային, իսկ մի քանի մշակույթի գերմաքրասեր այրեր կաթվածահար կլինեին, ինչը միայն գերեզմանի նոր պրոբլեմներ կստեղծի»:*

Հեռուստաթմբամուլ, տեսաերիզային կրետին, հաղորդակցային խեղանդամ, հաղորդակցվել - հաղորդությունից գրկվել, մշակույթի գերմաքրասեր այր, բանալու անցքից նայող, որը բանալու անցքի պակասության պատճառով հայտնվում է փողոցում, անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնելու պարտավորություն բոլոր նրանց համար, ովքեր թագավորական պալատին 20 մետրից ավելի կնոտենան ...

Պոնկին պայթեցնում է լեզվական բոլոր ականները, դիմում է ամեն հնարքի, նա ալիտերացնում է, կազմում է նոր բառեր եւ առաջարկում նոր պատկերներ. բանալու անցքից նայող՝ առանց բանալու անցքի: Նա հեզնում է, ձեռք առնում, բանավիճում, ծաղրում: Պոնկիի մոտ ռեպլիկը երգիծանք է դառնում, եթե հետեւենք Դուդենի երգիծանքի սահմանմանը, որի համար երգիծանքը «քննադատական բնույթի գրական ժանր է, որն այլասերված միջավայրի թերությունները ծաղրում ու խարագանում է հեզանքի ոճական միջոցներով ...»: Հեզմանքն, իր հերթին, ըստ Պաուլ Ֆեխտերի «Գրական գրույցների բառարանի» իրականում նշանակում է ձեւացում. «Այն մարդը, ով հեզմանքով է խոսում, ձեւ է անում՝ ասելով ինչ-որ բան, ինչ նա իրականում բոլորովին էլ այդպես չի կարծում, համեմայն դեպս լուրջ չի կարծում»:

Այսպես կարելի է ահավոր անհարմար վիճակի մեջ ընկնել: Բայց եկեք նախ՝ հեզմանքի մի հատկապես հետաքրքիր օրինակ դիտենք:

## Զգուշացեք հեզմանքից...

Երգիծաբանների դառը փորձը բարբառում է.

«Այն, ինչ կարող է սխալ հասկացվել, սխալ է հասկացվում»:

Ինչպե՞ս կարող է մեկնաբանը բոլորին գոհացնել: «SZ»-ը կարծիք-հողվածների մասին Մայնցի հետազոտությունների հիման վրա խորհուրդ է տալիս առաջնորդող հողվածների հեղինակին.

«Նա պետք է համարձակ ձեւակերպումներ անի (Ո՛չ, այսպես չի լինի), բայց չպետք է որեւէ մեկին հաճույք կամ ցավ պատճառի, նախեւառաջ՝ նա պետք է խուսափի միակողմանիությունից՝ հօգուտ հասուն կենտրոնի (աջերը այստեղ անշուշտ մոլորվում են, այնուամենայնիվ ձախերը սխալվում են իրենց ենթադրության մեջ...), քանի որ հենց տափակություններն են հավանության արժանանում: Այս

իմաստով կցանկանայինք ամփոփել նաև Մայնցի հետազոտությունների արդյունքները մի նույնքան հավասարակշռված, որքան եւ սիրով կարդացված առաջնորդող հոդվածի վերջաբանով. կառավարությունը եւ ընդդիմությունը լավ կանեին, եթե ազգաբնակչության հույսերն ու նտահոգություններն անհրաժեշտ սկեպտիցիզմով հաշվի առնեին, քանի որ ներկա իրավիճակի շարունակությունն ապագան ցույց կտա»:

Խորհուրդն ասում է.

Իրոնիան աշխատանքի չքնաղ ձեւ է: Պետք է խորապես համոզված լինելու տոնով արտահայտել այն, ինչ ուզում ես ծիծաղելի դարձնել, եւ այնքան լուրջ, որ յուրաքանչյուրը զգա՝ սա երեւի այդքան էլ լուրջ չէ. հենց այն պատճառով, որ գրողը ցուցադրաբար ձեւացնում է, թե լուրջ է:

Մյուս կողմից. ով ձեւացնում է, թե լուրջ է խոսում, ենթարկվում է իսկապես լուրջ ընդունվելու վտանգին: Ինչպես դա պատահեց «Ցայթում».

«Յոնի պապի ուղեւորությունը հետաձգվում է», - գրում էր նա իր երկրների անդրադարձում՝ մի հոդվածի մասին, որի վերաբերյալ խմբագրությունը վերնագրի նախատողում որոշակիորեն ասում էր. «խոսքը մի հաղորդագրության մասին է, որի ճշմարտացիությունը մենք չենք կարողացել ստուգել»:

Բայց հաղորդագրությունն այնուամենայնիվ շատ հավաստի էր հնչում: Նրա ոճն արդեն ենթադրել էր տալիս, որ հաղորդագրությունը վստահելի աղբյուրներից է վերցված՝ ըստ Վատիկանի եւ Գերմանիայի եպիսկոպոսարանի լավ իրազեկ շրջանակների տեղեկատվության...

Իսկ խոսքը հետեւյալի մասին էր. սպասվում էր Յոնի պապ Յովհաննես Պողոս 2-րդի այցը Գերմանիայի Դաշնային Յանրապետություն, բայց նա իբր դժգոհ էր ծրագրից: Նրան իբր չէին բավարարում հանդիպումներն ու զրույցները գերմանական կաթոլիցիզմի ուժեղ քննադատական թեւի այնպիսի աստվածաբանների հետ, ինչպիսիք են Ռաները, Նելլ-Բրոյնիզը, Քյունզը, Մեթցը, Գրայնախերը եւ Յաագը... Այս անուններն արդեն վկայում էին, որ աղբյուրը պետք է որ ներսից՝ հանգամանքներին քաջատեղյակ մի անձ լիներ:

Հոդվածը ստորագրված էր Կառլ Յոզեֆ Յեֆելե անվամբ: Նա երբեւէ տպվե՞լ էր «Ցայթում»:

Հաղորդագրությունն իրարանցում եւ բազում հարցապնդումներ առաջացրեց: Գերբուններին չէին հավատում: Դե եթե դա գրված է

«Ցայթուն», որը հաստատ անխոհեմ ոչինչ չէր ձեռնարկի: Նրա աղբյուրը հաստատ ավելի շատ գիտի, քան՝ բոլոր հերքողները:

Տեղեկությունը, սակայն սխալ էր՝ գիտակցաբար հորինված եւ գիտակցաբար ընթերցողներին մատուցված: «Դժվար կլիներ սատիրա չգրել», - հեզնել է մի անգամ չորրորդ դարի (Ք.ծ.հ) բանաստեղծ Դեցիմուս Յունիոս Յուվենալը՝ հին Հռոմի բարքերի կապակցությամբ:

Դժվա՞ր է երգիծանք չգրել: «Հեզնանքի եւ երգիծանքի գործը թերթում դժվար է», - գրել է դրան հակառակ «Ցայթը» հոդվածի մասին, որը բացատրություն էր տալիս Հռոմի պապի վերաբերյալ երգիծանքի մասին: Խմբագրությունն ի՞նչ էր մտածում: Շատ բան, չափազանց շատ:

«Մենք ուզում էինք երգիծանքի ձեւով մեր ընթերցողին տրամադրել խորհելու: Ընթերցելուց հետո նրանք պետք է ասեին. այդ այցելության ծրագիրն իրականում պետք է այսպիսի տեսք ունենար... Որ այցելության՝ մեր կողմից հորինված նման ծրագիրն այս բավականին պահպանողական Պապի համար անհեթեթություն է, մանրագնին դիտելու դեպքում՝ տեսանելի կլինի, մտածում էինք մենք... Այսպիսով շատ բաներ էին վկայում հաղորդագրության երգիծական բնույթի մասին, բայց այնուամենայնիվ շատ ընթերցողների եւ պաշտոնական ատյանների կողմից այն լուրջ ընդունվեց»:

Շատ լուրջ: Արտգործնախարարությունը եւ Վատիկանի ներկայացուցչությունը Բոննում անհանգստացած էին, եպիսկոպոսական համաժողովի քարտուղարությունը եւ նախագահի անձնակազմը հերքումներ էին հրապարակում: Ուրեմն երգիծական բնույթը այնուամենայնիվ այնքան էլ պարզ չէր զգացվում: Եվ բացի կաթոլիկ աստվածաբաններից՝ ո՞վ գիտեր, որ հաղորդագրության հեղինակ էր անվանվել մի մարդ, որը վաղուց մահացած էր: Կառլ Յոզեֆ Հեֆելլեն անցյալ դարում եղել էր Ռոթենբուրգի եպիսկոպոսը եւ երկար ժամանակ բողոքել էր Պապի անսխալականության դոգմայի դեմ:

## **Ընթերցողին ակնհայտորեն հիմարի տեղ դնել...**

«Ցայթը» ստիպված էր ամփոփել. «Հիմա մենք մեզ հարցնում ենք՝ երեւի սխալ էր հեզնանքն ու երգիծանքը մատուցել ընթերցողին, առանց նրան որոշակիորեն տեղեկացնելու: Նա ակնհայտորեն հաված յուղի տեղ է ընդունում այն ամենը, ինչ սեւով սպիտակի վրա գրված է: Դա նա որպես կանոն է ընկալում», - երգիծանքի հերքման

մեջ գրում էր Չառլզ ֆոն Քյունհայմը՝ իբրև բաժնի պատասխանատու ղեկավար: Նրա գրածը հրատարակիչների սրտով էր: Նրանցից անընդհատ կլսես. «Չեզմանքը ընթերցողներին տեղ չի հասնում»:

Ընդունենք պարոն ֆոն Քյունհայմի եզրափակումը որպես գիտական դրույթ: Սխալ է հեզմանքն առաջարկել ընթերցողին՝ առանց հիմարին էլ հասկանալի ձեւով ասելու. ուշադրություն, այն ինչ հիմա կկարդաք, չպետք է շատ լուրջ ընդունել: Նույնիսկ, եթե դա դիտվի որպես սատիրայի սպանություն, ամենաապահովը այնուհանդերձ դրա վերելում մի նախատող գրելն է. «Երգիծանք, ռեպլիկ, մեկնաբանություն»: Անհրաժեշտության դեպքում բոլոր կասկածները պետք է վերացնի վերջաբանը: «Աբենդցայթունգն», օրինակ, հորինել էր մի հարցազրույց Ֆրանց Յոզեֆ Շտրաուսի հետ եւ գույները խտացրել: Գուլդո Ֆուբսը՝ մի չարամիտ գրող, Շտրաուսին էր վերագրել այս խորամանկ նախադասությունը.

*«Ես դատի սիրահար չեմ, ես երբեք դատի սիրահար չեմ եղել եւ երբեք դատի սիրահար չեմ դառնա: Իսկ ով հակառակը պնդի, ես նրան դատի կտամ»:*

«Աբենդցայթունգի» գլխավոր խմբագիրը համենայն դեպս հանգիստ չէր քնի, եթե չավելացվեր հետեւյալը. «Այս հարցազրույցի բովանդակությունն ու ոճը կարող էին ակնարկել Ֆրանց Յոզեֆ Շտրաուսին: Այնուհանդերձ ուշադիր ընթերցողը առանց դժվարության կհասկանա, որ այս զրույցը կարող է միայն երեւակայության արդյունք լինել»:

Գլխավոր խմբագիրներն ու հրատարակիչները միշտ կասկածել են. «բոլոր դեպքերում չէ, որ տեղ է հասնում այն, ինչն ըստ ֆելիետոնիստների՝ իրոք յուրաքանչյուրը պետք է հասկանար»:

Ինչը կարող է սխալ հասկացվել, սխալ է հասկացվում:

Ուրեմն. հեզմանքը պիտակի կարիք ունի, պետք է ճանաչելի դարձվի:

## **Կուրտ Տուխոլսկի.**

### **«Ճշմարտությունն ուռճացնել, որպեսզի այն ավելի պարզ դառնա...»**

Եթե պիտակն առկա է, եթե անկասկած է, որ երգիծանք է ներկայացվում, ապա որքա՞ն կծու, որքա՞ն հեզմական կարող է լինել այն: Այսինքն՝ կարելի՞ է հեզնել այնքան, որքան հնարավոր կդարձնի գրամեքենան: Ինչի՞ իրավունք ունի սատիրան.

«Ամեն ինչի»:

Սա գրել է Կուրտ Տուխոլսկին 1919 թվականին եւ նրա խոսքերը միշտ այն ժամանակ են հաճույքով մեջբերվում, երբ պետք է պաշտպանել երգիծանքը զայրացած խորհրդականներից, վիրավորված քաղաքական գործիչներից, զգուշավոր խմբագիրներից, որոնք այս կամ այն հատվածը մի քիչ ավելի մեղմ կծեւակերպեին: Սակայն Տուխոլսկին ինքն է սահմանափակել «ամեն ինչը»: Կատակը կարող է լինել կծու, բայց նա պարտավոր է լինել ազնիվ: Ահա քաղվածքներ Տուխոլսկու բնագրից.

*«Երգիծաբանը վիրավորված իդեալիստ է: Նա ուզում է, որ աշխարհը լավը լինի, այն վատն է, եւ ահա նա հարծակվում է այդ վատի վրա... Սատիրան չափազանցվում է: Սատիրան պետք է չափազանցնի եւ իր խորին էութանը անարդարացի է: Այն ուռճացնում է ճշմարտությունը, որպեսզի այն ավելի պարզ դառնա, եւ այն չի կարող այլ կերպ աշխատել, քան ըստ Աստվածաշնչի խոսքի. Արդարները տառապում են անարդարների հետ... Եվ ուրեմն պետք չէ անմիջապես բռնկվել (դահիճներ, պահպանեք ձեր սրբությունները), երբ որեւէ մեկը մեր մասին իրոք սրամիտ բան է ասում: Կծու այն կարող է լինել, բայց ազնիվ պետք է լինի: Նա, ով մի կարգին հարվածի չի կարող դիմանալ ոչ իսկական տղամարդ է, եւ ոչ էլ դիրքն է դիրք... Գերմանացի երգիծաբանը մշտապես պարելով խուսանակում է մասնագիտական դասերի, շերտերի, դավանանքների եւ տեղական հաստատությունների միջեւ: Իսկապես շատ նազելի պար է, բայց երկար տեւելու դեպքում՝ փոքրինչ հոգնեցուցիչ: Իսկական սատիրան մաքրում է արյունը, իսկ առողջ արյուն ունեցողը նաեւ դեմքի առողջ մաշկ կունենա: Ինչի՞ իրավունք ունի սատիրան: Ամեն ինչի»:*

Ճշմարտությունն ուռճացնել, այո՛, բայց ազնիվ լինել: Սա է Տուխոլսկու հիմնական սկզբունքը: 1919-ին Կուրտ Տուխոլսկին մեկ անգամ եւս անդրադարձավ սատիրայի թեմային.

*«Իսկ չի՞ կարող երգիծաբանը հանգստացնող ազդեցություն ունենալ: Չի՞ կարող, արդյոք, թերությունը բոլոր կողմերից խարազանել, չի՞ կարող, արդյոք, իր հերթին, բարին խորհուրդով խրախուսել, մի խոսքով. նա չի՞ կարող դրական լինել: Եվ եթե մեկը նույնիսկ հրեշտակների*

*լեզվով քարոզի եւ ասելութիւն չունենա, նա երգիծաբան չի լինի:*

*Քաղաքական սատիրան միշտ ընդդիմադիր է: Սա է պատճառը, որ մինչ օրս չկա որեւէ կառավարամետ պահպանողական երգիծաբեր: Բանն այն չէ, որ պարոնայք հումոր կամ սրախոսութիւն չունեն: Հումորը ոչ մի դասակարգի կողմից չի վարձակալվել: Բայց այն դասակարգն ամենաքիչ հումորը կարող է ունենալ, որը ձգտում է գոյութիւն ունեցողի պահպանմանը, որը հեղինակութիւնն ու ակնածանքը ձգտում է պաշտպանել վեհասքանչ հազով ու վեր քաշած հոնքերով: Քաղաքական կատակը անպատկառ, չարածճի մեկն է...*

*Եվ քանի որ մարտիկի համար որպէս այդպիսին կարելոր է ոչ թէ տարածութիւն պահելը, այլ պայքարելը, ապա երգիծաբանը անարդարացի է: Նա չի կարող ծանրութեան անել, նա պետք է հարվածի: Ե՛վ ընդհանրացնում է, ե՛ւ՛ պատիժն ծամածռութիւններն նկարում, ե՛ւ՛ ամբողջ դասին վերագրում առանձին անձանց մեղքերը, որովհետեւ դրանք տիպիկ են, ե՛ւ՛ չափազանցնում են, ե՛ւ՛ նվազեցնում: Ե՛վ եթէ նա կարգին տղա է, խորապէս եւ վերջապէս հասնում է ճշմարտութեանը, եւ ամենաարդարներից մեկն է:*

*Ամեն բան երկու կողմ ունի. երգիծաբանը տեսնում է եւ ուզում է տեսնել միայն մեկը: Նա ազնիվներից պաշտպանում է մահակի հարվածներով եւ նետ ու աղեղով: Նա ոգու ծառան է: Նրա դիրքը կանխորոշված է, նա չի կարող այլ կերպ: Աստված նրան օգնական: Ամեն ...»:*

Սատիրան իրավունք ունի ամեն ինչի. միայն սա արդեն չափազանցված ձեւակերպում է: Այն, ինչ նա ուռճացնում է ու աղավաղում, պետք է, քրեական օրենսգրքի իմաստով, էլնի իրական հանցակազմից, նրա միջուկը պետք է ճշմարտութիւնը լինի, եթէ նույնիսկ ծաղրանկարը կոպտացնում է: Այս իմաստով Քերմանիայի Դաշնային Դատարանը նույնպէս զգուշացնում է երգիծական ներկայացումների հարցի վերաբերյալ իր դատավճռում.

*«Բնականաբար ստեղծագործողը, հատկապէս երբ նա, ինչպէս այս դեպքում, իր աշխատանքի թեման է դարձնում*

*մեկ ուրիշին եւ անունը հայտնում է, նաեւ այնքանով է ռիսկի ենթարկվում, որ նրա կողմից արված նվազեցումը կամ չափազանցությունը անցնում են անձի իրավունքով իրեն տրված սահմանները»:*

Սա պետք է մի անգամ ուշադիր կարդալ: Սա համապատասխանում է այն խոսքերին, որ ԳԴՅ մի բարձրաստիճան իրավաբան ոգեշնչված ասաց՝ համաձայնելով այն բանին, ինչ ասում է Տուխոլսկին, այն դեպքում, երբ մի երգիծաբան խոսում է սահմանափակումների մասին:

Դաշնային Սահմանադրական դատարանի դատավոր Մարտին Յիրշ. «Ինչի՞ իրավունք ունի երգիծանքը: Այստեղ ես կասեմ կարճ ու կոնկրետ. ամեն ինչի... նույնիսկ եթե Տուխոլսկին դա ինձանից առաջ է ասել... Որքան երկար եմ դրա շուրջ խորհում, այնքան ավելի շատ է ինձ դա դուր գալիս...»:

Դրան հակառակ՝ քաղվածքներ «AZ»-ի հացագրույցից երգիծաբան Վերներ Շնայդերի հետ. «Սատիրայի տակ շատ բան է հնչում, որ ընդհանրապես չպետք է հնչի: Այնպես որ ես էլ եմ ուզում մեկ անգամ բացասումներ գրանցել. սատիրան չպետք է մոլի լինի: Ծաղրը որպես սովորություն, եւ հեզնանքը որպես հմտություն ողորմելի են: Երգիծանքը ինքնապաշտպանություն է... Երգիծանքը իրավունք ունի ամեն ինչի վերաբերյալ սրախոսություններ անել: Բայց միայն այն դեպքում, երբ հստակ ընթեռնելի է՝ ինչի՞ համար, ինչի՞ դեմ եւ որտե՞ղ: Երգիծանքն իրավունք ունի հիմնովին սուբյեկտիվ լինել: Այն չի ճանաչում ոչ մի տաբու: Երգիծանքը իրավունք ունի ցանկացած ժամանակ նաեւ հակաեկեղեցական լինել, բայց ոչ հակակրոնական: Քանի որ առանց հավատի այն միայն ողբերգական - ցինիկ շպարված ժամանց է: Երգիծանքը իրեն դրսեւորում է որպես արվեստ: Ուրեմն՝ այն երբեք, երբեք, երբեք իրավունք չունի վատը լինելու ...»:

Շնայդերը բարձր չափանիշներ է առաջադրում: Բավական է, եթե երգիծանքին հաջողվի այն, ինչ ցանկանում էր Գերմանիայի ներքին գործերի նախկին նախարար Գերհարդ Բաումը. «Քաղաքական երգիծանքը կարող է եւ նաեւ պետք է փոշի բարձրացնի, եթե քաղաքականությունն այն արդեն ավլում է գորգի տակ»:

Անկախ այն բանից, որ նաեւ գորգի տակ ավլած փոշին է վեր հանվում. վեր բարձրացնելը լրագրողները միշտ են ուզել: Բայց լրագրերի պատմության մեջ նրանց դատողություններն ավելի հաճախ արգելված են եղել, քան ցանկալի: Նաեւ այսօր որոշ քաղաքական գործիչների մոտ նկատվում է՝ լրագրերում, նրանց ընկալմամբ, կարծիքը չափազանց շատ է:

## Մշտական այս դատողությունները ...

### Մեկնաբանող ժուռնալիստիկա. պարզել, շարադրել, մեկնել

Մեկնաբանել, ռեպլիկ տալ, բացատրել. Հաղորդակցագիտությունը դրանում տեսնում է մտածելու առիթ տվող մի նոր առաջադրանք, որի համար կրկին գերմանական անվանում չի գտնվել, այլ փոխառվել է ամերիկյան պիտակ. մեկնաբանող ժուռնալիստիկա է կոչվում այն, ինչով մենք պետք է զբաղվենք: Մեկնաբանել (ինտերպրետացիայի ենթարկել), այսինքն՝ մեկնել, պարզել, շարադրել, քննադատել:

Նոր անվանում մի շատ հին առաջադրանքի համար: Լրագրողները բոլոր ժամանակներում կոչված էին զգուս իրենց կարծիքը հայտնելու, եւ բոլոր ժամանակներում դրա հետ կապված դժվարություններ են եղել: Ֆրիդրիխ Մեծը ավելի շուտ բացառություն էր կազմում, երբ արտաքին գործերի նախարար կոմս Ֆոն Պոդեբիլին ասում էր, «թերթերին, որպեսզի նրանք հետաքրքիր լինեն, պետք չէ կաշկանդել»: Սակայն այս խոսքերի հետեւում թաքնված էր տակտիկա, մի քիչ բանասրկություն, ոչ թե մեծ սեր մամուլի ազատության նկատմամբ: Նա շատ էր սիրում, երբ Բեռլինում դատողություններ էին արվում նախ եւ առաջ արտասահմանյան արքունիքների մասին: Ավելի վաղ եւ ավելի ուշ Բեռլինում եւ մնացած Գերմանիայում ուժի մեջ էր այն, ինչի մասին 1802-ին «Նացիոնալխրոնիկ դեր Դոյքչեն» հանդեսի հրատարակիչ Գոթֆրիդ Պալը գրեց. «Լրագրողին բոլորովին չի թույլատրվում, որ նա դատողություններ անի: Նրա շարադրանքը պետք է նմանվի ջրի տարերքին, որը ոչ գույն ունի, ոչ համ եւ ոչ էլ հոտ»:

Կառավարությունները աջակցություն էին գտնում նույնիսկ լրագրողների կողմից: Այսպես, դեռ 1847-ին՝ գերմանական հեղափոխությունից 1 տարի առաջ, հրատարակիչ բարոն Յոհան Ֆրիդրիխ Կոթա ֆոն Կոթենդորֆը բուռն կերպով ըմբոստացավ, երբ կոչ արվեց, որ նրա լրագիրը առաջնորդող հոդվածներով իր կարծիքն արտահայտի նաեւ քաղաքականության մասին: Դա խորհուրդ էր տվել ուն պարոն ֆոն Ցեդվիթցը: Կոթան ի պատասխան գրեց.

«Ձեր կարծիքը, որ հանրային լրագիրը հիմա պետք է իրեն դրսեւորի որպես իշխանություն եւ հանդես գա ամենօրյա առաջնորդող հոդվածներով, ես չեմ կարող կիսել:

Հանրային լրագիրը վաղուց գրեթե բացառել է առաջնորդող հոդվածները, մասնավորապես այն պարզ պատճառով, որ երբեք իրեն իրավունք չի վերապահել պատմությանից վեր դասվելու ...»:

## **Ֆրիդրիխ Առնոլդ Բրոքհաուս. «Լրագիրը ոչ մեկի կողմը չի բռնում...»**

Նաեւ հրատարակիչ Ֆրիդրիխ Առնոլդ Բրոքհաուսը՝ համանուն հրատարակչության հիմնադիրը, կարծիքից խուսափելը համարում է մամուլի հատկանիշ, պարտականություն: 1813թ. հոկտեմբերի 13-ի մի նամակում նա գրում է. «Լրագիրը... պարզապես զեկուցում է, այն ոչ մեկի կողմը չի բռնում, իսկ դատողաբանությունները օտար են նրան: Այն լծակ է հասարակությանը տեղեկացնելու համար այն ամենի մասին, ինչ պետությունը պետք է հաղորդի վերջինիս կամ մի քաղաքացին՝ մյուսին»:

Մինչ մեր ժամանակները շատ երկրներում սա այդպես էլ մնացել էր՝ քննադատելը, դատողություն անելը, մեկնաբանելը, փնթփնթալը, քրթմնջալը քաղաքականության բնագավառում ենթակա է պատժի կամ արգելված է: Մարդկության կեսը ապրում է այնպիսի երկրներում, որտեղ չկա մամուլի ազատություն, որտեղ կարծիքը հանձնարարված է պետության կողմից:

Մեզ մոտ թերթերը մնում են անկաշկանդ, թեպետ քաղաքականության մեջ աճում է դժգոհությունն այն կապակցությամբ, որ անընդհատ խրատներ են լսվում: Գյունթեր Ֆերհոյգենը, որպես Ազատ-դեմոկրատական կուսակցության գլխավոր քարտուղար, 1981-ին ձեւակերպեց այդ միտքը «անկեղծության ու դիվանագիտության անընդօրինակելի խառնուրդով», ինչպես հարգանքով խոստովանեց Սոցիալ-դեմոկրատական կուսակցության նրա գործընկեր դոկտոր Պետեր Գլոթցը.

*«Մեր դեմոկրատական կարգերում քաղաքականության եւ մամուլի միջեւ աշխատանքն այնպես է բաժանված, որ մամուլը քննադատում է քաղաքականությունը, իսկ քաղաքական գործիչներն այդ քննադատությունը պետք է զովաբանեն որպես մամուլի ազատության արտահայտում: Այդտեղ ես նույնպես ոչինչ չեմ ուզում փոխել»:*

Նրբագեղ կերպով ձեւակերպված մի ծանր հառաչանք: Դոկտոր Պետեր Գլոթցը, քաղաքական գործիչ եւ հաղորդակցության գիտնական, հետագայում համալսարանի ռեկտոր, Չամբուրգում մի ելույթի ժամանակ նույնքան անկեղծ էր, բայց շատ ավելի կոշտ արտահայտման ձեւում: Իհարկե նա պաշտպանում էր լրագրության քննադատական ֆունկցիան: Սակայն ավելացրեց.

*«Բայց ամեն դեպքում ես պնդում եմ, որ չափազանց շատ լրագրողներ զրույցին սեփական անձի մասնակցությունը, անձնական կարծիքը (անկախ այն բանից, թե այդ դատողությունն ինչին է վերաբերում՝ քաղաքականությանը, գեղագիտությանը, տեխնիկային, թե ժողտնտեսությանը) ավելի են կարեւորում, քան որպես հասարակական հաղորդակցության միջնորդ եւ փաստաբան ընկերակիցների՝ տարբեր պահանջները գտնելու, համաձայնեցնելու եւ նրանց բաժանող անդունդները կամրջելու խնդիրը»:*

Իսկ էլ ավելի խիստ դա ասել է Չենրի Նաննենը: Մենք նրան մեքեբերել ենք ռեպորտաժին նվիրված գլխում.

«Նրան, ով մասնագիտության բերումով գերմանական թերթեր է կարդում, չի լքում այն զգացումը, որ ռեպորտաժը կարծես մտահոգված տեղի է տալիս մեկնաբանների՝ խելոք ձեւանալուն»:

Չակառակ կողմից՝ երիտասարդ ձախերի, կանաչների, ինչպես նաեւ քաղաքագետների կողմից նույնպես դժգոհ քրթմնջոցներ են լսվում: Լրագրողները մի ժամանակ համարվում էին հասարակական կարծիքի տերերը: Այսօր այն, ինչ նրանք գրում են, այլեւս կոչվում է ոչ թե հանրային, այլ հրապարակված կարծիք, եւ դա հաճախ այնքան նվաստացուցիչ է, որքան հնչում է:

Կարծիք. մյուսների համար այն կասկածելի ոչ ցայտուն է հնչում: Իմացությունը հնչում է որպես օբյեկտիվ ճշմարտություն, հավատը, դրան հակառակ, որպես սուբյեկտիվ ճշմարտություն: Կարծիքն ընկած է ինչ-որ տեղ դրանց արանքում եւ անվստահության հոտ է արձակում ...

## Սեբաստիան Չաֆներ. «Բացատրել այն, ինչ ոչ ոք չի ուզում ստույգ իմանալ...»

Շատ լրագրողներ նույնպես փոքր-ինչ վարակված են իրենց ուժերի նկատմամբ անվստահությամբ: Իհարկե առաջնորդող հողված գրելու իրավունքը պարզեւատրություն է: «Մենք՝ քաղաքական մեկնաբաններս, լրագրողների բավականին ազնիվ տեսակ ենք համարվում», - «Վելթուն» մի անգամ գրել է Սեբաստիան Չաֆները՝ թեթեւ ինքնահեգնանքով: «Իհարկե մենք դա չենք ասում, բայց երեւակայում ենք, իբր ավելի լավն ենք: Մեզնից ոմանք իրենց այլեւս լրագրող էլ չեն անվանում, այլ հրապարակախոս, կարծես դա ինչ-որ այլ բան է»:

Կասկածներն առաջանում են, երբ սկսում են խորհել հրապարակախոսական այն շանթերի ազդեցության մասին, որոնք նետվել են քաղաքապետարանի, երկրի կառավարության կամ Բոննի կաբինետի ուղղությամբ:

«Ես հաճախ ինձ հարցնում եմ,- գրում էր Սեբաստիան Չաֆները,- թե ո՞վ է կարդում այն տիպի հողվածները, որոնք ես եմ գրում: Երբեմն ես ինձ հարցնում եմ՝ արդյոք ես ինքս դրանք կկարդայի՞, եթե այն ես չգրեի»: Նա իրեն երբեմն զգում էր «բացատրողն այն բանի, ինչը ոչ ոք չի ուզում ստույգ իմանալ», ուսուցիչ, «որի դասերին աշակերտ չի ներկայանում»:

Ո՞վ որպես գրող նման կասկած չի ունեցել: Սակայն մենք կարող ենք մխիթարության խոսքեր ասել պարոն Չաֆներին եւ այդպիսով մեզ՝ բոլորին: «Ցայթուն» օրինակ՝ շուկայագետները հայտնաբերել էին. կարելի է ելնել այն բանից, որ առաջնորդող հողվածի ընթերցողական հաճախականությունը միջինում հասնում է 55 տոկոսի:

«Մյունխեներ Մերկուրի» հրատարակչությունը նախկինում այն կարծիքին էր, որ առաջնորդող հողվածները ի գիտություն են ընդունվում լավագույն դեպքում ընթերցողների 5%-ի կողմից: Սակայն Պաուլ Պոլխերը, «Մերկուրի» գլխավոր խմբագիր եղած ժամանակներում, հետազոտությունների միջոցով հաստատեց այն, ինչ վկայում էր նրա սիրտը. «Իրականում առաջնորդող հողվածը հասնում է մեր ընթերցողների 48%-ին: Առօրյայում աստիճանաչափ է հանդիսանում ընթերցողների նամակների մեծ մասի անդրադառնալը առաջնորդող հողվածներին կամ մեկնաբանություններին»:

## Ծանոթությունից իմացություն

Առաջնորդող հողվածը՝ հարձակվելով եւ հարձակումներով չար-չարված, պատերազմից հետո տասնյակ տարիների ընթացքում իրոք ավելի հանրամատչելի է դարձել, քանի որ այն լավ իմաստով ավելի հանրամատչելի է դարձվում ինչպես լեզվական, այնպես էլ թեմատիկ առումով: Մի ժամանակ այն ձանձրալի գիտական տրակտատ էր՝ երբեմն ամբարտավան կերպով չափազանց հեռու թեմաների շուրջ դասախոսություն: Նույնիսկ գավառային թերթերը «Քաոս Լաոսում» վերնագրով առաջնորդող որեւէ հողված ավելի զարդարող էին համարում, քան իրենց տան առջեւի ճանապարհաշինության մասին քննարկումը: Այսօր առաջնորդող հողվածը ավելի սադրիչ է, ավելի խիստ, ավելի պարզ, ավելի մոտ ընթերցողին ու նրա պրոբլեմներին, քան նախկինում: Հենց այն տեղեկատվության առատությունը, որ հեռուստատեսությունը տուն է բերում, իսկապես պարզաբանում է պահանջում մամուլից. ֆիլմը ծանոթացնում է, իսկ մեկնաբանությունը, եթե ամեն ինչ լավ է ընթանում, եզրակացություն է առաջարկում:

Վերներ Մայեր

ԼՐԱԳՐԱՅԻՆ ԳՈՐԾ  
Հ Ա Տ Ո Ր Ի

Werner Meyer

ZEITUNGSPRAKTIKUM

Ծավալը՝ 11 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 500

---

Տպագրվել է «Վան Արյան» հրատարակչատանը